

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Է.Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
(ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

«ԸՆԴՏԱՐԱՊԵՏ»
ԵՐԵՎԱՆ 2006

Տպագրվում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գիտական Խորհրդի որոշմամբ

ՀՏԴ

Է.Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Կիրառական սոցիոլոգիա (ուսումնական ձեռնարկ): ճարտարագետ, 2006: Եր-ն 202էջ:

Գրախոսներ՝
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
Ա.Ս. Մանասյան
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր՝ Յու.Ա. Գասպարյան

Խմբագիր՝
Ն. Խաչատրյան

Պատվեր՝

Տպաքանակ՝ 500

*Տպագրված է Հայաստանի Պետական ճարտարագիտական
Համալսարանի տպարանում*

Երևան, Տերյան 105

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----------|
| Հեղինակի կողմից ----- | 6 |
| ԳԼՈՒԽ 1. ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ----- | 8 |
| 1.1 ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ----- | 8 |
| 1.2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱՍՏ ----- | 21 |
| 1.3 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ----- | 25 |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 1-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</i> ----- | <i>28</i> |
| ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ----- | 29 |
| 2.1 Հին ԱՇԽԱՐՀ ----- | 30 |
| 2.2 ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ և ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ ----- | 33 |
| 2.3 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼ ----- | 39 |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 2-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</i> ----- | <i>51</i> |
| ԳԼՈՒԽ 3. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ -- | 52 |
| 3.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ, ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ ----- | 53 |
| 3.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ----- | 56 |
| 3.3 ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՊՐՏՈՒՄԸ ԵՎ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ----- | 58 |
| 3.4 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ----- | 62 |
| 3.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ----- | 64 |
| 3.6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ (ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ) ՊԼԱՆԸ ----- | 67 |
| 3.7 ԸՆՏՐԱՆՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ----- | 68 |
| 3.8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ ----- | 71 |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 3-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</i> ----- | <i>72</i> |
| ԳԼՈՒԽ 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՉԱՓՈՒՄԸ (ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ) ----- | 73 |
| 4.1 ՉԱՓՄԱՆ ՑՈՒՑԱՆՄՈՒՇԻ (ՍԱՆԴՂԱԿԻ) ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ----- | 74 |
| 4.2 ՍԱՆԴՂԱԿԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ----- | 75 |
| 4.3 ՍԱՆԴՂԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ----- | 83 |

| | |
|---|-----------|
| 4.3.1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍԱՆԴՐԱԿ | 83 |
| 4.3.2. ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՍԱՆԴՐԱԿ | 86 |
| 4.3.3. ԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՆԴՐԱԿ | 87 |
| 4.3.4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՎԵՐԻ ՀԵՏ | 89 |
| 4.3.5. ՀԱՎԱՍԱՐ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՍԱՆԴՐԱԿ | 91 |
| 4.3.6. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՐԱԿ | 93 |
| ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 4-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ | 94 |

| | |
|--|-----------|
| ԳԼՈՒԽ 5. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | |
| ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ | 95 |
| 5.1 ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | 95 |
| 5.1.1. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ | 96 |
| <i>Հարցազրույցի տեսակները</i> | 96 |
| <i>Շրջապատի ազդեցությունը</i> | 99 |
| 5.1.2. ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ | 100 |
| <i>Անկետավորման ձևերը</i> | 101 |
| <i>Հարցաթերթիկը որպես չափման գործիք</i> | 102 |
| 5.1.3. ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ | 111 |
| 5.1.4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ (ԷՔՍՊԵՐՏՆԵՐԻ) ՀԱՐՑՈՒՄ | 112 |
| ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | 114 |
| <i>Հարցազրույց</i> | 114 |
| <i>Բանավեժ</i> | 115 |
| <i>Համեմատական (հարաբերակցված) գնահատման մեթոդ</i> | 115 |
| <i>Ուղեղների գրոհ</i> | 116 |
| <i>Անկետավորում</i> | 117 |
| <i>Դելֆյան տեխնիկա</i> | 117 |
| 5.1.5. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ | 119 |
| <i>Սոցիոմետրիկական հարցման տեխնիկան</i> | 120 |
| <i>Սոցիոմետրիկական հարցաթերթիկ</i> | 122 |
| 5.2 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏՈՒՄ | 126 |
| 5.2.1. ԴԻՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 127 |
| 5.2.2. ԴԻՏՄԱՆ ՊԼԱՆԸ | 128 |
| <i>Դիտողի չեզոքությունը</i> | 130 |
| <i>Դիտման հնարավորությունները</i> | 131 |
| 5.3 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁ | 133 |
| 5.3.1. ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 135 |
| 5.3.2. ՎԵՐԱՀՍԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԳԻՏԱՓՈՐՁՈՒՄ | 137 |
| 5.4 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 138 |

| | |
|--|------------|
| 5.4.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ----- | 140 |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 5-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ -----</i> | <i>142</i> |
| ԳԼՈՒԽ 6. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ ----- | 144 |
| 6.1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ----- | 144 |
| 6.2. ՆՈՐՄԱԼ ԲԱՇԽՈՒՄ ----- | 146 |
| 6.3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ ----- | 148 |
| 6.4. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ ----- | 157 |
| <i>Ըստ բնույթի պատահական ընտրանք -----</i> | <i>157</i> |
| <i>Տիպային (տեղայնացված) ընտրանք -----</i> | <i>161</i> |
| <i>Մեխանիկական ընտրանք -----</i> | <i>161</i> |
| <i>Սերիական ընտրանք -----</i> | <i>161</i> |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 6-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ -----</i> | <i>162</i> |
| ԳԼՈՒԽ 7. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ --- | 163 |
| <i>Խմբավորում և տիպայնացում -----</i> | <i>163</i> |
| <i>Միջին մեծություններ: Ցրման չափերը -----</i> | <i>164</i> |
| <i>Փորձարարական տիպայնացում -----</i> | <i>170</i> |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 7-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ -----</i> | <i>180</i> |
| ԳԼՈՒԽ 8. ՈՐԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ ----- | 182 |
| 8.1 ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ----- | 184 |
| 8.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ----- | 186 |
| 8.3 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ «ԽԻՏ» ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ----- | 190 |
| 8.4 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ----- | 191 |
| <i>ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 8-ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ -----</i> | <i>192</i> |
| ՍՈՑԻՈԼՈԳԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿՈՂԵՔՍԸ (վերջաբանի փոխարեն) ----- | 193 |
| <i>Հետազոտական գործունեություն -----</i> | <i>193</i> |
| <i>Գիտական բանավեճեր -----</i> | <i>194</i> |
| <i>Գիտական հրապարակումներ -----</i> | <i>195</i> |
| <i>Հարցվողներ (ռեսպոնդենտներ) և հետազոտողներ -----</i> | <i>195</i> |
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ----- | 197 |

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանյան ներկա զարգացումները կենսականորեն անհրաժեշտ են դարձնում հասարակական կյանքի գիտական համակողմանի և մշտապես կատարելագործվող ուսումնասիրությունները: Այն, ինչը բնորոշ է քաղաքացիական ազատությունների «կրիտիկականից» բարձր լիցք պարունակող սոցիալական իրականությանը, և ինչը հնարավոր է միայն սոցիոլոգիական բավարար մշակույթի դեպքում: Մինչդեռ, եթե գնահատենք իրատեսորեն, հայաստանցիների սոցիոլոգիական մշակույթը (այն է՝ հասարակական կյանքի օրինաչափությունների հանդեպ գիտակցված պահանջարկ և սոցիոլոգիական տեքստի ըմբռնման նվազագույն մակարդակ) ցանկալի աստիճանի չէ: Դեռևս բազմաթիվ իրադրություններում, երբ հարկ է դրսևորել մտքի ճկունություն, բարոյական համեստություն այն պարագայում, երբ բացակայում է հավաստի գիտական տեղեկությունը, երբեմն նույնիսկ պաշտոնական բարձր կարգավիճակ ունեցող անձինք հակված են իրենց ճշմարտությունները հիմնավորել սուբյեկտիվ «զոռբայությանը», դիմացինից ավելի բարձրաձայն պնդումով:

Այսօր տարբեր բուհերում բացվել են սոցիոլոգիական մի շարք մասնագիտություններ: 100-ից ավելի հին ու նոր բարձրագույն կրթօջախներում դասավանդվում է սոցիոլոգիա առարկան, նրա տարբեր ճյուղերը: Սակայն մայրենի լեզվով բացակայում են այն դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, որոնք հնարավորություն կընձեռեն տիրապետելու սոցիոլոգիական հետազոտության կազմակերպման տեսական և մեթոդական նրբություններին: Այն, ինչը ճշգրիտ գիտությունների կողքին սոցիոլոգիան դարձնում է ոչ պակաս մրցունակ և գրավիչ:

Սույն ձեռնարկը առաջին փորձերից մեկն է և կոչված է լրացնելու այդ բացը:

Որևէ գիտության մասին դասագրքի և ուսումնական ձեռնարկի ստեղծումը բարդ ու հարատև գործընթաց է: Այն կարիք ունի պարբերական ճշգրտումների, ուղղումների և փոխլրացման: Տասնամյակների գիտամանկավարժական գործունեության ար-

դյունք հանդիսացող այս աշխատանքը նույնպես բացառություն
չէ, և նրա վերաբերյալ ցանկացած ընթերցողի դիտողությունը
կամ առաջարկությունը կընդունվի անսքող երախտագիտու-
թյամբ:

Ձեռնարկը ստեղծելիս օգտվել են բազմաթիվ աշխատանք-
ներից: Սակայն բարոյական պարտքս են համարում առանձնակի
նշել Վ.Յադովի, Ն.Սմելզերի, Գ.Պողոսյանի ձեռնարկները,
որոնցից օգտվել են ամենից շատ:

Խորին շնորհակալությունս են հայտնում բոլոր այն ուսանող-
ներիս, գործընկերներիս և ընկերներիս, առանց որոնց գործնա-
կան խորհուրդների և բարոյական աջակցության նման ձեռնար-
կի ստեղծումը անհնար կլիներ:

ԳԼՈՒԽ 1

ԿԻՐԱՌԱՎԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ

Ցանկացած գիտության հետ ծանոթությունը սկսվում է նրա առարկայի սահմանումից: Որևէ գիտության առարկան մեզ ներկայանում է որպես հիմնարար հասկացությունների տրամաբանորեն փոխկապված ու անհակասական այնպիսի համակարգ, որը նկարագրում է իրականության որևէ մասը: Այն իրականության, որը հետազոտվում է տվյալ գիտության մեթոդներով: Բանն այն է, որ տեսանելի և անտես անսահման իրականությունը մարդկային ճանաչողությունը տարանջատել է իրերի, երևույթների և գործընթացների: Որոշակի ընդհանրություն ունեցող (իրար մոտ), փոխկապված ու փոխազդող իրերը, երևույթներն ու գործընթացները կազմում են իրականության այն մասերը (կտորները), որոնց վերաբերյալ գիտելիքները (հասկացությունների համակարգը) ձևավորում են տվյալ գիտությունը: Այդ մասերը (կտորները) հենց կոչվում են ֆիզիկական իրողություն, քիմիական իրողություն, կենսաբանական իրողություն, հոգեբանական իրողություն և այլն: Օրինակ, ֆիզիկական իրականություն են կազմում ատոմները, մոլեկուլները, առարկաները, մոլորակները, աստղերը, կայծակը, ծիածանը, մարմինների պտույտները, տատանումները և այլն: Սրանք արտահայտվում են ֆիզիկական հասկացությունների օգնությամբ՝ գրավիտացիա, իներցիա, դիֆուզիա, էլեկտրական փոխազդեցություն և այլն:

Նման ձևով էլ մարդկությունը կազմում է սոցիալական այն իրականությունը, որն ուսումնասիրվում է *սոցիոլոգիայի կողմից*: Փոքր-ինչ մանրամասները: Գոյատևման ընթացքում, մարդիկ ամենատարբեր կերպով և չափով օբյեկտիվորեն ազդում են միմյանց վրա: Արդյունքում ծնվում են սոցիալական երևույթներ և գործընթացներ: Օրինակ՝ գործադուլները, հեղափոխությունները

րը, ժողովները, տոնակատարությունները, ծիսակատարությունները, ուսումնական և աշխատանքային գործընթացները և այլն: Սոցիալական և նմանօրինակ այս երևույթները, գործընթացները և մարդիկ էլ (անհատը և խմբերը՝ ընդհուպ մինչև ողջ մարդկությունը՝ որպես հանրույթ) հենց կազմում են սոցիալական իրականությունը: Ուրիշ խոսքով, սոցիալական կապերը¹, սոցիալական հարաբերությունները², սոցիալական փոխազդեցությունները³ և դրանց կազմակերպման եղանակը սոցիոլոգիական հետազոտությունների օբյեկտներ են:

Տվյալ օբյեկտների ուսումնասիրության արդյունքները, որոնք ընդհանրացվում են որպես հասկացություններ, համակարգվում են այնպես, որ ստանում ենք սոցիալական իրականության քիչ թե շատ համարժեք (ամբողջական) պատկերը, որն էլ կոչվում է հասարակության սոցիոլոգիական նկարագիր: Այն շատ նման է տեղանքի քարտեզին, որը ներկայացնում է տվյալ տարածքի ընդհանուր պատկերը, յուրովի նկարագրում նրա բովանդակությունը:

Սոցիոլոգիայի առարկան սոցիալական իրականության այն հայեցակարգային (կատեգորիալ) սխեման է, ուր այդ իրականության գլխավոր գծերն ու տարրերը համակարգված են ու տրամաբանորեն բխում են մեկը մյուսից:

Պարզաբանելու համար, թե ինչ տարբերություն կա հասարակության գիտական հետազոտման և նրա վերաբերյալ առօրյա սուբյեկտիվ դատողությունների միջև ամերիկյան հայտնի սոցիոլոգ Նեյլ Սմելզերը հետևյալ օրինակն է բերում: Սմելզերի ուսանող Մարկը որոշում է ուսումնասիրել մարդկանց վերաբերմունքը զանազան մեքենայությունների հանդեպ: Դրա համար նա կազմում է հարցաթերթիկ և այն բաժանում Բերկլիի համալսարանի ուսանողության շրջանում: Հարցաթերթիկում ուսանողնե-

¹ Կապը տարածության և ժամանակի մեջ տարանջատված երևույթների փոխապայմանավորվածությունն է:

² Հարաբերությունը որոշակի համակարգի տարրերի փոխադարձ կախվածությունն է:

³ Փոխազդեցությունը տարբեր օբյեկտների՝ մեկը մյուսի վրա ազդելու, փոխադարձաբար պայմանավորվելու, վիճակի փոխանցման, մեկից մյուսին անցման կամ առաջացման գործընթացների արտահայտությունն է:

րը, նշելով իերնց տարիքը, կրթությունը և ծնողների զբաղմունքը, պետք է պատասխանեին, թե իրենց կարծիքով ո՞րն է ավելի վատ արարք՝ հարկերի հարցում խաբեությունները, թե՞ նպաստների հարցում մեքենայությունները: Առաջինը նշանակում է եկամուտների վերաբերյալ կեղծ տեղեկություններ և անհրաժեշտ հարկերի վճարումից խուսափում, երկրորդը՝ նպաստի ստացում այն դեպքում, երբ փաստացի դրա իրավունքը չկա:

Որոշակի նախնական դատողությունների հիման վրա Մարկը ձևակերպում է իր վարկածները, որոնց ճշմարտացիությունը պետք է ստուգի ստացված արդյունքների հիման վրա: Այդ վարկածները հետևյալն են. ա) միջին եկամուտի տեր ընտանիքների ուսանողները գտնում են, որ անօրինական նպաստների ստացումը ավելի վատ է, քան սահմանված հարկերի վճարումից խուսափելը; բ) ցածր եկամուտով մարդկանց կարծիքով, սահմանված հարկերի վճարումից խուսափելը ավելի դատապարտելի է, քան անօրինական նպաստներ ստանալը: Ուսանողներից ստացած տվյալների վիճակագրական վերլուծությունը հաստատեց Մարկի վարկածների ճշմարտացիությունը: Ըստ այդմ պարզվեց, որ քննարկվող հիմնահարցի հանդեպ տարբեր վերաբերմունքները պայմանավորված են հասարակական տարբեր դասակարգերի միջև եղած տարբերություններով: Միժամանակ, նույն դասի ներկայացուցիչները առաջին հերթին հակված են դժգոհություն դրսևորել ուրիշ դասի վարքի հանդեպ, այլ ոչ թե քննադատել սեփական վարքը:

Ն. Սմելզերը գտնում է, թե Մարկի հետազոտությունը կարելի է սոցիոլոգիական համարել հետևյալ չորս պատճառներով: Նախ՝ տվյալները նա հավաքել է իրական կյանքից՝ ստանալով ուսումնասիրության համար փաստեր: Երկրորդ՝ նա այնպես էր կառուցել հետազոտությունը, որ փաստորեն հնարավոր էր վերլուծել ըստ բաղադրամասերի (օրինակ, ծնողների եկամուտից ելնելով): Երրորդ՝ հարցաթերթիկի պատասխաններն անջատում էր, ելնելով սոցիալական դասակարգերի տեսությունից: Եվ վերջապես չորրորդ՝ վերլուծել էր սոցիալական հարաբերությունները, բացահայտելով, թե ծնողների դիրքն ու ապրելակերպը ինչպես են ազդում իրենց երեխաների վրա:

Սոցիոլոգիական ճանաչողության հիմքը սոցիալական հանրություններն են, որոնք կարող են ձևավորվել և դիտարկվել ամենատարբեր (գործնականում անսահման) չափանիշներով: Տվյալ չափանիշների ընտրությունը կապված է հետազոտության խնդիրների, ինչպես նաև սոցիոլոգիական որոշակի «ճաշակի» (ուղղվածության) ու ճանաչողական նախկին փորձի հետ:

Սոցիոլոգիական օբյեկտ կարող են լինել, օրինակ, ազգերը, դասակարգերը, պետության քաղաքացիները, բժիշկները, մանկավարժները, կանայք, տղամարդիկ, ընտրողները, երիտասարդները, թոշակառուները, գործազուրկները, տաքսու վարորդները, մուրացկանները, ոստիկանները, ընտանիքները, կրթօջախները, քաղաքականությունը, քաղաքները, գյուղերը և այլն: Նման հանրություններում սոցիալական կապերը, փոխազդեցությունը, հարաբերությունները և դրանց կազմակերպման ձեվերը կարող են դառնալ անմիջական ուսումնասիրման առարկա:

Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբերվում սոցիոլոգիան ու մյուս՝ հասարակությունն ուսումնասիրող գիտությունները: Օրինակ, սոցիալական փիլիսոփայությունը:

Սոցիալական փիլիսոփայությունը, որպես փիլիսոփայության բաժին՝ բացահայտում է հասարակության որակական ինքնատիպությունը՝ բնության հետ համեմատած: Ըստ այդմ, ուսումնասիրվում են հասարակության գոյության իմաստն ու նպատակները, նրա գեներզիսը, շարժիչ ուժերն ու զարգացման ուղղվածությունը: Այս նույն երևույթները կարող է հետազոտել նաև սոցիոլոգը: Սակայն, ի տարբերություն սոցիալական փիլիսոփայի, որը հասարակական հիմնահարցերին մոտենում է հայեցողաբար, տրամաբանական դատողությունների շղթայի օգնությամբ, սոցիոլոգը դրանց մոտենում է փորձնական գիտության չափանիշներով:

Հիմնվելով վիճակագրության, ժողովրդագրության, հոգեբանության, հանրային կյանքը և մարդուն ուսումնասիրող մյուս գիտությունների նվաճումների վրա, սոցիոլոգը մշակում է հետազոտության սեփական մեթոդները՝ կիրառելով մաթեմատիկական գիտելիքներն ու գործողությունները:

Մեկ ուրիշ կարևոր հարցադրում է այն, թե ինչպե՞ս տարբերել

սոցիոլոգիան հասարակությանը և մարդուն ուսումնասիրող մյուս կիրառական գիտություններից: Սա ևս տոնական հարց չէ և, ըստ էության, մինչև վերջ վճռված չէ: Ավելի քան դա վերաբերվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների կոնկրետ հետազոտմանը (օրինակ, ժողովրդագրության, ընտանիքի, ամուսնության և այլն սոցիոլոգիաներ): Տարբեր մասնագետներ յուրովի են ընկալում այդ յուրահատկությունները, որոնք հաճախ փոխլրացնող նշանակություն ունեն: Կողմնորոշվելու համար բերենք մի քանի օրինակներ: Ա.Ա. Ռադուզինի և Կ.Ա. Ռադուզինի «Սոցիոլոգիա» գրքում հետևյալ կերպ է ներկայացվում հոգեբանության և սոցիոլոգիայի տարբերությունը: Ըստ հեղինակների, հոգեբանությունը հիմնականում կենտրոնացված է «ես»-ի ուսումնասիրման վրա, իսկ սոցիոլոգիայի ոլորտը «մենքն» է՝ միջանձնային փոխազդեցության հիմնահարցը: Այնքանով, որքանով գիտնականը անձին հետազոտում է որպես սոցիալական կապի, փոխազդեցության և հարաբերությունների սուբյեկտ և օբյեկտ, անձի արժեքային կողմնորոշումները դիտարկում է սոցիալական շահերի տեսանկյունից, այդքանով նա հանդես է գալիս որպես սոցիոլոգ:

Վ.Ա. Յադովը իր “Ուի օեի օի ֆե-ֆեի ֆ օնոեֆֆի ֆֆի օֆ” գրքում մոտավորապես այսպես է պատկերում սոցիոլոգիայի և հասարակությունն ուսումնասիրող մյուս գիտությունների տարբերությունը: Ըստ նրա, եթե ուսումնասիրության օբյեկտն անձն է, ապա, օրինակ, իրավագիտությունը անձին դիտարկում է որպես իրավունքի սուբյեկտ (որոշակի պարտականությունների և իրավունքների կրող), իսկ տնտեսական, հոգեկան, պատմական (տվյալ դեպքում կենսագրական) և այլն կողմերը գործոններ են, որոնք այս կամ այն կերպ ազդում են անձի իրավական նկարագրի վրա: Նույն կերպ տնտեսագետի համար անձն արտադրության սուբյեկտ է, հոգեբանի համար՝ հոգեկան երևույթների ու գործընթացների կրող և այլն: Սոցիոլոգը, ի տարբերություն մյուսների, անձին դիտարկում է որպես մի ամբողջություն, սոցիալական կյանքի կրող, որի նկարագրի վրա տարբեր չափով ազդում են իրավական, հոգեբանական, պատմական-բարոյական, քաղաքական և այլն գործոնները: Բնագիտական լեզվով ասած,

սոցիոլոգի խնդիրն է որոշել անձի ամբողջական վարքի մեջ տվյալ գործոնների «տեսակարար կշիռները» և կազմել սոցիոլոգիական ինդեքսը:

Թերևս ավելի պարզ օրինակ է բերում Նեյլ Սմելզերը: Ենթադրենք՝ կինը չորս տոմս է գնում դեպի Չավայան կղզիներ, որտեղ ընտանիքի հետ պատրաստվում են անցկացնել երկշաբաթյա հանգիստը: Այս դեպքում, ըստ Սմելզերի, հոգեբանին հետաքրքրում է, թե կինը ինչու հենց Չավայան կղզիներն ընտրեց: Տնտեսագետը կդիտարկի, թե տոմսերը գնելուց բացի, կինը ուրիշ ինչ կերպ կարող էր փողերը ծախսել: Ի տարբերություն սրանց, սոցիոլոգը կնկատեր, որ նախ առկա են էլի երեք մարդ՝ ամուսինը և երեխաները, որոնք տոմս են գնել և, օրինակ, կհետաքրքրվեր, թե ինչպե՞ս են նրանք ազդել կնոջ վճռի վրա:

Այս և նմանատիպ այլ օրինակներ ևս ուշադիր զննելիս կարելի է համոզվել, որ սոցիոլոգիական գիտելիքն ինքնատիպ է այնքանով, որքանով. ա) ստացվում է, երբ մարդկանց հանրույթը դիտարկվում է որպես ամբողջական համակարգ, բ) երբ հետազոտվում են վիճակագրորեն անհրաժեշտ քանակությամբ մարդիկ (զանգվածային գործընթացներ):

Թե «չատ մարդը», զանգվածային գործընթացներն ինչ իմաստ ունեն, ցույց է տրվում հետագա շարադրանքում:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ցանկացած գիտության ինքնահաստատման կարևորագույն խնդիրներից մեկը գիտելիքների արտադրության գործընթացի և դրանց համակարգման ապահովումն է: Այստեղ առանցքային տեղերից մեկը պատկանում է աշխատանքի բաժանմանը: Տվյալ գիտության կազմակերպչական կառուցվածքում տարբերակում են հարաբերականորեն անկախ երեք մակարդակ: Այն է.

1) **հիմնարար հետազոտությունների մակարդակ** (տեսությունների կառուցմամբ տվյալ ոլորտի համապարփակ օրինաչափությունների և սկզբունքների բացահայտում);

2) **կիրառական հետազոտությունների մակարդակ** (հիմնարար գիտելիքների օգնությամբ անմիջական արժեք ունեցող հիմնահարցերի հետազոտում);

3) սոցիալական ճարտարագիտություն (գիտելիքների գործնական ներդրման մակարդակ):

Տվյալ դասակարգման օգնությամբ սոցիոլոգիայի կառուցվածքում տարանջատվում են *տեսական սոցիոլոգիան, գործնական սոցիոլոգիան և սոցիալական ճարտարագիտությունը*:

Սոցիոլոգիայի կառուցվածքում նշվում են նաև մակրո- և միկրոսոցիոլոգիաները: *Մակրոսոցիոլոգիան* ուսումնասիրում է գլոբալ սոցիալական համակարգերը և պատմականորեն երկարատև գործընթացները: *Միկրոսոցիոլոգիան* հետազոտում է մարդկանց ամենօրյա վարքը՝ միջանձնային անմիջական փոխազդեցության պայմաններում: Այս մակարդակները սերտորեն փոխկապված են, քանզի մարդկանց ամենօրյա վարքը իրացվում է սոցիալական համակարգերում: Ա.Ա. և Կ.Ա. Ռադուզինների վերոնշյալ «Սոցիոլոգիա» ձեռնարկում հետևյալ կերպ են պատկերվում սոցիոլոգիական վերլուծության մակարդակները (տես նկ. 1.1):

| Մակարդակը | Տարրերը | Օրինակներ |
|--------------------------|--|---|
| Միջանձնային | <ul style="list-style-type: none"> - Տիպային փոխազդեցություն ըստ կանոնների - Դերային վարք - Սոցիալական կարգավիճակ - Միջանձնային կապեր | <ul style="list-style-type: none"> - Ֆուտբոլի խաղ - Մարզիչ - խաղացող - Փաստաբան - սեփականատեր - Ինստիտուտի ուսանողներ |
| Խմբային | <ul style="list-style-type: none"> - Առաջնային խումբ - Կազմակերպություն - Խմբային հարաբերություն | <ul style="list-style-type: none"> - Ընկերներ - Հիվանդանոց - Աշխատանք - կառավարում |
| Սոցիետալ | <ul style="list-style-type: none"> - Ինստիտուտ - Սոցիալական կարգ - Դասակարգ և շերտ - Քաղաք և հանրույթ | <ul style="list-style-type: none"> - Կրոն - Միապետություն - Ազնվականություն - Մոսկվա |
| Համաշխարհային համակարգեր | <ul style="list-style-type: none"> - Միջազգային հարաբերություններ - Ազգամիջյան կազմակերպություններ - Գլոբալ ինստիտուտ - Համաշխարհային փոխկապվածություն | <ul style="list-style-type: none"> - ՄԱԿ - Գրինփիս - Իսլամ - Նավթարտադրություն |

Նկ. 1.1. Սոցիոլոգիական վերլուծության մակարդակները

Սոցիոլոգիական երեք մակարդակները հատվում են ճյուղային սոցիոլոգիաներում՝ աշխատանքի, ընտանիքի, քաղաքի, կրթության սոցիոլոգիայում և այլն: Օրինակ, աշխատանքի սոցիոլոգիայում օրգանապես փոխկապված են մարդկանց աշխատանքային գործունեության սոցիալական կառավարման տեսությունն ու պրակտիկան: Այստեղ հետազոտվում են աշխատանքի պայմաններն ու բնույթը (համատեղ կամ անհատական), նրա կազմակերպումը, դիտարկում են մարդկանց բավարարվածությունը աշխատանքով և վերաբերմունքը նրա հանդեպ, աշխատանքային շարժառիթներն ու խթանները, ակտիվության բարձրացման ուղիները:

Ա. Կրավչենկոն իր «Սոցիոլոգիա» դասագրքում թվարկում է սոցիոլոգիայի հետևյալ գործառույթները. ճանաչողական, կիրառական, սոցիալական հսկողության, կանխատեսման, գաղափարական, մարդասիրական:

Ցանկացած գիտություն ունի ելակետային հասկացություններ: Սոցիոլոգիայի առարկայի համար դրանք նախ կարգավիճակն է ու դերը: Առաջինը տալիս է առարկայի անշարժ (անփոփոխ), իսկ երկրորդը՝ շարժում (դինամիկ) նկարագիրը:

Խմբի կամ հանրության մեջ մարդու գրաված դիրքը կոչվում է կարգավիճակ: Օրինակ, ընկերական շրջապատում լինել «հարգված» կամ «չհարգված», աշխատանքային խմբում՝ «սիրված» կամ «չսիրված», նշանակում է ունենալ ոչ պաշտոնական (կամ անձնական) կարգավիճակ, իսկ լինել խառատ, նախարար, գիտաշխատող, վաճառող, պատգամավոր, քրիստոնյա և այլն, նշանակում է ունենալ պաշտոնական (կամ սոցիալական) կարգավիճակ:

Ցանկացած կարգավիճակ բաղկացած է իրավունքների և պարտականությունների այն ամբողջությունից, որոնք ավանդաբար ամրագրվում են տվյալ դիրքին: Օրինակ, ծնողը պարտավոր է հոգալ ընտանիքի նյութական հոգսերը, բարեհամբյուր լինել տնեցիների նկատմամբ, դաստիարակել երեխաներին և այլն: Դրանք իրականացվում են ծնողական դերի միջոցով: Իհարկե, մի ծնողը կարող է լավ կատարել այդ դերը, մյուսը՝ վատ, մեկը կարող է խիստ լինել, մյուսը՝ մեղմ և այլն: Այսինքն՝ նույն կարգա-

վիճակը կարող է իրացվել վարքի տարբեր մոդելներով (դերերով):

Վարքի այն մոդելը, որն իրացվում է տվյալ կարգավիճակին ամրագրված իրավունքներին և պարտականություններին համապատասխան, կոչվում է` ընդ:

Պարզ է, որ նույն կարգավիճակին կարող են համապատասխանել տարբեր դերեր: Սակայն տվյալ կարգավիճակում գտնվող մարդը, որպես կանոն, հետևում է մեկ դերի, չնայած` նույն մարդը կարող է կրել բազմաթիվ ուրիշ կարգավիճակներ: Օրինակ, նույն ծնողի կարգավիճակ ունեցողը միաժամանակ հայ է, տղամարդ, բանվոր, քրիստոնյա և այլն: Այսպիսով, մի մարդ կարող է ունենալ բազմաթիվ կարգավիճակներ և նույնքան դերեր: *Դերը կարգավիճակի շարժուն (դինամիկ) բնութագիրն է:* Կարգավիճակը կարող է դատարկ լինել, իսկ դերը` ոչ:

Դատարկ, այսինքն մարդկանցով չլցված կարգավիճակների ամբողջությունը կազմում է հասարակության սոցիալական կառուցվածքը:

Մասնագետները այդ կառուցվածքը դիպուկ կերպով նմանեցնում են մեղվի փեթակում մեղրաբջիջների հետ, որոնք կպած են միմյանց: «Սոցիալական մեղրաբջիջները» ամրակցված են ***սոցիալական գործառույթներով (ֆունկցիաներով)***⁴:

Օրինակ, ո՞րոնք են ծնողի գործառույթները: Ընտանիքի նյութական հովանավորություն, երեխաների դաստիարակում և այլն: Եթե հիշում եք, այսպիսին էին ծնողի պարտականություններն ու իրավունքները: Ըստ որում` գործառույթները հարաբերական են: Որովհետև ծնողի կարգավիճակը առնչվում է երեխայի, այլ ոչ թե մանակավարժի, պատգամավորի կամ նախարարի կարգավիճակների հետ: Հարաբերականությունը նշանակում է կարգավիճակների գործառույթային փոխկապվածություն: «Պայմանականությունը» կապված է ոչ միայն գործառույթների, այլև հարաբերությունների հետ: Կատարելով իր պարտավորությունները` ուսուցիչը մտնում է որոշակի հարաբերությունների մեջ երեխայի,

⁴ Գործառույթ (ֆունկցիա) - երկու օբյեկտի այն հարաբերությունը, ուր մեկի փոփոխությանը ուղեկցում է փոփոխությունը մյուսում:

վերջիններս ուսուցչի, ծնողների, ուստիկանների, հարևանների, ընկերների, վաճառողների հետ և այլն:

Սոցիալական կարգավիճակները կապված են սոցիալական հարաբերություններով, անձնական կարգավիճակները՝ միջանձնային հարաբերություններով: Այսպես, հասարակությունը պատված է սոցիալական հարաբերություններով, որից ներքև միջանձնային հարաբերությունների ցանցն է: Սոցիոլոգին առաջին հերթին հետաքրքրում են սոցիալական հարաբերությունները: Գործառնությունները և հարաբերությունները ցեմենտի ու ավազի նման կազմում են մի այնպիսի կարծր խառնուրդ, որն ամրացում է սոցիալական կառուցվածքը:

Մյուս կողմից դերերը, որոնք հասարակության դինամիկ բնութագիրն են, պարտադիր պետք է ունենան մարդ-դերասաններ: Առանց մարդու դերը ոչինչ է: Սոցիալական դերեր «խաղացող» անհատները մտնում են սոցիալական փոխազդեցության մեջ: Դա պարբերաբար կրկնվող գործընթաց է:

Միայն պարբերաբար կրկնվող սոցիալական փոխազդեցություններն են, որ բյուրեղացվում են որպես սոցիալական հարաբերություններ: Օրինակ, երեխաներին մեկ անգամ ինչ-որ բան սովորեցնողը դեռևս ուսուցիչ չէ: Դա պետք է լինի մշտական, կրկնվող գործողություն, փոխազդեցություն:

Սոցիալական դերի վերլուծությունն անբաժանելի է մարդանձնավորությունից: Ողջ կյանքում մենք սովորում ենք ճիշտ կատարել սոցիալական դերերը, հետևել որոշակի նորմերին (չափորոշիչներին) և պարտավորություններին: Այդ բարդ, ողջ կյանքում շարունակվող ուսուցման գործընթացը կոչվում է **սոցիալիզացիա** (սոցիալականացում):

Սոցիալիզացիայի արդյունքը հասուն անձնավորությունն է, որն անբաժանելի է մշակույթից:

Մշակույթը ավանդույթների, սովորույթների, սոցիալական նորմերի, կանոնների այն ամբողջությունն է, որը կարգավորում է ներկայումս ապրող մարդկանց վարքը, ինչպես նաև փոխանցվում է ապագա սերունդներին:

Մշակույթի ժառանգականությունը նվաճվում է սոցիալիզացիայի միջոցով, իսկ սոցիալիզացիան իրականացվում է սոցիա-

լական հսկողության միջոցով: **Սոցիալական հսկողությունը** անհատների և խմբերի վարքը կարգավորող մեխանիզմն է, ներառյալ սոցիալական նորմերը և պատիժները: Այդ մեխանիզմն ընդունում է ամենատարբեր ձևեր. հասարակական կարծիք, գրաքննություն, հետախուզում և այլն: Սակայն նրա հիմնական տարրերը երկուսն են. **սոցիալական նորմեր** (կարգադրություններ՝ թե ի՞նչ պետք է անել) և **պատժամիջոցներ** (այն պարգևներն ու պատիժները, որոնք խթանում են կարգադրությունների կատարումը, այսինքն նորմերի պահպանումը):

Երբ հասարակության մեջ չեն գործում օրենքներն ու նորմերը, հաստատվում է անկարգությունը (կամ *անոմիան*): Իսկ երբ առանձին մարդը չի հետևում նորմերի կատարմանը (խախտում է այն), նրա վարքը անվանում են **շեղված** (դեվիանտ):

Երբ դատարկ կարգավիճակները լցնում ենք մարդկանցով, յուրաքանչյուրում ձևավորվում է սոցիալական մեծ խումբ: Օրինակ, այդպիսին են բոլոր հայերը, բոլոր տնտեսագետները, բոլոր բժիշկները, բոլոր բուժքույրերը, բոլոր թոշակառուները և այլն:

Սոցիալական այս մեծ խմբերի ամբողջությունը կոչվում է **ազգաբնակչության սոցիալական կազմ**: Սոցիալական կազմն ուսումնասիրում են ոչ միայն սոցիոլոգները, այլև վիճակագիրները:

Յուրաքանչյուր մարդ ունի պահանջմունքներ, որոնք ստիպված է բավարարել: Պահանջմունքները լինում են ամենատարբեր բնույթի՝ ֆիզիոլոգիական, սոցիալական, հոգեբանական և այլն: Այն հաստատությունները, որոնք կոչված են բավարարելու հասարակության հիմնարար պահանջմունքները, կոչվում են **սոցիալական ինստիտուտներ**:

Մինչ օրս հասարակության մեջ ձևավորվել են հինգ հիմնարար ինստիտուտներ. **ընտանիք**, **արտադրություն**, **կրոն**, **կրթություն**, **պետություն**: Օրինակ, բոլոր դպրոցները, քոլեջ-տեխնիկումները, բուհերը, կրթության նախարարությունը՝ իր անձնակազմով, գիտահետազոտական ինստիտուտները, թերթերը, ամսագրերը, տպարանները, մնացյալ այն ամենը, ինչը կապված է մանկավարժության (ուսուցման) հետ, կազմում է կրթության սոցիալական ինստիտուտը:

Հիմնական ինստիտուտները իրենց հերթին բաղկացած են *ոչ*

հիմնական, կամ մասնավոր ինստիտուտներից: Դրանց կոչում են սոցիալական պրակտիկներ: Օրինակ, պետության ինստիտուտի մեջ մտնում են նախագահության, խորհրդարանի, բանակի, դատարանների, ատենակալների, ոստիկանության և այլն ինստիտուտները: Կրոնի մեջ՝ վանականության, կնունքի, աղոթքի ինստիտուտները և այլն:

Սոցիալական ինստիտուտների ամբողջությունը կոչվում է հասարակության սոցիալական համակարգ: Այդ համակարգը կապված է ոչ միայն ինստիտուտների, այլև սոցիալական կազմակերպությունների, սոցիալական փոխազդեցության, սոցիալական դերերի հետ: Ուրիշ խոսքով, այն ամենի հետ, ինչը շարժվում է, աշխատում, գործում:

Հասարակության ամբողջական (անփոփոխ և շարժուն) նկարագիրը ստանալու համար կարևորվում են նաև *սոցիալական շերտավորում* և *սոցիալական շարժունություն* հասկացությունները:

Սոցիալական շերտավորումը (ստրատիֆիկացիա) այն մեծ սոցիալական խմբերի ամբողջությունն է, որոնք դասավորված են ենթակարգված տեսքով՝ ըստ սոցիալական անհավասարության չափանիշի:

Սոցիալական շերտավորումը, փաստորեն, հասարակության սոցիալական կառուցվածքի մեկ ուրիշ արտահայտությունն է: Այտեղ կարգավիճակները դասավորված են ուղղահայաց (օրինակ, աղքատներ, ունևորներ, հարուստներ): Ուղղահայաց առանցքի վրա նրանք կարող են միավորվել նոր խմբերի՝ շերտերի, խավերի, դասակարգերի:

Մի շերտից (ստրատից) մեկ ուրիշին անցումը նկարագրվում է սոցիալական շարժունություն հասկացությամբ, որը լինում է ուղղահայաց և հորիզոնական, վերընթաց և վայրընթաց:

*

* * *

Ամփոփենք այն ամենը, ինչը հակիրճ վերաբերում էր սոցիոլոգիայի առարկային և ավելի մանրամասն լուսաբանվելու է դասագրքի հաջորդ շարադրանքին:

1. Սոցիոլոգիայի ելակետային հասկացություններն են՝ *կարգավիճակը* և *դերը*: Առաջինը տալիս է հասարակության *անփոփոխ (ստատիկ)* նկարագիրը, իսկ երկրորդը՝ *շարժուն (դինամիկ)*:
2. Կարգավիճակները միմյանց հետ կապված են սոցիալական գործառույթներով, որոնք դրսևորվում են սոցիալական հարաբերությունների միջոցով:
3. Հասարակությունն այնքան ավելի ամուր է, որքան՝ շարժուն: Նրա շարժունությունն ապահովվում է մեծ քանակությամբ մարդկանց սոցիալական փոխազդեցության շնորհիվ: Որպեսզի այդ փոխազդեցությունը կարգավորված լինի, հասարակությունը հնարել է սոցիալական հսկողության ինքնատիպ մեխանիզմ: Հսկողությունը կազմված է պատիժներից և մշակութային նորմերից, որոնց մարդիկ հաղորդակցվում են սոցիալիզացիայի գործընթացում:
4. Կարգավիճակները, դերերը, սոցիալական հսկողությունը գոյություն չունեն ինքնին: Դրանք ձևավորվում են հասարակության հիմնարար պահանջմունքների բավարարման գործընթացում: Որպես պահանջմունքների բավարարման մեխանիզմ, հանդես են գալիս սոցիալական ինստիտուտները: Ինստիտուտները լինում են հիմնական (դրանք հինգն են. ընտանիք, արտադրություն, պետություն, կրթություն, կրոն) և ոչ հիմնական (սրանք ավելի շատ են և կոչվում են նաև սոցիալական պրակտիկներ):

1.2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱՍՏ

Այժմ պարզաբանենք «սոցիալական փաստ» հասկացության իմաստը:

Փաստերը սովորաբար դիտարկում են երկու տեսանկյունից: Մեկը՝ գիտակցությունից անկախ, մյուսը՝ տրամաբանական-ճանաչողական:

Առաջին՝ գոյաբանական իմաստով փաստերը դիտողից անկախ իրականության վիճակներն են կամ էլ կատարված իրադարձությունները:

Ճանաչողական իմաստով փաստը այն հիմնավորված գիտելիքն է, որը ստացվել է որոշակի տարածաժամանակային միջակայքում իրականության առանձին դրվագների նկարագրության ճանապարհով: Սոցիալական փաստը ճանաչողական բնույթի է:

Ժամանակակից սոցիոլոգիայում սոցիալական փաստեր են համարվում.

- զանգվածային վարքի միասնական բնութագրերը,
- զանգվածային գիտակցության (կարծիքներ, գնահատականներ, հավատամքներ և այլն) միասնական բնութագրերը,
- մարդկային գործունեության արդյունքների միասնական, ընդհանրական գնահատականները,
- որակական սոցիոլոգիայում փաստ է առանձին դեպքի, իրադարձության, սոցիալական փոխազդեցության մեկնությունը՝ գործուն սուբյեկտի տեսանկյունից (տե՛ս. գլուխ 8):

Կարևոր է ըմբռնել, որ սոցիալական փաստերը իմաստավորվում են այն դեպքում, երբ ներկայացվում են հասկացությունների որոշակի համակարգում: Ինչպես ասում են, գիտական փաստը ճանաչողական գործընթացի որոշակի արդյունքն է, այլ ոչ թե սկիզբը: Իհարկե, դա միջանկյալ արդյունք է փորձարարական ընդհանրացման մակարդակում:

Երբ մենք մարդուն անվանում ենք տղամարդ կամ կին, դա նույնը չէ, ինչ որ նրան տարանջատել ըստ սեռի: Առաջին դեպքում գրանցվում է մեկ հատկություն (տղամարդ կամ կին): Երկրորդում ոչ միշտ է ակնհայտ, թե ինչ նկատի ունենք, ասելով

«տղամարդ», «կին»: Դա կախված է արտահայտման համատեքստից: Կարող է շեշտը դրվում է տարիքի վրա (երեխա չէ) կամ՝ տղամարդկայնության (կանացիության), կամ էլ ուղղակի դիմում ենք մարդուն՝ քաղաքացի, պարոն, ընկեր և այլն: Այսինքն՝ երկրորդ դեպքում խախտված է իրադարձության (երևույթի) անկախությունը դիտորդից՝ հենց նրա գրանցման գործընթացով:

Սոցիոլոգի խնդիրն է տարանջատել պարբերական բնույթի անհատական տարբերությունները պատահականություններից և դրանով նկարագրել տվյալ գործընթացի կայուն հատկությունները: Սրա համար օգտագործում են հավանականային վիճակագրության մեթոդներ, որոնց հիմքը *մեծ թվերի օրենքն է*:

Ընդհանուր տարածում ունի հետևյալ սահմանումը. **«Մեծ թվերի օրենքը մի ընդհանուր սկզբունք է, ըստ որի պատահականության տարրեր պարունակող անհատական պատճառների մեծ քանակության միասնական գործողությունը, որոշ ընդհանուր պայմանների դեպքում հանգեցնում է մի արդյունքի, որը գրեթե կախված չէ դիպվածից»:**

Տվյալ օերնքի գործողության անհրաժեշտ նախադրյալներն են՝ ա) դիտումների բավարար քանակությունը, բ) առանձին իրադարձությունների անկախությունը որևէ ընդհանուր պատճառից (դինամիկական կախվածության իմաստով):

Չնայած բազմաթիվ պայմանականություններին ու դժվարություններին, եթե մարդկանց վարքը խստորեն կանոնակարգված չէ, նշված պայմանները հասարակական կյանքում բավարարվում են ընդունելի հիմնավորումներով: Եվ քանի որ շատ մարդկանց տվյալներ են ուսումնասիրվում, դրա սոցիալական փաստը անվանում են նաև սոցիալ-վիճակագրական փաստ:

Այսինքն՝ սոցիալական փաստերը մի կողմից վերացարկումներ են, քանի որ ներկայացնում են որոշակի իրադարձությունների նկարագրում ընդհանուր հասկացություններով, մույս կողմից՝ առավելապես սոցիալ-վիճակագրական ընդհանրացումներ են: Դրա համար էլ փաստացի գիտելիքի ներառումը գիտության համակարգի մեջ ենթադրում է որոշակի հայեցակարգ («համադրման համակարգ»), ուր գրանցում ենք բազմաթիվ դեպքերի դիտարկումները:

Այդպիսի հայեցակարգը ընտրվում է առաջին հերթին ելնելով հետազոտության համար արժեքավոր (կամ անարժեք) կապի վերաբերյալ հիմնավորված ենթադրությունից (վարկած), որից բխում է, թե ի՞նչ որակներ պետք է գրանցվի զանգվածային հարցման դեպքում (սեռը, տարիքը և այլն): Դա հուշում է նախորդ հետազոտական փորձը:

Կարևոր է և սոցիալական համատեքստը, քանի որ տարբեր պայմաններում նույն երևույթներն ունեն սոցիալական տարբեր նշանակություն և ուրիշների կողմից տարբեր կերպ են ըմբռնվում և գնահատվում: Ի՞նչ պայմաններում են հարցվել մարդիկ, հարցերի ո՞ր հաջորդականությամբ, ի՞նչ լեզվով: Այս և նման սահմանափակումները փաստերի խմբավորման և հաստատման նախադրյալներն են:

Ուրիշ խոսքով, ընդհանուր և առանձնահատուկ փաստերի տարանջատումը կախված է հետազոտման գործնական (կամ տեսական) *նպատակից*, առկա գիտելիքների *վիճակից* (կապված տվյալ առարկայի հետ): Միաժամանակ նույն սոցիալական գործընթացներն ու երևույթները կարող են դիտարկվել *տարբեր* տեսական մոդելներում: Բացի այդ, կարևորվում է հետազոտողի *աշխարհայացքը*: Երբ սոցիոլոգը գրում է, թե մարդկանց տվյալ խումբը սոցիալապես ակտիվ է, մյուսը՝ պասիվ, նման պնդման մեջ արտահայտված է նաև հետազոտողի քաղաքացիական դիրքորոշումը:

Այս ամենը վկայում է, որ գոյություն ունի սոցիոլոգիական գիտելիքի փաստական հավաստիության շատ լուրջ գիտական (նաև բարոյական) խնդիր: Նրա լուծման համար տարանջատում են փաստական պնդման *հիմնավորվածությունը* և *ճշմարտացիությունը*:


Վ.Ա. Յադովը հետևյալ սխեմայով է ներկայացնում հիմնավորված սոցիոլոգիական փաստի ստացումը (տե՛ս սխեմա 1.1):

Նման սխեմայով ստացված գիտելիքը համարում ենք հիմնավորված և այն կարող ենք կոչել ***սոցիոլոգիական փաստ***:

Մխենա 1.1 Սոցիոլոգիական փաստի ստացումը

Նախորդ գիտելիքի մակարդակները, որոնք կանխորոշում են փաստացի ինֆորմացիայի հիմնավորվածությունը

Գործողությունների հաջորդականությունը փաստերի հաստատման և նկարագրության դեպքում



Ինչ վերաբերում է փաստական պնդման ճշմարտացիությանը, սա հավերժական հարց է և շոշափում է մեծ բարոյականության, մարդկային ինտուիցիայի, գոյության նպատակի, հանճարեղ կռահումների աշխարհայացքային խորագույն խնդիրները, որոնց քննարկումները կիրառական սոցիոլոգիայի դասընթացի հրատապ նյութեր չեն:

1.3 ՄԵՅՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդաբանությունը գիտական հետազոտության սկզբունքների համակարգն է: Այն է որոշում, թե հավաքված փաստերը որչափով են գիտելիքի իրական և հուսալի հիմքը:

Ձևականորեն մեթոդաբանությունը ուսմունք է այն մասին, թե ինչպես աշխարհը տրամաբանորեն հստակ և անհակասական ճանաչել: Սակայն իրականում սերտորեն կապված է աշխարհի մասին պատկերացումների հետ: Իր հերթին այդ պատկերացումները մեծապես կախված են իր իսկ, հասարակության վիճակից, նրան հուզող հիմնահարցերի գերակայություններից: Արդյունքում ստացվում է, որ սոցիալական մեթոդաբանությունը ոչ պակաս չափով նաև «Ժամանակի ոգու» բանական ձևակերպումն է և կախված է թե՛ սոցիոլոգի մարդկային էությունից և թե՛ հասարակական հարաբերություններից:

Ասվածը չի նսեմացնում (թերևս հակառակը) այն կանոնների համախումբը, որը մշակել են մասնագետները և որոնք ապահովում են ուսումնասիրության հավաստի արդյունքներ:

Կախված հետազոտության նպատակներից, հիմնահարցի մասշտաբներից և սոցիալական համատեքստից, տեսական դատողությունները կատարվում են տարբեր մակարդակներում: Դրանց ձևակերպումները Վ.Ա. Յադովի կողմից առավել ընդունված են: Նշվում է մեթոդաբանական երեք մակարդակ. *փիլիսոփայական* (կամ համընդհանուր գիտական), *ընդհանուր սոցիոլոգիական* և *մասնավոր սոցիոլոգիական* (կամ ընթացակարգային): Փիլիսոփայական-մեթոդաբանական մակարդակում վճռվում է սոցիալական իրականության էության մասին մեր հիմնարար

պատկերացումների հիմնավորվածության խնդիրը, ինչպես նաև ուրվագծվում է նրա մասին նոր պատկերացումների ստացման ընդհանուր ռազմավարությունը: Այս մակարդակը թելադրում է պահպանել որոշակի ընդհանուր գիտական պահանջներ, որոնք, ըստ ամերիկայն սոցիոլոգ Ռ. Մերտոնի, կազմում են հետևյալ չորս սկզբունքները. ունիվերսալիզմը, գիտական գիտելիքի համընդհանուր բնույթը, անշահախնդրությունը և կազմակերպված վատատեսությունը:

- Ունիվերսալիզմը պահանջում է, որ գիտնականի կարիերան մատչելի լինի ցանկացած տաղանդավոր մարդու և պնդումների ճշմարտացիությունը կախված չլինի դատողի անձից:

- Գիտական գիտելիքի համընդհանուր բնույթը գիտությունը մեկնաբանում է որպես համընդհանուր սեփականություն, որի մուտքը պետք է բաց լինի յուրաքանչյուրի համար:

- Անշահախնդրության պահանջը բացառում է, ճշմարտության որոնումից բացի, գիտությունը այլ շարժառիթների ենթարկեցնելը:

- Կազմակերպված վատատեսության (հոռետեսության) սկզբունքը գիտնականին կողմնորոշում է դեպի հնարավոր այն բոլոր հնարքների ու միջոցների օգտագործումը, որոնք հսկում են ստացված գիտելիքների հավաստիությունը:

Հաջորդ, ընդհանուր սոցիոլոգիական մեթոդաբանության գործառույթը կատարում է սոցիոլոգիական տեսությունը: Հայտնի մասնագետները պնդում են, որ «անզեն աչքով», այսինքն առանց տեսության հնարավոր չէ սոցիալական իրականությունը ճանաչել: Տարածված առօրյա այն կարծիքը, թե «փաստերը իրենք են իրենց մասին խոսում», խորապես սխալ է: Մենք արդենք տեսանք, որ, Վ.Ա. Յադովի խոսքերով. «Գիտական փաստը ճանաչողական գործընթացի որոշակի արդյունքն է, այլ ոչ թե նրա սկիզբը»: Եվ փաստական գիտելիքի ներառումը գիտության համակարգ ենթադրում է այնպիսի հայեցակարգի (համադրման համակարգի) գոյություն, ուր գրանցում ենք դիտարկումների արդյունքները (տվյալ հարցը քննարկեցինք նախորդ ենթավեր-

նագրում):

Մասնավոր (ընթացակարգային) մակարդակում մեթոդաբանությունը հանդես է գալիս որպես հետազոտության հնարքների այնպիսի համակարգ, որը որոշում է փարձարարական տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունը:

Տվյալ մակարդակի մեթոդաբանության տարբեր բաղադրամասերի նշանակման համար օգտագործում են *մեթոդ, տեխնիկա, մեթոդիկա* և *ընթացակարգ* տերմինները:

Մեթոդ տվյալների հավաքման և վերլուծության հիմնական եղանակն է: Օրինակ, «ղեկավար-ենթակա փոխհարաբերությունները արտադրական խմբում» թեմայով ուսումնասիրության մեջ օգտագործել ենք ինֆորմացիայի հավաքման հարցազրուցային, իսկ տվյալների վերլուծության մեջ՝ խմբավորման մեթոդները:

Տեխնիկան այս կամ այն մեթոդի արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ հատուկ եղանակների համախումբ է: Օրինակ, հարցաթերթիկում կարող են հարցերի մի մասը ձևակերպվել բաց (պատասխանի տարբերակ չկա), իսկ մյուսը՝ փակ (առկա են պատասխանների տարբերակներ) տեսքով: Հարցերի ձևակերպման այդ երկու եղանակները կազմում են տվյալ հարցաթերթիկային հարցման տեխնիկան: Իսկ հարցաթերթը որպես սկզբնական տվյալների հավաքման գործիք, գրուցողի համար նախատեսված հրահանգի հետ միասին, մեր դեպքում, կազմում է **մեթոդիկան**:

Ընթացակարգը (պրոցեդուրա) հետազոտության կազմակերպման եղանակների և գործողությունների ընդհանուր համակարգն է, բոլոր գործողությունների հաջորդականությունը: Դա առավել ընդհանուր, հավաքական հասկացություն է, որը վերագրվում է սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման և մշակման համակարգին: Յուրաքանչյուր ընթացակարգ մի ավարտուն փոքրիկ հետազոտություն է, որն իր նման մի շարք այդպիսիների կողքին, ամբողջության մեջ ապահովում է հետազոտական մտահղացման իրականացումը:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 1-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է ուսումնասիրում սոցիոլոգիան որպես գիտություն:
2. Սոցիոլոգիական գիտելիքի առանձնահատկությունները:
3. Սոցիոլոգիայի կառուցվածքը:
4. Սոցիոլոգիայի ելակետային հասկացությունները:
5. «Սոցիալական փաստ» հասկացության իմաստը:
6. «Սոցիալական փաստ»-ի բաղադրատարրերը:
7. «Մեծ թվերի օրենք»-ը սոցիոլոգիայում:
8. «Սոցիալական փաստ»-ի հիմնավորվածությունն ու ճշմարտացիությունը:
9. Մեթոդաբանության ընթացումը սոցիոլոգիայում:
10. Մեթոդ, տեխնիկա, ընթացակարգ (պրոցեդուրա) հասկացությունները սոցիոլոգիայում:

ԳԼՈՒԽ 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ընդամենը 10-15 տարի առաջ հայաստանյան հանրային միջավայրում քչերը գիտեին, թե ի՞նչ է սոցիոլոգիան, հասարակական կյանքի վրա ազդելու ինչպիսի՞ հնարավորություններ ունի: Այսօր այդ բառը շատերն են գործածում: Հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը պարբերաբար անդրադառնում են սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքներին: Նոր սերնդի համար առօրեական են տարբեր մակարդակի ընտրությունների առիթով հասարակական կարծիքի հարցումները, պետական ու քաղաքական առավել ազդեցիկ այրերի վարկանիշի ձևակերպումը, մարդկանց՝ կենսամակարդակով բավարարվածության բացահայտումը: Կրթօջախներում իրացվում են «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումները, հետազոտվում են տարբեր ծառայություններով մարդկանց բավարարվածությունը և այլն: Այս ամենը հանրային գիտակցության մեջ ձևավորում է սոցիոլոգիայի, որպես կիրառական փորձնական գիտության նկարագիրը: Սակայն դրանով չեն սպառվում սոցիոլոգիայի առարկան ու խնդիրները:

Պատասխանենք այն հարցին, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում է սոցիոլոգիան առաջացել, ի՞նչն է խթանել հասարակության վերաբերյալ նոր գիտության ձևավորմանը:

«Սոցիոլոգիա» տերմինը լատիներեն *societas* – հասարակություն և հունարեն *logos* – խոսք, հասկացություն, ուսմունք բառերի համադրումն է և ստուգաբանորեն նշանակում է գիտություն հասարակության մասին: Տերմինն առաջին անգամ օգտագործել է ֆրանսիացի փիլիսոփա, «Պոզիտիվիստական փիլիսոփայության դասընթացի» հիմնադիր Օգյուստ Կոնտը՝ 19-րդ դարի 30-ական թվականներին: Ավելի ստույգ, 1839 թվականին՝ վերոնշյալ դասընթացի երրորդ հատորի հրատարակումից հետո, գիտական հանրությունը սոցիոլոգիան ճանաչեց որպես առան-

ծին գիտություն: Քանզի այստեղ պատմականորեն առաջին անգամ առաջ քաշվեց հանրային կյանքը գիտականորեն ուսումնասիրելու գաղափարը: Ամենաընդհանուր ձևով ***սոցիոլոգիան գիտություն է հասարակության, որպես ամբողջական համակարգի, նրա բաղադրամասերի (անձանց, սոցիալական հանրությունների, ինստիտուտների) միջոցով այդ համակարգի գործառնման ու զարգացման մասին:***

Սովորաբար, ըստ գիտականության չափանիշների, տվյալ գիտությունը կայացած են համարում այն դեպքում, երբ, որպես այդպիսին, ընդունվում է գիտական հանրության կողմից: Սոցիոլոգիայի համար դա տեղի է ունեցել 19-րդ դարի 40-ական թվականներին: Սակայն սոցիոլոգիական մտքեր, երբեմն՝ հանճարեղ կռահումներ կատարվել են շատ ավելի վաղ: Դրանց հետքերը տանում են դեպի քաղաքակրթության գրված պատմության ակունքները:

Ընդունված է սոցիոլոգիայի պատմության մեջ տարանջատել երեք փուլեր.

1. հին աշխարհ,
2. միջնադար և նոր ժամանակներ (4-18-րդ դդ),
3. ժամանակակից, այսինքն 19-20-րդ դդ:

2.1 ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

Դեռևս հնագույն ժամանակներից մարդկանց հետաքրքրել են ոչ միայն բնության խորհրդավոր երևույթները (գետերի վարարումը, երկրաշարժերը, հրաբուխները, տարվա եղանակի փոփոխությունները և այլն), այլև ուրիշ մարդկանց շրջանում իրենց գոյատևման խնդիրները: Ինչու՞ մարդ մեռնակ չի ապրում, այլ ձգտում է իր նմանների կողքին լինել: Ի՞նչն է ստիպում երկրագնդի վրա սահմաններ գծել, թշնամանալ միմյանց հետ և պաշտպանվել միմյանցից: Ինչու՞ մի մասը բարեկեցիկ կյանքի համար ունի ամեն ինչ, մյուսը՝ գրեթե ոչինչ: Այս և նմանօրինակ շատ հարցեր են հուզել մարդկանց, որոնց պատասխանները փորձել են տալ ժամանակի խելոք մարդիկ կամ, ինչպես ընդունված է

կոչել՝ իմաստունները:

Արդեն հին Չնդկաստանում և Չինաստանում իմաստունները դատում և խորհուրդներ էին տալիս տարբեր կենցաղային, կենսական հարցերում ճիշտ վարվելու վերաբերյալ: Օրինակ, հնդկական «Մահաբ-հարատայուն» ներկայացված էին հասարակական կյանքի այն կանոնները, որոնք անհրաժեշտ են իշխողների հզորության և բոլոր մահկանացուների երջանկության նվաճման համար: Նման ձևով Չինաստանում կոնֆուցիականությունը առաջ քաշեց նորմի, կանոնի գաղափարը, որպես համատեղ կյանքի անկյունաքար (չինարեն այն կոչվում է *«լի»*): Ինչպես դատում էր չինական մեծ իմաստուն Կոնֆուցիուսը, առանց «լի»-ի չի կարող կարգ ու կանոն լինել, հետևաբար՝ բարեկեցություն երկրում: Եթե չկա «լի»-ն, չկա նաև տարբերություն իշխողի և հպատակի, վերևների ու ներքևների, ծերերի և երիտասարդների միջև: «Լի»-ն իրերի հաստատված կարգն է, -ասում էր նա:

Չին աշխարհի հասարակական կյանքի տրամաբանական, համակարգված մտքին մեծ զարկ տվին Պլատոնի (մ.թ.ա. 5-րդ դար) «Օրենքները», «Պետության մասին» և Արիստոտելի (մ.թ.ա. 4-րդ դար) «Քաղաքականություն» աշխատությունները:

Պլատոնը ելակետային էր համարում այն դրույթը, թե՛ ճիշտ պետությունը հնարավոր է հիմնավորել և կառուցել սոցիալական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և հասարակության կատարելագործմանն ուղղված քաղաքական առաջարկությունների միջոցով: Եթե հասարակության մեջ հաստատված չէ այնպիսի կարգ ու կանոն, որտեղ յուրաքանչյուրն զբաղվում է իր գործով և չի խառնվում ուրիշների (քաղաքացիների, խավերի, դասակարգերի) գործերի մեջ, ապա շրջապատում տիրում են լարվածությունը, քառուր և խռովությունները: Ըստ Պլատոնի, կայուն է այն հասարակությունը, որը բաժանված է երեք դասակարգերի. *բարձրագույն* (ինստիտուտները, որոնք կառավարում են պետությունը), *միջին* (ներառյալ զինվորականները, որոնք հանրությանը պաշտպանում են անկարգություններից ու խռովություններից), *ցածրագույն* (արհեստավորները և գյուղացիները):

Բարձրագույն դասակարգին, կամ, ինչպես այժմ կոչում են՝ ընտրախավին Պլատոնը զրկում է սեփականությունից, քանզի

այն այլասերում է մարդկանց բարքերը: Սակայն, միաժամանակ, այդ ընտրախավը հատուկ պատրաստվածություն պետք է ունենա, լինի բազմակողմանի զարգացած (իմանա երաժշտություն, գրականություն, իմաստասիրություն և մաթեմատիկա): Կառավարման դեկի մոտ նրանց պետք է թույլատրել այն դեպքում, եթե առնվազն 50 տարեկան են:

Ընտրախավին օժտելով անառարկելի հրամանների իրավունքով, Պլատոնը նրանցից պահանջում է բարոյական մաքրություն, բարձր հեղինակություն: Քանզի ճշմարտություն է, որ հպատակները օրինակ են վերցնում հենց իշխողներից, և, վարվում են նրանց նման: Կառավարման բնույթը ի վերջո որոշվում է մարդկանց սոցիալական բնավորությամբ: Պլատոնը մոտավորապես այսպես է պատասխանում հասարակության համար առանցքային հարցին. կառավարությունը ինչպե՞ս պահպանի իշխանությունը, և, միաժամանակ, ունենա բնակչության աջակցությունը:

Հին հունական մյուս մեծ մտածողի՝ Արիստոտելի համար օրինականության հենարանը *միջին դասակարգն* է: Դրանից բացի կան ևս երկու դասակարգեր. *հարուստ պլուտոկրատիան* և *սեփականագուրկ պրոլետարիատը*: Ըստ Արիստոտելի, պետությունը լավագույն ձևով է կառավարվում, եթե.

- չունևորները ևս մասնակցում են կառավարմանը,
- հարուստների եսամոլական շահերը չափավորված են,
- միջին դասը ավելի բազմաքանակ է և ուժեղ, քան առաջին երկուսը:

Ի տարբերություն Պլատոնի, Արիստոտելը ընտրախավին չի գրկում սեփականությունից: Ըստ նրա կարևորը այն չէ, թե ով ինչքան ունի, այլ այն, թե այդ ունեցածը ինչպես են օգտագործում: Սեփականություն ունեցողն ավելի է ձգտում աշխատանքում կատարելագործվել: Դրանից օգտվում են բոլորը: Հանրային սեփականության դեպքում մարդկանց մեծ մասը աղքատ է և չարացած: Եթե կա անարդարություն, եթե մեկը շատ է ստանում՝ քիչ աշխատելով, միշտ դժգոհ կլինեն նրանք, ովքեր ավելի շատ են աշխատում, բայց քիչ՝ ստանում: Մասնավորի դեպքում առաջանում է հարստություն և անհավասարություն, սակայն հենց դա է խթան

նում առատաձեռնությունն ու գթասրտությունը: Արիստոտելը փառաբանում է այն երկիրը, որտեղ միջին դասն ամենաուժեղն է:

Ինչպես տեսնում ենք, հին աշխարհի երկու խոշոր մտածողների մտքերը հրատապությունը չեն կորցրել նաև նորագույն ժամանակներում:

Հին աշխարհում, ի թիվս այլ ազգերի, հայկական սոցիալական միտքը մարմնավորված է դիցաբանական կերպարներում և հեթանոսական մշակույթի մեջ: Հայկի, Արամի և Արայի կերպարները բնութագրում են ազատատենչությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, տոհմի և ընտանիքի սրբությունները: Այնուհետև, հետագա կերպարներում (Տորք-Անգեղ, Վահագն, Անահիտ և այլն), ի հավելումն մարմնավորվել են ինքնագոհությունը, նվիրվածությունը, խելքի և ուժի միջոցով երկրի ղեկավարումը, կամքի ընտրականության ազատությունը, բարու պայքարը չարի դեմ՝ տիեզերական կարգը պահպանելու նպատակով: Մեր թվարկությունից առաջ երկրորդից մինչև մեր թվարկության երրորդ դարերը, վեպերում պատկերվում է ցանկալի թագավորի և ղեկավարի (Տիգրանի, Արտաշեսի, Արտավազդի) իդեալը: Դրանք կարելի է համարել նկարագրական սոցիոլոգիայի նմուշներ: Օրինակ, ժողովրդի պատկերացմամբ, գահակալը պետք է լինի իմաստուն, շինարար, արդարամիտ, խաղաղասեր, աղքատասեր, ժողովրդասեր, քաջ, գործունյա, կարգուկանոնի պահապան:

Չնայած հայկական սոցիոլոգիայի ստեղծման ճանապարհին հայ սոցիալական մտքի պատմությունը դեռ շատ բացեր ունի և ապագայի գործ է, այսուհանդերձ, առկա նյութերից ելնելով, նշենք, որ հին աշխարհի հայ մտածողների գաղափարներում ակնհայտ է Պլատոնի, Արիստոտելի, նոր պլատոնականների գաղափարների պաշտպանությունը:

2.2 ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ և ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

Միջին դարերը և նոր ժամանակը սոցիոլոգիայի պատմության մեջ պատահաբար չեն միավորված: Բանն այն է, որ միջին

դարերի գրեթե ողջ ընթացքում (5-րդ դարից ընդհուպ մինչև 16-րդ դարը, երբ տնտեսաքաղաքական կյանքը սկսեց ավելի ազատականանալ), իշխում էր աստվածաբանական գաղափարախոսությունը և ըստ էության, հասարակության գիտական ըմբռնման ոլորտում որևէ նոր խոսք չի ասվել: Հասարակության մասին պատկերացումները չէին տարանջատվում քրիստոնեական ուսմունքի հիմնադրույթներից: Փոքր-ինչ տարբերվում էին կրոնական գործիչներ Ավգուստինի (4-5-րդ դդ) և Թովմա Աքվինացու (13-րդ դար) հայացքները: Ավգուստինը հասարակության կյանքը պատկերում է որպես մեղսագործ և աստվածային նախասկիզբների պայքար: Գոյություն ունեն ինչպես արդարների, հրեշտակների (հասարակություններ), այնպես էլ մեղսագործների, սատանաների քաղաքներ: Հռոմը ըստ նրա սատանաների քաղաք էր, այդ պատճառով մ.թ. 410թ. նվաճվեց գոթերի կողմից: Միաժամանակ, նա հասարակությանը դիտարկում էր որպես ամբողջություն, իսկ առանձին իրադարձությունները՝ այդ ամբողջության բաղադրամասեր:

Թովմա Աքվինացին իր՝ «Թագավորների կառավարման մասին» գրքում փորձել է միավորել իշխանության տեսակների վերաբերյալ Արիստոտելի և եկեղեցու, որպես հասարակության զարգացման գերբնական նպատակի վերաբերյալ քրիստոնեական ուսմունքներ: Հանրության մեջ անհավասարությունը նա բացատրում էր նախածին մեղքով, ընդգծելով, որ և՛ ստրկությունը, և՛ ճորտատիրությունը այդ մեղքի հետևանք են և օգտակար՝ երկու կողմի համար էլ: Աքվինացու համար պետական իշխանությունը վեր է տարբեր դասերից, անհրաժեշտություն է և ծագում է Աստծուց, իսկ նրա կոնկրետ ձևերը որոշվում են կարիքներով: Նրա կարծիքով ժողովուրդը իրավունք ունի ապստամբելու բռնակալի անօրինական իշխանության դեմ, նույնիսկ սպանի նրան: Կառավարման լավագույն ձևը համարում էր միապետությունը:

Միջին դարերի հայկական նախասոցիոլոգիական միտքը, չտարանջատվելով ժամանակի առաջադիմական ըմբռնումներից, միաժամանակ ունի ինքնատիպ դրսևորումներ, որը բխում է հայոց պատմության և հայկական բնավորության առանձնահատ-

կություններից: Այդ ժամանակների հայ իմաստունները (Եզնիկ Կողբացի, Մեսրոպ Մաշտոց, Կորյուն, Փավստոս Բյուզանդ, Դավիթ Անհաղթ և այլն) սոցիալական իմաստասիրության դիրքերից, յուրովի քննարկում են հայրենասիրության և ապստամբության, սիրո, անձի զարգացման, չարիքի հաղթահարման և այլ՝ սոցիոլոգիական հետաքրքրություն ներկայացնող հասարակական երևույթներ⁵:

Սոցիոլոգիական տեսակետից հասարակական կյանքի վերաբերյալ համեմատաբար շատ ավելի հարուստ գիտական նյութ են պարունակում նոր ժամանակները: Նախ նշենք սոցիոլոգիայի համար էական նշանակություն ունեցող *վիճակագրության*՝ որպես առանձին առարկայի ձևավորումը 17-րդ դարում՝ Ջոն Գրաունտի և Ուիլյամ Պետտիի կողմից: Այդ ժամանակներում արդեն վիճակագրությունը օգտագործվում էր սոցիալական երեւույթների վերաբերյալ տվյալներ հավաքելու համար:

Ավելի վաղ, Նիկոլո Մաքիավելլին (1469-1527թթ.), առաջինը նոր ժամանակներում, Պլատոնի և Արիստոտելի գաղափարների հիման վրա ստեղծեց հասարակության և պետության իր ինքնատիպ ուսմունքը:

Պլատոնը «Պետության» մեջ շեշտը դնում էր հասարակության կառուցվածքի վրա: Մաքիավելլին, շարունակելով Պլատոնի հիմնական գիծը, շեշտը դնում է քաղաքական առաջնորդի վրա: Նրա գլխավոր աշխատությունը «Տեր»-ն է, որը հասարակության մեջ մարդկանց վարքի մասին գիտության ինքնատիպ նմուշ է:

Մաքիավելլու ուսմունքի համաձայն, այն դեկավարները, ովքեր ուզում են հաջողության հասնել, պետք է իմանան մարդկանց վարքի օրենքները: Համառոտակի այդ օրենքները հետևյալն են.

ա) մարդկանց գործողությունները առաջնորդվում են նաև իշխելու ցանկությամբ; Հասարակության կայունությունը պահպանելու համար պետք է իմանալ, թե որ սոցիալական շերտն է ավելի պատվասեր: Մի մասը (պայմանականորեն հարուստները)

⁵ Ցանկացողները այս մասին մանրամասն կարող են ծանոթանալ Գ. Տ. Խրլուպյանի «Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն» գրքից:

ծգտում են պահպանել ունեցածը, մյուսները՝ ունենալ այն, ինչ չունեն: Երկու շարժառիթն էլ կործանարար է պետության համար: Այդ բանը չջանկացող ղեկավարը պետք է դաժան լինի և անխնա պատժի խռովարարներին, նույնիսկ բռնակալի համբավ ձեռք բերելու վտանգի դեպքում: Ավելի լավ է տուժեն մի քանիսը, քան բոլորը: Սակայն չի կարելի դիպչել դատապարտվածների ունեցվածքին, քանզի մարդիկ ավելի շուտ կներեն ծնողների կորուստը, քան ունեցվածքինը:

բ) Ըստ երկրորդ օրենքի, խելոք ղեկավարը չպետք է բոլոր խոստումները կատարի: Հպատակներն էլ այդ բանը չեն շտապում անել: Կարելի է խոստումներ տալ իշխանության գալու ժամանակ, սակայն նվաճելով այն՝ պարտադիր չէ այդ խոստումները կատարել, որովհետև, ըստ Մաքիավելլու, խոստումները կատարելով, ղեկավարը յուրովի ընկնում է հպատակների ազդեցության տակ, իսկ որտեղ կախվածություն, այնտեղ անվճռականություն, փոքրոգություն և թեթևամտություն: Այն, ինչը ղեկավարի մեջ ամենից շատ չի ընդունում հենց ժողովուրդը: Այնպես որ, ոչ միայն չար, այլև բարի գործերի համար էլ կարելի է ատելություն վաստակել: Սակայն չարությունը վճռականության նշան է: Ուրեմն՝ խորհուրդ. իշխանություն նվաճելու համար, պետք է բարի լինել, բայց որպեսզի նվաճածը պահպանվի՝ պետք է դաժան լինել:

գ) Երրորդ օրենքով չարությունը պետք է գործել միանգամից, իսկ բարությունը՝ աստիճանաբար: Պարզևները, երբ հազվադեպ են, մարդիկ թանկ են գնահատում, իսկ պատիժները պետք է կատարել միանգամից և մեծ չափերով: Միաժամանակյա դաժանությունն ավելի քիչ է գրգռում և ավելի արդարացի է համարվում, քան եթե ժամանակի մեջ ձգձգվում է: Պատիժը կարիք չունի գնահատման և պատասխան երախտագիտության, ինչպես՝ խրախուսանքը:

Մաքիավելլիից հետո հաջորդ քայլը կատարեց Թոմաս Հոբբսը (1588-1679), որը մշակեց հասարակական պայմանագրի տեսությունը: Դա քաղաքացիական հասարակության մասին ուսմունքի հիմքն է:

Թ. Հոբբսը համաձայնության և միասնության պայմաններում

իշխանության վրա հիմնված համատեղ կյանքն անվանում է *պետություն* կամ *քաղաքացիական հասարակություն*: Այն հնարավոր չէ մրջյունների ու մեղունների մեջ, քանզի նրանք չգիտեն ինչ է արդարությունն ու վնասը և այդ պատճառով չեն կարող գիտակցել միասնության և իշխանության կարևորությունը (այստեղ Յոբբսը վիճարկում է Արիստոտելի այն գաղափարը, ըստ որի ոչ միայն մարդիկ, այլև մրջյուններն ու մեղունները հասարակական էակներ են)⁶:

Յոբբսի կարծիքով մոլորություն է այն մտայնությունը, թե մարդիկ ընկերներ են որոնում և միավորվելով՝ պայքարում հանուն ընդհանուր բարեկեցության: Մարդկային բնույթը մղում է որոնելու պատիվ և շահ: Այդ ճանապարհին փոխադարձ վախը խթանում է մարդկանց ընտրովի միավորվելը՝ հանուն մրցակցության մեջ գոյատևելու: Որպես կանոն, պատիվը հասնում է փոքրամասնությանը, իսկ մեծամասնությունը մնում է խաբված: Այդ պատճառով վրա է հասնում հասարակության քայքայումը:

Հարգանքի ու պատվի չարժանանալով՝ մարդիկ ձգտում են այն նվաճել՝ ուրիշներին իշխելու ճանապարհով: Իշխելը երկրային վայելքների ավելի կարճ ճանապարհ է: Այստեղից, «Քաղաքացու մասին» տրակտատում Յոբբսը կատարում է սկզբունքային երկու հետևություն.

1. Մարդիկ ծնվում են համատեղ կյանքին անընդունակ, սակայն դաստիարակության (այն, ինչ անվանեցինք սոցիալիզացիա) ընթացքում ձեռք են բերում հակվածություն դեպի հանրային կյանքը,
2. Քաղաքացիական հասարակությունը ծագում է միմյանց հանդեպ վախից:

Միայն փոխադարձ վախն⁷ է մարդկանց ետ պահում իշխելու անզուսպ վազքից: Կարծես վախը միավորում է, մղում փոխադարձ հոգատարության, ստիպում մտածելու միմյանց անվտանգության մասին: Իսկ պետությունը նման կարիքների բավարար-

⁶ Ի դեպ, մրջյունների և մեղունների գործողություններում և «նպատակներում» առասպելական բնագոյային փոխհամաձայնությունները այսօր առավելապես գիտական մեկնություն են ստանում, և իրողություն են:

⁷ Վախը Յոբբսը հասկանում է որպես ապագա չարի ակնկալիք:

ման լավագույն եղանակն է: Այդ պատճառով էլ կայուն հասարակության հիմքը ոչ թե սերն է ու տրամադրվածությունը, այլ *փոխադարձ վստիք*:

Հոբբսի տեսանկյունից բնական վիճակը բոլորի պատերազմն է բոլորի դեմ: Սա չպետք է հասկանալ սպանելու կամ վիրավորելու իմաստով: Խոսքը գոյատևման սոցիալական պայքարի մասին է: Այն մասին, որ ծագումից ի վեր գոյատևման մաքառումներում բանական էակները իրենց «խելքի ու սրտի» չափով ձգտել են նվաճել իրականությունը և ինքնահաստատվել ուրիշների շրջապատում: Մի մասի վրա ժամանակի ընթացքում անրագրվել է ավել կամ պակաս ունեցվածք, իհարկե դրանից մյուսին զրկելու գնով: Այսպես առաջացել է *անհավասարությունը*: Մենք ուրիշներին վերաբերվում ենք նայած այն բանի, թե ինչպես ենք սուբյեկտիվորեն պատկերացնում նրանց պատշաճ գործողությունները և դրանց հանդեպ մեր հակազդումը: Ասենք նաև, որ այդ պատերազմը դրսևորվում է բառերի և արարքների մեջ: Ըստ Հոբբսի այսպիսին է մարդկանց ամենօրյա կյանքը նախաքաղաքացիական հասարակությունում:

Իր վերոնշյալ գրքում, Հոբբսը նկարագրում է երկու հիմնական բնական օրենք, իսկ դրանցից՝ 20 հետևություն: Օրինակ.

- *մի՛ պահանջիր քեզ համար ավելի իրավունքներ, քան տալիս ես ուրիշներին,*
- *ով քեզ առաջինն է ծառայություն մատուցել, մի՛ թույլ տուր, որ արդյունքում նա ընկնի ավելի վատ վիճակի մեջ, քան մինչ այդ էր:*

Քաղաքացիական հասարակությունը զարգացման բարձրագույն փուլ է: Այն հիմնվում է ոչ թե անձնական ըմբռումների, այլ բոլորի կողմից ընդունված իրավական օրենքների վրա: Քաղաքացիական հասարակության կառավարման երեք ձև կա. ժողովրդավարություն, ազնվապետություն (արիստոկրատիա), միապետություն: Իսկական սեփականությունը ծագում է միայն պետության և համապատասխան հիմնարկությունների (դատարան, ոստկանություն, բանակ և այլն) ի հայտ գալով: Հասարակական համաձայնության արդյունքում օբյեկտիվորեն «բոլորի դեմ բոլորի կողմից» պատերազմը դադարում է: Քաղաքացիները

կամովին սահմանափակում են անձնական ազատությունները՝ փոխարենը ստանալով հուսալի պաշտպանություն:

2.3 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼ

Սոցիոլոգիայի պատմության ժամանակակից փուլը ընդունված է սկսել *Օգյուստ Կոնտից* (1798-1857թթ.): Այդ նա էր, որ առաջինը անվանում տվեց սոցիոլոգիային և որոշեց նրա առարկան ու մեթոդները: Կոնտի շնորհիվ գիտական հանրությունը սոցիոլոգիան ընդունեց որպես առանձին գիտություն: Նրա պոզիտիվ մեթոդի գաղափարը սոցիոլոգիայում համեմատվում է կոպեռնիկոսյան հեղաշրջման հետ:

Մինչ համառոտակի Կոնտի ուսմունքին անցնելը նշենք, որ նա ապրում և գործում էր մի դարաշրջանում, որտեղ օբյեկտիվորեն հասարակության գիտական հետազոտման պահանջարկ առաջացավ: Եվ ոչ միայն: Պակաս չէր կարևորվում այդ հետազոտությունների արդյունքներով հասարակության բարեփոխումների հիմնավորված իրականացումը: 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի առաջին կեսը հասարակական կյանքի արմատական փոփոխությունների ժամանակներ էին: Դա մի եզակի ժամանակահատված էր, երբ տնտեսական ու քաղաքական կյանքի արմատական բարեփոխումները իրենց հակասականությամբ հանդերձ նոր պահանջներ էին դնում գիտական ճանաչողության առջև: Այն չէր կարող չշոշափել նաև հասարակական համակարգը, որի վերաբերյալ մինչ այդ վճռական դատողություններ էին արվում փիլիսոփայական համակարգերի շրջանակում: Հասարակական կյանքի օրինաչափությունների մասին դատողությունները պետք է տեղավորվեին զարգացող գիտության և գիտականության չափանիշների մեջ: Այսինքն անհրաժեշտ էր հասարակության մասին գիտությունը ստեղծել նույն չափանիշներով և նույն կաղապարների մեջ, ուր գտնվում էին մյուս ճշգրիտ գիտությունները: Դրա ստեղծմանն էլ ձեռնամուխ եղավ Օգյուստ Կոնտը:

Ըստ Կոնտի՝ սոցիոլոգիան պետք է ստեղծվեր, քանի որ այն բխում էր իր կողմից ձևակերպված մարդու մտավոր զար-

գացման երեք հաջորդական փուլերի մասին օրենքից: Այդ փուլերն են. աստվածաբանականը, մետաֆիզիկականը և դրականը (պոզիտիվը): Առաջին փուլում բոլոր երևույթները մարդը բացատրում է՝ ելնելով կրոնական պատկերացումներից, գերբնականի գոյության ընդունումից: Երկրորդ՝ մետաֆիզիկական փուլում մարդը հրաժարվում է գերբնականի «օգնությանը դիմելուց» և ձգտում է գոյություն ունեցողը բացատրել վերացական էությունների, պատճառների միջոցով: Այս երկրորդ փուլը քննադատական դեր է կատարում: Փլուզելով նախորդ ըմբռնումները՝ նա հիմք է ստեղծում երրորդ՝ *դրական* կամ *գիտական* փուլի համար: Այս փուլում, ըստ Կոնտի, գիտությունը ձգտում է իսպառ հրաժարվել վերացական էություններից, անլուծելի հարցադրումներից: Ուրիշ խոսքով, գիտությունը հրաժարվում է երևույթների էությունը բացահայտելուց: Նա սահմանափակվում է երևույթների միջև հնարավոր կայուն կապերի ամրագրումով, ինչն իրագործվում է դիտարկման և գիտափորձի օգնությամբ:

Մի փուլից մյուսին անցումը կատարվում է աստիճանաբար, պարզից դեպի բարդը սկզբունքով: Որքան օբյեկտը պարզ է, այնքան ավելի շուտ է դրական գիտելիքը հաստատվում: Դրա համար էլ սկզբում այն տարածվել է մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղագիտության, քիմիայի, այնուհետև կենսաբանության վրա: Սոցիոլոգիան դրական գիտելիքի գագաթնակետն է, քանի որ հասարակությունը ամենաբարդ օբյեկտն է: Այդ գիտելիքը ձեռք է բերվում դրական (պոզիտիվ) մեթոդի օգնությամբ: Այսինքն, այստեղ տեսական վերլուծությունը հենվում է դիտարկումների, գիտափորձերի և համեմատական հետազոտությունների օգնությամբ ստացված հուսալի, ստուգված, կասկած չհարուցող տվյալների վրա:

Կոնտը հայտնագործել է նաև աշխատանքի բաժանման և կոոպերացիայի օրենքը: Այս օրենքից էլ, որպես հետևություն, նա բխեցրել է սոցիոլոգիայի ստեղծման անհրաժեշտությունը: Աշխատանքի բաժանումը և կոոպերացիան Կոնտը համարում էր մարդկության պատմության համար ահռելի նշանակության գործոններ: Դրանց շնորհիվ առաջացել են սոցիալական և մասնագիտական խմբերը, աճել է բազմազանությունը և մարդկանց

նյութական բարեկեցությունը: Սակայն, միաժամանակ, այդ նույն գործոնները օժանդակել են հասարակության հիմքերի քայքայմանը, քանզի դրանք նպատակաուղղված են հարստության կենտրոնացմանը և մարդկանց շահագործմանը, միակողմանի մասնագիտացմանը: Այն, ինչ այլասերում է անձին, մարդկանց մեջ մեկը մյուսի հանդեպ սերմանում է ատելություն: Արդյունքում հնարավոր է դառնում այնպիսի խմբակային միավորների առաջացում, որոնք էությամբ եսամոլական են և որոնց բարոյական ուղղվածությունը կարելի է արտահայտել «միայն մեզ, միայն մերը» սկզբունքով: Իսկ դա որոշակի թողտվության դեպքում, մարդկանց մեջ ներմուծում է անհամաձայնություն, պառակտվածություն, այն, ինչը խարխիլում, ընդհուպ քանդում է հասարակության հիմքերը: Ահա, ըստ Կոնտի, հենց սոցիոլոգիան է կոչված հաստատելու համերաշխությունն ու համաձայնությունը:

Ձարգացման իր ըմբռնումների համաձայն՝ Կոնտը սոցիոլոգիան բաժանում է երկու մասի. **սոցիալական ստատիկա** և **սոցիալական դինամիկա**:

Սոցիալական ստատիկան ուսումնասիրում է հասարակական համակարգի գործառնման պայմաններն ու օրենքները: Այստեղ դիտարկվում են հասարակական հիմնական ինստիտուտները. ընտանիքը, պետությունը, կրոնը՝ դրանց հանրային նշանակության, համերաշխության ու համաձայնության (կոնսենսուս) հաստատման մեջ ունեցած դերի տեսանկյունից: **Սոցիալական դինամիկայում** Կոնտը ձևակերպում է հասարակական առաջընթացի տեսությունը, ուր վճռական գործոնը մարդկության մտավոր, հոգևոր զարգացումն է:

Սակայն սոցիոլոգիական հետազոտությունների փորձնական բազան և ճանաչողության մեթոդները ավելի վաղ էին ձևավորվել ու մշակվել են հիմնականում, բնագետների կողմից: Արդեն 17-18-րդ դդ. Ջ.Գրաունտը և Է.Գալլեյը մշակում էին սոցիալական գործընթացների քանակական հետազոտման մեթոդները: Մասնավորաբար Ջ.Գրաունտը այն կիրառեց մահացածության մակարդակի վերլուծության առիթով, 1662թ.: Իսկ հայտնի ֆիզիկոս և մաթեմատիկոս Լապլասի «Չավանականության փիլիսոփայական ուրվագծեր» աշխատանքը կառուցված է ազգա-

բնակչության դինամիկայի քանակական նկարագրի վրա:

Փորձարարական սոցիալական հետազոտություններն առօրյա դարձան 19-րդ դարում: Հանրային կյանքի վերոնշյալ փոփոխությունները մի կողմից բացահայտեցին «սոցիալական հիվանդությունները» (գործազրկություն, զանգվածային հիվանդություններ, աղքատության և հանցագործության աճ և այլն), մյուս կողմից ի հայտ եկան այն ուժերը, որոնք շահագրգիռ էին տվյալ հիվանդությունները բուժելու հարցում և կարող էին հանդես գալ որպես սոցիոլոգիական հետազոտությունների պատվիրատուներ: Հետազոտությունների արդյունքում ենթադրվում էր հիվանդությունների «բուժման դեղատոմսի» հայտնաբերումը:

Մեթոդապես գիտական սոցիոլոգիայի հիմքը շատ մասնագետներ համարում են 19-րդ դարի խոշորագույն վիճակագիրներից մեկի՝ Ադոլֆ Կետլեյի՝ «Մարդու և ունակությունների զարգացման մասին կամ սոցիալական կյանքի փորձ» աշխատությունը (1835թ.): Համարվում է, որ տվյալ աշխատության մեջ առաջինը սոցիոլոգիական պրակտիկայում, մտահայեցողական հետազոտություններից անցում կատարվեց ճշգրիտ գիտական չափանիշներին բավարարող ուսումնասիրություններին:

Ընդհանրապես սոցիոլոգիայի գիտականության վերաբերյալ միարժեք տեսակետ չկա: Ընդունված է գիտականության երեք տիպ. *դասական, ոչ դասական և խառը* (էկլեկտիկ): Դասական տիպը ըստ ավանդույթի՝ ներկայացնում են Օ.Կոնտը, Հ.Սպենսերը, Է.Դյուրկհեյմը: Տվյալ տիպի մեթոդաբանական հիմնական սկզբունքները հետևյալն են. 1) Սոցիալական երևույթները ենթարկվում են ողջ իրականության համար ընդհանուր օրենքներին: Հատուկ սոցիալական օրենքներ չկան; 2) Այդ պատճառով սոցիոլոգիան պետք է կառուցվի բնական («դրական») գիտությունների նման; 3) Սոցիալական հետազոտության մեթոդները պետք է նույնչափ ճշգրիտ և խիստ լինեն: Բոլոր սոցիալական երևույթները պետք է նկարագրվեն քանակապես; 4) Սոցիոլոգիական գիտելիքը պետք է օբյեկտիվ լինի, այսինքն՝ սուբյեկտիվ տպավորություններ ու հայեցողական դատողություններ չպետք է պարունակի (պետք է ազատ լինի արժեքային դատողություններից և գաղափարախոսություններից):

Սոցիոլոգիայի գիտականացման մեջ էական է մյուս հսկայի, Էմիլ Դյուրկհեյմի դերը (1858-1917թթ.): Նա Օգյուստ Կոնտի, Յերբերտ Սպենսերի կողքին դասական սոցիոլոգիայի հիմնադիրներից է: Դասական է համարվում այն մոտեցումը, ըստ որի բնագիտական և սոցիոլոգիական գիտելիքների միջև սկզբունքային որևէ տարբերություն չի դրվում: Դյուրկհեյմը ընդունում էր սոցիալական փաստերի օբյեկտիվ իրողությունը, ինչն առանցքային գաղափար էր նրա սոցիոլոգիական մեթոդի համար: «Սոցիոլոգիական մեթոդի կանոնները» գրքում նա շարադրում է *սոցիալական փաստերի* հանդեպ այն պահանջները, որոնք սոցիոլոգիան դարձնում են գիտություն:

Ըստ *առաջին կանոնի սոցիալական փաստերը* դիտարկվում են որպես իրեր: Այսինքն դրանք.

ա) արտաքին իրողություն են անհատների համար (նրանց անձը չեն շոշափում, ինչպես օրինակ $F=ma$ օրենքը չի շոշափում Նյուտոնի անձը);

բ) նյութական են, խիստ դիտարկելի և անդեմ (կարող են լինել օբյեկտներ այնպես, ինչպես ատոմը, մոլեկուլը, մոլորակը և այլն՝ ֆիզիկայում);

գ) երկու և ավելի սոցիալական փաստերի միջև պատճառական հարաբերությունների հաստատումն օգնում է ձևակերպել հասարակական կյանքի մշտական օրենքները (սոցիալական փաստերի մասին տես սույն դասագրքի գլուխ 1-ում):

Երկրորդ կանոնի համաձայն սոցիոլոգիան պետք է պարբերաբար սահմանազատվի ցանկացած գաղափարախոսություններից, անձնական կողմնակալություններից, նախապաշարումներից:

Երրորդ կանոնը թելադրում է ընդունել ամբողջի գերակայությունը իր բաղկացուցիչ մասերի հանդեպ (օրինակ՝ ընտանիքի գերակայությունը ծնողներից որևէ մեկի, կամ երեխաներից որևէ մեկի հանդեպ): Ըստ Դյուրկհեյմի, այս կանոնից բխում է, որ.

ա) սոցիալական փաստերի աղբյուրը հասարակության մեջ է, այլ ոչ թե անհատների մտածողության կամ վարքի,

բ) հասարակությունը սեփական օրենքներով ինքնակառավարվող համկարագ է, օրենքներ, որոնք չեն հանգում յուրաքանչ-

յուր անհատի գիտակցությանը կամ գործողությանը:

Այսպիսով, ըստ Դյուրկհեյմի, սոցիոլոգիան հիմնվում է *սոցիալական փաստերի* ճանաչողության վրա: Սոցիալական փաստը ինքնատիպ է: Այն ծնվում է անհատների միացյալ գործողություններից, սակայն բնույթով որակապես տարբերվում է այն ամենից, ինչ կատարվում է անհատական գիտակցությունների մակարդակում: Այստեղ հիմքը, ի տարբերություն անհատական գիտակցության, խմբային գիտակցությունն է: Որպեսզի սոցիալական փաստն առաջանա, հարկ է, որ նվազագույնը մի քանի անհատներ միավորեն իրենց գործողությունները, և ծնվի նոր արդյունք: Մի շարք գիտակցությունների փոխազդեցության արդյունքում ամրագրվում, հաստատվում են վարքի, գործողության եղանակների, արժեքների նմուշներ, որոնք անհատական գիտակցություններից դուրս են: Այսինքն, գոյություն ունեն *օբյեկտիվորեն*: Օրինակ, մարդկանց միջավայրում չի կարելի հայհոյել, պետք է տեղը զիջել մեծին, մայրը սրբություն է, աշխատանքում հարկ է բարեխիղճ լինել և այլն:

Առարկային վերաբերող մեթոդաբանական հարցերի կողքին, Դյուրկհեյմի կարծիքով առանցքային սոցիոլոգիական հիմնահարցը *սոցիալական համերաշխությունն* է: Ըստ նրա, հասարակական համակարգը ձևավորող և նրա պահպանմանը նպաստող ուժը, չնայած կենտրոնախույս միտումներին, աշխատանքի բաժանումն է: Դա նշանակում է մասնագիտացում և ըստ զբաղմունքների մարդկանց բաշխում: Աշխատանքային տարբեր դերերի կատարումը և ապրանքների (աշխատանքի արդյունքների) փոխանակումը հասարակական հարաբերությունների *ներդաշնակ համակարգի* հաստատման հիմքն է: Աշխատանքի բաժանումը հասարակության բարձր զարգացածության հատկանիշ է: Սրա կողքին, որքան տվյալ անձնավորությունը մասնագիտորեն լիարժեք է, այնքան ընկալվում է սոցիալապես ավելի հասուն: Տվյալ փոխհակասական գործընթացները վերապրել են պատմական զարգացման երկարատև փուլ:

Դյուրկհեյմը *մեխանիկական* և *օրգանական համերաշխությամբ* օժտված հասարակությունները դիտարկում է որպես էվոլյուցիայի միասնական շղթայի երկու օղակներ:

Չգարգացած, պարզունակ հասարակարգերում գերիշխում է մեխանիկական համերաշխությունը: Ուրիշ խոսքով կարելի է ասել, որ այստեղ, ինչպես անօրգանական իրի դեպքում, բոլոր մոլեկուլները նման են և կապված են զուտ մեխանիկական կապով: Համերաշխությունն այստեղ որոշվում է անհատների նմանությամբ, նրանց կատարած հասարակական գործառույթների միատեսակությամբ, անհատական գծերի թույլ զարգացածությամբ: Որոշ վերապահությամբ կարելի է ասել, որ պարզունակ հասարակության մեջ գործնականում անձ չկա: Գրեթե ամեն ինչում գերիշխում է խմբային գիտակցությունը: Ասենք, որ այն չպետք է շփոթել անհատական գիտակցության հետ, քանզի արտացոլում է ժողովրդի բնավորությունը, իդեալներն ու ավանդույթները: Մեխանիկական համերաշխությունը հնարավոր է խմբի (համայնքի) կողմից անհատականությունը «կլանելու» հաշվին: Նման համերաշխությանը բնորոշ է ճնշող իրավունքը: Մենք սիրում ենք բոլոր նրանց, ովքեր մեզ նման են մտածում և զգում: Օտարության մեջ ակամայից ձգտում ենք միմյանց: Եթե հավատքը, իդեալներն ու ավանդույթները վտանգի տակ են, բոլորս համերաշխորեն այն պաշտպանում ենք: Հավատքը վիրավորելը ծանրագույն հանցանք է: Անհատական շեղումները այստեղ բացառվում են: Խմբային գիտակցությունը կարգավորում է անհատի ողջ կյանքը՝ առանց մնացորդի: Խմբի (համայնքի) հեղինակությունը բացարձակ է:

Աշխատանքի բաժանման զարգացումը տարբերակվածություն է առաջացնում, առավելագույնս բազմանում են գործողություններն ու դերերը, դրա հետ մեկտեղ՝ փոխապայմանավորվածությունը: Արդյունքում մարդկանց մոտ ավելանում է թե՛ միասնականությունը, և թե՛ փոխանակման ձգտումը: Փոխանակման խորհրդանիշ, իրավական ձև է դառնում *պայմանագիրը*: Երկու կողմ փոխադարձ պարտավորություններ են վերցնում (գործարարը բանվորի հետ, վաճառողը գնորդի հետ և այլն), որից բխում է համագործակցությունը և միավորումը: Դրանք *սոցիալական փոխազդեցության* ձևեր են, որոնք կարգավորվում են իրավունքով և օրենքով: Վերջիններիս վրա են հիմնված հասարակության սոցիալական ինստիտուտները:

Սա արդեն զարգացած հասարակություն է, որտեղ անհատներն ու խումբը (համայնքը) փոխլրացնում են միմյանց: Այս անհատները պարզունակ հասարակության անհատներ չեն՝ բոլորը միմյանց նման: Նրանք տարբեր են և գիտակցորեն միավորված: Այսպիսի համերաշխությունը, օրգանիզմի նմանարկումով, Դյուրկհեյմը անվանում է *օրգանական: Օրգանական համերաշխությունը* հիմնված է հայացքների և զբաղմունքների տարբերակվածության վրա: Ինչքան հասարակությունը ավելի բարդ է (այսինքն, բազմազան ու անորոշ վարքի կանոններ ունի), այնքան մեծ ջանքեր և ունակություն է պահանջվում դրանք հասկանալու համար: Այնպես որ, հասարակության առաջընթացին զուգահեռ կրթվածության միջին մակարդակը աճում է, իսկ խմբային գիտակցության ստիպողական բնույթը թուլանում է: Հասարակությունը քիչ է խառնվում (չի խառնվում) անձնական և ընտանեկան գործերի մեջ: Նրա անձեռնմխելիությունն ապահովվում է հասարակական ինստիտուտների ամբողջության միջոցով: Հակառակը, չզարգացած և ամբողջատիրական (տոտալիտար) հասարակություններում մասնավոր կյանքը պահպանված չէ: Հայտնի է, որ եղել են ժամանակներ, երբ պետությունը նախանշում էր գրեթե ամեն ինչ, կապված մարդկանց վարքի հետ, ընդհուպ մինչև հագուստի ձևն ու տեսքը: Աստիճանական ազատությունները մարդկանց «հոտի» մեջ սկսեցին առանձնացնել անձանց: Դյուրկհեյմը պատմականորեն անձի առաջին տիպ համարում է ցեղի առաջնորդին, որը կարողացավ սեփական կարծիքն ու անձնական կյանքը հակադրել համայնքի կարծիքին ու կամքին:

Ոչ դասական գիտականությունը սոցիոլոգիայում մշակվել է գերմանական մտածողների Գ.Զիմմելի (1858-1918թթ.) և Մ.Վեբերի (1864-1920թթ.) կողմից: Ըստ նրանց, բնության և հասարակության օրենքները սկզբունքորեն հակադիր են: Այդ պատճառով առկա է գիտական գիտելիքի երկու տիպ՝ բնագիտական և հումանիտար: Սոցիոլոգիան սահմանային գիտություն է, հետևաբար երկուսից էլ պետք է փոխառնի այն ամեն լավը, որը պիտանի է օգտագործման համար: Բնագիտությունից փոխառնվում է փաստերի ճշգրտությանը և իրականության պատճառա-հետևանքային բացատրությանը հակվածությունը, իսկ հումանիտար գի-

տություններից՝ *ընթանման և արժեքներին վերագրման մեթոդը*: Ջիմմեյլը և Վեբերը՝ որպես սոցիոլոգիական գիտելիքի առարկա, մերժում էին այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են՝ «հասարակությունը», «ժողովուրդը», «նարդկությունը», «կոլեկտիվը» և այլն: Ըստ նրանց, սոցիոլոգի հետազոտման առարկա կարող է լինել միայն անհատը: Քանզի հենց անհատն է գիտակցության, սեփական գործողությունների մոտիվացման (շարժառիթականացման) և բանական վարքի կրողը: Գ.Ջիմմեյլը և Մ.Վեբերը հատուկ ընդգծում էին սոցիոլոգի կողմից այն սուբյեկտիվ իմաստի ընթանման կարողությունը, որը գործող անհատը դնում է իր գործողության մեջ: Դիտարկելով մարդկանց գործողությունների շղթան՝ սոցիոլոգը պետք է այդ գործողությունների ներքին շարժառիթների հիման վրա ձևավորի դրանց բացատրությունը: Այստեղ սոցիոլոգին օգնելու է այն բանի իմացությունը, թե նմանատիպ իրադարձություններում մարդկանց մեծամասնությունը, առաջնորդվելով նման շարժառիթներով վարվում է միանման: Ելնելով նման ընթանումներից՝ Գ.Ջիմմեյլը և Մ.Վեբերը ձևակերպում են մի շարք այնպիսի մեթոդաբանական սկզբունքներ, որոնց վրա, իրենց կարծիքով, պետք է հենվի սոցիոլոգիական գիտելիքը.

1. Սոցիալական գիտությունը պետք է ելնի այն հանգամանքի ընդունումից, թե *սոցիալական տեսությունն* ու *իրականությունը* սկզբունքորեն տարբեր *իրողություններ են* (ըստ նրանց, գիտական աշխարհայացքից դուրս պետք է մղվեն գիտելիքների բովանդակության օբյեկտիվության մասին մեր պատկերացումները):

2. Այդ պատճառով սոցիոլոգիան չպետք է ավելիին հավակնի, քան կատարված իրադարձությունների այս կամ այն պատճառների բացահայտումը: Ըստ որում՝ պետք է հրաժարվել «գիտական կանխատեսումներից»:

Այս երկու սկզբունքները կարող են այնպիսի տպավորություն ստեղծել, թե սոցիոլոգիական տեսությունը օբյեկտիվ, համընդհանուր իմաստ չի կրում, այսինքն՝ ինչ-որ իմաստով հակագիտական է: Բացառելու համար նման տպավորությունը նրանք պնդում են.

3. Սոցիոլոգիական տեսություններն ու հասկացությունները

մտավոր կամայականության արդյունք չեն, քանզի, մտավոր գործունեությունը ենթարկվում է տրամաբանության կանոններին և համամարդկային արժեքներին:

4. Սոցիոլոգը պետք է գիտակցի, որ իր մտավոր գործունեության մեխանիզմի հիմքում ընկած է բազմազան փորձնական տվյալների *վերագրումը* համամարդկային արժեքներին: Ինչպես նշում է Մ.Վեբերը. «Արժեքների վերագրումը սահման է դնում մտավոր կամայականությանը»:

Մ.Վեբերը տարանջատում է *«արժեքային դատողություններ»* և *«արժեքներին վերագրում»* հասկացությունները: Առաջինը միշտ սուբյեկտիվ ու անձնական է (օրինակ՝ «հայրենասիրությունը մարդկային գոյության կարևոր որակներից է»): Երկրորդը՝ արժեքների վերագրումը ներկայացնում է գործողություններ, փորձնական նյութի կազմակերպում (օրինակ՝ տվյալներ մարդկանց՝ հայրենիքի հանդեպ վերաբերմունքի, դրանց դրսևորումների մասին, այդ տվյալների ընդհանրացում և այլն): Արժեքներին վերագրումն անհրաժեշտ է բազմազան և բազմաբնույթ փաստերի «հեղեղի» մեջ կողմնորոշվելու համար: Այն հարցին, թե որտեղի՞ց է արժեքային նախապատվությունը վերցվում, Մ.Վեբերը պատասխանում է.

5. Արժեքային նախապատվությունների փոփոխությունը սոցիոլոգը որոշում է «դարաշրջանի շահով», այսինքն՝ սոցիալապատմական այն հանգամանքներով, որոնցում գործում են:

Իսկ ինչպիսի՞ն են այն ճանաչողական հնարքները, որոնց միջոցով իրականացվում են «ըմբռնողական սոցիոլոգիայի» հիմնական սկզբունքները: Գ.Զինմելի կարծիքով նման հնարքը սոցիալական երևույթի մեջ կայուն, համապարփակ գծերի, այլ ոչ թե սոցիալական փաստերի փորձնական բազմազանության ամրագրումն է: Նա գտնում էր, որ կոնկրետ կեցությունից վեր բարձրանում է *իդեալական արժեքների աշխարհը*: Այդ աշխարհը գոյություն ունի նյութական աշխարհից տարբեր օրենքներով: Սոցիոլոգիայի նպատակն է արժեքներն ուսումնասիրել ինքնին, որպես մաքուր ձևեր: Սոցիոլոգիան պետք է ձգտի ցանկությունները, ապրումներն ու շարժառիթները, որպես հոգեբանական կողմեր մեկուսացնել դրանց օբյեկտիվ բովանդակությունից:

Այնուհետև՝ բաժանելով արժեքային ոլորտը, որպես իդեալականի տիրույթ, դրա հիման վրա մաքուր ձևերի տեսքով կառուցել սոցիալական աշխարհի ինչ-որ երկրաչափություն: Այսպիսիով, Գ.Զիմմելի ուսմունքում *մաքուր ձևը* ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատների միջև այնպիսի հարաբերություն, որն անկախ է այն օբյեկտներից, որոնք հանդես են գալիս որպես իրենց ցանկությունների, ձգտումների և ուրիշ հոգեբանական ակտերի օբյեկտներ: Գ.Զիմմելի ձևական-երկրաչափական մեթոդը թույլ է տալիս դիտարկել ընդհանրապես հասարակությունը, ընդհանրապես ինստիտուտները և կառուցել այնպիսի համակարգ, ուր սոցիոլոգիական գիտելիքն ազատված է սուբյեկտիվ կամայականություններից և բարոյացնող արժեքային դատողություններից:

Մ.Վեբերի մոտ ճանաչողության հիմնական միջոցը «իդեալական տիպեր»-ն են: Դրանք իրականության մեջ փորձնական նախատիպեր չունեն և այն չեն արտացոլում: Դրանք հետազոտողի կողմից ստեղծված մտային տրամաբանական կառույցներն են: Այդ կառույցները ձևավորվում են իրականության առանձին այն գծերի տարանջատումով, որոնք հետազոտողի տեսանկյունից առավել տիպական են: «Իդեալական տիպը»,- գրում է Մ.Վեբերը,- «այնպիսի համասեռ մտածողության նկար է, որը գոյություն ունի գիտնականների երևակայության մեջ և նախատեսված է ակնհայտ, առավել «տիպական սոցիալական փաստերի» դիտարկման համար»: Իդեալական տիպերը սահմանային այն հասկացություններն են, որոնք ճանաչողության մեջ օգտագործվում են որպես մասշտաբ սոցիալական պատմական իրողությունը այդ հասկացությունների հետ հարաբերակցելու և համեմատելու համար: Ըստ Վեբերի բոլոր սոցիալական փաստերը բացատրվում են սոցիալական տիպերով: Վեբերն առաջարկել է սոցիալական գործողությունների տիպայնացումը, պետության և նպատակահարմարության տեսակները: Նա գործածում է այնպիսի իդեալական տիպեր, ինչպիսիք են՝ «կապիտալիզմ»-ը, «բյուրոկրատականություն»-ը, «կրոն»-ը և այլն: Ինչ հիմնական խնդիր են լուծում իդեալական տիպերը: Մ.Վեբերը գտնում է, թե սոցիոլոգիայի հիմնական նպատակն է առավելագույնս ըմբռնելի դարձնել այն, ինչ իրականում այդպիսին չէ, բացահայտել այն

իմաստը, որը վերապրված է, եթե նույնիսկ այդ իմաստը մարդկանց կողմից չի գիտակցվել: Իդեալական տիպերն են հենց թույլ տալիս սոցիալական կամ պատմական տվյալ նյութը դարձնել ավելի իմաստալից, քան այն եղել է իրական կենսափորձում:

Սոցիոլոգիայում գիտականության դասական և ոչ դասական տիպերի յուրօրինակ համադրությունն է Կ.Մարքսի, Ֆ.Էնգելսի և Երաց հետևորդների՝ հասարակության մասին մատերիալիստական ուսմունքը: Դրա հիմնական սկզբունքներն են.

- հասարակական զարգացման օրինաչափության ընդունումը;
- դետերմինիզմի՝ պատճառա-հետևանքային կապի ընդունումը. ըստ որում՝ բոլոր հասարակական կապերից գլխավորը արտադրողական ուժերն են և արտադրական հարաբերությունները, որոնց միասնությունը կազմում է արտադրատեղանակը;
- հասարակական կյանքում համընթաց առաջադիմող զարգացման ընդունումը, որն արտահայտվում է «հասարակական-տնտեսական ֆորմացիա» հասկացության միջոցով;
- հասարակության զարգացման, որպես բնապատմական գործընթացի ընդունումը;
- կուսակցականության ընդունումը սոցիոլոգիական ճանաչողության մեջ:

Եթե մնացած սկզբունքները յուրատեսակ կոնտիզմի և սպենսերիզմի արտահայտություններն են, ապա վերջինը, որը ձևակերպվել է Վ.Ի.Լենինի կողմից, Գ.Զիմելի և Մ.Վեբերի «արժեքների վերագրման» սկզբունքի նմանակն է՝ յուրովի մեկնաբանմամբ:

Սոցիոլոգիայի առաջացման պատմությանը համառոտակի ծանոթանալուց հետո այժմ անցնենք կարևորագույն հիմնահարցերից մեկի՝ սոցիոլոգիական հետազոտության ծրագրի շարադրմանը, որը ցանկացած ուսումնասիրության արդյունավետության անհրաժեշտ նախադրյալն է:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 2-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. *Կիրառական սոցիոլոգիայի պատմությունը՝ հին աշխարհ:*
2. *Կիրառական սոցիոլոգիայի պատմությունը՝ միջին դարեր և նոր ժամանակ:*
3. *Օգյուստ Կոնտի սոցիոլոգիան:*
4. *Էմիլ Դյուրհեյմի սոցիոլոգիան:*
5. *Գ. Ջիմմելի և Մ. Վեբերի սոցիոլոգիան:*
6. *Մարքսյան սոցիոլոգիայի հիմնական սկզբունքները:*

ԳԼՈՒԽ 3

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ցանկացած սոցիոլոգիական հետազոտության կազմակերպումը ունի մի շարք փուլեր. ինֆորմացիայի հավաքում, մշակում, վերլուծություն: Հետազոտության ծրագիրը այս բոլոր փուլերի տեսական-մեթոդական հիմքն է: Ծրագրի բովանդակությունը կախված է հետազոտության ընդհանուր ուղղվածությունից, գլխավոր նպատակից: Սույն իմաստով տարբերում են հետազոտությունների երկու տիպ.

մեկը՝ տեսական-կիրառական հետազոտությունն է, ինչը նշանակում է աջակցություն սոցիալական հիմնահարցերի լուծմանը՝ դրանց ուսումնասիրման, մեկնաբանման և բացատրության նոր, ավելի խորը և համակողմանի մոտեցումների մշակմամբ,

երկրորդ՝ կիրառական տիպը, նպատակաուղղված է կոնկրետ սոցիալական հիմնահարցերի գործնական լուծմանը՝ որոշակի գործողություններով և որոշակի ժամկետներում: Այդ պատճառով մեծ հետազոտությունները երբեմն կոչվում են սոցիալ-ինժեներական (ճարտարագիտական): Կիրառական հետազոտությունների անմիջական արդյունքը պետք է լինի *սոցիալական նախագծի*, այսինքն՝ պրակտիկայում ներդնելու համար միջոցառումների մշակումը:

Առանց մանրակրկիտ ու հստակ մշակված ծրագրի անհնար է սոցիոլոգիական հետազոտության մեջ ակնկալել հաջողություն:

Ծրագիրը բաղկացած է երկու մասից.

ա) մեթոդաբանական և բ) ընթացակարգային:

Մեթոդաբանական բաժինը ներառում է.

- հիմնահարցի ձևակերպումը, հետազոտության առարկայի և օբյեկտի որոշումը,

- հետազոտության նպատակի որոշումը և խնդիրների առաջադրումը,

- հիմնական հասկացությունների ճշգրտումը և մեկնությունը,

- հետազոտության օբյեկտի նախնական համակարգային վերլուծությունը,

- աշխատանքային վարկածների ծավալումը:

Ընթացակարգային բաժինը ներառում է.

- հետազոտության սկզբունքային (ռազմավարական) պլանը,

- դիտարկման միավորների ընտրման համակարգի հիմնավորումը,

- ելակետային տվյալների հավաքման և վերլուծության հիմնական ընթացակարգերի ուրվանկարը:

Ընթացակարգային բաժնի այս վերջին կետը ձեռնարկում քննարկվում է առանձին ինֆորմացիայի հավաքման և վերլուծության մեթոդները գլուխներում:

3.1 ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐԳՈՒՄ, ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Եթե փորձենք ճանաչողական իմաստով հակիրճ ու մատչելի արտահայտել հիմնահարցը, այն ներկայանում է որպես *«իմացություն չիմացության մասին»*: Մարդիկ կարիք ունեն որոշակի արդյունարար գործնական կամ տեսական գործողությունների: Սակայն շատ հաճախ չգիտեն, թե ի՞նչ ուղիներով, մեթոդներով ու հնարքներով է հարկավոր այդ անհրաժեշտ գործողությունները իրականացնել: Այստեղ է, որ առաջանում է հիմնահարցային իրադրությունը:

Հիմնահարցը կարող է դրսից պատվիրվել կամ էլ պայմանավորված լինել ճանաչողական հետաքրքրությամբ: Մեզ ավելի շատ հետաքրքրում են այն կիրառական հիմնահարցերը, որոնք ծագում են արտադրական (տնտեսական) կյանքում:

Կիրառական սոցիոլոգիայում, չնայած սերտ կապվածությանը, հիմնահարցը տարբերում են հիմնահարցային (պրոբլեմային) իրադրությունից: Հիմնահարցը կարող է լինել ավելի լայն, քան պրոբլեմային իրադրությունը: Միաժամանակ չի բացառվում, որ պրոբլեմային իրադրությունը ներառում է կամ առաջացել է մի քանի հիմնահարցերից: Օրինակ, հետխորհրդային շատ երկրներում, այդ թվում Հայաստանում բավական սուր է դրված

ազգաբնակչության զբաղվածության հիմնահարցը: Սակայն կոնկրետ հետազոտության մեջ տվյալ հիմնահարցի շրջանակներում կարող ենք դիտարկել պրոբլեմային իրադրությունը՝ կապված ճարտարագետների հետ: Այսինքն՝ այն հակասությունը, որը գոյություն ունի երիտասարդ ճարտարագետների աշխատելու ցանկության և Հայաստանում նման աշխատատեղերի անբավարարության հետ: Հակառակ օրինակը, որը կարող է ցուցադրվել, հետևյալն է՝ հայտնի է, որ այժմ գոյություն ունի արժեքների փոփոխման, վերագնահատման հիմնահարցերը, ինչպես և առկա է տնտեսական անկայունության հիմնահարցը: Բավական սուր են դրված ազգաբնակչության առողջության, հանցագործությունների աճի, էկոլոգիական (օրինակ՝ անտառահատման, Սևանի պահպանման) հիմնահարցերը: Մեզ կոնկրետ կարող է հետաքրքրել Երևանի երիտասարդության բարոյահոգեբանական ինքնազգացողության խնդիրը: Տվյալ դեպքում պրոբլեմային իրադրությունը հակասությունն է այդ ինքնազգացողության մասին տեղեկություններ ունենալու անհրաժեշտության և այդ տեղեկությունները չունենալու միջև: Այն պետք է հետազոտվի վերլուծության օգնությամբ, ինչին կարող է օժանդակել վերոնշյալ հիմնահարցերի հաշվառումը:

Նշենք նաև, որ եթե հիմնահարցը բավական վերացականորեն արտահայտված ինչ-որ չլուծված խնդիր է, ապա պրոբլեմային իրադրությունը կոնկրետ հետազոտման ենթակա հիմնահարցի (կամ հիմնահարցերի) խտացումն է:

Հիմնահարցի ձևակերպումը սոցիոլոգիայում նաև միջառարկայական է: Փիլիսոփայական, տնտեսագիտական, քաղաքագիտական, հոգեբանական, իրավագիտական գիտելիքները, կոնկրետ կյանքի իմացությունը, կենսական խնդիրների հետ խորությամբ հաղորդակցվածությունը սոցիոլոգի գլխավոր հատկանիշներից են, ինչպես նաև ոչ մակերեսային ու ոչ միակողմանի հիմնահարցի ձևակերպման գրավականը:

Ընդունված է արտադրական հիմնահարցը նկարագրել հետևյալ հինգ բնութագրերով.

1) **էությունը կամ բովանդակությունը:** Օրինակ, արտադրության ցածր արդյունավետությունը, սոցիալ-հոգեբանական

բարձր լարվածությունը խմբում և այլն: Հիմնահարցը որոշելիս պետք է ասենք, թե ի՞նչի հիման վրա և ի՞նչի հետ համեմատած ենք ասում, որ արդյունավետությունը ցածր է կամ լարվածությունը՝ բարձր:

2) **Գտնվելու կազմակերպչական և ֆիզիկական վայրը:** Ո՞ր բաժնում (տեղամասում, արտադրամասում և այլն) և ֆիզիկական օբյեկտներում (գործարան, շենք, պահեստ, գրասենյակ) է հայտնաբերվել հիմնահարցը: Ի՞նչ ստորաբաժանումների շահեր է այն շոշափում և որքանով է լայնորեն տարածված:

3) **Հիմնահարցի տիրապետումը:** Արդյոք հիմնահարցը «բաց» է, թե՛ «փակ», այսինքն, բոլորի՞ն է հայտնի, թե՛ միայն որոշ անձանց: Ովքե՞ր են շահագրգռված տվյալ հիմնահարցի լուծմամբ:

4) **Բացարձակ և հարաբերական մեծությունը:** Որքանով է հիմնահարցը բացարձակ չափերով կարևոր: Օրինակ, դրամական կամ ժամանակային կորուստների ծավալը, չօգտագործվող հզորությունների ծավալը և այլն: Կամ հարաբերականորեն որչափով է այն կարևորվում, ինչպե՞ս է անդրադառնում ստորաբաժանումների գործունեության և անձանց վրա, կազմակերպությունը ի՞նչ օգուտ կստանա այդ հիմնահարցի լուծումից:

5) **Ժամանակային շրջանակները:** Երբվանի՞ց այդ հիմնահարցը գոյություն ունի: Ժամանակի ընթացքում այն ուժեղացե՞լ է, թե՛ թուլացել, մի անգամ է այն դրսևորվել, թե՛ մի քանի:

Նման վերլուծության արդյունքում ձևակերպված հիմնահարցը կարող է զգալիորեն տարբերվել սկզբնական ձևակերպումից:

Հիմնահարցի ձևակերպմանը հետևում է ուսումնասիրման կոնկրետ օբյեկտի ընտրությունը: Այն կարող է լինել սոցիալական գործընթաց, փոխհարաբերություններ, գործունեության ուղորտ: ***Օբյեկտը այն է, ինչին ուղղված է սոցիոլոգիական ճանաչողության գործընթացը:***

Օբյեկտից բացի տարանջատում են նաև ուսումնասիրման առարկան, այսինքն օբյեկտի այն կարևոր կողմերը, որոնք ենթակա են անմիջական հետազոտման: Ուրիշ խոսքով առարկան այն է, ինչ ավելի ցցուն է արտահայտում ուսումնասիրվող սոցիալա-

կան հակասության կամ բախման բևեռները՝ խմբերի, կազմակերպության, անձի շահերի չհամընկնելու տեսքով: Օրինակ, եթե մեր հիմնահարցը կապված է երիտասարդների զբաղվածության հետ, ապա առարկան կարող է ձևակերպվել որպես հակասություն՝ աշխատանքի տեղավորվելու ցանկության և բավարար աշխատատեղերի բացակայության միջև: Օբյեկտը, ենթադրենք երիտասարդ ճարտարագետներն են՝ բուհը ավարտելուց հետո: Սոցիոլոգիական հետազոտության սուբյեկտն այն նվազագույն սոցիալական միավորն է (անձ, խումբ), որից անմիջականորեն վերցվում է անհրաժեշտ ինֆորմացիան:

Հիմնահարցից հետո պետք է որոշվեն հետազոտության նպատակը և խնդիրները:

3.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հետազոտության նպատակը տվյալ ոլորտում ճանաչողության ընդհանուր ուղղվածությունն է, սպասվող վերջնական արդյունքները: Խնդիրները այն հարցերն են, որոնց պատասխանը պետք է ստացվի հետազոտության նպատակը իրագործելիս: Հիշենք, որ հետազոտության վերջնական նպատակը կարող ենք անվանել նրա ընդհանուր խնդիր, իսկ մասնավոր խնդիրները, որոնք հանդես են գալիս որպես ընդհանուր խնդրի լուծման միջոցներ, կարող ենք անվանել միջանկյալ նպատակներ կամ երկրորդ կարգի նպատակներ: Նպատակ և խնդիր տերմինները տարբերում ենք միայն նշված իմաստով: Հետազոտության նպատակները կարող են լինել ինչպես տեսական-ճանաչողական, այնպես էլ գործնական-կիրառական:

Առաջին դեպքում գլխավոր ուշադրությունը կենտրոնանում է գիտական գրականության ուսումնասիրման, ընդհանուր հայեցակարգի կառուցման, ելակետային հասկացությունների մեկնաբանման և աշխատանքային վարկածների տրամաբանական վերլուծության վրա: Այնուհետև նոր ընտրվում է այն օբյեկտը, որի ճանաչողության արդյունքում պետք է ստուգվեն առաջ քաշված վարկածները:

Այլ է տրամաբանությունը գործնական-կիրառական հետազոտությունների դեպքում: Այստեղ ծրագրի մշակումը սկսվում է ելնելով տվյալ սոցիալական օբյեկտի առանձնահատկություններից (այսինքն՝ նրանից, ինչով նախորդ դեպքում ավարտվում է նախնական տեսական վերլուծությունը) և լուծման ենթակա գործնական խնդիրների պարզաբանումից: Միայն դրանից հետո դիմում ենք գիտական գրականությանը, տեսնելու համար, թե կա՞ արդյոք մեր խնդիրների «տիպային» լուծում: Այսինքն, ուրիշ սոցիոլոգների կողմից առկա՞ են այնպիսի հետազոտություններ, որոնք լիովին կիրառելի են մեր խնդիրների լուծման համար, թե՞ պետք է շարունակենք հետազոտությունը որպես գիտական նորույթ և գտնենք մեզ անհրաժեշտ լուծումները: Օրինակ, եթե որպես հիմնահարց ունենք որևէ արտադրական միավորի կառավարման ոչ բավարար մակարդակ, ապա մեր նպատակը պետք է լինի տվյալ միավորի կառավարման ցածր արդյունավետության իրական պատճառների վերլուծությունը, իրավիճակը շտկելու համար ներքին ռեսուրսների բացահայտումը և գործնական առաջարկությունների մշակումը: Հետազոտության խնդիրները ներկայանում են որպես տվյալ նպատակի բովանդակային, մեթոդական և կազմակերպչական կոնկրետացում (աշխատանքի պլանավորման բարելավում, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացում, հանգստի և ժամանցի ավելի արդյունավետ կազմակերպում, խրախուսման համակարգի կատարելագործում, սան-հիգիենիկ պայմանների բավարարում և այլն):

Կիրառական բնույթի հետազոտություններում նպատակը պարտադիր պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ: Վերլուծական հետազոտության ծրագրում նպատակադրվում են ոչ միայն նկարագրել սոցիալական երևույթների կառուցվածքային տարրերը, այլև պարզել այն գործոնները, որոնք պայմանավորել են այդ երևույթը (գործընթացը): Եթե հետազոտության նպատակը մասնագետի ու պատվիրատուի կողմից հստակորեն չի ընկալվում, ի վերջո նրանց միջև կարող են ծագել տարածայնություններ: Նպատակի ավելի հստակեցման համար ծրագրում մշակվում են հիմնական և ոչ հիմնական խնդիրներ:

Հիմնական խնդիրներն ուղղված են հիմնահարցի ամբողջ-

ջական լուծմանը այն դեպքում, երբ ոչ հիմնականը ծառայում է նրա առանձին կողմերի ուսումնասիրմանը: Վերջիններս կարող են հիմք ծառայել հետագա ուսումնասիրությունների համար: Հաճախ խնդիրներ են առաջանում բուն հետազոտության գործընթացում, ինչը նույնպես կարող է հիմք հանդիսանալ ապագա հետազոտության համար: Սակայն, եթե ծագած խնդիրը լուծում է պահանջում հենց տվյալ ժրագրի շրջանակներում, հետազոտողը պետք է ուղիներ որոնի և գտնի այդ լուծումը:

Ծրագրային նպատակներից ու խնդիրներից եթե շեղվում են, նման հետազոտություններն ընթանում են քառսային կերպով և որպես կանոն, արդյունավետ չեն լինում: Դրանց արդյունքները կարող են և հետաքրքիր լինել, սակայն չեն ծառայում նրան, ինչի համար ձեռնամուխ եք եղել այն իրագործելու: Գործնական առումով սա հանգեցնում է սոցիալական պատվերի տապալմանը:

Ծրագրի մշակման հաջորդ կարևոր խնդիրն առանցքային հասկացությունների ճշգրտումն է:

3.3 ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄԸ ԵՎ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկացած սոցիալական գիտելիք (փաստ) ստանալու համար պետք է հասկացությունները համադրվեն այն իրականության հետ, որն արտացոլում են: Եթե, օրինակ, մեզ հուզում է հեռուստադիտողների հետաքրքրությունը հաղորդումների հանդեպ և ենթադրում ենք, որ դա կախված է նրանց կրթությունից, պետք է նախ պատասխանենք այն հարցին, թե ի՞նչ ենք հասկանում հետաքրքրություն ասելով: Այսինքն ինչպիսի՞ գործողություններով կարող ենք ամրագրել տվյալ հետաքրքրության առկայությունը կամ բացակայությունը, դիտումների հաճախությամբ, ժրագրերի բովանդակության գնահատմամբ, թե՞ մեկ այլ տեսքով:

Ահա հասկացությունների փորձարարական նշանակության որոնումը հենց անվանում են *փորձարարական մեկնություն*, իսկ տվյալ հասկացության սահմանումը համապատասխան հայտա-

նիշների ամրագրման կանոնների նշումով՝ **օպերացիոնալ սահմանում**: Ուրիշ խոսքով «օպերացիոնալ» կոչվում է հասկացության այնպիսի սահմանումը, որը թույլ է տալիս նրա բովանդակությունն ամրագրել կոնկրետ սոցիալական իրականության փաստերի վրա (գործողությունների, դրանց արդյունքների, խոսքային դատողությունների միջոցով):

Ծրագրի մշակման ընթացքում առաջին հերթին տարանջատում են ուսումնասիրվող հիմնահարցի էական կողմերն արտահայտող **հանգուցային հասկացությունները**: Դրանք էլ հենց ենթարկվում են փորձարարական մեկնության, ինչը թույլ է տալիս ստուգելու մեր գիտական ենթադրությունների ճշգրտությունը:

Որոշակի տերմիններով հասկացությունների մեկնությունը նշանակում է այնպիսի փորձարարական բնութագրիչների (ինդիկատորների) որոնում, որն առավելագույնս է պարզաբանում տվյալ հասկացությունների նշանակությունը մեր խնդրի համար կարևոր առումով: Իսկ վերջինս որոշվում է հիմնահարցով և առարկայով: Բերենք կիրառական սոցիոլոգիայի համար դասական դարձած աշխատանքի հանդեպ վերաբերմունքի օրինակը, որը խորհրդային տարիներին ինտենսիվորեն ուսումնասիրվում էր Վ.Ա. Յադովի հայտնի ծրագրով՝ ամենատարբեր սոցիոլոգիական կենտրոններում:

Հիմնահարցը այստեղ հակասությունն էր աշխատանքի տեխնոլոգիայի և նրա հանդեպ աշխատողի վերաբերմունքի միջև: Առարկան՝ աշխատանքի հանդեպ վերաբերմունքն էր, որպես աշխատանքային շարժառիթների համակարգ, նրանց պայմանավորվածությունը նյութական խթանիչներով, գործի բովանդակությամբ, անձի պահանջներով և ուրիշ գործոններով:

Գլխավոր խնդիրներից մեկը տվյալ արտադրության պայմաններում աշխատանքային շարժառիթների միջուկի բացահայտումն էր: Այդ պատճառով տրամաբանությունը թելադրում էր, որ դիտարկվի աշխատանքի հանդեպ վերաբերմունքը այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են՝ այդ վերաբերմունքը ընդհանրապես՝ որպես արժեքի, որպես՝ որոշակի զբաղմունքի, ինչպես նաև կոնկրետ պայմաններում կատարվող գործի հանդեպ:

Դիտարկենք կոնկրետ պայմաններում աշխատանքի, որպես

կատարվող գործի հանդեպ վերաբերմունքը: Այն դրսևորվում է օբյեկտիվ (իրական գործունեությունը ու դրա արդյունքները) և սուբյեկտիվ (շարժառիթացում) բնութագրիչներում:

Վերլուծությունը մասնագետներին ապացուցեց, որ աշխատանքի հանդեպ վերաբերմունքի արտաքուստ արտահայտված ցուցանիշներն են՝ աշխատանքի որակն ու արտադրողականությունը, նախաձեռնողականությունը, կարգապահության մակարդակը և այլն: Սուբյեկտիվ (ներքուստ արտահայտված) ցուցանիշներն են. արժեքային կողմնորոշումները, շարժառիթների կառուցվածքը և ենթակարգը, աշխատանքով բավարարվածության վիճակը:

Ընդհանուր առմամբ, աշխատանքի հանդեպ վերաբերմունքը կարելի է բաժանել երկու՝ սկզբունքորեն տարբեր տիպի. մեկը որպես ինքնաբավ գործունեության, իր իսկ աշխատանքային գործընթացով վայելքի աղբյուր, մյուսը՝ որպես միջոց, որի օգնությամբ բավարարվում են կարիքները աշխատանքից դուրս:

Տարբեր վերաբերմունքի այս տիպերի փորձարարական բնութագրիչները պետք է ամրագրեն գերիշխող կողմնորոշումները դեպի աշխատանքի բովանդակությունը, գործունեության ընթացքը և կողմնորոշումը դեպի աշխատանքի նյութական արդյունքները:

Այս կամ այն կողմնորոշման ցուցանիշը աշխատանքի տարբեր կողմերով բավարարվածության կամ դժգոհության վիճակն է:

Ենթադրվում է, որ եթե աշխատանքի բովանդակության և աշխատանքով բավարարվածության միջև կապն ավելի սերտ է, քան աշխատավարձի և աշխատանքով բավարարվածության միջև, ապա կարելի է հավաստել, որ դեպի աշխատանքի բովանդակությունը կողմնորոշումը գերիշխում է աշխատանքի՝ որպես միջոցի կողմնորոշման համեմատ:

Նմանօրինակ վերլուծական դատողությունները ծրագրում իրագործվում են բոլոր հանգուցային հասկացությունների վերաբերյալ:

Ամփոփելով ասենք, որ հիմնական հասկացությունների ճշգրտումը և իմաստի մեկնությունը իրագործվում է գործողությունների հետևյալ հաջորդականությամբ.

1) տվյալ տեսական մոդելի շրջանակներում համապատասխան գրականության նյութերի հիման վրա ճշգրտվում է հասկացությունների իմաստը,

2) հետազոտվող հասկացության, նրա որևէ հատկության կամ կողմի վերաբերյալ ստեղծվում է «տեսանելի» դրսևորումներով «պատկերը» (մեր օրինակում աշխատանքի հանդեպ վերաբերմունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները):

3) հասկացության փորձարարական մեկնության շրջանակներում ստեղծվում են տվյալ «պատկերի» բնութագրերը, կառուցվում է հատկությունների համակարգը,

4) տարանջատիչ բնութագծերի անմիջական ցուցանիշների ընտրությունը, այսինքն նրանց օպերացիոնալ ճշգրտումը. ի՞նչ հնարքներով կան մեթոդներով է հնարավոր ընտրված հատկությունների ամրագրումը (օրինակ՝ աշխատանքով բավարարվածությունը և նրա առանձին բաղադրամասերը),

5) ինդեքսների կառուցումը, որը ներկայացնում է առանձին ցուցանիշների որոշակի միավորումը:

Կարևոր է սոցիոլոգիայում նաև գիտակցել, որ տեսությունից անցումը հիմնական հասկացությունների իմաստի ճշգրտմանը և փորձարարական մեկնությանը, ինչպես նաև հակառակ անցումը՝ ստացված տվյալների տեսական մեկնությունը, միագիծ ու հեշտ ճանապարհի չեն: Այն ոչ միայն բարդ է, այլև դժվար ձևայնացվող: Եվ այստեղ էական են նաև նմանարկումը, գիտական ինտուիցիան, հետազոտողի գիտելիքներն ու փորձը, նրա ընդհանուր կուլտուրան:

Այժմ կարելի է անցնել հետազոտության օբյեկտի համակողմանի վերլուծությանը:

3.4 ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ակնհայտ է, որ հիմնահարցի հանգուցային հասկացությունների տարանջատումը և դրանց մեկնությունը քողարկված կերպով հիմնվում է առարկայի վերաբերյալ ավել կամ պակաս ամբողջական պատկերացումների վրա: Հետագա վերլուծությունը պետք է առարկան դարձնի ավելի պարզ, հստակ և որոշակիորեն արտահայտված: Այսինքն, առարկան (օբյեկտը) պետք է ենթարկվի համակարգային վերլուծության:


Ցույց տանք դա կոնկրետ օրինակով, որը բերվեց նախորդ բաժնում: Այստեղ նպատակ է հետապնդվում բացահայտել աշխատանքային շարժառիթների միջուկը այնքանով, որքանով դա պայմանավորված է աշխատանքի բովանդակության և այլ յուրահատկություններով: Այնուհետև ցանկանում ենք որոշել այդ վերաբերմունքի վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները և հետևել դրա փոփոխությանը՝ կախված աշխատանքի գործառույթային բովանդակությունից և աշխատողի կարիքների մակարդակից:

Այն սոցիալական գործոնները, որոնք ամբողջության մեջ կազմում են աշխատանքային շարժառիթների, նրա հանդեպ վերաբերմունքի տիպը, բաժանվում են ընդհանուր և յուրահատուկ տարրերի (գործոնների): Ընդհանուր են այն գործոնները, որոնք պայմանավորված են տվյալ իրականության սոցիալ-տնտեսական, մշակութային, ներքաղաքական այնպիսի պայմաններով, որոնք տվյալ դեպքում միջնորդավորված անդրադառնում են աշխատողի վերաբերմունքի վրա: Յուրահատուկ գործոնները աշխատանքի բովանդակությունն է, կոնկրետ պայմանները, ներարտադրական հարաբերությունները, արտաարտադրական կյանքի առանձնահատկությունները: Յուրահատուկ են նաև աշխատողի անձնային և դերային որակները:

Գործոնների երկրորդ խումբը կազմում են բացահայտ և քողարկված պատճառները: Բացահայտ գործոններ ասելով հասկացվում են այն հանգամանքները, որոնք հետազոտման օբյեկտի մեջ հնարավոր է անմիջականորեն հսկել: Դրանք այն աշխա-

տանքային պայմաններն են, որոնք կարելի է տվյալ արտադրական իրավիճակում գրանցել: Իսկ քողարկվածի դեպքում նման գրանցումը հնարավոր չէ:

Տարանջատում են նաև օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները: Օբյեկտիվ գործոններ համարվում են անհատից անկախ պայմաններն ու հանգամանքները, որպես գործունեության նախադրյալներ: Սուբյեկտիվը՝ տվյալ պայմանների և հանգամանքների բեկումն է անհատի գիտակցության մեջ: Այսինքն օբյեկտիվ գործոնները կարելի է ներկայացնել որպես դրդապատճառներ (խթաններ), իսկ սուբյեկտիվը՝ շարժառիթներ և գիտակցված պահանջումներ: Ասվածը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի տեսքով (տե՛ս նկ. 3.1).



Նկ. 3.1. Հետազոտության օբյեկտի ամբողջական վերլուծության սխեմա.

Նկար 3.1-ում A բլոկը օբյեկտիվ գործոններն են, որում a_1 -ը ընդհանուր սոցիալական պայմաններն ու հանգամանքներն են (տնտեսական իրադրությունը, սոցիալական և քաղաքական հարաբերությունները, հասարակական գիտակցության վիճակը՝ այդ թվում արժեքներն ու նորմերը), a_2 -ը յուսահատուկ գործոններն են, որոնք կապված են սեփականության ձևի և գործունեության հատուկ տեսակների հետ, որը ներառում է ուղիղ (վարձուկան այլ բնույթի աշխատանք, պայմաններ, կազմակերպում, աշխատանքի վարձատրության համակարգ, սոցիալ-կենցաղային ինֆրակառուցվածք, աշխատանքային հարաբերություններ) և քողարկված (ընտանեկան դաստիարակության համակարգ, դպրոցական և աշխատանքային ուսուցման համակարգ, մշակութային միջավայր, զանգվածային լրատվամիջոցների ազդեցություն և այլն) գործոնները:

В բլոկը աշխատողի անհատական յուրահատկություններն են, որտեղ՝ b_1 -ը դերային որակներն են (սեռ, տարիք, կրթություն, ընտանեկան վիճակ, որակավորում, հասարակական կազմակերպություններին անդամակցում և այլն), b_2 -ը՝ անձնային որակները (շահերը և պահանջմունքները, դիրքորոշումները, արժեքային կողմնորոշումները, իդեալները, ապրելակերպի հայեցակարգը):

С բլոկը աշխատանքի հանդեպ վերաբերմունքն է, որտեղ c_1 -ը վերաբերմունքի սուբյեկտիվ կողմերն են (աշխատանքի հանրային նշանակության ընկալումը, աշխատանքով ու մասնագիտությամբ բավարարվածությունը, շարժառիթների սանդղակը), c_2 -ը վերաբերմունքի օբյեկտիվ կողմերն են, այսինքն՝ աշխատանքի արդյունքները՝ արտադրողականությունը, որակը, նախաձեռնողականությունը, պատասխանատվությունը, կարգապահությունը և այլն:

Նշված կապերից α -ն արտահայտում է դրդապատճառները, β -ն՝ սուբյեկտի կողմից սոցիալական, այդ թվում՝ արտադրական դերերի ընկալումը, γ -ն՝ շարժառիթները:

Բոլոր դեպքերում չէ, որ սխեման պարտադիր է: Հետազոտողը կարող է սահմանափակվել նաև խոսքային նկարագրություններով: Այստեղ կարևորն այն է, որ ուսումնասիրման առարկայի վերաբերյալ գիտելիքները փորձում են համակարգել՝ նոր գիտելիք ստանալու նպատակով: Դա հնարավորություն է ընձեռում ձևակերպել հետազոտության ընդհանուր և մասնավոր վարկածները:

3.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ԱՈՒՋԱԴՐՈՒՄԸ

Վարկածը հետազոտությունը խիստ տրամաբանությանը ենթարկեցնող գլխավոր մեթոդաբանական գործիքն է:

Հետազոտության վարկածը գիտականորեն հիմնավորված ենթադրություն է ուսումնասիրվող սոցիալական երևույթի կառուցվածքի և նրա բաղադրամասերի միջև առկա (հնարավոր)

կապերի բնույթի մասին: Վարկածները մշակվում են առկա փաստերի հիման վրա, որոշակի սոցիոլոգիական տեսությունից բխող ըմբռնումների շրջանակում: Եթե մեր ունեցած գիտելիքները չեն բավարարում դիտարկվող փաստերը բացատրելուն, ապա «ստիպված» ենք լինում նոր ենթադրությունների կատարել, այսինքն առաջադրել վարկածներ:

Օրինակ, մենք ասում ենք, թե մարդկանց աշխատանքային ակտիվությունը բացատրվում է սոցիալ-տնտեսական պայմաններով: Այդ դեպքում հարց է ծագում, ինչու՞ նույն սոցիալական պայմաններում մարդիկ տարբեր կերպ են վերաբերվում աշխատանքին: Վերլուծելով և խորանալով երևույթի էության մեջ՝ հարկ է լինում նորանոր ենթադրություններ անել տարբեր պայմաններում նույն վերաբերմունքի կամ նույն պայմաններում տարբեր վերաբերմունքի մասին:

Օրինակ, մեր կողմից հաճախ գործածվող դասական հետազոտության մեջ, որպես *հիմնական* վարկած, ընդունվել էր հետևյալը. ընդհանուր պետական սեփականության պայմաններում աշխատանքի ֆունկցիոնալ (գործառույթային) բովանդակությունը հենց իր, աշխատանքի հանդեպ վերաբերմունքը որոշող գլխավոր գործոնն է, ինչը ամրագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների մեջ: Այստեղից հետևանք. ինչքան բարձր են աշխատանքի ստեղծագործական հնարավորությունները, այնքան բարձր են վերաբերմունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները: Առաջինը անվանում են *վարկած-հիմք*, երկրորդը՝ *վարկած-հետևանք*: Այս բաժանումը կատարվել է ըստ ենթադրությունների ընդհանրության աստիճանի:

Ըստ հետազոտության խնդիրների բաժանում են *հիմնական* -ի և *ոչ հիմնական* -ի վարկածները: Ըստ մշակվածության և հիմնավորվածության աստիճանի տարբերում են *առաջնային* և *երկրորդային* վարկածները: Երկրորդայինները առաջ են քաշվում առաջինների փոխարեն, եթե դրանք ժխտվում են փորձարարական տվյալներով:

Ըստ հիմնահարցի առարկայական տիրույթի մասին ենթադրությունների բովանդակության, տարանջատում են վարկածների *նկարագրական* և *բացատրական* տեսակները:

Սոցիոլոգիայում գոյություն ունեն վարկածների առաջադրման և ստուգման որոշակի կանոններ: Դրանք հետևյալն են.

I) Վարկածը չպետք է պարունակի հասկացություններ, որոնք փորձարարական մեկնություն չեն ստացել, հակառակ դեպքում այն անստուգելի է:

II) Վարկածը չպետք է հակասի նախկինում հաստատված գիտական փաստերին: Օրինակ, եթե ենթադրում ենք, որ՝ «Ինչքան աշխատանքը բարդ է, այնքան նրանով բավարարվածությունը մեծ է», այն հակասում է հոգեբանական հայտնի ճշմարտությանը, ըստ որի, մարդկանց հոգեֆիզիոլոգիական որոշակի տիպի համար ավելի հաճելի է միապաղաղ աշխատանքը:

III) Վարկածը պետք է լինի հնարավորինս պարզ:

IV) Լավ վարկածը կիրառելի է երևույթների ավելի լայն շրջանակի համար, քան անմիջականորեն ուսումնասիրվողը:

V) Վարկածը պետք է սկզբունքորեն ստուգելի լինի առկա գիտելիքների, մեթոդական և գործնական հնարավորությունների շրջանակներում:

VI) Արդեն տվյալ հետազոտության շրջանակներում վարկածի ձևակերպման մեջ պետք է ցույց տրված լինի նրա ստուգման եղանակը:

Նշենք, ի վերջո, հետևյալ կարևոր իրողությունը, կապված վարկածների հետ: «Լավ» վարկածը չպետք է հանգի ողջախոհության մակարդակի դատողությունների: Կիրառական հետազոտության մեջ վարկածների ինքնատիպությունը, որպես կանոն, արտահայտվում է գործնական խնդրի այլընտրանքային լուծումների ձևակերպման մեջ: Երբ մենք փորձնականորեն կարող ենք ստուգել սոցիալական հիմնահարցի լուծման հնարավոր մի քանի տարբերակ, այս դեպքում ավելի հեշտ է գտնել գործողությունների առավել արդյունավետ եղանակը:

3.6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ (ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ) ՊԼԱՆԸ

Սկզբունքային պլանի ընտրությունը կախված է հետազոտության հիմնահարցի վերաբերյալ մեր տեղեկությունների մակարդակից: Ըստ որի տարանջատում են հետազոտական որոնումների ռազմավարության չորս հիմնական տարբերակ:

ա) *Հետախուզական պլան:* Սա կիրառվում է, երբ օբյեկտի վերաբերյալ ունենք շատ աղոտ պատկերացումներ և վարկածների առաջադրումը գործնականում անհնար է: Պլանի նպատակն է բացահայտել հիմնահարցը և ձևակերպել վարկածները: Դրա համար առաջին հերթին ուսումնասիրում են առկա գրականությունը: Այնուհետև զրուցում են իրավասու անձանց հետ (ինչպես սոցիոլոգ-մասնագետների, այնպես էլ տվյալ ոլորտի պրակտիկ աշխատողների հետ): Վերջում իրագործում են դիտումը ոչ ստանդարտ եղանակով, հիմնական ուշադրությունը դարձնելով անսովոր կամ բախումնային իրավիճակների վրա:

բ) *Նկարագրական պլան:* Սա հնարավոր է, երբ օբյեկտի վերաբերյալ գիտելիքները բավարար են նկարագրական վարկածներ առաջադրելու համար: Պլանի նպատակն է խստորեն նկարագրել սոցիալական կառուցվածքների, գործընթացների և երևույթների որակա-քանակական յուրահատկությունները: Դա նշանակում է, որ տերմինները պետք է ճշգրտորեն փորձարարական մեկնություն ստանան: Ինֆորմացիան հավաքվում է կամ մենագրային կամ ընտրանքային հետազոտության հիման վրա: Վերջին դեպքում հարկ է հաշվարկել ընտրանքի սխալները: Սրա տիպական օրինակը հասարակական կարծիքի հարցումներն են:

գ) *Վերլուծական-փորձարարական պլան:* Սա առավել ուժեղ ճանաչողական որոնման տարբերակն է: Այն կիրառվում է, երբ հետազոտվող ոլորտում շատ «բան» հայտնի է և կարելի է կատարել բացատրական ենթադրություններ: Պլանի նպատակն է հետազոտել գործառույթային կապերը և պատճառական հարաբերությունները: Գործնական նպատակների դեպքում որոնվում են կառավարչական վճիռները:

Սոցիալական գիտափորձը, որը չափազանց դժվար և պա-

տասխանատու աշխատանք է (այն քննարկվում է 4-րդ գլխում), իրագործվում է կամ իրական օբյեկտին նպատակաուղղված ազդեցության ճանապարհով, կամ էլ մտավոր գիտափորձի օգնությամբ:

Բնական գիտափորձը պահանջում է հետազոտության կազմակերպման (հատկապես պայմանների հսկման) հատուկ համակարգ:

դ) *Կրկնակի-համեմատական պլան*: Սա կիրառվում է սոցիալական գործընթացների միտումների բացահայտման համար և ենթադրում է տվյալների համադրումը որոշակի ժամանակային միջակայքում: Համեմատական հետազոտություններն անց են կացվում նաև մեկ ժամանակային միջակայքի շրջանակներում, որպեսզի տարածքային, մշակութային կամ այլ կտրվածքներով հաստատեն սոցիալական հիմնահարցերի ընդհանրությունը և առանձնահատկությունը:

3.7 ԸՆՏՐԱՆՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

Սոցիոլոգիական հետազոտությունների մեծ մասում կիրառվում է հետևյալ հնարքը. շատ օբյեկտներից որևէ եղանակով տարանջատում են մի մասը և նրա հետազոտության արդյունքում բացահայտված հատկությունները փորձում են տարածել ամբողջի վրա:

Ընտրանքի տիպը և եղանակը ուղղակիորեն կախված են հետազոտության նպատակից և վարկածներից: Որքան նպատակը ավելի որոշակի է, և վարկածները ձևակերպված են պարզ, այնքան ընտրանքի հետ կապված խնդրի լուծումն ավելի հեշտ է: Սույն առումով պահանջներն ամենախիստն են նկարագրական և վերլուծական-փորձարարական հետազոտություններում և ոչ խիստ՝ հետախուզականում:

Ընտրանքի մեջ էական է ներկայացուցչության (ռեպրեզենտատիվություն) դերը: Ներկայացուցչական է այն ընտրանքը, որում, ըստ տարանջատված պարամետրերի, հետազոտվողների կազմը մոտենում է գլխավոր համախմբի համամասնություններին:

Ընտրանքի խնդիրը այս մակարդակում առավելապես ստեղծագործական-վերլուծական է: Ելնելով հետազոտության նպատակներից, տեսական մակարդակում որոշում ենք, թե գլխավոր համախմբից հայտնի որ բնութագծերն են էական մեզ համար: Խոսքը հենց հայտնի բնութագծերի մասին է, քանզի անհայտը՝ մեր հիմնահարցն է: Շատ հաճախ դա սեռային, տարիքային, կրթական, մասնագիտական կամ ունեցվածքային կազմն է, նրանց տարածքային բաշխումը:

Խորքային հետազոտություններում ընտրանքի վիճակագրական ներկայացուցչությունը այնքան կարևոր չէ, որքան ուսումնասիրվող սոցիալական օբյեկտների որակական ներկայացվածությունը:

Վիճակագրական ներկայացուցչության դեպքում, խստիվ մաթեմատիկական հաշվարկներով մենք ապահովում ենք մեզ հետաքրքրող բոլոր խմբերի համամասնությունը: Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ համամասնական չափը տվյալ խմբի համար բավարար չէ: Այս դեպքում մենք կատարում ենք նպատակային շեշտադրում:

Վերոշարադրվածի համար բերենք օրինակ: Ենթադրենք մեզ հուզում է ճարտարագետ շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրը: Այս դեպքում, որոշակի ժամանակահատվածում շրջանավարտների թիվն ընդունելով գլխավոր համախումբ, որոշում ենք ցանկալի ճշգրտությամբ ընտրանքի ծավալը:

Եթե մեզ հետաքրքրում է նույն խնդիրը, սակայն արդեն ճարտարագիտական տարբեր մասնագիտությունների (ուղղությունների) շրջանակում, այս դեպքում մենք փորձում ենք համամասնությունն ապահովել յուրաքանչյուր մասնագիտության (ուղղության) համար:

Սրանց կողքին հնարավոր է, որ հիմնական խնդիրը կապված լինի անհամեմատ ավելի մեծ պահանջարկ վայելող, հետևաբար՝ բարձր արժեք ներկայացնող տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների արդյունավետ զբաղվածության հարցը: Այստեղ արդեն, ընդհանուր պահանջները բավարարելով, տվյալ նեղ ոլորտից պետք է կատարենք նպատակային ընտրություն:

Ընտրանքի քանակը (ծավալը) կախված է ուսումնասիրվող օբյեկտի *համասեռության* կամ *անհամասեռության* աստիճանից: Եթե օրինակ, մեզ հայտնի է, որ տվյալ արտադրամասում աշխատող մարդիկ բոլորը նույն հասակին են (այսինքն իդեալականորեն համասեռ են ըստ այդ չափանիշի), և մենք կամենում ենք իմանալ արտադրամասի աշխատողների միջին հասակը, բավական է չափել որևէ աշխատողի հասակը և դա կարտահայտի ընդհանուրի միջին հասակը:

Իրականում բոլոր, նույնիսկ «տարրական» օբյեկտները չափազանց բարդ են: Այդ պատճառով որքան ավելի մանրակրկիտ ենք ուզում վերլուծել այդ օբյեկտի զուգակցված, այլ ոչ թե առանձնացված հատկությունները, այնքան ընտրանքի ծավալը պետք է մեծ լինի:

Սոցիոլոգիական հետազոտություններում բազմաթիվ են այն հանգամանքները, որոնք բարդացնում են ընտրանքի սխալի հաշվարկումը, ինչը հանգեցնում է նրան, որ մաթեմատիկորեն հաշվարկված ներկայացուցչական ընտրանքը կարող է որակապես լինել ոչ ներկայացուցչական: Ինչ վերաբերում է ընտրանքի վիճակագրական հաշվարկին, այն բավական խորը հետազոտված է: Շատ հետաքրքրական է, օրինակ, հետևյալ հաշվարկը: Ըստ գլխավոր համախմբի տարբեր քանակությունների, նրանցից յուրաքանչյուրի ներկայացուցչական ընտրանքը, 5 տոկոս թույլատրելի սխալի դեպքում հետևյալ տեսքն ունի (տե՛ս աղյուսակ 3.1).

Աղյուսակ 3.1

| | | | | | | | | |
|-------------------------|-----|-------|-------|-------|-------|-------|--------|---------|
| Գլխավոր համախմբի ծավալը | 500 | 1.000 | 2.000 | 3.000 | 4.000 | 5.000 | 10.000 | 100.000 |
| Ընտրանքի ծավալը | 222 | 286 | 333 | 350 | 360 | 370 | 385 | 358 |

Ինչպես տեսնում ենք ճիշտ չէ այն մտայնությունը, թե որքան գլխավոր համախումբը մեծ է, այնքան ներկայացուցչությունը ապահովվելու համար շատ միավորներ պետք է հետազոտել:

Տվյալ շղթայում կարծես տեղի է ունենում «հագեցում», և գլխավոր համախմբի հետագա մեծացումը մեխանիկորեն չի հանգեցնում ընտրանքի ծավալի մեծացմանը (մեր օրինակում 10 հազար միավորի դեպքում՝ 385, իսկ 100 հազարի դեպքում՝ 358):

Մյուս կողմից հարկ է նկատի ունենալ, որ ընտրանքի ներկայացուցչության հարցն այնքան ավելի կարևոր է, որքան տվյալ ուսումնասիրության արդյունքներն իրապես օգտագործվելու են հանրայնորեն նշանակալից խնդրի լուծման համար: Իսկ եթե նպատակները ավելի համեստ են, շեշտը պետք է դրվի որակական ներկայացուցչության խնդրի վրա:

3.8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ

Ծրագիրը երկու կարևոր գործառույթ ունի՝ ճանաչողական և կազմակերպչական: Առաջինը ապահովում է հետազոտության տեսամեթոդական ամբողջականությունը, իսկ երկրորդը՝ հետազոտական խմբի արդյունավետ համագործակցությունը, աշխատանքի բաժանումը նրանց միջև:

Իդեալական ծրագրի հանդեպ պահանջներն են.

1. Ծրագրի անհրաժեշտությունը;
2. Ծրագրի բացահայտությունը;
3. Ծրագրի բոլոր տարրերի տրամաբանական հաջորդականությունը;
4. Ծրագրի ճկունությունը:

Ինքը ծրագիրը կարող է հրապարակվել որպես ինքնուրույն գիտական աշխատանք: Բացառված չէ, որ ուրիշ հետազոտողներ աշխատեն այդ նույն ծրագրով: Ծրագրի հրապարակումը նման է գիտական գիտելիքի արտադրության արտոնագրի փոխանցման:

Այժմ, ծրագիրն ունենալուց հետո, պետք է որոշենք, թե ինչպես ենք չափելու սոցիալական բնութագծերը:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 3-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Սոցիոլոգիական հետազոտության ծրագրի էությունը և իմաստը:
2. Սոցիոլոգիական հետազոտության հիմնահարցը, օբյեկտը և առարկան:
3. Սոցիոլոգիական հետազոտության նպատակը և խնդիրները:
4. Սոցիոլոգիական հետազոտության հիմնական հասկացությունների ճշգրտումը և մեկնությունը:
5. Սոցիոլոգիական հետազոտության օբյեկտի նախնական համակարգային վերլուծությունը:
6. Սոցիոլոգիական հետազոտության աշխատանքային վարկածների առաջադրումը:
7. Սոցիոլոգիական հետազոտության սկզբունքային (ռազմավարական) պլանը:
8. Սոցիոլոգիական հետազոտության ընտրանքի ծրագրային պահանջները:
9. Ծրագրին վերաբերող ընդհանուր պահանջներ:

ԳԼՈՒԽ 4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՉԱՓՈՒՄԸ (ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ)

Չափումը մի ընթացակարգ է, որի օգնությամբ չափվող օբյեկտը համեմատվում է որևէ ցուցանմուշի հետ և որոշակի մասշտաբի կամ սանդղակի մեջ ստանում է թվային արտահայտություն:

Չափման արդյունքում ստացվում է օբյեկտի որակական վերլուծության մեջ տարանջատված մի շարք կողմերի թվային մոդելը: Ըստ որում այն հոմոմորֆ է, այսինքն օբյեկտի մոտավոր նմանակն է, քանզի իզոմորֆ (ճիշտ նմանակ) մոդելի ստացումը գործնականում չի հաջողվում: Սոցիալական չափումը մասնագետները հաճախ անվանում են քվազիմետրիկական, այսինքն՝ որակական հարաբերությունների պայմանականորեն քանակական նմանակներ:

Կարևոր է ըմբռնել, որ առաջնային չափումը միայն մասնակիորեն է մաթեմատիկական խնդիր: Որպեսզի սոցիալական օբյեկտին վերագրվեն թվեր, պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն նրա բովանդակային կառուցվածքը, ինչպես նաև հաստատվի համապատասխանություն չափման գործիքի և տվյալ օբյեկտի միջև:

Սոցիոլոգների գերակշիռ մասն այն համոզմանն է, որ սոցիալական օբյեկտների ցանկացած հատկություն սկզբունքորեն ենթակա է չափման: Քանակական հատկությունների համար, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, աշխատավարձը, կրթությունը և այլն, դա ակնհայտ է և համեմատաբար հեշտ: Մանավանդ, որ նրանց ցուցանիշները առկա են (մեկ տարի, մեկ դրամ, մեկ մարդ և այլն):

Մինչդեռ, որակական բնութագրերը չունեն հաստատված չափման ցուցանիշներ (սոցիալական պատկանելիությունը, կարծիքները, գնահատականները և այլն): Դրանք հարկ է դեռ հայտնաբերել, որի պատճառով որակական բնութագծերի չափագրա-

կան ընթացակարգերը յուրօրինակ գյուտեր են, որոնք իրագործվում են տիպային եղանակներով: Քանի որ ցանկացած օբյեկտ օժտված է որակա-քանակական որոշակիությամբ («Չափ»-ի փիլիսոփայական ըմբռնումը), այդ պատճառով սոցիալական յուրաքանչյուր երևույթ կարող է քանակական գնահատական ստանալ ըստ նրա տարածություն, ինտենսիվության, կրկնվելու հաճախության:

4.1 ՉԱՓՄԱՆ ՑՈՒՑԱՆՍՈՒՇԻ (ՍԱՆԴՂԱԿԻ) ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հուսալի սանդղակի հայտնաբերումը իրագործվում է չորս փուլով: Նախ, *առաջին փուլում*, չափվող օբյեկտը դասակարգվում է որակապես: Այսինքն, ելնելով հետազոտության որոշակի խնդիրներից ու առարկայի տեսական ըմբռնումից, դասակարգման հիմքում դրվում են այս կամ այն չափանիշները: Այսպես օրինակ, դասակարգելով մարդկանց արժեքային կողմնորոշումները, հիմքում կարող են դրվել պահանջումները, շահերը, գործունեության ոլորտները, սոցիալական իրադրությունները և այլն:

Երկրորդ փուլում իրագործվում է տարանջատված հատկությունների տարածության որոնումը: Ըստ այդմ որոշվում են տարածվածության անընդհատության կամ ընդհատության բնույթը, չափվող որակի հաջորդական վիճակներում ներկայացնելու հնարավորությունը: Օրինակ, մի դեպքում արժեքային կողմնորոշումը կարող է ներկայացվել «ուժեղ-միջին-թույլ», մեկ ուրիշ դեպքում՝ «կայուն - պակաս կայուն - անկայուն», երրորդում՝ «գերիշխող-«կողք-կողքի»-ճնշված» և նմանատիպ սանդղակների այլ տարբերակներով:

Երրորդ փուլում պարզվում են չափվող հատկության այն փորձարարական բնութագրիչները (ինդիկատոր), որոնք պետք է դրվեն թվային շարքի մեջ: Օրինակ՝ ջերմաստիճանի բնութագրիչը սնդիկի սյան բարձրությունն է ջերմաչափի մեջ:

Մեր օրերում արժեքային կողմնորոշումների բնութագրիչները կարող են լինել տարբեր, կախված տարածության ձևից: Այս-

պես, եթե ուզում ենք գերակա կողմնորոշումները դասավորել մեկը մյուսի ետևից, ներկայացված ցանկը խնդրում ենք շարել ըստ կարգի՝ առաջին, երկրորդ և այլն: Եթե ուժեղ-թույլ տարածությունը ենք ցանկանում չափել, այս դեպքում, ենթադրենք ներկայացնում ենք կողմնորոշումների որևէ քանակություն (օրինակ 15): Մի դեպքում խնդրում ենք ընտրել 15-ից այն բոլոր կողմնորոշումները, որոնք իր սրտովն է, այնուհետև՝ 15-ից 5-ը, երրորդ իրադրությունում՝ 15-ից 2-ը: Եթե ստացվի այնպես, որ այս երեք իրադրություններում էլ նույն արժեքները առկա են, ուրեմն հարցվողի մոտ տվյալ կողմնորոշումները գերիշխող են (այսինքն՝ ուժեղ): Միջինը կլինի երեք իրադրությունից ընտրություն երկուսում (I-ում և II-ում): Թույլ կողմնորոշումը ընտրությունն է միայն առաջին իրադրությունում:

Այստեղ շատ կարևոր է նշել, որ նույն հատկությունը կարող է ամրագրվել տարբեր բնութագրիչների օգնությամբ, որոնք հանգեցվում են *ինդեքս* կոչվող մի ընդհանուր ցուցանիշի: Օրինակ, եթե նույն կողմնորոշումը հարցվողը նշել է վերոհիշյալ երկու չափման ձևերում, այս դեպքերում բնութագրիչն ավելի հուսալի է:

Չորրորդ փուլում հարկ է պարզել, թե արդյոք չափվող օբյեկտը բնութագրող բոլոր միավորներն են տեղավորվում թվային շարքի մեջ՝ ըստ ընդունված բնութագրիչների: Օրինակ, եթե աշխատանքային բնութագրիչ ընդունենք պլանի կատարումը, այն ավելի շատ կիրառելի է գործավարձով աշխատողների համար, մինչդեռ ժամանակավարձի համար ավելի հարմար է աշխատանքի որակը:

Երբ արդեն սանդղակը կառուցվել է, հարկ է ստուգել նրա հուսալիությունը:

4.2 ՍԱՆԴՂԱԿԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Երբ խոսվում է չափման հուսալիության մասին, հիմնականում նկատի է առնվում այն գործիքը, որով չափվում է: Իսկ տվյալների և հետազոտությունների առնչությամբ ավելի ճիշտ է

օգտագործել «հավաստիություն» տերմինը: Ասում ենք տվյալները հավաստի են (կամ համեմատաբար հավաստի են) այդ թվում նաև այն պատճառով, որ ամրագրվել են հուսալի գործիքով:

Չափման հուսալիությունը գումարվում է երեք բաղադրամասերից.

- 1) չափման հիմնավորվածությունը,
- 2) չափման կայունությունը,
- 3) չափման ճշտությունը:

1. Սանդղակը համարվում է *հիմնավորված*, եթե տվյալ սանդղակի օգնությամբ նպատակաուղղված կերպով չափում են լրիվ որոշակի հատկություն կամ հայտանիշ, առանց դա խառնելու (շփոթելու) ուրիշների հետ:

Եթե, օրինակ, մենք մարդկանցից ուզում ենք իմանալ, թե ժամանցի տարբեր ձևերով որքան ժամանակ են զբաղվում (կամ այդ ձևերին որքան ժամանակ են տրամադրում), և այն չափելու համար օգտագործում ենք՝ «չափազանց շատ-բավարար-չափազանց քիչ» սանդղակը, պարզ է, որ այն ցանկալի արդյունք չի տա: Քանի որ նման սանդղակով մենք չափում ենք ոչ թե իրականում ծախսվող ժամանակը, այլ վերաբերմունքը ժամանցի տվյալ ձևերին: Չափումը ավելի հիմնավորված կլինի, եթե կարողանանք ամրագրել իրականում ծախսված ժամանակը տեղեկությունների որոշակի աղբյուրներից⁸:

Հատկանշական մի օրինակ Ռուսաստանում անցկացված հարցումներից, ինչը կարևորվում է հայաստանյան ընթերցողի համար նաև այնքանով, որքանով հասարակական կարծիքի հարցումները Հայաստանում հարածուն պահանջարկ են սկսել վայելել, կապված քաղաքական ազատությունների և տարբեր մակարդակի պարբերական ընտրությունների անցկացման հետ: 1997 թվականին երկու տարբեր հետազոտական խմբեր, միմյանցից անկախ, անցկացրել են համառուսաստանյան հարցումներ, որտեղ որոշել են նաև երկրի նախագահի, վարչապետի,

⁸ Сту, օրինակ, Вайт А. А. *Нодәдәәәәәй нй өей ей әе-әһей ай еһһәәай аай ей, Ы*, 1998, էջ 139-141.

հանգուցային մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների վարկանիշը: Արդյունքները 10-12 տոկոսով տարբերվել են միմյանցից, ինչը համարվել է հրապարակային խայտառակություն: Քանի որ մի դեպքում մեկնաբանվել է որպես հաճոյախոսություն կառավարությանը, մյուսը՝ ընդդիմությանը: Իրականում պարզվել է, որ մի խմբում հարցը ձևակերպվել է այսպես. «Դուք հավանություն տալի՞ս եք ... գործունեությանը», իսկ մյուսում՝ «Դուք վստահու՞մ եք...»: Եվ մի քանի ամսվա ընթացքում վստահության (անվստահության) ցուցանիշները զիջում էին հավանելու (չհավանելու) ցուցանիշներին: Որոշ ժամանակ անց այն խումբը, որը հարցը ձևակերպել էր վստահության վերաբերյալ, հարցաշարում ներառեց նաև հավանության մասին հարցը: Արդյունքում պարզվեց, որ կառավարությանը վստահում են հարցվածների 14-16 տոկոսը, մինչդեռ նրա գործունեությանը հավանություն է տալիս 29 տոկոսը: Սա բացատրվում է պատասխանողների հետևյալ տրամաբանությամբ. «Ես կարող եմ առանձնապես կառավարության մտադրություններին չվստահել, սակայն այն, ինչ ներկայումս կառավարության կողմից կատարվում է, հակված եմ տալ հավանություն»:

Այսինքն՝ նման տրամաբանական դատողությունները մեծացնում են հիմնավորվածությունը: Սակայն դա դեռ անմիջական ապացույցը չէ այն բանի, թե մենք չափում ենք ցանկալի հատկությունը:

Չափման հիմնավորվածության ստուգման հաջորդ հնարքը (II) փորձարկումն է ըստ «*էտալոնային խմբի*»: Սրա իմաստն այն է, որ սանդղակով չափված տվյալները համեմատենք չափվող օբյեկտի վերաբերյալ հավաստի տեղեկությունների հետ:

Օրինակ, եթե ցանկանում ենք հիմնավորել իրավունքի նորմերի պահպանման հանդեպ վերաբերմունքը չափող սանդղակը, կարող ենք մի կողմից հարցնել դատապարտված իրավախախտներին (որպես սանդղակի բացասական բևեռի «ցուցանմուշ») և այն համեմատել օրինապահ քաղաքացիներից (դրական բևեռի «ցուցանմուշ») ստացված տվյալների հետ: Թույլատրելի սխալի շրջանակներում ստացված տվյալները պետք է գործնականում համընկնեն:

Հիմնավորվածության ստուգման հաջորդ (III) հնարքը *անկախ չափանիշի որոնումն* է: Օրինակ, եթե հեռուստացույցին միացնենք մի սարք, որը կարող է ամրագրել նրա աշխատանքի տևողությունը, այնուհետև սարքի տվյալները համեմատենք հեռուստածրագրերի դիտման հաճախության և տևողության տվյալների հետ, ճշգրտորեն կարելի է հաստատել տվյալ հարցման հիմնավորվածությունը:

Մեկ ուրիշ (IV) հնարք է սանդղակի կետերը ընտրելու համար *դատավորների մեթոդի* կիրառումը:

Նախ ասենք, որ դատավորներին չի կարելի շփոթել փորձագետների հետ: Վերջիններս գործունեության տվյալ ոլորտում արհեստավարժ մասնագետներն են: Մինչդեռ դատավորներ ընդունվում են տվյալ հիմնահարցի հետազոտման շրջանակներում տիպային համարվող այն անձինք, որոնք, թերևս, ամենից շատ են արտահայտում ուսումնասիրվող երևույթը: Օրինակ, եթե նույն հեռուստածրագրի դիտման հետ կապված խնդիր ենք հետազոտում, հարց է առաջանում, թե ի՞նչ միավորներով պետք է չափենք սանդղակի կետերը. օրերո՞վ, ժամերո՞վ, դիտման հաճախությա՞մբ: Ահա այս հարցերի պատասխանը հիմնավորելու համար ավելի ճիշտ է վստահել հենց իրավասու հեռուստադիտողներին: Փորձում ենք կազմել ապագա զանգվածային հարցման միկրոմոդելը (ըստ տարբեր հատկանիշների. սեռի, տարիքի, կրթության և այլն), և տիպական այդ անձանցով որոշում ենք սանդղակի կետերը:

Եվ վերջապես, հիմնավորվածության ներքին ստուգման «հեղինակավոր» հնարքներից (V) է *ինդեքսի կառուցումը*, այսինքն՝ որևէ հատկության գրանցման համար մի շարք ցուցանիշների համատեղումը: Օրինակ, եթե ուզում ենք չափել աշխատանքով բավարարվածությունը, համատեղում ենք այն դրսևորող երեք տարբեր սանդղակների տվյալները (1. Որքանո՞վ եք Ձեր այժմյան աշխատանքից գոհ, 2. Կուզեի՞ք անցնել ուրիշ աշխատանքի, 3. Ենթադրենք ինչ-ինչ պատճառներով ժամանակավորապես չեք աշխատում: Կվերադառնալի՞ք նախկին աշխատատեղ):

Չափման կայունությունը այն է, թե տվյալ ընթացակարգի

օգնությամբ ստացված ինֆորմացիան որքանով է միանշանակ:

Հափման սարքի կայունությունը նրա հուսալիության կարևորագույն պայմանն է:

Կայունության ստուգման ամենատարածված հնարքը *կշռկ-նակի չափումն* է: Այսինքն, նույն օբյեկտը չափելուց հետո, որոշ ժամանակ անց, նորից նույն ընթացակարգով տվյալ օբյեկտը չափվում է: Եթե տվյալների համընկնումը բավական բարձր է, ապա սանդղակը համարվում է կայուն:

Իհարկե, երբ չափվում են ոչ թե ֆիզիկական օբյեկտները, այլ հոգեբանական դիրքորոշումները, այս դեպքում խնդիրներ են առաջանում: Մարդիկ երբեմն արհեստականորեն ձգտում են երկու չափման տվյալները հարմարեցնել, կամ՝ հակառակը, գիտակցաբար հակադրել միմյանց: Նման թերությունից խուսափելու համար մասնագետները մեծացնում են երկրորդ չափման ժամկետը կամ էլ փորձարկվողների թիվը:

Կայունության աստիճանը որոշվում է 4.1 և 4.2 բանաձևերով՝

$$W = \frac{n}{N} \quad (4.1), \quad P = \frac{n}{N} \times 100\% \quad (4.2),$$

որտեղ n -ը լրիվ համընկնող պատասխանների թիվն է, N -ը՝ փորձարկվողների ընդհանուր թիվը, P -ն՝ կայունության տոկոսը, W -ն՝ կայունության գործակիցը: Եթե, օրինակ սանդղակի որոշ կետերում համընկնումների քանակը համեմատաբար փոքր է՝ հատկապես «կայուն» փորձարկվողների մոտ, այս դեպքում համապատասխան կետերը պետք է վերաձևակերպվեն:

Կայունությունը ստուգվում է նաև *տվյալ հատկության չափման համար մի քանի անձանց օգտագործմամբ*:

Օրինակ, եթե ցանկանում ենք չափել այժմ շատ տարածված քաղաքական ակտիվությունը, հարկավոր է ընտրել հստակ բնութագրիչներ: Այդպիսիք կարող են լինել կուսակցականությունը, ընտրական բլոկին պատկանելությունը, որոշակի գործողությունների (ժողովներ, ելույթներ, ընտրություններ) մասնակցությունը և այլն: Երբ մի քանի լաբորանտ, նույն ընթացակարգով չափում են և ստանում բարձր համընկնում, այդ դեպքում սանդղակը կայուն է, եթե ոչ՝ անկայուն: Վերջին դեպքում հետազոտողը որոնում

է ուրիշ չափվող մեծություն: Նման հնարքը արդյունավետ է օգտագործել լրատվամիջոցների տեքստերի վերլուծության ժամանակ:

Երրորդ հնարքը, որով ստուգվում է կայունությունը՝ *«սանդղակի ճեղքումն է»*: Բերենք հատկանշական մի օրինակ, կապված իր մասնագիտությամբ աշխատողի բավարարվածության չափման հետ:

Մասնագիտությամբ բավարարվածության մակարդակը կարող է չափվել հետևյալ կետերով.

I. Մասնագիտությունը շատ է դուր գալիս,

II. Մասնագիտությունը ավելի շատ դուր է գալիս, քան՝ դուր չի գալիս,

III. Մասնագիտության հանդեպ համեմատաբար անտարբեր եմ,

IV. Ավելի շուտ մասնագիտությունը դուր չի գալիս,

V. Մասնագիտությունը բոլորովին դուր չի գալիս:

Այժմ բերենք նույն սանդղակի ճեղքված օրինակը.

I.1 Իմ մասնագիտությունը համարում եմ բոլորից լավը,

I.2 Իմ մասնագիտությունը լավերից մեկն է:

II. 1 Համարում եմ, որ իմ մասնագիտությունը շատ ուրիշներից վատը չէ,

II. 2 Համարում եմ, որ գոյություն ունեն մասնագիտություններ, որոնք շատ ավելի վատն են, քան իմը:

III.1 Իմ մասնագիտությունը ուրիշներից ոչ վատն է, ոչ էլ լավը,

III. 2 Դուրե գալիս, թե դուր չի գալիս իմ մասնագիտությունը՝ չգիտեմ:

IV. 1 Համարում եմ, որ իմ մասնագիտությունից լավ մասնագիտություններ չառ կան,

IV. 2 Իմ մասնագիտությունը շատ ուրիշների մասնագիտություններից վատն է:

V. 1 Դա ամենավատ մասնագիտություններից է:

V. 2 Մասնագիտությունների մեծ մասը իմից լավն է:

Այնուհետև այս 10 կետերը խառնում են միմյանց և փորձարկվողներին խնդրում են հայտնել իրենց համաձայնությունն ու անհամաձայնությունը նրանցից յուրաքանչյուրի հետ (ճիշտ է, եթե վերցվում են բավարար թվով փորձարկվողներ, օրինակ՝ 50 մարդ): Դրանից հետո տվյալները խմբավորվում են ըստ կենտ ու զույգ կետերի՝ (I.1, II. 1, III.1, IV. 1, V. 1) և (I.2, II. 2, III.2, IV. 2, V. 2): Հաջորդ, ամենակարևոր քայլում պատասխանները համադրում են: Եթե այդ երկու խումբ պատասխանների մեջ բավական բարձր կապ է դրսևորվում, ուրեմն երկու կետերը ընդունվում են հավասարազոր և հատկությունների ընդհանուր թվային շարքը չափող միասնական գործիք:

Եթե առկա են այնպիսի դատողություններ, որոնք փորձարկվողների պատասխաններում առաջացնում են շեղումներ, դրանք պետք է վերածնակերպել: Արդյունքում ունենում ենք 10 կետից սանդղակ, որը ներկայացնում ենք զանգվածային հարցմանը: Այստեղ յուրաքանչյուրն ստանում է իր միավորը, փաստորեն 10 միավորանոց սանդղակում: Եթե I.1 և I.2 –ը ընդունեք 5 միավոր՝ ամենաբարձրը, իսկ V.1 և V.2 –ը՝ 1՝ ամենացածրը, և եթե որևէ անձ նշել է I.1 և II.2 –ը, ուրեմն նրա միավորը կլինի $5+4=9$:

3. Չափման ճշգրտությունը և ճիշտությունը կախված են.

ա) չափվող օբյեկտի կամ հատկության կայունության աստիճանից,

բ) սանդղակի զգայունակությունից (սանդղակի կետերի կոտորակայնությունից),

գ) չափման պարբերական սխալների բացակայությունից,

դ) չափման կայունությունից:

Բերենք մի շարք դատողություններ, կապված վերոնշյալի հետ:

Չափվող տարբեր սոցիալական օբյեկտներ ունեն կայունության տարբեր աստիճան: Օրինակ, որևէ գործով բավարարվածության չափումն ակնհայտ է, որ նախապես ավելի պակաս ճշգրիտ կլինի, քան, ասենք, որևէ գործողության հաճախության գրանցումը: Առաջին դեպքում ինքը՝ օբյեկտն է անկայուն: Վատ

տրամադրության դեպքում մարդ կարող է դժգոհել որևէ իրողությունից, մինչդեռ լավ զգացողության դեպքում այդ նույն իրողությունից կարող է նույնիսկ շատ գոհ լինել: Սակայն հազիվ թե նրա տրամադրությունը անդրադառնա այն տեղեկության վրա, թե նա քանի անգամ է պարզև, հավելավճար ստացել որոշակի ժամանակահատվածում:

Սանդղակի զգայունակությունը ուղղակիորեն առնչվում է չափման ճշգրտության հետ: 10 կետով սանդղակն ավելի ճշգրիտ է չափում, քան 5 կամ 3 կետ ունեցողը: Սակայն այդ կոտորակայնությունը չի կարելի անսահման մեծացնել: Դա օպտիմումի խնդիր է. պետք է ապահովել սանդղակի առավելագույն աստիճանավորումը՝ չափման տվյալների բարձր կայունության պահպանման պայմանով: Աստիճանաբար մեծացնելով սանդղակի կոտորակայնությունը և զուգահեռաբար ստուգելով նրա կայունությունը՝ հասնում ենք այն սահմանին, որից հետո կոտորակայնության մեծացումը հանգեցնում է կայունության նվազմանը: Այդ սահմանն էլ հենց օպտիմումն է: Մյուս կողմից նշենք, որ չափումը կարող է լինել ճշգրիտ և միաժամանակ ... ոչ ճիշտ: Դա լինում է պարբերական սխալների առկայության դեպքում: Այնպես, ինչպես, օրինակ ցանկանում ենք մարդկանց կշիռը կշեռքով որոշել, սակայն նախօրոք կշեռքի ցուցանակը «0» ցուցանիշի վրա դրված չէ: Արդյունքում միշտ ստանում ենք շեղված քաշ:

Տվյալ երևույթը շատ ավելի դժվար է որոշել սոցիալական բնութագծերի դեպքում: Նման պարագայում, երբ նախօրոք իսկական արժեքը, ինչպես կշեռքի դեպքում, հայտնի չէ, այդպիսի սխալները հնարավոր է վերացնել տարբեր եղանակներով չափված տվյալների համադրմամբ: Սոցիալական կյանքից պարբերական սխալի օրինակ կարող է ծառայել, ենթադրենք, բարոյապես դատապարտվող արարքի հանդեպ վերաբերմունքի մասին ծայրահեղ բացասական պատասխանը: Եթե հարցնում ենք ակոհիկի օգտագործման մասին և կա պատասխան. «ես պարբերաբար խմում եմ և, սովորաբար, մինչև գիտակցությունս կորցնելու աստիճան», պարզ է, որ նույնիսկ ստաժավոր ակոհիկիկը նման կետ հազիվ թե նշի: Ավելի շուտ նա կընտրի՝ «ես բավական հաճախ եմ խմում» տարբերակը: Ծայրահեղ կետը այստեղ «չի աշ-

խատում», այդ պատճառով սանդղակը ճիշտ չէ:

Պարբերական սխալի մեկ ուրիշ պատճառ կարող է հանդիսանալ բարձր կոտորակայնությամբ սանդղակի հարևան կետերի վատ տարբերակվածությունը: Օրինակ, եթե ներկայացվում է 50 քաղաքական գործիչ և պահանջվում է դրանց դասավորել ըստ տվյալ անհատի համար նրանց գրավչության աստիճանի, պարզ է, որ մի քանիսին նշելուց հետո այլևս գնահատողին դժվար է լինելու նրանց տարբերելը մեկը մյուսից: Այդ դեպքում սանդղակը կլինի ոչ ճշգրիտ և ոչ ճիշտ: Դրա համար պետք է լինի ընդունելի կոտորակայնություն:

4.3 ՍԱՆԴՂԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սանդղակների դասակարգման ամենատարածված եղանակը ըստ թվային գործողությունների պահանջներին նրանց հարաճուն բավարարմանը դասավորելն է: Ըստ այդմ տարանջատում են սանդղակների հինգ դաս.

ա) *անվանական սանդղակ* (անվանումների չկարգավորված սանդղակ),

բ) *մասնակիորեն կարգավորված անվանական սանդղակ*,

գ) *կարգային սանդղակ կամ լրիվ կարգավորված սովորական սանդղակ* (կարգավորված սանդղակ),

դ) *միջակայքային սանդղակ* (հավասար միջակայքերի սանդղակ),

ե) *իդեալական կամ բացարձակ սանդղակ* (համամասնական գնահատականների սանդղակ):

Համառոտակի ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրը, նշելով, որ այդ սանդղակները նախատեսված են միայն միաչափ բաշխումների թվայնացման համար, այսինքն՝ որոշակի տարածությունը չափում է հատկությունների միայն մեկ թվային շարքում:

4.3.1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Անվանական սանդղակը հաստատում է հավասարության

հարաբերություններ նույն դասի մեջ ընդգրկված երևույթների միջև: Նման սանդղակի կետերը հատկությունների որակական դասակարգման ցուցանմուշներն են: Օրինակ, (Ա) կիբեռնետիկայի դեպարտամենտի ուսանողներ, (Բ) տրանսպորտային դեպարտամենտի ուսանողներ, (Գ) սոցիոլոգիայի դեպարտամենտի ուսանողներ, (Դ) էներգետիկայի դեպարտամենտի ուսանողներ, (Ե) քիմիական դեպարտամենտի ուսանողներ: Այստեղ կարող է ներքին կապ լինել, որն զգում ենք բնագոյրեն: Սակայն դա ապացույց չէ, և սանդղակը չկարգավորված է:

Անվանական (չկարգավորված) սանդղակի ավելի ցայտուն օրինակ է բուհ ընդունվելու կամ աշխատանքային շարժառիթները: Այսպես, ենթադրենք հարցնում ենք. «Ի՞նչը ստիպեց բուհ ընդունվել», և թվարկում ենք պատասխանները.

- (I) բանակից ազատվելու ցանկությունը,
- (II) այս մասնագիտությունը սիրում եմ,
- (III) ծնողներիս խորհուրդը,
- (IV) ընկերներով որոշեցինք,
- (V) տանս մոտ է:


Այս կետերը հնարավոր չէ կարգավորել, քանի որ դրանք չեն տեղավորվում թվային շարքի մեջ: Տվյալ փաստը խորհրդանշորեն գրվում է այսպես.

(I) \wedge (II) \wedge (III) \wedge (IV) \wedge (V), որտեղ \wedge նշանը նշանակում է կամ-կամ:


Անվանական սանդղակի դեպքում հնարավոր են հետևյալ թվային գործողությունները.

- Սանդղակի կետերի բաշխման հաճախության հաշվումը բնական թվերով կամ տոկոսներով: Դա կատարում ենք յուրաքանչյուր խմբի քանակը հաշվելով և այն բաժանելով ընդհանուր թվին:


- Միջին միտումի (տենդենցի) որոնումը ըստ Մոդալ հաճախության: Մոդալ (M_0) կոչվում է ամենամեծ քանակության խումբը: Այս երկու գործողություններն ավելի դիտողունակ են, եթե արտապատկերվեն դիագրամի վրա (տե՛ս նկ. 2).



ա



բ



գ

Նկ. 4.1 Անվանական չկարգավորված սանդղակում որակական հայտանիշների բաշխման դիագրամների տեսակները, որտեղ՝ ա-ն սյունային դիագրամն է, բ-ն՝ ժապավենայինը, գ-ն՝ սեկտորայինը: A, B, C, D և այլն՝ առանձին որակական հայտանիշներն են, օրինակ՝ աշխատողների մասնագիտական-որակավորման խմբերը, քաղաքական կուսակցությունների հանդեպ վերաբերմունքը և այլն:

Լավագույն դեպքում երկու չկարգավորված շարքի մեջ հնարավոր է հաշվարկել X^2 գործակիցը, որը թույլ է տալիս հիմնավորել, թե տվյալ համադրվող բնութագրերի միջև կապը առկա է կամ բացակայում է⁹:

4.3.2. ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՍԱՆԴՂԱԿ

Այս սանդղակը հաստատում է հավասարության հարաբերությունների յուրաքանչյուր դասի մեջ գտնվող երևույթների միջև և հաջորդականության հարաբերություններ «>» կամ «<» տերմիններով մի քանի, սակայն ոչ բոլոր դասերի միջև (նվազագույնը ո դասից 2-ի միջև, որտեղ $n > 2$):

Պարզաբանելու համար տվյալ սանդղակի բնույթը՝ վերցնենք աշխատանքի բովանդակության հետևյալ դասակարգումը.

(A) - հատուկ պատրաստություն չպահանջող ձեռքի աշխատանքի բանվորներ,

(B) - բարձր որակավորման ձեռքի աշխատանքի բանվորներ,

(C) - միջին որակավորման մեքենայացված սարքավորման վրա աշխատող բանվորներ,

(D) - բարձր որակավորման մեքենայացված աշխատանքի բանվորներ


(E) - առանց կարգավորման հմտության ավտոմատացված աշխատանքի բանվորներ,

(F) – հեռակառավարող-կարգավորող բանվորներ:

Այս դասակարգման մեջ վերցնենք (A), (D), (E) և (F) դասերը: Եթե դիտարկենք ըստ մեքենայացման և որակավորման պարամետրերի, ապա կարելի է պնդել, որ (A) դիրքը ավելի ցածր է, քան (F)-ը: (D) դիրքը ակնհայտորեն ավելի բարձր է, քան (A)-ն և ավելի ցածր է, քան (F)-ը: (E) դիրքը հավասար հարաբերության մեջ է (A)-ի և (F)-ի հետ: Սակայն (D)-ի և (E)-ի միջև հարաբերության հաստատումը դժվար է, քանզի դրա համար պետք է հավասարեցնել մեքենայացման և որակավորման կարգերը, ինչը ան-

⁹ X^2 գործակցի մասին տե՛ս սույն ձեռնարկի 7-րդ գլուխը:

հնար է առանց հատուկ հետազոտման: Ուրեմն (D) և (E) դիրքերը անհամատեղելի են «մեծ»-«փոքր» հասկացությունների իմաստով: Այսպիսի կախվածությունը նկարագրվում է հետևյալ պատկերով.



Այս սանդղակի համար թվային գործողությունները հետևյալն են.

- բոլոր այն գործողությունները, որոնք թվարկվեցին չկարգավորված անվանական սանդղակի համար,
- շարքի յուրաքանչյուր լրիվ կարգավորված հատվածի հետ կարելի է վերաբերվել ինչպես անվանումների լրիվ կարգավորված սանդղակի հետ:

Շարքի հատվածների տվյալները համեմատում են միանշանակ ցուցանիշներով՝ ըստ մոդալ խմբերի կամ կապի գործակիցների: Ասենք, որ սանդղակի այս տիպը օգտագործվում է շատ հազվադեպ:

4.3.3. ԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Լրիվ կարգավորված սանդղակը հաստատում է հավասարության հարաբերություններ յուրաքանչյուր դասի երևույթների միջև և հաջորդայնության հարաբերություններ («>» մեծ և «<» փոքր տերմիններով) առանց բացառության բոլոր դասերի միջև:

Սովորաբար նման սանդղակների հնարավոր պատասխաններն այսպիսին են.

- լիովին համաձայն են,
- ավելի շուտ համաձայն են,
- դժվարանում են պատասխանել,
- ավելի շուտ համաձայն չեն,
- բոլորովին համաձայն չեն;

կամ

- վստահ եմ, որ այդպես է,
- կարծում եմ, որ այդպես է,
- դժվարանում եմ պատասխանել,
- կարծում եմ, որ այդպես չէ,
- վստահ եմ, որ այդպես չէ;

կամ

- այդպես միշտ է լինում,
- այդպես երբեմն լինում է,
- լինում է և՛ այդպես, և՛ այնպես,
- սովորաբար այդպես չի լինում,
- այդպես երբեք չի լինում;

կամ

- լրիվ բավարարված եմ,
- բավարարված եմ,
- ավելի շուտ բավարարված եմ, քան չբավարարված,
- բավարարված չեմ,
- բոլորովին բավարարված չեմ:

Տվյալ տիպի սանդղակների տարածված տարբերակը աստիճանային սանդղակն է: Այս դեպքում ձգտում են լրիվ կարգավորել պատասխանողների նախընտրությունները, գերակայությունները, արժեքները: Օրինակ, ներկայացվում են որևէ հանրային կարևորություն ունեցող խնդրի լուծման (թոշակ, աշխատավարձ, կառավարում, ժամանց և այլն) տարբերակներ և առաջարկվում է դրանք աստիճանակարգել ամենակարևորից մինչև ոչ կարևորը: Մասնագետները պնդում են, որ աստիճանակարգման ներկայացված օբյեկտները չեն կարող շատ մեծ լինել (օրինակ՝ 15 կամ 20): Քանի որ այդ դեպքում ստացվում է ծայրահեղ անկայուն աստիճանակարգում: Բացի այդ, տվյալները կենտրոնանում են հիմնականում առաջին և վերջին աստիճաններում, իսկ միջին գոտին, սովորաբար պակաս կայուն է: Այդ պատճառով, սովորաբար, աստիճանակարգման հուսալիությունը բարձրացնելու նպատակով փորձարկվող խմբի (ապագա ընտրական համախմբի միկրոմոդելը) հարցման ճանապարհով առավել անկայուն օբյեկտները փորձում են միավորել:

Սակայն նման միավորումը, մեծացնելով սանդղակի կայունությունը, միաժամանակ կտրուկ փոքրացնում է նրա զգայունակությունը: Այդ դեպքում օգտագործում են հարցվողի համար բավական հեշտ, սակայն հետազոտողի համար տարողունակ ընթացակարգ՝ աստիճանակարգումը՝ զույգ համեմատությունների մեթոդով:

Մոտավորապես այսպես.

| Համեմատվել է | Ընտրվել է | Ընտրության հաճախականությունը |
|--------------|-----------|------------------------------|
| A – B | B | B – 4 |
| A – C | A | D – 3 |
| A – D | D | E – 2 |
| A – E | E | A – 1 |
| B – C | B | C – 0 |
| B – D | B | |
| B – E | B | |
| C – D | D | |
| C – E | E | |
| D – E | D | |

4.3.4. ԹՎԵՐՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննարկելով տվյալ սանդղակների մաթեմատիկական հնարավորությունները՝ պետք է նկատի ունենալ, որ սանդղակի միջակայքերը հավասար չեն, այդ պատճառով թվերը ընդամենը նշանակում են հայտանիշների հաջորդականության կարգը (եթե մեկը «4» է ստանում, մյուսը՝ «2», դա չի նշանակում, որ առաջինը երկու անգամ մյուսից լավն է): Այստեղ թվերով գործողությունները՝ գործողություն են կարգերի, այլ ոչ թե յուրաքանչյուր կետում հատկությունների քանակական արտահայտության հետ:

Այս սանդղակի թվերը կարող են ենթարկվել մոնոտոն ձևափոխությունների (օրինակ 1-ից մինչև 5 կարգադասումը կարելի է փոխել 2-ից՝ 10 կամ (-1)-ից մինչև (+1)): Կարգերի միջև հարաբերությունները չեն փոխվում.

| | | | | |
|----|------|---|------|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 2 | 4 | 6 | 8 | 10 |
| -1 | -0,5 | 0 | +0,5 | +1 |

Մի շարք լրիվ կարգավորված անվանական սանդղակների գումարային գնահատականների օգնությամբ հնարավոր է նույն հատկությունը չափել տարբեր բնութագրիչների հավաքածուի միջոցով: Այս եղանակը, որը կոչվում է «Սրճարան» (դա նման է ճաշատեսակների յուրատեսակ հավաքածուի՝ ճաշի ընդհանուր արժեքի հաշվարկով) առաջարկել է ամերիկյան սոցիոլոգ Լայկերտը: Ստորև բերվում է նման սանդղակի օրինակ: Այստեղ երեխա ունենալու ցանկությունը գնահատվում է դրական, այդ ցանկության բացակայությունը՝ բացասական, որի պատճառով (+) դատողությունների հետ համաձայնությունը ստանում է բարձր գնահատական, նույնը (-) դատողությունների հետ անհամաձայնությունը:

| Դատողություններ երեխաների հանդեպ վերաբերմունքի մասին | | Լիովին համաձայն եմ | Համաձայն եմ | Պժվար է ասել | Համաձայն չեմ | Բոլորովին համաձայն չեմ |
|--|--|---|-------------|--------------|--------------|------------------------|
| «+» | երեխաներ ունենալու ցանկություն | «+» դատողությունների ընդունման գնահատականները | | | | |
| | | (5) | (4) | (3) | (2) | (1) |
| «-» | երեխաներ չունենալու ցանկություն | «-» դատողությունների ընդունման գնահատականները | | | | |
| | | (1) | (2) | (3) | (4) | (5) |
| + (1) | Երեխաները օժանդակում են ծնողների մերձեցմանը | | V | | | |
| + (2) | Իրենցի է դիտել երեխաների խաղերը | V | | | | |
| - (3) | Երեխաները մեզանից միշտ խլում են կյանքի ինչ-որ կարևոր մասը | | | | | V |
| - (4) | Երեխա ունեցող մայրը զրկվում է ընկերների հետ առնչվելուց | | V | | | |
| + (5) | Ընդհանրապես երեխա ունենալն ավելի հաճելի է, քան չունենալը | V | | | | |
| - (6) | Իրենց երեխաների հետ դժվար է կինում գայրույթը գտնել | | | V | | |
| - (7) | Երեխաների խնամքի համար չափից ավելի մեծ ջանքեր են պահանջվում | | | | V | |
| - (8) | Եթե պայմանները թույլ տային, երեխաներին կուղարկեիմք գիշերօթիկ | | | | | V |
| + (9) | Երբ ծագում են տհաճություններ, երեխաները սփոփանք են | V | | | | |
| + (10) | Եթե կարողանայի կյանքը նորից սկսել, անպայման երեխաներ կունենայի | | V | | | |

Ընդհանուր գնահատականը նշված դեպքում կլինի այսպիսին.

| Կետը | միավորը |
|------|---------|
| 1 | 4 |
| 2 | 5 |
| 3 | 5 |
| 4 | 2 |
| 5 | 5 |
| 6 | 3 |
| 7 | 4 |
| 8 | 5 |
| 9 | 5 |
| 10 | 4 |
| | 42 |

Ինչպես տեսնում ենք, մեր երևակայական կինը բավական դրական է վերաբերվում երեխաներ ունենալու փաստին:

Մոդալ ցուցանիշներից զատ այստեղ կարելի է իրագործել նաև **մեդիանայի** որոնումը (**Me**), ինչը կարգադասված սանդղակը կհսում է: Այն կիրառվում է սանդղակի շեմերը հայտնաբերելու համար. նրա աջ և ձախ կողմերում դասավորվում են հակառակ բևեռներին ձգտող հայտանիշները:

Նման սանդղակների համար ամենաուժեղ ցուցանիշը կարգերի **կոռելյացիան** է (Սպիրմենի կամ Կենդելի): Կարգային կոռելյացիաները ցույց են տալիս գործառութային կապերի առկայությունը կամ բացակայությունը կարգավորված անվանական սանդղակներով չափված երկու շարք հայտանիշների համար:

4.3.5. ՀԱՎԱՍԱՐ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Ի տարբերություն կարգայինի մետրիկական սանդղակները սոցիոլոգիական հետազոտություններում այդքան հաճախ չեն հանդիպում: Նաև այն պատճառով, որ դրանք ոչ միայն ավել-պակաս հարաբերություններ են հաստատում տարբեր կետերի միջև, այլև թույլ են տալիս ամրագրել միջակայքի մեծությունը:

Այն, ինչը բուլորովին էլ հեշտ խնդիր չէ: Գլխավոր դժվարությունը սանդղակի կետերի միջև հավասարության կամ հեռավորությունների տարբերության հիմնավորումն է:

Սա կարևոր է չչփոթել միավորներով գնահատման սանդղակի հետ: Եթե, օրինակ, չափում ենք հասարակական կարծիքը 100 միավորանոց սանդղակով, չի կարելի ասել, թե այն անծինք, ովքեր նշել են 20 և 25 կետերը, նույնչափով են իրենց գնահատականներում տարբերվում, ինչպես 72 և 77 կետերը նշածները: Նման հիմնավորումը իրագործվում է հատուկ գործողությունների օգնությամբ, որի արդյունքում ստեղծվում է հավասար միջակայքերի սանդղակը: Մասնավորաբար Թերսթունի անունը կրող սանդղակում դրա համար օգտագործվում է որևէ երևույթի մարդկանց հուզական լարվածության աստիճանների համեմատությունը (մանրամասն կարելի է ծանոթանալ Վ.Ա. Յադովի գրքում): Ընդհանենը նշենք, որ սա նման է հետևյալ իրողությանը: Մեզ մատուցվում են առարկաներ, որոնք արտաքին տեսքով նման են միմյանց, սակայն աննշան տարբերվում են քաշով: Ջույգ-զույգ վերցնելով այդ առարկաները, համեմատելով ու կշռելով՝ որոշում ենք այն նվազագույն կշիռը, որն ընկալվում է որպես մոտակա երկու կշիռների տարբերություն, որն էլ ծանրության ընկալման շեմի միջակայքն է: Նման ձևով էլ կառուցվում է գնահատվելիք դատողությունների սուբյեկտիվ շեմի տարբերակման ընթացակարգը Թերսթունի սանդղակում:

Թվաբանական գործողությունները միջակայքային չափիչ սանդղակում ավելի հարուստ են, քան անվանականում:

Այսպիսի սանդղակներում գծային ձևափոխությունների ժամանակ թվերը մնում են անփոփոխ. $y=ax+b$: Հաշվարկման կետը սանդղակի վրա ընտրվում է ազատորեն (b), նույնպես ազատորեն է ընտրվում նաև չափման մեծությունը (a): Օրինակ, եթե $a=2$, միջակայքերի թիվը՝ $x=10$, և հաշվարկը կատարվում է $b=1$, ապա $y=2 \times 10 + 1 = 21$: Հաշվարկի սկիզբը, ինչպես նաև չափման մեծությունը այստեղ ազատորեն կարող ենք փոխել: Օրինակ, 100 բաժանումով սանդղակից կարող ենք անցնել ցանկացած ուրիշ բաժանումով սանդղակի: Այսպես սովորաբար ջեր-

մաստիճանի չափման ժամանակ անցում են կատարում Ցելսիուսից Թյունթերին կամ Ֆարենհայթին:

Այս դեպքում կոռեկցիոն և ռեգրեսիվ վերլուծությունների նոր հնարավորություններ են ստեղծվում: Կարգային գործակցի փոխարեն կարելի է օգտագործել ավելի զգայուն Պիրսոնի զույգային կոռեկցիայի գործակիցը: Վերջինս այնքանով է ավելի լավ, որ թույլ է տալիս մի փոփոխականի մեջ փոփոխությունները համադրել փոփոխությունների հետ՝ մյուսում:

4.3.6. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

Այստեղ մենք գործ ունենք իդեալական կամ բացարձակ չափիչ սանդղակի հետ, որը նախկինից տարբերվում է նրանով, որ ունի փորձնականորեն հաստատված 0-ական կետ: Այսպիսի սանդղակի համար կիրառելի են թվային բոլոր գործողությունները, քանի որ կարելի է որոշել, ինչքան կամ որքանով տվյալ կետը սանդղակում մեծ է մյուսից: Նման սանդղակները ընդունված են ճշգրիտ գիտություններում, որտեղ «0»-ական կետը (հաշվարկման կետը ($\hat{0} \div \hat{e} \hat{a} \hat{i} \hat{\delta} \hat{n} \div \hat{a} \hat{\delta} \hat{a}$) - որտեղից էլ ծագել է ճշգրիտ ($\hat{0} \div \div \hat{i} \hat{u} \hat{a}$) գիտություններ անվանումը) փորձնականորեն որոշված է:

Այսպիսի սանդղակները հաջողությամբ օգտագործվում են ֆիզիոլոգիական և հոգեբանական հատկությունների չափման ժամանակ: Հաշվարկման սկիզբ այստեղ համարվում են ընկալման և հագեցման շեմերը:

Սոցիոլոգիայում նման սանդղակների կիրառումը խիստ սահմանափակ է: Այն օգտագործվում է տարածության և ժամանակի մեջ տարածության չափման, բնական միավորների (դրամական միավորներ, գործողության արդյունքներ, արարքներ) հաշվարկման համար:

Իդեալական սանդղակների համար մատչելի են բնական թվերով բոլոր մաթեմատիկական գործողությունները:

Շատ կարևոր է սոցիոլոգիայում ըմբռնել, որ «մեծ դժբախտություն» չէ այդպիսի սանդղակների սահմանափակ կիրառումը: Արդեն իսկ դասակարգումը անվանական սանդղակում կամ,

առավել ևս աստիճանակարգումը բավարար են ուսումնասիրվող սոցիալական օբյեկտի միտումը ամրագրելու համար: Ավելիին սոցիոլոգը չի էլ ձգտել:

Այժմ քննարկենք մյուս կարևորագույն խնդիրը՝ ինֆորմացիայի հավաքման մեթոդները:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 4-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- 1. Չափման իմաստը սոցիոլոգիայում:*
- 2. Չափման սանդղակի հայտնաբերման փուլերը:*
- 3. Սանդղակի հիմնավորվածությունը:*
- 4. Սանդղակի կայունությունը:*
- 5. Սանդղակի ճշտությունը:*
- 6. Անվանական սանդղակ:*
- 7. Մասնակիորեն կարգավորված անվանական սանդղակ:*
- 8. Կարգային սանդղակ կամ լրիվ կարգավորված սովորական սանդղակ:*
- 9. Միջակայքային սանդղակ:*
- 10. Իդեալական կամ բացարձակ սանդղակ:*

ԳԼՈՒԽ 5

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ

5.1 ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Հարցումը սոցիալական գիտություններին հատուկ ու բնորոշ մեթոդ է: Սոցիոլոգիան, թերևս, որպես փորձարարական գիտություն՝ ձևավորվեց միայն այն ժամանակ, երբ հայտնի դարձավ, որ առանց մարդկանց կարծիքների հետազոտման հանրային կյանքի համարժեք իմաստավորումը գրեթե անհնար է: Հարկ է նշել, որ հարցման հնարավորությունը մարդկանց ուսումնասիրող գիտությունները դարձրեց ինքնատիպ, զարգացման շատ ավելի լայն հնարավորություններով: Քանզի, օրինակ, դասական ֆիզիկական օգտագործում է միայն դիտարկման մեթոդը: Ինչպես նշում է Մ.Վեբերը. «Ժայռերը չեն խոսում և գիտնական ֆիզիկոսը չի կարող օգտվել այնպիսի մեթոդից, ինչպիսին զրույցն է ուսումնասիրվող օբյեկտի հետ»: Ըստ «Սոցիոմետրիա» հիմնարար աշխատության հեղինակ Ջ.Սորենոյի, այն հեռանկարները, որը հարցումը բացում է սոցիոլոգիայի առջև, առաջիկայում նրան դարձնելու է գիտությունների առաջատար և օգնելու է ավելի լավ ըմբռնելու աշխարհի ֆիզիկական պատկերը և կառավարելու այն:

Տվյալ գլխի շարադրանքում մենք օգտվելու ենք Հայաստանի հայտնի սոցիոլոգներից մեկի՝ Գ.Պողոսյանի՝ «Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում» գրքի մոտեցումներից: Այստեղ, մասնավորաբար, «խախտելով» ավանդույթը նման թեմայի շարադրանքներում, հարցման մեթոդը (հարցազրույցը) վերլուծվում է առաջինը, դրանով ընդգծելով այդ մեթոդի բացառիկ կարևորությունը (դիտարկման, փաստաթղթերի վերլուծության և այլ մեթոդների համեմատությամբ) փորձարարական սոցիոլոգիայի զարգացման համար:

5.1.1. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Հարցազրույցը անգլերեն «ինտերվյու» բառի թարգմանությունն է, որը բառացի նշանակում է «ներսը նայել»:

Ընդհանուր առմամբ, *հարցազրույցը սահմանվում է որպես որոշակի պլանով իրացվող այնպիսի զրույց, որը զրուցավարի (ինտերվյուեր) և հարցվողի (ռեսպոնդենտ) միջև ենթադրում է անմիջական առնչություն (կոնտակտ):* Ըստ որում՝ հարցվողի պատասխանների գրանցումը կատարվում է կամ զրուցավարի (նրա օգնականի) կողմից, կամ՝ սարքի միջոցով (ժապավենի վրա): Գ.Պողոսյանը հայտնաբերում և ընդգծում է հարցազրույցի մի նոր առանձնահատկություն, այն է՝ հարցնողի կամ հարցվողի միջև ստեղծվող սոցիալ-հոգեբանական հաղորդակցությունը որպես միջանհատական փոխգործողության հատուկ ձև: Ելնելով դրանից՝ հարցազրույցը սահմանվում է որպես *«հարցվողի հետ նպատակադրված հետազոտական հաղորդակցության հատուկ տեսակ, որն օգտագործվում է որպես անհրաժեշտ սոցիոլոգիական ինֆորմացիա ստանալու մեթոդ»:*

Հարցազրույցի տեսակները: Գոյություն ունեն հարցազրույցի դասակարգման տարբեր չափանիշներ. ըստ հետազոտության նպատակի, օբյեկտի բնույթի, հարցման մասնակիցների յուրահատկության, հարցերի ձևի, ազատ պատասխանների հատկանիշի և այլն: Գ.Պողոսյանը գտնում է, որ հարցազրույցի դասակարգման հիմքը մասնակիցների *ներքին ազատության աստիճանն է:* Քննարկենք հարցազրույցի մի շարք ձևեր:

Ազատ հարցազրույց: Այն այլ կերպ անվանում են նաև կլի-նիկական, հոգեվերլուծական հարցազրույց:

Ազատ հարցազրույցը նախապես պատրաստված պլան կամ ձևակերպված հարցեր չունի, սակայն ունի ընդհանուր թեմատիկ ուղղվածություն: Հարցնողը, ելնելով իրավիճակից, նախաձեռնողաբար պետք է հարցվողի հետ որոնի և գտնի հաղորդակցման եզրեր, իրենթացս մտովի կառուցի կամ վերակառուցի զրույցի պլանը: Նշվում է, որ նման զրույցի տվյալների ընդհանրացումը կապված է մեթոդական լուրջ դժվարությունների հետ: Այն հիմնականում կիրառվում է հետազոտման հետախուզական (պիլո-

տաժային) փուլում:

Կենդանի, անմիջական հաղորդակցությունը հարցվողի հետ ստեղծում է հոգեհուզական մտերմիկ այն մթնոլորտը, որի շնորհիվ ստացվում է անհրաժեշտ տեղեկությունը՝ որոշ դեպքերում ավելի հավաստի, քան ցանկացած հարցաթերթիկ. օրինակ՝ հոգեբուժության մեջ: Սակայն զանգվածային հարցումներում, երբ նպատակ չկա թափանցելու երևույթի խորքերը, ազատ հարցազրույցը հարմար մեթոդ չէ: Նաև այն պատճառով, որ գործնականում անհնար է ստացված տվյալների համեմատությունը:

Սոցիոլոգները ազատ հարցազրույցը հաճախ կիրառում են փորձագետներին հարցնելիս: Այստեղ մեծ է զրուցավարի դերն ու նշանակությունը: Նրա հմտությունից, հոգեբանական տակտից, փորձվածությունից է կախված տվյալների համարժեքությունն ու հավաստիությունը, այն, ինչը պահանջում է հատուկ մասնագիտական պատրաստվածություն: «Սոցիոլոգիապես» զարգացած երկրներում (օրինակ Անգլիայում) զրուցավարների (ինտերվյուերների) պատրաստումը տարիներ է տևում:

Խորքային հարցազրույց: Մեծապես ընդհանրություն ունենալով նախորդ մեթոդի հետ՝ այս դեպքում նախապես պատրաստվում են մի շարք հարցեր, որոնք զրույցի ընթացքում շոշափվում են: Խորքային հարցազրույցը առավելապես օգտագործվում է հարցերի սահմանափակ շրջանակի վերաբերյալ հանրային կարծիքը, տրամադրություններն ու դիրքորոշումները շոշափելու նպատակով (օրինակ սպառողների ճաշակի ու առավել պահանջարկ վայելող ապրանքների մասին): Այս մեթոդը շատ հարմար է մարդկանց շարժառիթների, արժեքային կողմորոշումների ուսումնասիրման ժամանակ: Վերոնշյալ երկու մեթոդների հիմնական թերությունն այն է, որ դրանց միջոցով ստացված տվյալներն անհնար է վիճակագրական մշակման ենթարկել:

Ուղղորդված ֆոկուսավորված հարցազրույց: Այս մեթոդով որոշվում է հարցվողների կարծիքը որևէ որոշակի իրավիճակի պատճառների ու հետևանքների վերաբերյալ: Հարցվողները նախապես ծանոթանում են հետազոտողի կողմից մոդելավորված իրավիճակին, նրա առանձին կողմերին, որոնում են քննարկման

առարկա: Օրինակ՝ այն շատ է կիրառվում հաղորդակցության գործընթացների և քարոզչության ազդեցության հետ կապված խնդիրների լուծման պարագայում: Հարցվողները, ենթադրենք, ծանոթանում են որևէ գրքի, հոդվածի հետ, որից հետո սոցիոլոգների միջոցով կազմակերպվում է դրանց քննարկումը: Այդ ընթացքում բացահայտվում են ներազդման աստիճանը, գլխավոր ու երկրորդական շարժառիթները: Հետազոտողի խնդիրն է նաև առանձնացնել ու մեկնաբանել իր կողմից ակնկալվող և իրական շարժառիթների տարբերությունները:

Ֆարցագրույզ բաց հարցերով: Այս հարցագրույցի դեպքում գործողության մեջ է դրվում գրույցի որոշակի պլանը, որը բաց (չնախատեսված պատասխաններով) հարցերի հավաքածու է: Զրուցավարից պահանջվում է տալ հարցի մատչելի ձևակերպում և առանց աղավաղման գրանցել պատասխանը: Հնարավորության շրջանակներում ավելի ճիշտ է երրորդ անձի բացակայությունը գրույցի ընթացքում: Քանզի, եթե «մեկ ուրիշը» գրառում է յուրաքանչյուր բառը, այն հարցվողին կարող է հուզել, զգաստացնել, ինչը անմիջականորեն ազդում է պատասխանների անկեղծության վրա: Կիրառվում է նաև պատասխանների կողավորում անմիջականորեն հարցագրույցի ընթացքում: Օրինակ. «խնդրում եմ, հիշե՛ք, թե երեկ քանի՞ ժամ եք հեռուստացույց դիտել» հարցին տված պատասխանները կարելի է գրանցել. մեկ ժամ, երկու ժամ, երեք ժամ, չորս և ավելի, ոչ մի ժամ, դժվարանում եմ: Ակնհայտ է, որ ոչ բոլոր հարցերի պատասխաններն են հեշտությամբ կողավորվում:

Տվյալ հարցագրույցը հիմնականում կիրառվում է պիլոտաժային փուլում, երբ հարկ է լինում հարցերը «փակել» կամ ստուգել ձևակերպումների մատչելիությունը: Օգտագործվում են նաև փորձագետների և հեռախոսային հարցումների ընթացքում: «Դաշտային կողավորման» տեխնիկայի կիրառմամբ բաց հարցերով հարցագրույցը նախընտերլի է ստանդարտացված հարցագրույցից, քանզի առարկայորեն բացառվում է հարցի հնարավոր պատասխանների ներազդման գործոնը: Սոցիոլոգները հաստատել են, որ այն հարցնողները, որոնք գիտեն տվյալ հարցի ճիշտ պատասխանը, կարողանում են այնպես ներազդել հարցվողների

վրա, որ վերջիններիս պատասխաններուն այդ արտահայտութիւնները հաճախ հանդիպեն:

Փակ հարգերով կամ ձևայնացված (ստանդարտացված) հարցազրույց: Սա զրույցի առավել ձևայնացված տեսակն է: Այստեղ հարցազրույցի պլանը ստանդարտացված է, այսինքն՝ այն տրված հարցերի՝ նախատեսված պատասխաններով շարան է: Եթէ ազատ և ուղղորդված հարցազրույցների դեպքում զրուցավարը միաժամանակ փորձագետ հետազոտող է, ապա ստանդարտացված հարցազրույցի ժամանակ՝ միայն որպէս կատարող-ինֆորմատոր: Սա սոցիոլոգիայում տվյալների հավաքման առավել տարածված ձևն է:

Հարկ է նշել, որ հարցազրույցի ձևայնացումն ավելի լայն հասկացութիւն է, քան սոսկ հարցերի ձևակերպումների ու կառուցվածքի ստանդարտացումը: Լրիվ ստանդարտացված է միայն այնպիսի հարցազրույցը, որի դեպքում զրույցի ողջ ընթացքը, նրա ծավալման սոցիալական ու ֆիզիկական միջավայրը ամբողջովին ստանդարտացված են: Հարցազրույցի բնույթի և ընթացքի վրա խորապէս ներազդում է երրորդ անձի, հատկապէս հարցվողի ազգականների ներկայութիւնը: Բնականաբար գործոն է նաև հարցնողի անձը. սեռը, տարիքը, արտաքին տեսքը, խոսելաձևը, արժեքային կողմնորոշումներն ու դիրքորոշումները:

Ստանդարտացման հնարավորութիւնները մեծապէս ընդլայնվում են այն դեպքում, երբ բոլոր հարցվողների հետ զրուցում է մեկ զրուցավար: Ջրուցավարների խմբի ստեղծումը ինքնուրույն հետազոտական խնդիր է և մեծ ջանքեր է պահանջում: Սակայն մեկ անգամ ստեղծված զրուցավարների խումբը կարող է գործել բազմաթիվ հետազոտութիւններում:

Շրջապատի ազդեցութիւնը: Բազմաթիվ հետազոտութիւններ վկայում են, որ հարցազրույցի ֆիզիկական և սոցիալական միջավայրը կարող է ստացված ինֆորմացիայի տարբեր աղավաղումների պատճառ հանդիսանալ: Դա պահանջում է նշված պայմանների հետևողական ստանդարտացում: Օրինակ, Երևանի արտադրական ձեռնարկութիւններում 1978-80թթ. անցկաց-

ված հետազոտության ընթացքում պարզվեց, որ աշխատանքի կազմակերպման, կատարած գործով բավարարվածության, աշխատանքային պայմանների գնահատումներում նկատելի էին տարբերությունները այն պատասխաններում, որոնք տրվել էին ամսվա սկզբում և վերջում: Պատճառը թերևս այն էր, որ ամսվա վերջում, երբ անփոփոխվում է կատարվածը, թե՛ նյութական և թե՛ բարոյական իմաստով թերությունները նկատելու և դժգոհելու հավանականությունը մեծանում է: Տվյալները հենց դա էլ ցույց տվեցին: Արդյունքում՝ առաջարկվեց հարցումներն անցկացնել կամ ամսվա սկզբում, կամ վերջում:

Պայմանների ստանդարտացման պահանջը կարևորվում է նրանով, որ միայն այդ դեպքում է արդարացվում տարբեր հարցազրույցների արդյունքների համեմատումը: Այլ կերպ ասած, հարցազրույցի արտաքին պայմանների ներգործությունը ոչ պակաս կարևոր է, քան հարցազրույցը հարցվողի հետ:

Սոցիոլոգիայում քննարկվում է նաև զրուցավարի (ինտերվյուերի) դերը, որը ըստ քննարկվող հարցերի բնույթի՝ բաժանվում է հինգ խմբի.

ա) զրուցավարների ընտրության եղանակները և սկզբունքները,

բ) զրուցավարների նախապատրաստումն ու հրահանգավորումը,

գ) զրուցավարների վարքն ու գործառնությունները հետազոտության ընթացքում,

դ) զրուցավարի աշխատանքի վերահսկման եղանակները,

ե) զրուցավարի ներազդումը:

Վերոնշյալ ազդեցությունների վերաբերյալ մանրամասներին ընթերցողը կարող է ծանոթանալ, օրինակ, Գ.Պողոսյանի՝ «Ինֆորմացիայի հավաքման մեթոդները» գրքում:

5.1.2. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Սա ինֆորմացիայի հավաքման առավել տարածված ու դարավոր ավանդույթներ ունեցող մեթոդներից է: Հետազոտողները թերևս այն համընդհանուր համոզմունքին են, թե հարցաթերթի-

կային հարցման առավելությունը հարցազրույցի համեմատությամբ այն է, որ անհրաժեշտ նյութական միջոցների ավելի քիչ ծախս է պահանջում: Թերություն է համարվում այն, որ պատասխանողին մեծակ թողնելով հարցաթերթիկի հետ, հետագոտողը հնարավորություն չունի հսկելու լրացման ընթացքը և հարկ եղած դեպքում օգնելու հարցվողին: Ելքը տեսնում են հետագոտողի ներկայությամբ հարցումը կազմակերպելու մեջ, սակայն այս դեպքում էլ նյութական ծախսերն են մեծանում ու դառնում նույն կարգի, ինչ հարցազրույցինը: Այդ պատճառով ավելի կարևոր է տվյալ մեթոդի նպատակահարմարությունը որոշել՝ ելնելով կոնկրետ խնդիրներից ու հնարավորություններից: Հարցաթերթիկային ձևն ավելի հարմար է հարցվողների մեծ զանգվածների, կարճ ժամկետում որոշակի հանրային խմբերի հարցումների ժամանակ:

Անկետավորման ձևերը: Այս հարցումներն ըստ կազմակերպման եղանակի բաժանվում են երեք տեսակի:

ա) փոստային հարցում, որի դեպքում ետադարձ հասցեն նշելով՝ նախօրոք ընտրված հասցեներով ուղարկվում են հարցաթերթիկները: Սրա թերությունն այն է, որ ետ է ուղարկվում փոքր մասը՝ 15-20 տոկոս: «Վերադարձը» ավելացնելու համար ծրարի մեջ ետադարձ հասցեով դատարկ ծրար է դրվում, լրացուցիչ հիշեցում է ուղարկվում և այլն: Թերություն է և այն, որ սովորաբար թերթիկը լրացնում են «ժամանակ ունեցող մարդիկ», հիմնականում տնային տնտեսուհիներն ու թոշակառուները: Այդ պատճառով սոցիոլոգները երբեմն լրացուցիչ հարցում են անցկացնում՝ ներկայացուցչությունը ապահովելու համար:

բ) լրագրային հարցում (թերթի, ամսագրի միջոցով) կամ **քաշխվող հարցում** (աշխատատեղերում, հանրային վայրերում): Թերությունը այստեղ հիմնականում այն է, որ լրացումը չի վերահսկվում: Այդ պատճառով թերթիկները կարող են կիսատ լրացվել, ուրիշների օգնությամբ, մեկը մյուսից արտագրելով և այլն: Այս ամենը ազդում է տվյալների համարժեքության վրա:

գ) խմբային (յստրանային) հարցումներ: Այս դեպքում մասնագետների ներկայությամբ և խորհուրդներով որևէ վայրում հա-

վաքված խմբի (10-15 մարդ) բաշխվում են հարցաթերթիկները և լրացվում: Նման հարցումը վերոնշյալ թերություններից գերծ է, եթե մի կողմից՝ հետազոտողներն ունեն պատշաճ մասնագիտական և անձնական որակներ, մյուս կողմից՝ լրացնողները դրսևորում են որոշակի կազմակերպվածություն, մտավոր նվազագույն որակներ և բարեկրթություն:

Չարցաթերթիկը՝ որպես չափման գործիք: Ինչպես արդարացիորեն նշում են մասնագետները, վերջին տարիներին ձևավորվել է «հարցաթերթիկամուլության» երևույթը, որը խիստ վնասում է սոցիոլոգիայի թե՛ մասնագիտական, և թե՛ սոցիալական հեղինակությանը: Բավարար կրթություն ու փորձ չունեցող «սոցիոլոգները» կարծում են, թե թերթիկը կազմելը հետազոտման առավել հեշտ մասն է: Միջդեռ այն շատ դժվար և խիստ պատասխանատու գործ է: Հետազոտական հարցերի թվարկումը դեռ բոլորովին էլ հարցաթերթիկը չէ: Այն դեռևս պետք է փոխադրել հարցաթերթիկի լեզվի: Օրինակ, եթե դուք հարցնում եք. «Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր ազգին» և ստանում եք պատասխան՝ «լավ», այն գրեթե տեղեկություն չի պարունակում, քանզի խիստ անորոշ է: Ճշմարիտ է ասված՝ ինչպիսին որ հարցն է, այնպիսին էլ պատասխանը: Ավելորդ չէ նշել, որ հարցաթերթիկի կազմումը նուրբ արվեստ է և առարկայական կողմերից բացի, այն ձեռք է բերվում սեփական փորձի կուտակման միջոցով:

Չարցաթերթիկի ստեղծման տեխնիկական կանոններն ու հնարքները կարելի է դասակարգել 7 խմբի.

- 1) հարցաթերթիկի ներքին կառուցվածքը,
- 2) հարցի ձևը,
- 3) հարցի ընտրության ձևը,
- 4) հարցերի տեսակները,
- 5) հարցերի բովանդակությունը,
- 6) հարցերի ձևակերպումը,
- 7) հարցաթերթիկի լեզուն:

Համառոտ ներկայացնենք յուրաքանչյուր խումբը:

1) Հարցաթերթիկում հարցերի տեղաբաշխման կարգը պետք է լինի այնպիսին, որ լրացնելու ընթացքում պատասխանողի հետաքրքրությունն աճի, այլապես նա կարող է մինչև վերջ չլրացնել: Այնուհետև, հարցաթերթիկի առաջին հարցերը պետք է լինեն չեզոք բնույթի, հետաքրքրաշարժ: Ըստ որում՝ անձնական բնույթի հարցերը ճիշտ է տեղադրել հարցաթերթիկի վերջում: Մյուս կողմից հարցերը պետք է տեղաբաշխել այնպես, որ տվյալ հարցի պատասխանը չազդի հաջորդ հարցերի պատասխանների վրա:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ հարցերի կապի տրամաբանությունը, որը հետազոտողին է և դրվում է հարցաթերթիկի մեջ՝ կապված հիմնահարցի և խնդիրների հետ, տարբեր է հարցաթերթիկում առկա հարցերի տրամաբանությունից: Ուրիշ խոսքով հարցաթերթիկի տրամաբանական կառուցվածքը տարբերվում է հարցի տրամաբանական կառուցվածքից: Առաջինը պետք է որոշ իմաստով թաքցվի հարցվողից, միջոց երկրորդի բացակայությունը կարող է պատասխանողի մոտ կասկածներ առաջացնել հետազոտողի մասնագիտական իրավասության վերաբերյալ:

Լինում են հարցեր, որոնք կառուցված են ընտրության սահմանափակման, թեմայի կոնկրետացման սկզբունքով: Օրինակ, հարցերի այսպիսի հաջորդականությունը՝ «Եթե Ձեր աշխատանքային կենսագրությունը նորից սկսեք, ինչպիսի՞ մասնագիտություն կընտրեք», «Ձեր ընկերներին կառաջարկեի՞ք ընտրել այդ մասնագիտությունը», «Դուք կցանկանայի՞ք, որ Ձեր երեխաները ընտրեն այդ նույն մասնագիտությունը»: Այստեղ հարցերը կոչված են չափելու հարցվողի մասնագիտական ընտրության ներքին համոզվածության խորությունն ու ուժը:

Սովորաբար առավել կարևոր և «դժվարին» հարցերը տեղադրվում են հարցաթերթիկի միջնամասում, ավելի շատ՝ երրորդ քառորդում: Քանզի պատասխանողի ուշադրությունը սկզբում թույլ է, այնուհետև աճում է, հասնում է գագաթնակետին, որից հետո նորից սկսում է թուլանալ:

Եթե հարցաթերթիկը կենդանի հետաքրքրություն չի ներկայացնում, հույս չկա, որ կստացվեն հավաստի ու լրիվ տվյալներ:

Բազմաթիվ հետազոտողներ հարցաթերթիկները գեղարվեստորեն ձևավորում են, մասնավորաբար պատկերում են զրույցի բռնված մարդկանց և այլն: Այսուհանդերձ, դրանք կարող են իմաստազրկվել, եթե անհաջող են հարցերի բովանդակությունն ու ձևակերպումները:

2) Գոյություն ունեն բաց, փակ և կիսափակ հարցեր:

Բաց հարցը չի ենթադրում պատասխանների տարբերակների առկայություն: Պատասխանները հարցնողի կողմից գրանցվում են հարցաթերթիկում հատկացվող հատուկ տեղերում: Օրինակ, «Նշեք Ձեզ համար ամենաթանկ ընտանեկան երկու արժեքները»:

1. _____
2. _____

Այստեղ կարևորը հարցի ճիշտ, միանշանակ ձևակերպումն է: Բաց հարցի թերությունը մշակման դժվարությունն է: Դրանում մեծ է կողավորողի դերը: Երբեմն մշակումը տրվում է մի քանի կողավորողի, տվյալները համեմատելու և մշակման հուսալիությունը մեծացնելու նպատակով: Սոցիոլոգիական պրակտիկայում հայտնի է, որ հետազոտողները բաց հարցերի մշակման ընթացքում երբեմն առանձնացնում են առավել վառ ու ինքնատիպ պատասխանները, որոնք այս կտրվածքով, կարծեք թե, իրենց մեջ խտացնում են հարցվողների «կենդանի» խոսքը և որպես այդպիսին իրենցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Փակ հարցերի դեպքում հնարավոր պատասխանները նախօրոք նախատեսված են և բերված են հարցաթերթիկում: Տարբերակում են այլընտրանքային («այո», «ոչ») և բազմընտրանքային պատասխանները: Մասնագետները նկատել են, որ հոգեբանորեն պատասխանողները ավելի շատ հակվում են դեպի դրական պատասխանները, իսկ բազմընտրանքի դեպքում՝ առաջին տարբերակները: Այն վերացնելու համար մշակված են որոշակի մեթոդական միջոցներ: Օրինակ, «այո», «ոչ»-ի փոխարեն գրում են լրիվ պատասխանը. «դուք Ձեզ բարի մարդ համարու՞մ եք»:

- ❖ համարում են
- ❖ չեն համարում

կամ՝ հարցաթերթիկների մի մասում (բազմընտրանքային պատասխանների դեպքում) տպագրում են պատասխանների մի ցուցակ, մյուսում ուրիշը: Երբեմն կիրառում են «խաղաթղթերի կապոցի» մեթոդը. փակ հարցի պատասխանները տպագրում են առանձին քարտերի վրա և խնդրում են դրանցից ընտրել համապատասխան տարբերակները:

Հարց սանդղակները (օրինակ՝ «չատ գոհ են», «գոհ են», «ո՛չ գոհ են, ո՛չ էլ դժգոհ», «դժգոհ են», «չատ դժգոհ են») թույլ են տալիս բացահայտելու ոչ միայն հարցվողի ընտրությունը, այլև նրա նախասիրությունները կամ գնահատականները: Հաճախ հարց սանդղակները կառուցում են «քանոնի», «ջերմաչափի», գնահատման բալերի աղյուսակի տեսքով (տես նկ. 3):

Խիստ կարևոր է բոլորովին կարևոր չէ

1 2 3 4 5 6 7 8 9

-3 -2 -1 0 1 2 3

| | Պատասխանները | Գնահատականը | | | | |
|---|--------------|-------------|---|---|---|---|
| | | 5 | 4 | 3 | 2 | 1 |
| 1 | | | | | | |
| 2 | | | | | | |
| 3 | | | | | | |
| 4 | | | | | | |
| 5 | | | | | | |

Նկ. 5.1

Կիսափակ հարցերը բովանդակում են պատասխանների տարբերությունների ցուցակ և մի դիրք, որը թույլ է տալիս նշել սեփական պատասխանը՝ եթե առաջարկված ոչ մի պատասխանի հետ հարցվողը համաձայն չէ (հարցաթերթիկում գրվում է՝ «ուրիշ պատասխաններ»), այլ (նշեք ինքներդ) և այլն): Կիսափակ հարցերը ավելի դժվար է մշակել, քան փակ հարցերը, քանի որ ազատ դիրքի պատասխանները հարկ է լինում խմբավորել և կողավորել: Որպես կանոն, այդ պատասխանները շատ չեն լինում: Եթե «նորմայից» շատ են, ապա դա վկայում է կիսափակ հարցում պատասխանների տարբերությունների անհաջող ընտրության մասին: Այսինքն նման հարցը «գործառու» է որպես բաց հարց: Դրանից խուսափելու համար անցկացվում են փորձնական հետազոտություններ:

3) Սովորաբար տնտեսական հարմարությունը և խնայողության հնարավորությունը փակ հարցերին դարձնում են մասնագիտորեն ավելի «համակրելի»: Սակայն պետք է նկատի ունենալ, որ պատասխանների տարբերակները պետք է լինեն խորապես իմաստավորված և հնարավորինս ընդգրկուն: Հարկ է հետազոտական տարբեր իրավիճակներում պարզել հարցերի տարբեր տիպերի կիրառելիության սահմանները: Բաց հարցի օգտագործման ժամանակ կարելի է խոսել հարցնողի ազդեցության յուրահատուկ «էֆեկտի» առկայության մասին: Այս դեպքում հետազոտողը ստիպված է դիտարկել հարցվողների որոշակի դիրքորոշումները: Հաճախ բաց հարցի միջոցով կարելի է որոշել մարդկանց կարիքները, մղումներն ու հարաբերությունները:

4) Հարցերը բաժանվում են տարբեր տեսակների.

❖ **հիմնական հարցեր**, որոնք ուղղված են հետազոտության թեմայով բովանդակային տեղեկություններ ստանալուն:

❖ **հարց-զտիչներ**, որոնք օգտագործվում են անիրազեկներին և որոշ հարցերի հետ չառնչվող անձանց «մաղելու» նպատակով: Օրինակ. «Դուք ամուսնացա՞՞ծ եք». ա) այո, բ) ոչ: Եթե «ոչ», անցեք հաջորդ հարցին:

❖ **ներածական և անցումային**, ինչպես նաև զտիչ հարցերը,

որոնք հարցաթերթիկում օժանդակ դեր են կատարում, ներառում են.

I. *կոնտակտային հարցեր*, որոնց նպատակն է հարցվողի հետ հաստատել փոխադարձ վստահության մթնոլորտ («քանի՞ տարի եք աշխատում տվյալ հիմնարկությունում»...):

II. *նախապատրաստական* կամ *անցումային հարցեր*, որոնք օգնում են հարցվողի ուշադրությունը հարցերի մի խմբից կենտրոնացնել մյուսի վրա («մինչև այժմ խոսում էինք... իսկ հիմա խնդրեն...»):

III. *խաղային* կամ *զվարճացնող հարցեր*, որոնց նպատակն է դժվարին հարցերից հետո հոգեբանորեն լիցքաթափել հարցվողին (օգտագործվում են նաև նկարներ, առօրյա կյանքից տեսարաններ):

IV. *հատուկ հարցեր*: Սրանք հարցվողին տրվում են նրա հիշողությունը թարմացնելու ու ինտնսիվացնելու նպատակով, երբ խոսքը անցյալի եղելությունների, ուշադրության, հետաքրքրության ու երևակայության թաքնված ռեզերվների բացահայտման մասին է:

V. *հարց թակարդ*, պատասխանողի ոչ բավարար անկեղծությունը, չափազանցնելու, իր կարծիքը մինչև վերջ չասելու, թերասելու կամ իմաստն աղավաղելու հակումները բացահայտելու համար: Այդ նպատակով տրվում են հարցեր իրավական նորմերի իմացությունը, հռչակավոր անձանց ճանաչումը կամ որևէ իրողության վերաբերյալ սուտ պատասխանները բացահայտելու նպատակով: Օրինակ. «Դուք ընդհանրապես սուտ խոսում եք»: Եթե պատասխանը «ոչ» է, հետազոտողի մոտ առաջանում է անվստահություն հարցվողի մնացած պատասխանների հանդեպ:

VI. *ստուգող* կամ *անուղղակի հարցեր*, որոնց օգնությամբ ճշգրտվում ու լրացվում է հիմնական հարցերի միջոցով ստացված ինֆորմացիան: Ըստ որում, հարցաթերթիկում այդ հարցերը տեղադրվում են այն հիմնական հարցերից հեռու, որոնք պետք է ստուգվեն և լրացվեն:

5) Ըստ իրենց բովանդակության հիմնական կամ նպատակային հարցերը բաժանվում են հետևյալ խմբերի.

ա) փաստական բնույթի, որոնք տեղեկություններ են հարցվողների սոցիալ-ժողովրդագրական տվյալների՝ սեռի, տարիքի, մասնագիտության և այլնի մասին: Այն ինչին քնքշորեն անվանում են «պասպորտիչկա»: Փաստերը կարող են լինել նաև գործունեության ու կյանքի ցանկացած ոլորտի վերաբերյալ: Հարկ է նշել, որ փաստական բնույթի հարցերին տրված պատասխաններում հավաստի տեղեկությունների վերաբերյալ պատկերացումները թվացյալ են: Եկամտի, պրեստիժային և այլն տեղեկությունները կարող են ոչ պակաս աղավաղվել, քան կարծիքներն ու գնահատականները: Այնպես որ դրանց ստուգումը ևս պորբլեմային է:

բ) ինֆորմատիվ, որոնք նախատեսված են հարցվողների իրազեկությունները, գիտելիքների մակարդակը պարզելու համար: Այս հարցերը չի կարելի ուղղակիորեն ձևակերպել («Դուք գիտե՞ք, որ...»): Անհրաժեշտ է ցանկալի տեղեկությունը ստանալ հարցերի համալիրի օգնությամբ: Դրանց թիվը շատանում է, եթե ուզում ենք պարզաբանել մարդկանց վարքի շարժառիթները, արժեքային կողմնորոշումները: Օրինակ, գերմանացի հայտնի սոցիոլոգ Է.Նոյելը, Գերմանիայի հարավում բնակիչների քիչ հեռուստացույց ձեռք բերելու պատճառները պարզաբանելու նպատակով, ստիպված է եղել կազմել 70 հարցաթերթիկային հարց: Հաճախ հարաբերությունների գնահատականները պարզելու համար հարցաթերթիկներում կիրառում են հատուկ թեստեր և սանդղակներ:

գ) պրոյեկտիվ հարցեր, որոնք օգնում են պարզելու հարցվողի վարքի հիմքում ընկած շարժառիթների կառուցվածքը: Այստեղ ներկայացվում է մի մտացածին, հնարովի իրավիճակ, և խնդրում են հարցվողին դրսևորել սեփական վերաբերմունքը դրա հանդեպ («Եթե դուք հնարավորություն ունենայիք...», «պատկերացրեք, որ...», « Ձեզ տրված է...» և այլն):

6) Հարցի ձևակերպումը մեծ նշանակություն ունի հավաստի սոցիոլոգիական ինֆորմացիայի ստացման գործում: Արդեն նըշվեց, թե ինչպիսին հարցն է, այնպիսին էլ կլինի պատասխանը: Հարցի ձևակերպումը պետք է պատասխանողին հասկանալի

լինի: Դրա համար հարցերը կազմելիս պետք է հաշվի առնել հարցվողների կրթամշակութային ընդհանուր մակարդակը, լեզվային առանձնահատկությունները: Այսինքն՝ հարցերը պետք է կազմել պատասխանողի, և ոչ թե հետազոտողի լեզվով: Ձևակերպումը չպետք է պարունակի մեկից ավել միտք: Պետք է խստորեն հետևել, որ հարցն ընկալվի պարզ և միանշանակ: Չարկ է խուսափել երկրորդական բառերով ծանրաբեռնված երկարաշունչ ձևակերպումներից: Քանզի մինչև հարցվողը լրիվ ծանոթանում է հարցին, մոռանում է նրա սկիզբը, այդ պատճառով հիմնականում ելնում է հարցի վերջին բառերից: Եթե հետազոտողը նպատակահարմար է գտնում հարցի վերաբերյալ պարզաբանումներ տալ, ապա դրանք պետք է նախապես առանձնացվեն և տեղավորվեն հարցաթերթիկի սկզբում, որից հետո միայն կարելի է համառոտակի ձևակերպել հարցը:

Տարածված սխալներից են հարցերի այնպիսի ձևակերպումները, որոնք, ըստ էության, հուշելու դեր են կատարում: Մասնագետները բազմիցս նկատել են, որ հարցվողները ձգտում են պատասխանները հարմարեցնել սոցիոլոգի սպասումներին:

Չարցերի ճիշտ ձևակերպման համար կարևոր են նախնական քննարկումներն ու փորձնական հետազոտությունները: Վերջիններիս մեջ նույն հարցը տրվում է տարբեր ձևակերպումներով և բացահայտվում են «աշխատող» ու «չաշխատող» հարցերը: Ավելորդ չէ նշել, որ հարցը ձևակերպելիս ամեն կերպ հարկ է խուսափել հարցվողի արժանապատվությունը վիրավորող անհարկի լեզվական երանգավորումներից:

7) Չարցաթերթիկի լեզուն՝ ի դեմ սոցիոլոգի, ունի իր կայունացված լեզվաոճը: Չարցաթերթիկի կազմման, հարցերի և պատասխանների տարբերակների ձևակերպման ժամանակ պետք է ըստ ամենայնի հաշվի առնել հարցվողների լեզվին բնորոշ բառօգտագործման առավել զանգվածային ստերեոտիպերն ու լեզվակաղապարները: Արդյունքները մշակելիս խիստ կարևոր է հարցվողների լեզուն սոցիոլոգիական լեզվով արտահայտելու խնդիրը: Դա սոցիոլոգի կողմից ստացված տվյալները վերծանելու անհրաժեշտ նախապայմանն է:

Ամբողջ հարցաթերթիկը պետք է կառուցվի այնպես, որ յուրաքանչյուր հարցվող, առանց որևէ դժվարության, ինքնուրույն կարողանա այն լրացնել: Պետք է պատասխանողների խնդիրը առավելագույնս հեշտացվի:

Սովորաբար, հարցաթերթիկը սկսվում է տիտղոսաթերթից, որի վրա տպագրվում են հարցաթերթիկի անվանումը և հարցվողին ուղղված բառերը: Այդտեղ ներկայացվում է հարցումը անցկացնող կազմակերպությունը, նշվում հետազոտության նպատակները և հարցվողի մասնակցության պայմանները: Հաճախ հատուկ շեշտվում է հարցման անանուն բնույթը: Հարցաթերթիկի վերջում տեղ է թողնվում հարցվողների զանազան առաջարկությունների և դիտողությունների համար: Հարցաթերթիկն ավարտվում է. «Շնորհակալություն մասնակցության համար» բառերով:

Այստեղ խիստ կարևորվում են փորձնական հետազոտությունները («պիլոտաժ»), որոնք մեծապես բացահայտում են հարցաթերթիկների տարբեր բնույթի թերությունները:

Հարցաթերթիկի տրամաբանական վերլուծության ժամանակ հետազոտողներն առաջարկում են հետևյալ պահանջները.

1. արդյոք բոլոր հարցերն ու պատասխանների տարբերակները տրված են մատչելի լեզվով,

2. հարցվողները բավարար չափով իրավասու ու գիտակ են պատասխանելու տրված հարցերին, անհրաժեշտ է արդյոք մտցնել իրավասության յուրօրինակ «զտիչներ»,

3. հարցերին պատասխանելը արդյոք չի՞ հոգնեցնում հարցվողին. ինչպե՞ս խուսափել հարցերի միօրինակությունից,

4. անցյալին վերաբերող հարցերին պատասխանելու համար հարցվողը օժտված է արդյոք անհրաժեշտ հիշողությամբ,

5. հանրահայտ կամ հետազոտողին «ձեռնտու» պատասխաններ ստանալու վտանգ չկա՞ արդյոք,

6. որքանո՞վ են հարցերի պատասխանների տարբերակները ավելին, քան անհրաժեշտ է, ինչպե՞ս դրանք նվազեցնել և բաժանել բլոկների,

7. վտանգ չկա՞ արդյոք, որ հարցաթերթիկը կարող է անվստահություն կամ բացասական զգացում առաջացնել հարցվողի մոտ,

8. արդյոք չե՞ն դիպչում հարցվողի ինքնասիրությանը կամ շոշափում նրա կյանքի խիստ անձնական մանրամասները,

9. ո՞ր պատասխանները կարելի է ուղղակի, բառացիորեն մեկնաբանել և որո՞նք՝ անուղղակի իմաստով,

10. որքանո՞վ է հարցաթերթիկը լավ ձևավորված, հարցերը և դրանց պատասխանների հրահանգները տառատեսակով տարբերվո՞ւմ են: Ձևավորումը միօրինակ չէ՞,

11. հարցաթերթիկի հարցերի քանակը հնարավոր չէ՞ կրճատել առանց սահմանափակելու նրա ինֆորմատիվ բովանդակությունը,

12. դժվարին և հեշտ հարցերը արդյոք ճի՞շտ են տեղաբաշխված,

13. հարցաթերթիկում հարցերն արդյոք դասավորվա՞ծ են այնպես, որ տվյալ հարցի պատասխանը չազդի հաջորդ պատասխանի վրա,

14. հարցաթերթիկի չափսն արդյոք հարմա՞ր է լրացման համար:

5.1.3. ՅԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Յեռակա հարցումներում առանձնանում է հեռախոսային հարցումը, որը դեռ խորությամբ ուսումնասիրված չէ: Այստեղ հատկանշականն այն է, որ մեկ օրվա ընթացքում, ընդամենը մի քանի գրուցավարի օգնությամբ, կարելի է հարցնել հարյուրավոր մարդկանց:

Յեռախոսային հարցման մեջ մտնող հարցերը չպետք է գերազանցեն 10-15-ը՝ ելնելով դրանց բարդության աստիճանից: Այս տիպի հարցումը խիստ որոշակի և հրատապ ինֆորմացիա ստանալու աղբյուր է:

Յեռախոսների հնարավոր բացակայությունը սահմանափակում են հարցման այս ձևի կիրառման հնարավորությունները: Յեռախոսով հարցնելիս խիստ կարևոր է շահել աբոնենտների վստահությունը: Այդ իմաստով մեծ նշանակություն են ստանում հարցնողի առաջին բառերը, քանի որ դիմացինը չի տեսնում նրա դեմքը և այնքան էլ համոզված չէ, թե իր գլխին ինչ-որ խաղ չեն

խաղում:

Չեռախոսային հարցումները լինում են փորձագիտական և անանուն: Առաջինը անցկացվում է որևէ հայտնի անձնավորության հետ, որի ազգանունը հիշատակվում է խոսակցության ընթացքում: Անանունը անցկացվում է հեռախոսային համարների գրքից պատահականորեն ընտրված «անհայտ» արձանատի հետ: Սակայն «անհայտությունը» հարաբերական է, քանի որ արձանատի մոտ կարող է միտք ծագել, թե իր հեռախոսի համարը պատահաբար չի ընտրված: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել հեռախոսային հարցման ժամանակ:

5.1.4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ (ԷՔՍՊԵՐՏՆԵՐԻ) ՀԱՐՑՈՒՄ

Ի տարբերություն զանգվածային ինֆորմացիայի հավաքման՝ վերը նշված մեթոդների, փորձագետների հարցումն անցկացվում է մասնագետների նեղ շրջանակում՝ հատուկ ինֆորմացիա ստանալու նպատակով:

Ներկայումս անհամեմատ մեծացել է սոցիալական կանխատեսման դերը, ինչն առանց փորձագիտական հարցման դժվար է պատկերացնել: Միաժամանակ պետք է նշել, որ փորձագիտական հարցման հնարավորությունները չեն սահմանափակվում կանխատեսման շրջանակներով: Այն լայնորեն կիրառվում է նաև սոցիոլոգիական հետազոտություններում:

Հատուկ պահանջներ կան փորձագետների և նրանց խմբի ընտրության հարցում:

Փորձագետների ընտրության չափանիշները հետևյալն են.

- * *մասնագիտական իրավասությունը* (մասնագիտական ստաժը, հրատարակված աշխատանքների թիվը, գիտական գրականության մեջ այդ աշխատանքներից արվող մեջբերումների քանակը, այդ աշխատանքների գիտական, հասարակական գնահատականը),
- * *մասնագետի գիտելիքների «թարմությունը»* (առավել առաջադիմական գաղափարների ու տեսական նոր դիրքորոշումների առկայությունը),

- * *նեղ մասնագիտական պատրաստվածությունը և դրա հետ ընդհանուր մտահորիզոնի ներդաշնակ զուգակցվածությունը,*
- * *անհատական որակները* (մասնագետի վերլուծական, համակողմանի գնահատման ունակությունները, գիտական հայացքների հաստատունությունը և մտածողության ճկունությունը),
- * *մասնագետների բարոյական հատկանիշները:*

Սկզբունքորեն յուրաքանչյուր ոք կարող է հանդես գալ որպես փորձագետ, եթե հետազոտման հիմնահարցի շրջանակներում նրա մասնակցությունը հիմնավորվում է:

Փորձագիտական խմբի ձևավորման հարցում մեծ է հոգեբանական գործոնի դերը: Համատեղ խնդրի լուծումը պահանջում է որոշակի հոգեբանական համատեղելիություն, որի բացակայությունը բացասաբար է անդրադառնում արդյունքների վրա: Ինչ վերաբերում է խմբի չափսերին, փորձը ցույց է տալիս, որ ինչ-որ պահից սկսած՝ խմբի անդամների թվի զուտ մեխանիկական աճը դադարում է ազդել փորձագիտական հարցման որակի վրա: Խմբի օպտիմալ սահմաններն են 5...7 և 60...80 փորձագետ:

Փորձագետների ընտրության հարցում կիրառվում են հետևյալ մեթոդները.

1. *Ձևական կամ օբյեկտիվ մեթոդ*, որը հանգում է փորձագետի մասին փաստագրական տվյալների վերլուծությանը,

2. *Ապագա փորձագետների ընտրություն* խմբի կողմից՝ բաց կամ գաղտնի քվեարկության հիման վրա,

3. *Միջին միավորերով ապագա փորձագետների փոխադարձ գնահատման մեթոդ*,

4. *Հատուկ թեստերի միջոցով իրականացվող ընտրության մեթոդ*, որը ենթադրում է հնարավոր թեկնածուների թեստավորումը,

5. *Ինքնագնահատման մեթոդ*, այսինքն՝ որոշակի հիմնահարցի ուսումնասիրության ոլորտում սեփական մասնագիտական իրավասության գնահատում,

6. *«Ձևակույտի» մեթոդ*: Այս մեթոդը կոչվում է «ձևակույտի»,

որովհետև փորձագետների ընտրությունը կատարվում է մի քանի փուլով, աստիճանաբար ներգրավելով նոր թեկնածուների ճիշտ այնպես, ինչպես լեռան գագաթից ցած գլորվող ձնագունդը, որը կուտակում է ձյան նորանոր շերտեր: Սկզբում ընտրում են փորձագետների մի քանի թեկնածուներ (10-20 մարդ): Այնուհետև վերջիններիս խնդրում են երաշխավորել ուրիշ թեկնածուների, որից հետո արարողությունը նորից կրկնվում է: Այսպիսով մի քանի փուլում փորձագետների թիվը հասնում է 100-150 մարդու: Մասնագետները կիրառում են փորձագիտական խմբի իրավասության և հավաստիության գնահատման տարբեր եղանակներ և հնարքներ:

Փորձագետների Հարցասև Մեթոդները

Հարցման հիմնական խնդիրներն են.

1. Քննարկվող հիմնահարցերի հստակ տարանջատում և հետագա քննարկման նպատակով փորձագետներին առնչվող հարցերի մշակում,

2. Փորձագետների աշխատանքի կազմակերպում և ինֆորմացիայի ապահովում:

3. Փորձագետների կողմից իրենց գնահատակների, դատողությունների ու կարծիքների մշակում:

4. Փորձագիտական հարցման ընթացքում ձեռք բերված արդյունքների հավաքում և հետագա մշակում:

Փորձագետների հարցման եղանակի ընտրությունը կապված է հետազոտման նպատակների և խնդիրների, հիմնահարցի բարդության, սկզբնական ինֆորմացիայի ամբողջականության մակարդակի հետ և այլն:

Հարցազրույց

Հարցման առավել պարզ մեթոդներից է հարցազրույցը: Այն անցկացվում է աշխատավայրում կամ բնակարանում: Գրանցումները կատարվում են կամ մագնիտոֆոնի, կամ նոթատետրի օգնությամբ: Չնայած փորձագետը տեղյակ է լինում զրույցի թեմային և բովանդակությանը, իսկ զրուցավարը նախօրոք պատրաստած հարցերի շրջանակ ունի, այսուհանդերձ, բուն զրույցը

ընթանում է հանպատրաստից: Այդ ընթացքում երբեմն առաջանում են հարցեր, որոնց փորձագետը ի վիճակի չէ միանգամից պատասխանել առանց լուրջ պատրաստության: Երևույթ, որը պետք է հաշվի առնի հետազոտողը: Ընդհանուր առմամբ, փորձագիտական հարցումը օժտված է այն բոլոր դրական ու բացասական կողմերով, որոնք հատուկ են հարցազրույցին՝ ամբողջությամբ վերցրած:

Բանավեճ

Որպես փորձագիտական հարցման մեթոդ, բանավեճը միջանհատական հաղորդակցման այնպիսի գործընթաց է, որի յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունի լիարժեքորեն մասնակցելու կարծիքների կենդանի և աշխույժ փոխանակությանը: Այս դեպքում հակադարձ կապն իրականացվում է զրույցի ողջ ընթացքում, տեսակետները շատ արագ են ճշգրտվում և ավելի շուտ են գալիս փոխհամաձայնության, քան այլ դեպքերում:

Բանավեճը նպատակահարմար է կիրառել այն դեպքերում, երբ փորձագետները քաջատեղյակ են խնդրին, կամ՝ երբ ավելի շատ պահանջվում է խնդրի որակական գնահատականը:

Բանավիճող խմբի չափը և յուրաքանչյուր ելույթի համար հատկացված ժամանակը պետք է նախապես կանոնակարգված լինի, այլապես այն կարող է ձգձգվել և կոնկրետ ու կառուցողական եզրակացությունների չհանգեցնել: Կարևորվում են բանավեճը վարողի հատկանիշները, ով ապահովում է նրա կազմակերպումը և բարոյական նորմերի շրջանակներում ողջ ընթացքը: Բանավեճն իր բնույթով շատ նման է խորհրդակցության, գիտաժողովի: Փորձը ցույց է տալիս, որ բանավեճի ավարտից կարճ ժամանակ անց օգտակար է կրկին անդրադառնալ քննարկվող հարցերին:

Համեմատական (հարաբերակցված) գնահատման մեթոդ

Սա ավանդական բանավեճի զարգացած տարատեսակն է, որին արևմուտքում անվանում են փորձագետների *սինեկտիկոնեն* կառավարվող հարցում:

Այս մեթոդի խնդիրն է հասնել բանավեճի կառավարման այն-

պիսի արդյունավետության, որ ապահովվի խնդրի վերաբերյալ միասնական տեսակետը: Դրա համար քննարկումը կազմակերպվում է մի քանի փուլով, որոնցից յուրաքանչյուրում աստիճանաբար մեծանում է կարծիքների համաձայնության մակարդակը: Իսկ վերջում ենթադրվում է, որ այդ միջոցները կապահովեն կուլեկտիվ առաջարկության հանձնարարականի մշակումը: Տվյալ մեթոդը աչքի է ընկնում խիստ ռեզլամենտավորվածությամբ: Նախապես կազմվում է զրույցի ողջ ընթացքի սցենարը: Քննարկման յուրաքանչյուր մասնակից, ձգտելով համաձայնեցված լուծումների, պետք է իր գնահատականը համեմատի մյուսների գնահատականների հետ:

«Ուղեղների գրոհ»

Այս մեթոդը փորձագետների խմբի անդամների միջև մտքերի փոխանակության ընթացքում գաղափարների ստեղծման ու հարստացման եղանակներից է: Այն հատկապես տարածված է ճապոնիայում: Ուղեղների գրոհի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ համատեղ աշխատանքում լրիվ բացառվում է առաջադրվող լուծումների հասցեին տրված որևէ քննադատական դիտողություն կամ գնահատական:

Յուրաքանչյուրը պետք է ձգտի առավել անկաշկանդությամբ, մտքի թռիչքի, չպետք է ամենաանհավանական, անհեթեթ ու հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն դրսևորի, որը ստժագործության էական հոգեբանական գործոն է:

Այս դեպքում խումբը ձևավորելիս առաջնային են դառնում մարդկանց բարյացակամությունը, ուրիշի գաղափարներն ընկալելու և զարգացնելու պատրաստակամությունը, ուրիշի տեսակետի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, հանդուրժողականությունը և այլն:

Գաղափարների «գեներացիայի» փուլին հաջորդում է մանրագին ու համակողմանի վերլուծության ու գնահատման փուլը: Դրան համապատասխան փորձագիտական հանձնաժողովները, որպես կանոն, կազմվում են երկու խմբից՝ գաղափարների «գեներատորների» և վերլուծաբանների: Մասնագետները գտնում են, որ առաջին խմբի կազմը չպետք է գերազանցի 8-12 մարդուն:

Սովորաբար ուղեղային գրոհին նախորդում է ծավալուն կազմակերպչական աշխատանք՝ սկսած մասնակիցների համար հարմարավետ պայմաններ ստեղծելուց մինչև զրույցները գրի առնելու տեխնիկական միջոցների ապահովումը և այլն:

Փորձագիտական խումբը պետք է ունենա իր ղեկավարը կամ առաջատարը, որն ամեն կերպ խրախուսում է ազատ ստեղծագործությունը, մտքերի անկաշկանդ ծավալումը և հնարավորին չափ սահմանափակում՝ մտքերի փոխանակության արդյունավետ քննադատության հնարավորությունը: Սովորաբար 30-40 րոպեի ընթացքում գրանցվում են բոլոր առաջարկությունները, հեռանկարային գաղափարները: Մյուս խումբը այդ գաղափարները փորձում է զարգացնել:

Ուղեղների գրոհի արդյունքները ողջ խմբին են պատկանում, դրա համար նորանուծության իրավունքը չի ամրագրվում որևէ անհատի նույնիսկ այն դեպքում, եթե արտահայտված լավագույն գաղափարը ասվել է կոնկրետ անձի կողմից:

Գրոհին հետևում է վերլուծական աշխատանքի փուլը, որի ընթացքում մանրազնին ու քննադատորեն, տվյալ հիմնահարցի մասնագետների կողմից վերլուծվում են առաջ քաշված գաղափարները: Ըստ այդմ՝ պետք է զգույշ լինեն, որ հնարավոր հանճարեղ կռահումների սաղմերը շեմից դեն չչարտվեն որպես անհեռանկարային ու ոչ կենսունակ:

Ուղեղների գրոհը գործնականում լայնորեն կիրառվում է կառավարման մեջ՝ երկարաժամկետ կանխատեսման նպատակով:

Անկետավորում

Սա փորձագիտական հարցման մի տարատեսակ է, որը վերաբերում է հեռակա հարցմանը: Հարցերը հաճախ տրվում են աղյուսակների տեսքով: Փորձագետներն աշխատում են առանձին-առանձին: Մնացած առումներով այն չի տարբերվում հարցաթերթիկային հարցումից:

Դելֆյան տեխնիկա

Սա «հարաբերակցված գնահատականների մեթոդի» հեռակա տարբերակն է, որի հիմքում ընկած է հարցաթերթիկի օգնու-

թյամբ բազմափուլ հեռակա հարցման ընթացքում փորձագետների ինքնուսուցման հնարավորությունը: Դելփյան տեխնիկան երաշխավորում է հարցման անանունության պահպանում, որը հեղինակների կարծիքով պետք է ընդլայնի մտքերն անկաշկանդ արտահայտելու հնարավորությունը, ազատի «հեղինակությունների ճնշումից»:

Ըստ Դելփյան տեխնիկայի՝ փորձագետները ստանում և լրացնում են իրենց հետաքրքրող հարցերը պարունակող հարցաթերթիկներ: Առաջին հարցումից հետո, առանց հիշատակելու մասնակիցների ազգանունները, նրանք ծանոթանում են այդ փուլի արդյունքներին:

Երկրորդ փուլում արդեն փորձագետները կարող են սեփական կարծիքը մոտեցնել ընդհանուր գնահատականին կամ հրաժարվել սեփական կարծիքից, կամ էլ քննարկել տարակարծության պատճառները: Ի տարբերություն հրապարակային քննարկման, հոգեբանորեն այստեղ սեփական կարծիքից հրաժարվելը շատ ավելի հեշտ է:

Փուլերը կրկնվում են այնքան, մինչև ստացվում են փորձագետների համաձայնեցված գնահատականները: Դա է մեթոդի էությունը:

Այժմ տվյալ մեթոդը հնարավոր է և իրացվում է էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի օգնությամբ:

Փորձագիտական գնահատման մեթոդի կիրառելիության սահմաններն անընդհատ ընդլայնվում են, օրավուր ավելի բարդ խնդիրներ են առաջադրվում այդպիսի գնահատումների համար: Փորձագետներին առաջարկվում է զբաղվել խնդրի տրամաբանական վերլուծությամբ, «նպատակների ծառի» կառուցմամբ, ապագայի հեռանկարային սցենարների խաղարկմամբ և այլն: Յուրաքանչյուր փուլում դիտարկվում է խնդրի մի նոր կողմ, գնահատվում են հետագա զարգացման տարբեր ուղիներ: Ընդ որում, պահանջվում է, որ յուրաքանչյուր նպատակի վերագրվի նշանակալիություն և արժևորվի: Սոցիալական կանխատեսման բազմաթիվ խնդիրներ լուծվում են այս եղանակով:

5.1.5. ՍՈՑԻՈՍԵՏՐԻԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Սոցիոմետրիայի հիմնադիրը ամերիկյան խոշոր սոցիալ-հոգեբան, Ջ.Ֆրոյդի աշակերտ Ջեյուբ Մորենոն է:

Մորենոն գտնում էր, որ մարդու առողջությունն ու հոգեկան վիճակը պայմանավորված են իր անմիջական հաղորդակցության փոքր խմբում (բրիգադ, դասարան, ուսանողական խումբ, բարեկամների նեղ շրջան) գրաված դիրքով: Դրա համար առաջարկում էր հետազոտել ոչ միայն հասարակության մակրոկառուցվածքը, այլև ոչ պաշտոնական միկրոկառուցվածքը, որը ձևավորվում է միջանհատական հարաբերությունների, անհատական հակումների, համակրանքների և հակակրանքների հիման վրա: Թերապևտիկ նպատակներով նա մշակում է հոգեդրամայի և սոցիոդրամայի մեթոդները:

Ներկայումս սոցիոմետրիան փոքր խմբերում միջանհատական հարաբերությունների չափման հիմնական մեթոդն է: Ինքը՝ Մորենոն գտնում էր, որ սոցիոմետրիան կոչված է հեղափոխականորեն վերակառուցելու հասարակությունը, որի հիմքում ընկած է սոցիոմետրիկական կառուցվածքը:

Սոցիոմետրիկական հարցման նպատակն է իրական կամ սպասվող այնպիսի վիճակ ստեղծել, ուր առաջանա սոցիոմետրիական ընտրության անհրաժեշտություն: Խմբի անդամը պետք է ընտրվի մնացածից, որի արդյունքում կազմվում է խըմբում անհատի սոցիոմետրիական կարգավիճակը՝ այն, ինչը կապված է մեկը մյուսի հետ չհամընկնող պաշտոնական և ոչ պաշտոնական կապերի հետ: Տվյալ խմբի յուրաքանչյուր անդամ իր որոշակի տեղն է զբաղեցնում խմբի ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական կառուցվածքում:

Մորենոյի համար սոցիոմետրիկական սոցիալական գիտությունների փորձարարական մեթոդն է: Նրա հիմնական գաղափարն այն է, որ փորձը պետք է կատարվի բնական պայմաններում, այսինքն՝ մարդկանց ամենօրյա շփման իրադրության մեջ, այլ ոչ թե «փորձասենյակներում»: Սոցիոլոգիայում այն օգտագործվում է աշխատախմբերի միկրոմթնոլորտի, փոխհարաբերությունների կառուցվածքի, լիդերության, համախմբվածության հարցերի հետազոտման ոլորտներում:

Սոցիոմետրիկական հարցման տեխնիկան

Ի տարբերություն պաշտոնականի՝ անձի սոցիոմետրիկական դիրքը որոշվում է այն դերով, որը միջանձնային հարաբերությունների և կապերի ոչ պաշտոնական կառուցվածքում նրան հատկացնում է խումբը: Այսինքն՝ անձի կարգավիճակը որոշվում է զուտ մարդկային հատկանիշներով: Սորենոն դա անվանում է հոգեբանական կարգավիճակ, որը առօրեական գիտակցության մակարդակով արտացոլում է խմբի վերաբերմունքը տվյալ անձի հանդեպ: Ընդ որում, «հակադարձ կապի» առկայությունը, այսինքն՝ անձի վերաբերմունքը խմբի հանդեպ այստեղ կարևոր չէ:

Ասվածից բխում է սոցիոմետրիկական չափանիշների առանձնացման անհրաժեշտությունը: Ընդունված է տարբերակել հաղորդակցական և գնոստիկական (սոցիալական առըմբռնման թեսթ) չափանիշները:

Ֆաղորդակցական չափանիշները, որոնց նպատակն է արտացոլել խմբի միջանձնային հարաբերությունները, լինում են պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնականի օրինակ են. «Ձեր խմբի ուսանողներից ու՞մ հետ կգերադասեիք նախապատրաստվել քննություններին», «Ձեր բրիգադի ո՞ր անդամի հետ Դուք կցանկանայիք աշխատել ընդհանուր կապալով» և այլն հարցադրումները: Ոչ պաշտոնականի օրինակ են. «Ձեր բրիգադի անդամներից ու՞մ հետ կգերադասեիք անցկացնել ընդմիջունը», «Անձնական հարցով Ձեր թիմի անդամներից ու՞մ կդիմեիք» և այլն նման հարցադրումները:

Որպեսզի չափանիշներն ավելի լայնորեն արտացոլեն միջանձնային կապերի կառուցվածքը խմբում, անհրաժեշտ է դրանք լրացնել *բացասական ընտրությունը* ձևավորող չափանիշներով («Ձեր խմբի ո՞ր անդամին չէիք ընտրի ...»):

Գնոստիկական չափանիշները հաղորդակցականի լրացումներն են: Դրանցով հայտնաբերվում են խմբի այն անդամները, որոնք, ըստ հարցվողի կարծիքի, միևնույն իրադրությունում կընտրեն կամ կմերժեն իրեն: Եթե դա համեմատենք խմբի՝ տվյալ անձին տրված գնահատակների հետ, ապա կարելի է պարզել նրա ինքնագնահատման ճշտության աստիճանը:

Չափանիշների ընտրությունը: Անհրաժեշտ չափանիշների ընտրությունը, դրանց բնույթն ու քանակը պարզելը սոցիոմետրիկական հարցման թերևս ամենապատասխանատու մասն է: Նախքան չափանիշների ընտրությունը՝ անհրաժեշտ է մանրամասն ծանոթանալ հետազոտվող խմբի գործունեության հետ: Խմբի անդամների վարքի դիտումը ինքնուրույն հետազոտական գործընթաց է, որը թույլ է տալիս ավելի ճիշտ ձևակերպել չափանիշները: Մասնավորաբար այն թույլ կտա նախագծվող սոցիոմետրիկական իրադրությունը առավելագույնս մոտեցնել հնարավոր իրական իրադրությանը:

Սոցիոլոգները մշակել են չափանիշների ընտրության մի քանի կանոններ.

1) Չափանիշը սուբյեկտից պետք է պահանջի խմբի մյուս անդամի ընտրությունը կամ մերժումը կատարել՝ ելնելով համատեղ գործունեությանն առաջադրված խնդրից,

2) Չափանիշը չպետք է սահմանափակի խմբի տվյալ անդամի ընտրության կամ մերժման հնարավորությունները, բայց սուբյեկտը պետք է հստակորեն հիշի այդ խմբի նկարագիրն ու սահմանները,

3) Օգտագործվող չափանիշները պետք է պարզ, հասկանալի լինեն խմբի անդամներին, և արտահայտեն եթե ոչ բոլորի, ապա խմբի մեծամասնության շահերը,

4) Չափանիշը պետք է այնպես ձևակերպված լինի, որպեսզի սուբյեկտը կոնկրետ հիմնավորում ունենա ուրիշ անդամների ընտրության կամ մերժման համար. դրա համար հարցը պետք է վերաբերի գործունեության կոնկրետ իրադրություններին,

5) Ընտրության կամ մերժման առաջարկությունը պետք է ձևակերպել հոգեբանական և հուզական հասկացությունների միջոցով, որոնց բարոյական բովանդակությունը արտահայտվում է «սիրո կամ ատելության» կատեգորիաների միջոցով,

6) Չափանիշը չպետք է սահմանափակի սուբյեկտի ընտրությունների քանակը և ազատությունը: Եթե անհրաժեշտություն է ծագում սահմանափակել ընտրությունները, ապա այդ մասին հարկավոր է հատուկ ձևակերպում տալ հարցի կամ հարցաթերթիկի հրահանգավորման մեջ:

Սոցիոմետրիկական հարցաթերթիկ

Հարցաթերթիկը կազմելու նպատակով, որոշելով ընտրվելիք մարդկանց խումբը, կազմվում է նրանց համարակալված ցուցակները: Հարցվողները նշում են ընտրված ընկերների համարները: Ընտրությունն այնպես պետք է կատարել, որ ընտրվող անձինք չհիմանան այդ մասին:

Գործնականում սոցիոլոգները հաճախ սահմանափակում են ընտրությունների քանակը («...ընտրել մինչև 3 կամ 4, կամ 5 հոգի և այլն, ըստ առաջնահերթության»): Սակայն, ինչպես նկատում է, օրինակ Գ. Պողոսյանը իր «Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում» գրքում, ընտրության սահմանափակումը հանգեցնում է որոշակի ինֆորմացիայի կորստյան: Թերևս ավելի արդյունավետ է մեթոդական առումով մեկ խմբում անցկացնել և՛ սահմանափակ, և՛ անսահման ընտրություններ: Տվյալների համեմատությունը թույլ կտա ավելի ճշգրիտ որոշել սահմանափակության նպատակահարմարությունը: Ըստ որում՝ պետք է հաշվի առնել նաև խմբի անդամների թիվը, հարաբերությունների վաղեմությունն ու կայունությունը, խմբի սոցիալ-ժողովրդագրական և մասնագիտական կազմը, ընտրության չափանիշի բնույթը: Օրինակ, եթե ընտրում ենք այն անձանց, որոնց «հրավիրում ենք հարսանիքի կամ ծննդյան տոնի», ընտրությունը կարող է մեծ լինել: Իսկ այն անձինք, որոնց հետ «կխորհրդակցեի անձնական խնդիրների շուրջ», այդ թիվը անհամեմատ փոքր կլինի:

Սոցիոմետրիկական հարցաթերթիկը ձևավորվում է նույն կանոններով, ինչպես ցանկացած սոցիոլոգիական հարցաթերթիկը: Ենթադրենք պահանջվում է ի՞նչ-որ չափանիշով ընտրել 5 մարդ՝ ըստ առաջնահերթության: Այս մասին նշվում է հատուկ. նշեք խմբի այն անդամներին (5 մարդուց ոչ ավելի), որոնց դուք ընտրում կամ մերժում եք: Նրան, ում ընտրում եք առաջին հերթին, սյունակում նշեք I համարի տակ, երկրորդ հերթին՝ II համարի տակ և այլն (տե՛ս աղյուսակ 5.1)

Սոցիոմետրիկական հարցաթերթիկների տվյալները այնուհետև միավորվում են հատուկ սոցիոմետրիկական մատրիցների տեսքով՝ ըստ յուրաքանչյուր չափանիշի (տե՛ս՝ աղյուսակ 5.2):

Աղյուսակ 5.1

| Չարցերը | Ընտրության գերադասելիությունը | | | | |
|--|-------------------------------|----|-----|----|----|
| | I | II | III | IV | V |
| 1. Ձեր աշխատակիցներից ու՞մ կընտրեիք, եթե Ձեզ հնարավորություն ընձեռվեր պորբլեմային խումբ ստեղծել | 5 | 12 | 4 | 8 | 19 |
| 2. Աշխատակիցներից ու՞մ չէիք ընտրի, եթե Ձեզ հնարավորություն ընձեռվեր պորբլեմային խումբ ստեղծել և այլն | 3 | 7 | 11 | 9 | 18 |

Աղյուսակ 5.2

(Ու՞մ կընտրեիք դուք...)


| Ով է ընտրում N | Ու՞մ են ընտրում | | | | | | | | | | Ընտրությունները | | Ընդամենը | |
|-------------------------|-----------------|---|---|---|---|---|---|---|---|----|-----------------|----|----------|-----------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | + | - | | |
| 1 | 0 | - | 0 | 0 | + | + | 0 | 0 | + | 0 | 3 | 1 | 4 | |
| 2 | + | 0 | + | - | 0 | 0 | + | - | 0 | 0 | 3 | 2 | 5 | |
| 3 | 0 | 0 | 0 | + | 0 | + | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 2 | |
| 4 | - | 0 | + | 0 | 0 | 0 | - | 0 | 0 | + | 2 | 2 | 4 | |
| 5 | 0 | 0 | 0 | 0 | 0 | + | 0 | + | 0 | + | 3 | 0 | 3 | |
| 6 | - | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | 0 | + | 0 | 2 | 1 | 3 | |
| 7 | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | 0 | - | 0 | - | 1 | 2 | 3 | |
| 8 | 0 | 0 | 0 | 0 | - | + | 0 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 2 | |
| 9 | 0 | + | 0 | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | + | 3 | 0 | 3 | |
| 10 | + | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 2 | |
| Ստացված ընտրությունները | + | 2 | 1 | 0 | 1 | 1 | 0 | 1 | 2 | 0 | 1 | 22 | | |
| | - | 4 | 2 | 3 | 4 | 2 | 5 | 2 | 3 | 2 | 4 | | 9 | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 31 |

(+)-ը նշանակում է դրական ընտրությունը,
 (-)-ը նշանակում է բացասական ընտրությունը (մերժում),
 0-ն նշանակում է ընտրության բացակայություն (անտարբերություն):


Չնարավորության դեպքում սոցիոգրամը կառուցում են իրական տոպոլոգիայի օրենքներով, այսինքն՝ խմբի անդամների փոխադարձ դիրքերի իրական պատկերի համաձայն: Օրինակ՝

աշակերտական դասարանը կարելի է ներկայացնել այնպես, ինչպես նրանք նստում են դասասեղանների մոտ (տես նկ. 5.2):

Օգտագործվում են նաև շրջանային և համակենտրոն սոցիոգրամներ: Առաջին դեպքում խմբի անդամները տեղադրվում են շրջանագծի վրա, իսկ ներսում պատկերվում են նրանց միջև եղած կապերը (տես նկ. 5.3):




Նկ. 5.2



Նկ. 5.3 Շրջանային սոցիոգրամի օրինակ

Համակենտրոն սոցիոգրամում խմբի անդամները տեղադրվում են կոնցենտրիկ շրջանագծերով: Ավելի շատ ընտրվածները տեղադրվում են ներքին շրջանագծի վրա, ավելի քիչ ընտրություն ունեցողները՝ ավելի մեծ շառավղով շրջանագծի վրա, մինչև 0-ական ընտրությունը (տես նկ. 5.4):



Նկ. 5.4 Համակենտրոն սոցիոգրամի օրինակ

Սոցիոգրամի այս կամ այն ձևի ընտրությունը կախված է սոցիոմետրիկական հարցման նպատակից և խնդիրներից, և որոշվում է հետազոտողի հայեցողությամբ: Երբեմն կապի ուժգնությունը ցույց տալու նպատակով օգտագործվում է շրջանակների միջև եղած հեռավորությունը: Որքան ուժեղ է կապը, այնքան փոքր է հեռավորությունը:

Մասնագետները գտնում են, որ չնայած սոցիոմետրիկական մեթոդը առայժմ այնքան էլ շատ չի օգտագործվում սոցիոլոգիական հետազոտություններում, այդուհանդերձ նրա «ապագան» ավելի լավատեսական է: Միաժամանակ նշվում են մեթոդի կատարելագործման իրական հնարավորությունները: Մասնավորաբար չափանիշների ճշգրտության աստիճանի բարձրացումը:

5.2 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՏՈՒՄ

Դիտումը որպես որևէ երևույթի կամ օբյեկտի ուսումնասիրության մեթոդ, մարդուն շրջապատող միջավայրի թերևս ամենահին ու ամենատարածված ձևն է: Միաժամանակ դիտումը սոցիալական իրականությունը ճանաչելու կարևոր և անհրաժեշտ նախապայմաններից մեկն է: Պրոֆեսիոնալ սոցիոլոգի մոտ ժամանակի ընթացքում սոցիալական դիտման հատուկ շնորհք, հասարակական կյանքի իրադրությունների վերլուծման հայացք է մշակվում, որը նկարիչները, գրողներն ու հրապարակախոսները անվանում են «կյանքը տեսնելու» հատկություն:

Գիտական դիտումը սովորականից տարբերվում է նրանով, որ իրականացվում է սիստեմատիկորեն՝ որոշակի ծրագրով և որոշակի նպատակով: Առօրեական իրադրությունում մարդկանց վարքի նպատակամղված դիտումը բացահայտում է նրանց վարքի այն կողմերը, որոնք անհնար է վեր հանել հարցման օգնությամբ: Հարցման միջոցով կարելի է պարզել միայն այն կողմերը, որոնք գիտակցվում են հարցվողի կողմից և հաղորդվում բառերի մեջ: Ըստ որում, ինչպես նկատում են մասնագետները, հաճախ նշանակալից տարբերություն է դրսևորվում հարցվողների իրական ու խոսքային վարքերի միջև, այն, ինչը դիտվում է որպես հարցման թերություն:

Մարդկանց սոցիալական վարքի կարգավորումն իրագործվում է նաև չգիտակցված շարժառիթների, դիրքորոշումների, խմբային նորմերի և ավանդույթների միջոցով: Դրանք բացահայտելու համար հենց անհրաժեշտ է «ներսից» ուսումնասիրել խմբի վարքը՝ հնարավորինս ընդգրկվելով նրա կազմում:

Նման ուսումնասիրության դասական օրինակ է ամերիկյան սոցիոլոգ Ուիլյամ Ուայթի «Փողոցի անկյունի հասարակությունը» աշխատությունը: Հեղինակը շուրջ երեք տարի ուսումնասիրել է քաղաքների շենքերի «ետնամուտքերում» բնակվող մարդկանց սովորություններն ու բարքերը: Մեծ ջանքերի գնով և կյանքը վտանգի ենթարկելով՝ նրան հաջողվել է պատմաբան ուսանողի անվան տակ թափանցել ամերիկյան քաղաքներից մեկի իտալական գետտոյում ծվարած վտարանդիների համայնքը և

նվաճել նրանց վստահությունը: Ավելի քան մեկ տարի նա ապրել է այդ ընտանիքներից մեկում: Այդ ընթացքում ուսումնասիրել է վտարանդիների լեզուն, բարքերն ու սովորությունները, զբաղմունքի ձևերը, եկամտի աղբյուրները և այլն: Սկզբում Ու. Ուայթը իր գրառումները կատարել է ծածուկ՝ ուշադրություն չգրավելու համար, սակայն հետզհետե մարդիկ այնպես են վարժվել նրան և նոթատետրին, որ դադարել են ուշադրություն դարձնելուց: Նման հետազոտություններում բնական է, որ խիստ կարևորվում է հետազոտողի անձը:

5.2.1. ԴԻՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սոցիոլոգիական դիտումը ըստ ընթացակարգի ձևայնացման աստիճանի լինում է. *կառուցվածքային* և *ոչ կառուցվածքային*: Առաջին դեպքում դիտողը գրանցում է նախապես պայմանադրված իրավիճակները՝ ըստ խստորեն սահմանված մանրամասն պլանի: Երկրորդում դիտումը իրականացվում է ընդհանուր պլան հանձնարարականի հիման վրա:

Ըստ հետազոտողի ներգրավվածության աստիճանի տարբերում են *ներառված* և *չներառված* դիտումները: Առաջին դեպքում հետազոտողը դառնում է ուսումնասիրվող խմբի անդամ և այն դիտում «ներսից»: Այնպես, ինչպես դա արել է Ու. Ուայթը վերոնշյալ օրինակում (նման օրինակները քիչ չեն): Երկրորդ դեպքում հետազոտողը իրադրությունը փաստագրում է «կողքից», իբրև կողմնակի անձ: Ըստ կազմակերպման պայմանների՝ դիտումը լինում է փորձնական (լաբորատոր) և բնական (դաշտային): Գերմանացի սոցիոլոգները տարանջատում են նաև *գիտակցված* (երբ մարդուն հայտնի է իր՝ դիտվող լինելու փաստը) և *չգիտակցված* դիտումները, որպես մյուս տարատեսակների կարևոր փոխլրացում:

Մասնագետները առաջարկում են *բաց* դիտումը տարբերել *ծածուկից*: Լինում են նաև *երկարատև* և *ակնթարթային* (մեկ անգամ) դիտումներ:

5.2.2. ԴԻՏՄԱՆ ՊԼԱՆԸ

Նախքան դիտումն իրագործելը անհրաժեշտ է կազմել պլան այն մասին, թե հատկապես ինչն է դիտման ենթակա: Դրա համար կատարում են օբյեկտի տեսական-տրամաբանական վերլուծություն, նրա բնութագծերի, կարևոր առանձնահատկությունների վերհանում, դիտման ենթակա էական կառուցվածքային տարրերի տարանջատում: Օրինակ, եթե պետք է դիտել աշխատախմբի վարքը, առանձնացնում ենք խմբի անդամների թիվը և կազմը ըստ սեռի, կրթական մակարդակի, տարիքի, պաշտոնի, աշխատանքի բնույթի, բովանդակության և այլն: Այնուհետև անջատում ենք մասնավոր տարրերը. աշխատանքային օրվա ընթացքում և ընդմիջման ժամանակ անդամների միջև գործնական և ոչ գործնական բնույթի շփումների հաճախությունը, լիդերությունը, խըմբավորումների առկայությունը և այլն: Այդ ամենից հետո հարաբերակցվում են առանձնացված տարրերը և դիտման միջոցով ստացված վարքային որոշակի ակտերը, որոնք խմբի իրական գործունեության ցուցիչի դեր են կատարում: Որքան հայտնի է օբյեկտը և որքան շատ գիտելիք ունի նրա մասին հետազոտողը, այնքան ավելի ճշգրտորեն կարելի է եզրագծել դիտվող երևույթների ոլորտները:

Որպես կառուցվածքային դիտման օրինակ բերենք ամերիկյան հոգեբան Ռ. Բեյլզի այն սխեման, որը նա կիրառել է խմբի գործունեության հետազոտման մեջ: Բեյլզը սխեման ստեղծել է՝ ուսումնասիրելով երեխաների խմբերում իրական փոխգործողությունների բնույթը և դրանք գրանցելով:

Ըստ Բեյլզի, ցանկացած խմբի գործունեությունը նրա առջև դրված նպատակի իրացման տեսանկյունից կարելի է նկարագրել 4 կատեգորիաների միջոցով:

- ա) հիմնահարցի առաջադրումը,
- բ) հիմնահարցի լուծումը,
- գ) և դ) հույզերը (դրական կամ բացասական):

Փոխգործողությունների բոլոր 82 տեսակները (որը կազմել էր նա) բաժանեց այս 4 կատեգորիաների միջև և վերջնականո-

րեն ստացավ փոխգործողությունների 12 տեսակներից բաղկացած մի սխեմա, որոնք էլ դիտողը պետք է գրանցեր խմբի անդամների վարքի ուսումնասիրության ժամանակ (տե՛ս սխեմա 5.1).

Սխեմա 5.1

| | |
|---|-----------------------------------|
| 1. Համերաշխության, օգնության դրսևորում 2. Անկաշկանդ վարք 3. Համաձայնություն, պասիվ կատարում | Դրական հույզերի ոլորտ |
| 4. Ղեկավարում, օգնություն, խորհրդատվություն 5. Գնահատում, ենթադրություն, կարծիք 6. Կողմնորոշում, տեղեկացում, բացատրում | Հիմնահարցերի լուծման ոլորտ |
| 7. Տեղյակ պահելու խնդիր 8. Հետաքրքրություն ուրիշի կարծիքի մասին 9. Առաջարկությունների նկատմամբ կողմնորոշում և ցուցմունքներ ստանալու խնդիր | Վճիռ կայացնելու ոլորտ |
| 10. Անհամաձայնություն, ձևական ենթարկում, օգնելու բացակայություն 11. Լարվածության ստեղծում, գրգռվածություն 12. Հակադրվածության դրսևորում, ուրիշների նվաստացում | Բացասական հույզերի ոլորտ |

Բեյլզը լաբորատորիայում, որի մի պատը դիտողի կողմից թափանցիկ էր (մյուսում՝ անթափանց), հանձնարարություն էր տալիս խմբին և գրառում յուրաքանչյուր անդամի վարքը: Այսինքն՝ կիրառում էր չտեղեկացված և չներգրավված, փորձնական կառուցվածքային դիտման մեթոդը: Դիտարկումների արդյունքում Բեյլզը հանգեց այն եզրակացության, որ բոլորից շատ տվող անհատը բոլորից շատ էլ ստանում է և, որ, բոլոր անդամները (լիդերից բացի) նախ խոսում են ակտիվ անդամների և հետո միայն՝ ողջ խմբի հետ:

Մեկ ուրիշ՝ Քարթերի համակարգում, որում կար 92 կատեգորիա, հետազոտվում էր լիդերությունը, իսկ Շտեյնցորի համակարգում խմբային մթնոլորտը և մասնակիցների մոտիվացիան:

Հետագայում գիտնականները մշակեցին ժեստի, դիմախաղերի, բառի արտաբերման, ձայնի տարրերի, նշանների պարա-

լեզվաբանական (паралингвистические) և էքստրալեզվաբանական (экстралингвистические) համակարգերը: Պարալեզվաբանականը մշակվել է ձայնադրման (ձայնի որակ, տոնայնություն, տիրույթ (դիապազոն)), իսկ էքստրալեզվաբանականը՝ խոսքի դադարի, միջադրումների (հազ, ծիծաղ, անհոդաբաշխ հնչյուններ, ծպծպոց, փչփչոց և այլն) զանազան համակարգերի հետազոտման համար: Ստեղծվել է հատուկ գիտական ճյուղ՝ *պրոքսենիկան*, որն ուսումնասիրում է մարդկանց միջև ժամանակային և տարածական շփման կազմակերպչական կանոնները: Այն թույլ է տվել մշակել շփումների մտերմիկության գնահատման հատուկ համակարգ:

Ենթադրվում է, որ տեխնիկական միջոցների կիրառումը մեծ ապագա ունի: Սակայն այստեղ կա լուրջ բարոյական խնդիր: Մի կողմից տվյալների հավաստիության համար հարմար է, որ դիտվողը ոչինչ չիմանա հետազոտման իրական նպատակների մասին, իսկ մյուս կողմից՝ մարդու անձնական կյանքը ներխուժելը՝ առանց որոշակի ձևականությունների պահպանման, չի կարող միանգամից արդարացի վրդովմունք չհարուցել: Մարդիկ չեն կամենում փորձարկվող կենդանու վիճակում լինել, թեկուզև՝ հանուն գիտության վեհ նպատակների:

Դիտողի չեզոքությունը: Դիտողի չեզոքությունը ընդհանրապես կարևոր է բոլոր մեթոդների կիրառման դեպքում: Դիտման պարագայում այն ունի յուրահատկություններ: Եթե սոցիոլոգը խմբի անդամ է, կարող է փոխել դիտման ենթակա իրադրությունը, իսկ եթե դիտում է «կողքից», ապա մարդկանց վարքի շատ կողմեր անհայտ են մնում: Մասնագետները գտնում են, որ օպտիմալը տվյալ դեպքում այն է, որ դիտողը կարողանա *ամեն ինչ տեսնել՝ ինքն անտես մնալով*: (Ինչպես կատակում են հետազոտողները, ծպտյալ դիտողը պետք է իրեն լրտես համարի, իսկ ներառվածը՝ դավաճան):

Այսուհանդերձ, ըստ մասնագետների, դիտողը միշտ տարբեր չափով ազդում է դիտվողների վրա: Բացի այդ, եթե նա դառնում է խմբի անդամ, աստիճանաբար կորցնում է դիտվողների մասին

օբյեկտիվ դատելու որակները: Արդյունքում ստացվում են հու-
զական-սուբյեկտիվ երանգավորումներով տեղեկություններ: Իսկ
եթե դիտողը դիմում է խմբի որոշ անդամների աջակցությանը,
ապա վերջիններս, բնականորեն կրելով խմբի շահերն ու նորմե-
րը, ի վիճակի չեն օբյեկտիվ տեղեկություններ հաղորդել: Ան-
հայտ են մնում նաև խմբային շատ հարաբերությունների ենթա-
տեքստեր:

Այնպես որ, հետազոտողից բավարար հմտություն և հնարա-
մտություն է պահանջվում կոնկրետ հետազոտության մեջ դիտ-
ման հնարավորություններն ու արդյունավետությունը որոշելու
համար:

Դիտման մեջ խիստ կարևորվում է նաև *արդյունքների գրան-
ցումը*: Գրառման հնարավորությունները բավական շատ են և կի-
րառվում են՝ կախված դիտման խնդիրներից: Ոչ կառուցվածքա-
յին դիտման դեպքում գրառումը կատարվում է կամայականորեն,
իսկ կառուցվածքայինի դեպքում կիրառվում են «դիտողի
հատուկ քարտեր», լուսանկարչական ապարատներ,
ծայնագրիչներ և այլն: Տվյալները մշակվում են հարցաթերթիկի
մամ:

Դիտման հնարավորությունները: Գրականության մեջ առա-
վել հաճախ նշվող դիտման առավելություններն ու թերություննե-
րը հետևյալն են.

առավելություն.

- տպավորությունների ամբողջականությունը,
- միաժամանակ շատ մարդկանց վարքի ընդգրկման
հնարավորությունը,
- դիտվողների ցանկությունից կախում չունենալը,
- ընդգրկման բազմաչափելիությունը,

թերություն.

- կախումը դիտողի տրամադրությունից,
- դիտվող իրավիճակների անմիաբաժանելիությունը,
- դիտվող հանգամանքների եզակիությունը,

- դիտողի հոգեբանական հագեցվածությունը (ուշադրության աստիճանական բթացումը),

- դիրքի լուսապսակը (այսպես կոչված «Չալլո-էֆեկտ»), որը ստեղծվում է դիտողի՝ դիտվողի վրա գործած առաջին տպավորության հետևանքով,

- «ներողամտության» էֆեկտը կամ դրական գնահատականներ տալու դիտողի հակումը,

- դիտումն անցկացնելու համար մարդկային ռեսուրսների և ժամանակի շատ ծախսերը,

- դիտվող անձանց թվի սահմանափակությունը և, առհասարակ, դիտարկումների արդյունքների ներկայացուցչականության բացակայությունը և այլն:

Դիտումը կարող է մյուս մեթոդների կողքին կիրառվել որպես օժանդակ կամ ճշգրտող միջոց: Այն շատ արդյունավետ է զանգվածային երևույթների հետազոտման համար (մարզադաշտի հանդիսականների, հանրային ուրիշ վայրերում մարդկանց վարքը):

Վավերագրական կինոյում և լրագրային գործում լայն տարածում ունի ծածկախցիկով լուսանկարումը, որը չտեղեկացված ոչ կառուցվածքային դիտման ձևափոխված մեթոդ է:

Վ.Ա. Յադովը դիտման տվյալների կայունությունն ու հուսալիությունը բարձրացնելու համար առաջարկում է հետևյալ կանոնները.

- միևնույն օբյեկտը հարկավոր է դիտել տարբեր իրադրություններում,

- ստուգել դիտման տվյալները այլ մեթոդների տվյալների վերլուծության միջոցով,

- հետևել, որ եղելությունների նկարագրությունները և մեկնությունները չչփոթեն միմյանց հետ: Այդ նպատակով դիտման արձանագրություններում տարբեր տեղերում արձանագրել փաստական տվյալները և դրանց գնահատումները,

- դիտումն իրականացնել մի քանիսի օգնությամբ՝ միևնույն հանձնարարականով,

- համեմատել միևնույն օբյեկտն ուսումնասիրող տարբեր դիտողների գնահատումները, տվյալները, գրառումներն ու մեկնու-

թյունները և այլն:

Մասնագետները խիստ կարևորում են նաև դիտողների ուսուցումը, որը բավական բարդ ուսումնական գործընթաց է, և, առանց որի անհնար է դիտողի արդյունավետ աշխատանքը:

5.3 ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐԶ

Սոցիոլոգիայում գիտափորձի կիրառման մեթոդական հիմքը սոցիալական դետերմինիզմի գաղափարն է: Բնական է, որ տվյալ գաղափարը այս կամ այն կերպ չընդունող մասնագետները սկզբունքորեն մերժում են գիտափորձի հնարավորությունը սոցիալական պրակտիկայում: Այսուհանդերձ, պատմականորեն այդ պրակտիկայի հարաճուն պահանջները ստիպեցին հակադիր կողմնորոշում ունեցողներին փոխզիջումային տեսակետ ընդունել, որի էությունը երևույթների քանակական չափման և որակական վերլուծության համադրումն է:

Գիտափորձի հիմքում հետևյալ գաղափարն է. առկա է հետազոտության սոցիալական օբյեկտը, անհրաժեշտ է պարզել նրա վարքը որոշակի գործոնների ազդեցության պայմաններում: Յսկվող և ստուգվող գործոնների համախումբն ընտրելով՝ հետազոտողն արհեստականորեն (կամ բնական պայմաններում) փորձարարական պայմաններ է ստեղծում և գրանցում օբյեկտի հակազդումներն ու վարքը: Բնական օբյեկտների համեմատությամբ այստեղ յուրահատկությունն այն է, որ սոցիալական օբյեկտն օժտված է հիշողությամբ, իրադրությունների նախընկալման և կանխատեսման ունակությամբ: Այն զգալիորեն դժվարացնում է գիտափորձի իրականացումը, բարդանում է բազմաթիվ գործոնների միջից հիմնականների ընտրության գործը և օբյեկտի վրա ազդող գործոնների հսկողության իրականացումը: Քանզի օբյեկտի վրա ազդող գործոնի հանդեպ հակազդումը կարող է ժամանակի մեջ ձգձգվել և ձևափոխվել անցյալում տեղի ունեցած այլ գործոնների ազդեցության տակ:

Գիտափորձի էությունը: Ըստ գիտափորձի ընթացակարգի՝ որոշվում են օբյեկտի վրա ներգործող *հսկվող փոփոխականները*,

անջատվում են այնպիսիները, որոնց փոփոխությունը հսկվողի ազդեցության տակ վկայում է օբյեկտի արձագանքելու ունակության մասին:

Չետագոտողի կողմից կառավարվող և հսկվող փոփոխականը կոչվում է *անկախ փոփոխական*: Իսկ այն գործոնը, որի փոփոխությունը որոշվում է անկախ փոփոխականով, կոչվում է *կախյալ փոփոխական*:

Սովորաբար սոցիոլոգիայի եզրահանգումները հիմնվում են փորձի ենթակա օբյեկտի՝ մինչ փորձը և փորձից հետո ունեցած վիճակների համեմատության վրա: Տարբերում են հաջորդական ու զուգահեռ ընթացող գիտափորձերը: Հաջորդականի դեպքում չափվում են փորձնական օբյեկտի վիճակները փորձից առաջ և՝ հետո: Իսկ զուգահեռի դեպքում՝ համեմատվում են երկու նման օբյեկտներ, որոնցից մեկը փորձի վիճակում է, մյուսը՝ ոչ: Այս դեպքում երկրորդ օբյեկտը ստուգիչ դեր է կատարում: Սովորաբար, այս երկու ձևերի թերություններից զերծ մնալու համար այն կիրառվում է զուգակցված: Առաջինի թերությունն այն է, որ վիճակի փոփոխությունը կարող է տեղի ունենալ նաև չնախատեսված փոփոխականների ազդեցության տակ, իսկ երկրորդի դեպքում գործնականում անհնար է հասնել պատշաճ նույնատիպության (այսինքն՝ լրիվ նույնացնել փոփոխականները):

Սոցիալական գիտափորձը երկու գործառույթ ունի. գիտական վարկածի ստուգում և գործունեության որոշակի արդյունքների ձեռքբերում:

Գիտափորձի տրամաբանությունը առաջարկվել է դեռևս XIX դարում Ջոն Սթյուարտ Միլլի կողմից և ըստ մասնագետների մինչև այժմ էական փոփոխությունների չի ենթարկվել:

Միլլը առաջարկել է երևույթների պատճառա-հետևանքային կապի տրամաբանական ապացուցման չորս մեթոդ.

1. միակ տարբերության,
2. միակ նմանության,
3. համընթաց փոփոխությունների,
4. մնացորդի մեթոդներ:

Հակիրճ դիտարկենք այդ մեթոդները:

1. Ենթադրենք՝ ունենք օբյեկտների երկու շարք կամ միև-

նույն օբյեկտի երկու վիճակ, որոնք բնութագրվում են արժեք ունեցող փոփոխականների i -ական կազմով.

$$\begin{aligned} N_1, N_2, \dots, N_i, \\ M_1, M_2, \dots, M_i \end{aligned}$$

Եթե առաջին կազմում N_{i+1} տարրը ավելացնելիս (կամ նվազեցնելիս) երկրորդում էլ է M_{i+1} տարր ավելացվում (կամ նվազեցվում), ապա կարելի է ասել, որ N_{i+1} տարրի երևալը առաջին պատահարում հանգեցնում է M_{i+1} -ի երևան գալուն՝ երկրորդ պատահարում.

$$N_1, N_2, \dots, N_i, N_{i+1} \rightarrow M_1, M_2, \dots, M_i, M_{i+1}:$$

2. Ենթադրենք NML պատահարն իր հետևից բերում է KDC պատահարը, իսկ AMB-ն՝ XDY և SMO-ն՝ FDP պատահարները.

$$\begin{aligned} NML &\rightarrow KDC, \\ AMB &\rightarrow XDY, \\ SMO &\rightarrow FDP: \end{aligned}$$

Համադրելով այս շարքը՝ կարելի է ասել, որ M տարրից բխում է D տարրը:

$$\begin{aligned} 3. N_1, N_2, \dots, N_i &\rightarrow M_1, M_2, \dots, M_i, \\ N_1, N_2, \dots, N_{i1} &\rightarrow M_1, M_2, \dots, M_{i1}, \\ N_1, N_2, \dots, N_{i2} &\rightarrow M_1, M_2, \dots, M_{i2}: \end{aligned}$$

4. Եթե հաստատված է, որ N_1 տարրը M_1 -ի պատճառն է, N_2 տարրը՝ M_2 -ի, իսկ N_3 -ը՝ M_3 -ի, և հայտնի է, որ $N_1 N_2 N_3 N_x$ պատահարից բխում է $M_1 M_2 M_3 M_y$ պատահարը, ապա, ըստ մնացորդի մեթոդի, կարելի է ենթադրել, որ N_x տարրը M_y տարրի պատճառն է:

5.3.1. ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գոյություն ունեն տարբեր հիմունքներով մշակված սոցիալական գիտափորձերի տարբեր դասակարգումներ: Մի դեպքում

այն կատարվում է ըստ ժամանակի գործոնի. դեպի ապագան (նախագծված փորձ), դեպի ներկան («ex post facto») և ներկա ժամանակում (որոշումների և սխալների ճանապարհով արվող փորձ): Մեկ ուրիշ դեպքում սկզբունք է փորձի վերահսկումը նվազեցնելու հիմունքով դասակարգումը.

- *մաքուր փորձ* (վերահսկմամբ նման է ֆիզիկական գիտափորձին),

- *«ex post facto»* (բառացի՝ «տեղի ունենալուց հետո»),

- *չհսկվող փորձ* (առանց հետազոտողի ստեղծված փորձնական վիճակ),

- *հսկվող դիտում*. դիտման մեթոդ է, որի մասին ասել ենք,

- *որոշումների և սխալների մեթոդով անցկացվող փորձ*. հետազոտողը չունի վարկած ու հսկելու միջոցներ:

Ըստ Վ. Ա. Յադովի, գիտափորձերը լինում են.

1. բնական (հսկվող և չհսկվող)

2. մտային:

Ա.Պ. Կուպրիյանը առաջարկում է հետևյալ դասակարգման սխեման, որը թերևս ավելի ընդգրկում է (տե՛ս սխեմա 5.2).

Սխեմա 5.2

| N | Դասակարգման հիմքը | Սոցիալական փորձի տիպերը |
|-----|--|---|
| I | Փորձում դրված խնդրի առանձնահատկությունը | 1. գիտահետազոտական 2. գործնական |
| II | Փորձի, իբրև գործունեության կառուցվածքը | 1. նախագծված ա) ակտիվ բ) պասսիվ (բնական) 2. Քվազի փորձեր («ex post facto») |
| III | Փորձնական իրադրության բնույթը | 1. դաշտային 2. լաբորատոր |
| IV | Վարկածի ապացուցման տրամաբանական կառուցվածքը | 1. զուգահեռ 2. հետևողական («նախքան» և «հետո») |
| V | Հետազոտվող օբյեկտի բնույթը | 1. տնտեսական 2. մանկավարժական 3. սոցիալ-հոգեբանական |

5.3.2. ՎԵՐԱՅՍԿԱՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԳԻՏԱՓՈՐՁՈՒՄ

Սոցիալական գիտափորձի արդյունավետությունը էապես կախված է վերահսկման հնարավորություններից: Դա առաջին հերթին նշանակում է փորձնական ու ստուգիչ խմբերի ընդհանուր պայմանների հավասարության ապահովում: Այսինքն՝ չեզոք գործոնների համահարթեցում երկու խմբում էլ:

Վերահսկման խնդիրը սկսվում է օբյեկտի համեմատելի խմբերի որոնումից ու ձևավորումից: Փորձի ողջ ընթացքում պետք է հետևել, որ չեզոք փոփոխությունների հարաբերակցությունը չփոփոխվի: Գիտափորձի ընթացքում սոցիոլոգը գրանցում է հետազոտվող կապի տեսանկյունից կարևոր (իմաստ ունեցող) նշանակության փոփոխությունները:

Փորձնական խմբերի համահարթեցումը հիմնականում կատարվում է ըստ կարևոր գործոնների: Իբրև կանոն դրանք են. սոցիալ-ժողովրդագրական, մասնագիտական, կրթական և մի շարք այլ ցուցանիշներ: Օրինակ, եթե ուզում ենք հետազոտել կրթական մակարդակի (անկախ փոփոխական) ազդեցությունը աշխատանքային ակտիվության վրա (կախյալ փոփոխական), համահարթեցնելով մնացած հիմնական գործոնները, ընտրվում են երկու խումբ՝ մեկը միջնակարգ, մյուսը՝ միջնակարգ-մասնագիտական կրթությամբ: Հետո համեմատում ենք արդյունքները:

Գործնականում, երբ ընտրանքը մեծ թիվ է կազմում, կիրառում են, օրինակ, վերահսկման զույգ-զույգ մեթոդը: Սկզբում ընտրում են տարբեր կրթության երկու խմբեր, այնուհետև, քայլ առ քայլ հարթեցնում են խմբերի մնացած ցուցանիշները: Այստեղ սակայն վտանգ կա, որ ի վերջո միմյանց նկատմամբ համամասնական խմբերը կարող են ներկայացուցչական չլինել:

Հետազոտական տեխնիկայի և ընթացակարգի հետագա զարգացման գործին մեծ ծառայություն կարող է մատուցել մեթոդական գիտափորձը:

Օրինակ, «Անձի արժեքային կողմնորոշումները և աշխատանքային վարքը» ներկայացուցչական հետազոտության մեջ, Գ. Պողոսյանը իրականացրեց մեթոդական գիտափորձ, որը նախատեսում էր զրուցավարների ուսումնասիրումը՝ հարցվողների խոսքային վարքի դիտման նպատակով: Զրուցավարները, հար-

ցումներին զուգահեռ գրանցում էին երեք բնութագիծ՝ պատասխանների անկեղծության աստիճանը, ինքնուրույնության աստիճանը և հարցազրույցի ընթացքում դրսևորված հետաքրքրվածության աստիճանը: Փորձը ցույց տվեց, որ զրուցավարների կարծիքով հարցվողների պատասխանները բավական անկեղծ էին (83,0%): Պարզվեց նաև, որ հինգ փորձնական հարցին տրված պատասխաններից ինքնուրույն էին կեսից միայն մի փոքր ավելին: Մնացածում «օգնել» էին զրուցավարները: Այս արդյունքը թույլ տվեց ճշգրտում մտցնել եզրահանգումների հավաստիության մեջ:

Իսկ հարցվողների հետաքրքրվածության մակարդակի դիտումը հնարավորություն ընձեռեց կառուցել հարցազրույցի ընթացքում հետաքրքրվածության փոփոխելիության կորը, որն էլ թույլ տվեց անջատել հարցվողների բարձր հետաքրքրությունների ոլորտները: Մեթոդական փորձի իրականացման հետևանքով ստացված արդյունքները թույլ տվեցին մի շարք գործնական մեթոդական հանձնարարականներ տալ դիտման մեթոդի կատարելագործման նպատակով:

5.4 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիոլոգիայում փաստաթղթային է համարվում ցանկացած այն ինֆորմացիան, որը ամրագրված է տպագիր կամ ձեռագիր տեքստում, կամ որևէ (մագնիսական, լուսանկարչական, կինո-) ժապավենի վրա:

Փաստագրական աղբյուրներ են. 1) գրավոր փաստաթղթերը, 2) վիճակագրական տվյալները, 3) տեխնիկական գրառումները:

1) *Գրավոր փաստաթղթերը* բովանդակում են հետևյալ աղբյուրները.

ա) պետական արխիվները, ինչպես նաև զանազան ձեռնարկությունների և հիմնարկությունների արխիվները,

բ) տպագրական արտադրանքը (մամուլը, գրական աղբյուրները, գիտական հրատարակությունները),

զ) անձնական փաստաթղթերը:

Կարևոր է նշել, որ սոցիոլոգը պարտավոր է իմանալ և հաշվի առնել արխիվներում փաստաթղթերի պահպանման ժամկետները: Անձնական փաստաթղթերի թվում են ինքնակենսագրությունները, նամակները, հուշերը, օրագրերը, գործնական գրառումները, ճառերը, զեկուցումներն ու ելույթները, չիրատարակված ձեռագրերը: Անձնական փաստաթղթերի վերլուծության դասական օրինակ է Ուիլյամ Թոմասի և Ֆլորիան Ջնանեցկու «Լեհ գյուղացին Եվրոպայում և Ամերիկայում» ուսումնասիրությունը: Հեղինակները, մասնավորաբար, թերթին հայտարարություն են տվել՝ լեհ վտարանդիներին ուղղված խնդիրքով, որպեսզի վերջիններս ուղարկեն իրենց կենսագրությունները, հարազատներից ստացած նամակները, և յուրաքանչյուր նյութի դիմաց վճարել են տասը ցենտ: Ստացված նյութի և այլ փաստաթղթերի հիման վրա Թոմասն ու Ջնանեցկին նեյկայացրին լեհ վտարանդիների դրության սոցիալական պատկերը: Աշխատությունը շուտով հանրաճանաչ դարձավ: Նրա նյութերի հիման վրա մշակվեցին փաստաթղթային ինֆորմացիայի հավաստիության պայմանները, այն շարժառիթները, որով մարդիկ առաջնորդվում են կենսագրական փաստեր հաղորդելիս: Դրանք տարբեր կերպ են արտացոլում հաղորդման հավաստիության աստիճանը: Այդ շարժառիթների թվում են սեփական ներաշխարհը ի ցույց հանելու ձգտումը, հոգեբանական լարվածության վերացումը, դրամական վարձատրության շահը, սեփական արարքների ինքնաարդարացումը, սեփական անձի անմահացման ցանկությունը և այլն: Թոմասն ու Ջնանեցկին հանդգնած էին, որ սոցիոլոգիական նյութի կատարյալ աղբյուրները, հենց անձնական փաստաթղթերն են:

2) **Վիճակագրական տվյալները** առաջին հերթին պետական վիճակագրական փաստաթղթերն են, մարդահամարի նյութերը, կատալոգները և տեղեկատուները: Դրանց թվում են նաև տվյալների բանկերը (տարբեր հետազոտությունների արդյունքները), որոնք հաշվողական կենտրոններում պահպանվում են մշակելու համար պատրաստի տեսքով:

3) *Տեխնիկական գրառումների* շարքին դասվում են պատկերագրական փաստերը (կինոֆոտո–տեսապատկերները, նկարները և այլն) և հնչյունաբանական տվյալները (ձայնագրություններ, ձայնասկավառակներ, մագնիսական սկավառակներ և այլն):

5.4.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Տարբերում են տվյալների վերլուծության *ավանդական* և *ձևական* (քանակական) մեթոդները:

Ավանդական մեթոդը նախատեսում է նյութի տրամաբանական ուսումնասիրություն՝ սոցիոլոգին հետաքրքրող տեղեկությունների և կապերի անջատման նպատակով: Այն ստեղծագործական գործընթաց է և պահանջում է գիտելիքներ, փորձ և մեծ հմտություն: Այս մեթոդը հիշեցնում է ազատ հարցազրույցի, ոչ կառուցվածքային դիտման մեթոդները: Ավանդական մեթոդով ստացված արդյունքների վրա ուժեղ է հետազոտողի անձի ազդեցությունը: Սուբյեկտիվ ազդեցությունները նվազագույնի հասցնելու ճանապարհին մշակվել են զանազան ձևայնացված մեթոդներ:

Տվյալների վերլուծության *ձևայնացված, քանակական* մեթոդը առաջինը կիրառել են Գ. Լասուելն ու Բ. Բարելսոնը՝ զանգվածային լրատվամիջոցների վերլուծության ժամանակ: Նրանք ձևակերպել են մեթոդի հիմնական դրույթները՝ դրանք անվանելով «*Բովանդակային վերլուծություն*» (անգլերեն «content») բովանդակություն բառից):

Բովանդակային վերլուծության իմաստը տեքստի նյութի վերածումն է քանակական ցուցանիշների: Վերլուծության հիմնական խնդիրը տեքստում այն հիմնադրույթային հասկացությունների, ստանդարտ արտահայտությունների անջատումն է, որոնք ընդունվում են իբրև տեքստի միավորներ: Այնուհետև հաշվում են հետազոտվող փաստաթղթերի (թերթի տրցակի, կոմպլեկտի, ամսագրերի համարների, գրքերի) բոլոր տեքստային միավորները: Լասուելը նման եղանակով, առաջին անգամ ուսումնասիրելով «Իսկական ամերիկացի» թերթը, անժխտելիորեն հիմնավորել է

նրա ֆաշիստական ուղղվածությունը: Դրանից հետո թերթը չի հրապարակվել:

Բովանդակային վերլուծության հիմնական խնդիրներից մեկը վերլուծական կատեգորիաների մշակումն է: Վերջիններիս հիման վրա կատարվում է վերլուծական *միավորների* առանձնացում: Կատեգորիաները պետք է միմյանց փոխբացառեն, լիովին բնութագրեն տեքստը և համապատասխանեն հուսալիության պահանջներին:

Լասուելը, որպես վերլուծական միավորներ առանձնացնում էր սիմվոլները: Ուրիշները առանձնացնում են բառերը, հասկացությունները, արտահայտությունները, թեմաները, սոցիալապես նշանակալից գաղափարները:

Միավորների ընտրությանը հաջորդում է *հաշվման*, վիճակագրական վերլուծության փուլը: Հաշվի միավորներ կարող են լինել բառը, տերմինը, եզակի դատողությունը, պարբերությունը կամ տեքստի որևէ ամբողջական կտորը: Դրանք հաշվելու մի քանի եղանակներ կան. տարածական տեղայնացում (միջերի, տողերի, սյունակների, պարբերությունների քանակը և կամ տեքստերի մակերեսի քառակուսի սանտիմետրերի չափը), ժամանակի քանակը, ժապավենի երկարությունը և այլն: Բովանդակային վերլուծության մեջ վերջերս օգտագործում են նաև լեզվաբանական և լեզվահոգեբանական վերլուծության մեթոդները:

Այսպիսով, բովանդակային վերլուծությունը տեքստի նյութի վերլուծության որակա-քանակական մեթոդ է:

Փաստաթղթերի ընտրությունը անց է կացվում սոցիոլոգիական հետազոտության ընտրանքի որոշման կանոններով: Իբրև «գլխավոր համախումբ» հանդես են գալիս օրինակ, մի քանի տարվա թերթերի պարունակած ողջ նյութը, իսկ՝ «ընտրանքային համախումբը» վերլուծության համար առանձնացված նյութն է:

Մինչ փաստաթղթերի ընտրությունը սոցիոլոգը կատարում է ինֆորմացիայի աղբյուրների ընտրություն: Ինֆորմացիայի աղբյուր կարող է լինել ցանկալի տեղեկություն պարունակող ցանկացած նյութ: Օրինակ, ամերիկացի հետազոտող Լեո Սրոլը, փոքր քաղաքում սոցիալական տեղաշարժերն ուսումնասիրելիս, օգտագործել է գերեզմանատների գրառումները: Բանն այն է, որ

ԱՄՆ-ում հարստացողները պաշտոնապես իրավունք ունեն հարազատների աճյունները գերեզմանատան ավելի հեղինակավոր մասերը տեղափոխելու: Դրանց վերաբերյալ գրառումներն էլ հիմք են հանդիսացել Լեո Սրոլի համար, որ հետևություններ անի սոցիալական տեղաշարժերի վերաբերյալ:

Փաստաթղթերի հավաստիությունը և ստացված ինֆորմացիայի հուսալիությունը: Միայն փաստաթղթի տվյալների վրա հիմնվելը այնքան էլ հուսալի չէ: Ավելի ճիշտ է այդ տվյալները համեմատել այլ փաստացի աղբյուրների տվյալների հետ: Ավելորդ չէ նաև անտիպ փաստաթղթերի իսկության ստուգումը: Հատկապես պետք է զգուշանալ անձնական փաստաթղթերի հավաստիության գերազնահատումներից: Քանզի, սովորաբար, մարդ հակված է գերազնահատել կամ թերազնահատել նույնիսկ այն պատահարների նշանակությունը, որոնց ականատեսն է եղել:

Բովանդակային վերլուծության ժամանակ միևնույն տեքստը տալիս են տարբեր կողավորողների, կամ կողավորում են բազմաթիվ անգամներ, որից հետո համեմատում են արդյունքները: Եթե տարբերությունները շատ են, նշանակում է կողավորման հրահանգը անկատար է կամ հասկանալի չէ կողավորողին, կամ էլ, ի վերջո, անհրաժեշտ է վերանայել վերլուծության միավորի կատեգորիաները:

Վերջում նշենք, որ սոցիոլոգիան մեկ մեթոդի գիտություն չէ: Այժմ ավելի հաճախ է խոսվում *մեթոդական միջոցների ամբողջության*, որպես որոնելի ինֆորմացիայի վերլուծության հավաքման տեխնիկայի, միջոցների և մեթոդների համալիրի մասին:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 5-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. *Հարցազրույցը որպես սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման մեթոդ:*
2. *Հարցազրույցի տեսակները:*
3. *Շրջապատի ազդեցությունը հարցազրույցի վրա:*

4. *Հարցաթերթիկային հարցման տեսակները:*
5. *Հարցաթերթիկի ստեղծման տեխնիկական կանոններն ու հնարքները:*
6. *Հարցաթերթիկին ներկայացվող պահանջները:*
7. *Յեռախոսային հարցման յուրահատկությունները:*
8. *Փորձագիտական հարցումը որպես սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման մեթոդ:*
9. *Փորձագետների հարցման մեթոդները:*
10. *Սոցիոմետրիկական հարցման նկարագիրը:*
11. *Սոցիոմետրիկական ինֆորմացիայի յուրահատկությունները:*
12. *Սոցիոմետրիկական ինֆորմացիայի վերլուծության եղանակները:*
13. *Սոցիոլոգիական դիտումը որպես ինֆորմացիայի հավաքման մեթոդ:*
14. *Սոցիոլոգիական դիտման պլանի նկարագիրը:*
15. *Դիտման տվյալների կայունությունն ու հուսալիությունը ապահովող պայմանները:*
16. *Սոցիոլոգիական գիտափորձի էությունը և մեթոդները:*
17. *Սոցիոլոգիական գիտափորձի տեսակները:*
18. *Սոցիոլոգիական գիտափորձում վերահսկման մեթոդները:*
19. *Փաստաթղթային վերլուծության էությունը և աղբյուրները:*
20. *Փաստաթղթերի վերլուծության մեթոդները:*

ԳԼՈՒԽ 6

ԸՆՏՐԱՆՔԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ

Սովորաբար գլխավոր համախումբը կազմում են տասնյակ, հարյուր հազարավոր, երբեմն միլիոնավոր մարդիկ: Նրանց համատարած հետազոտումը կապված է ահռելի նյութական միջոցների և ժամանակի հետ: Այդ պատճառով նպատակահարմար են ընտրովի հետազոտությունները, որոնք թույլ են տալիս օպերատիվ կերպով և անհամեմատ ավելի քիչ ծախսերով, բավարար հուսալիությամբ դատել գլխավոր համախմբի մասին: Սակայն ամբողջի մասին դատելը, նրա որևէ մասի հետազոտման արդյունքների հիման վրա դառնում է վիճակագրական սխալների աղբյուր: Այդ սխալների մեծության և հետևությունների հուսալիության որոշումը սոցիոլոգիական ինֆորմացիայի վիճակագրական մշակման բաղադրամասերից է:

6.1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ԱՐՔՈՒՐՆԵՐԸ

Տարբերում են *ներկայացուցչության* և *դիտման* սխալներ: Դրանք իրենց հերթին լինում են *պատահական* և *պարբերական*:

Ներկայացուցչության սխալներն ստացվում են այն դեպքում, երբ ընտրական համախմբի հետազոտման հիման վրա հաշվարկված թվային բնութագծերը (միջին թվաբանական, միջին քառակուսային շեղում, կոռելյացիայի գործակիցներ և այլն) տարածում ենք գլխավոր համախմբի վրա:

Որքան ավելի փոփոխական է չափվող ցուցանիշը, այնքան վիճակագրական սխալը ներկայացուցչության տեսանկյունից մեծ է և՛ հակառակը:

Եթե ընտրանքը բավարար չափով է արտացոլում գլխավոր համախմբի հատկությունները, այն անվանում են *ներկայացուցչական* (ռեպրեզենտատիվ):

Անհրաժեշտ են որոշակի նախնական պայմաններ, մինչ

հետազոտման որոշակի միավորների ընտրությունը, որպեսզի ունենանք ներկայացուցչական ընտրանք.

1) գլխավոր համախմբի ցանկացած միավոր պիտի ունենա ընտրանքի մեջ ընկնելու հավասար հնարավորություն,

2) միավորների ընտրությունը գլխավոր համախմբից պետք է կատարել անկախ հետազոտվող հայտանիշից (ուղղորդված ընտրությունից խուսափելու նպատակով),

3) ընտրությունը հնարավորինս պետք է կատարվի համասեռ համախմբերից,

4) գլխավոր համախմբից ընտրված միավորների քանակը պետք է բավականաչափ մեծ լինի:

Ենթադրվում է, որ եթե ընտրական համախմբի միջին թվաբանականի (\bar{x}) և գլխավոր համախմբի միջին թվաբանականի (\bar{X}) միջև տարբերությունը ձգտում է 0-ի, ապա կարելի է օգտվել այն հետևություններից, որոնք ստացվել են ընտրական համախմբի ուսումնասիրումից:

Քանի որ (\bar{X}) – ը մեզ հայտնի չէ, չենք կարող (\bar{x}) - (\bar{X}) տարբերության ճշգրիտ գնահատականը տալ: Հետազոտողի խնդիրն է որոշել ընտրանքի սխալը, այսինքն՝ (\bar{x}) - (\bar{X}) տարբերությունը: Միաժամանակ պետք է որոշել արդյունքների հավաստիությունը, տալ դրա հավանականային գնահատականը՝ ելնելով ընտրանքի վիճակագրական բնութագծերից: Այս ամենը վերաբերում է *ներկայացուցչության պատահական սխալների*: Պատահական սխալների մեջ են մտնում նաև ընտրական միջինի այն արժեքները, որոնք կախված են գլխավոր համախմբի այս կամ այն միավորի ընտրությունից:

Ինչ վերաբերում է *ներկայացուցչության պարբերական սխալներին*, դրանք առաջանում են ոչ ճիշտ ընտրության դեպքում: Օրինակ, եթե կրթական մակարդակը մեր հետազոտության մեջ կարևոր դեր ունի և գլխավոր համախմբից անհամամասնորեն ենք ընտրություն կատարել (ենթադրենք բարձրագույն կրթություն ունեն հարցվողների 15 տոկոսը, իսկ մեր ընտրանքում կազմում են 50 տոկոս), այդ դեպքում հետևություններն ի

սկզբանե կլինեն սխալ:

Գոյություն ունեն մաս *դիտման սխալներ*: Դիտման պատահական սխալները կարող են առաջանալ և՛ գրանցողի, և՛ հարցվողի մեղքով: Պարբերական սխալները դիտման մեջ առաջանում են այն դեպքում, երբ որևէ կողմը ցանկանում է կանխակալորեն իրականությունը ներկայացնել դրական լույսի տակ:

Պատահական սխալները ներկայացուցչության և դիտման մեջ ունեն ընդհանրություններ: Երկու դեպքում էլ փոքր սխալներն ավելի հաճախ են հանդիպում, քան՝ մեծերը: Դրական շեղումները գրեթե հավասար են բացասականին: Որքան շատ դիտումներ կան, այնքան ավելի է այդ երկու սխալների տարբերությունը ձգտում 0-ի: Ըստ մեծության և ուղղության պատահական սխալները ենթարկվում են նորմալ բաշխման օրենքին (Գաուսի օրենք): Որքան սխալները մեծ են, այնքան դրանք բավարար դիտումների դեպքում ավելի հազվադեպ են հանդիպում: Հակիրճ դիտարկենք նորմալ բաշխումը:

6.2. ՆՈՐՄԱԼ ԲԱՇԽՈՒՄ


Եթե մենք ունենք x անընդհատ պատահական այնպիսի մեծություններ, որոնք կարող են ընդունել արժեքներ $-\infty$ -ից մինչև $+\infty$, ապա դրանց ի հայտ գալու հավանականությունը արտահայտվում է բանաձև (6.1)-ով.

$$P_x = \frac{1}{\sigma\sqrt{2\pi}} e^{-\frac{x^2}{2\sigma^2}} \quad (6.1),$$

որտեղ σ - ն դիսպերսիան է:

Նման պատահական մեծությունները ենթարկվում են հավանականությունների նորմալ բաշխման օրենքին: Այն ունի գրաֆիկական հետևյալ տեսքը (տես նկ. 6.1) և գրվում է.

$$y = \frac{1}{\sigma\sqrt{2\pi}} e^{-\frac{x^2}{2\sigma^2}} \quad (6.2) \text{ կամ } y = y_0 e^{-\frac{x^2}{2\sigma^2}} \quad (6.3)$$



Նկ. 6.1. Նորմալ բաշխման կոր

Որպես սկզբնական x_0 կետ, նորմալ բաշխման կորը կառուցելիս վերցվում է միջին թվաբանականը՝ \bar{x} : Դեպի աջ \bar{x} -ից մեծ արժեքներ են, դեպի ձախ՝ փոքրերը:

x_0 -ից կանգնեցրած ուղղահայացը համապատասխանում է կորի գագաթին, իսկ x -ի մյուս արժեքների համար ուղղահայացները՝ այդ արժեքների հաճախությունների: $n \rightarrow \infty$ դեպքում հաճախությունների արժեքները ձգտում են p հավանականությամբ:

Նորմալ կորը $x = 0$ կետի նկատմամբ սիմետրիկ է, քանի որ (6.2) և (6.3) բանաձևերը կախված չեն x -ի նշանից: Այդ x_0 կետում միջին թվաբանականը, մեդիանը (x_i շարքի մեջտեղի արժեքը) և մոդան (x_i շարքի ամենամեծ հաճախություն ունեցող արժեքը) համընկնում են:

Նորմալ կորը միարժեքորեն բնութագրվում է \bar{x} միջին թվաբանականով և միջին քառակուսային σ շեղումով (տես բանաձև (6.4)):

$$\sigma = \sqrt{\frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n}} \quad (6.4)$$

Միջին թվաբանականի մեծությունը չի ազդում կորի ձևի վրա: Որքան σ -ն մեծ է, այնքան կորը ավելի հարթ է և հակառակը՝ որքան σ -ն փոքր է, այնքան կորը ավելի կտրուկ, սուր տեսք ունի, այսինքն՝ ձգված է y առանցքի երկարությամբ: $\sigma = 1$ և $x = 0$ արժեքների դեպքում նորմալ կորն անվանում են նորմալ-վորված:

Ապացուցված է, որ $+3\sigma \dots -3\sigma$ միջակայքում են գտնվում ողջ համախմբի դիտումների 99.73%-ը, $+2\sigma \dots -2\sigma$ միջակայքում՝ 99.5%-ը, $+1\sigma \dots -1\sigma$ միջակայքում՝ 68.3%:

Վիճակագրության մեջ հաշվարկված են տվյալ կորի օրդինատների (y) աղյուսակները՝ x -ի յուրաքանչյուր արժեքի համար, ինչպես նաև կորի մակերեսները ցանկացած օրդինատի աջ և ձախ կողմերի համար: Օրինակ, հավանականությունը (y կամ P_x) այն բանի, որ բացարձակ մեծությամբ շեղումը \bar{x} -ից կլինի ավելի, քան 2 միջին քառակուսային շեղումը (2σ), հավասար է 0,05, իսկ ավելի, քան 3σ միջին քառակուսային շեղումը՝ 0.0027:

Ինչպես նշեցինք, նորմալ բաշխման կորը լայնորեն կիրառվում է դիտման սխալների գնահատման մեջ: Դա հնարավոր է, քանի որ նորմալ բաշխման համար մշակված են ուսումնասիրման արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական գնահատման մի շարք հնարքներ, որոնք կիրառելի են նաև նորմալին մոտ բաշխումների դեպքում:

6.3. ՎԻՃԱԿԱԳՐՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ

Սոցիոլոգիայում ցանկացած չափում մոտավոր է: Չափման սխալը (Δ) ներկայացնում է որևէ հայտանիշի չափման արդյունքի (x) և նրա իրական մեծության (X) տարբերությունը (տե՛ս բանաձև 6.5):

$$\Delta = x - X \quad (6.5)$$

Քանի որ ընտրության սխալների արժեքները կարող են

տատանվել մի ընտրանքից մյուսը, ապա մենք պետք է Δ -ն դիտարկենք իբրև պատահական փոփոխական և կազմենք նրա արժեքների հավանական գնահատականները:

Ընտրանքի հիմնական խնդիրներից մեկն այն է, որ հատկանիշների տատանման թիվը հաշվի առնելով, որոշվի համախմբի անհրաժեշտ ծավալը: Այնպես որ, թույլատրելի շեղումները պահելով տրված սահմաններում, ապահովվի ստացված տվյալների ներկայացուցչությունը:

Քննարկենք կրկնվող ընտրության համար սխալները:

Որպես չափման ճշտության ընդհանրական բնութագիր ծառայում են հետևյալ ցուցանիշները.

- միջին բացարձակ սխալը՝ $\bar{\Delta}$,
- միջին քառակուսային սխալը՝ σ_x ,
- հավանական սխալը՝ Γ_x :

Այս ցուցանիշների արժեքները յուրաքանչյուր առանձին չափման համար կարելի է ստանալ հետևյալ բանաձևերով (տե՛ս բանաձևեր (6.6), (6.7), (6.8)).

$$1. \quad \bar{\Delta} = \frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})}{n} \quad (6.6),$$

$$2. \quad \sigma_x = \sqrt{\frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n-1}} \quad (6.7),$$

$$3. \quad \Gamma_x = 0,6745 \sqrt{\frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n-1}} \approx \frac{2}{3} \sigma_x \quad (6.8):$$

Նորմալ բաշխման դեպքում սխալների կեսը բացարձակ մեծությամբ փոքր է հավանական սխալից, մյուս կեսը՝ մեծ:

Միջին թվաբանականի ճշտությունը բնորոշվում է.

1. միջին թվաբանականի միջին բացարձակ սխալով (տե՛ս բանաձև (6.9)).

$$\overline{\Delta}_x = \frac{\overline{\Delta}}{\sqrt{n}} \quad (6.9),$$

2. միջին թվաբանականի միջին քառակուսային սխալով (տե՛ս բանաձև (6.10)).

$$\sigma_x = \frac{\sigma_x}{\sqrt{n}} \quad (6.10),$$

3. միջին թվաբանականի հավանական սխալով (տե՛ս բանաձև (6.11)).

$$\Gamma_x = \frac{2}{3} \sigma_x \quad (6.11):$$

Նորմալ բաշխման դեպքում $\overline{\Delta}_x = 0,8\sigma_x$ կամ $\sigma_x = 1,25\overline{\Delta}_x$:

Վերը նշված բանաձևերով հաշվարկվում են միջին ընտրության սխալի տեսական արժեքները: Սակայն ընտրության իրական սխալը կոնկրետ դիտարկումների դեպքում կարող է մեծ կամ փոքր լինել բացարձակ միջին կամ միջին քառակուսային սխալից:

Ինչպես հետևում է հավանականության տեսությունից, միջին ընտրության նորմալ բաշխման դեպքում այն բանի հավանականությունը, որ իրական սխալը չի գերազանցում միջին բացարձակ սխալը, կազմում է 0.576, միջին քառակուսային սխալը՝ 0,683, կրկնակի միջին քառակուսային սխալը՝ 0,954, եռակի՝ 0,997, քառակի՝ 0,99993: 0,997 հավանականությունն ընդունվում է որպես լրիվ (կամ գործնական) հավաստիություն: Դա նշանակում է, որ կատարելով մի որևէ հատկանիշի ընտրանքային դիտարկումներ, մենք կարող ենք սպասել, որ 1000 փորձարկման սերիայից միայն 3 դեպքում փաստարկման սխալը կարող է

դուրս գալ $m = 3\sigma_x = \frac{3\sigma_x}{n}$ սահմաններից:

Ընդհանրապես

$$m = t\sigma_x \quad (6.12),$$

որտեղ՝ $t = 1, 2, 3, \dots$

տ-ը կոչվում է *թույլատրելի սխալ*:

Քանի որ $\sigma_x = \frac{\sigma_x}{\sqrt{n}}$, ապա՝ $m = t \frac{\sigma_x}{\sqrt{n}}$: Երկու կողմից քառա-

կուսի բարձրացնելով՝ կստանանք՝ $m^2 = t^2 \frac{\sigma_x^2}{n}$: Այստեղից

$$n = \frac{t^2 \sigma_x^2}{m^2} :$$

Տվյալ բանաձևը կոչվում է ընտրանքի ծավալի հաշվման բանաձև: Նրանով որոշվում է դիտումների այն քանակությունը, որն անհրաժեշտ է կատարել, որպեսզի սխալը դուրս չգա թույլատրելիության m սահմաններից, եթե հյատնի է σ_x տատանման չափը (միջին քառակուսային շեղումը):

Ըստ բանաձևի ընտրանքի ծավալը ուղիղ համեմատական է ցրման չափի քառակուսուն և հակադարձ համեմատական է թույլատրելի սխալի քառակուսուն:

Քանի որ, սովորաբար, մեզ հայտնի չեն ոչ ընտրանքային և ոչ էլ գլխավոր համախմբերի միջին քվաբանականները կամ միջին քառակուսային շեղումները, այդ պատճառով վերը բերված բանաձևերից հնարավոր չէ օգտվել: Նման դեպքերում դիմում են *բավարար մեծ քվերի աղյուսակի* օգնությանը (տես՝ աղյուսակներ 6.1, 6.2, 6.3, 6.4):

Տվյալ աղյուսակները կազմված են այն բանաձևի հիման վրա, որով ապացուցվել է մեծ քվերի օրենքը: Ըստ որում, համարվում է, որ գլխավոր համախմբի ծավալը չի ազդում ընտրանքի ծավալի վրա: Տվյալ աղյուսակներում տրված հավանականության մեծության (որով դատում են տվյալների հուսալիության մասին) (P), թույլատրելի սխալի (m) և պատահարի առաջացման հավանականության (p) հիման վրա որոշված են ընտրանքի ծավալները (n), կամ տվյալ n -ի և m -ի հիման վրա՝ P -երը և այլն:

Աղյուսակ 6.1. Բավարար մեծ բվերի աղյուսակ

Դիտումների քանակի որոշումը ըստ տվյալ P հավանականության մեծության և տվյալ $\hat{O}_{թույլ}$ թույլատրելի սխալի՝ p իրադարձության հավանականության տարբեր արժեքների դեպքում

| p | $\hat{O}_{թույլ}$ | P | | | | | |
|-----|-------------------|------|------|------|-------|-------|-------|
| | | 0,85 | 0,90 | 0,95 | 0,99 | 0,995 | 0,999 |
| 0,1 | 0,05 | 74 | 97 | 138 | 237 | 283 | 389 |
| | 0,04 | 116 | 152 | 216 | 373 | 443 | 609 |
| | 0,03 | 207 | 270 | 384 | 663 | 787 | 1082 |
| | 0,02 | 466 | 608 | 864 | 1492 | 1772 | 2436 |
| | 0,01 | 1865 | 2435 | 3457 | 5971 | 7108 | 9745 |
| 0,2 | 0,05 | 132 | 173 | 245 | 434 | 504 | 692 |
| | 0,04 | 207 | 270 | 384 | 663 | 787 | 1082 |
| | 0,03 | 368 | 480 | 682 | 1179 | 1400 | 1924 |
| | 0,02 | 828 | 1082 | 1536 | 2653 | 3151 | 4331 |
| | 0,01 | 3315 | 4328 | 6146 | 10615 | 12607 | 17324 |
| 0,3 | 0,05 | 174 | 227 | 322 | 557 | 661 | 909 |
| | 0,04 | 271 | 355 | 504 | 870 | 1034 | 1421 |
| | 0,03 | 483 | 631 | 896 | 1548 | 1838 | 2556 |
| | 0,02 | 1087 | 1420 | 2016 | 3483 | 4136 | 5684 |
| | 0,01 | 4351 | 5681 | 8067 | 13933 | 16547 | 22738 |
| 0,4 | 0,05 | 198 | 259 | 368 | 636 | 756 | 1039 |
| | 0,04 | 310 | 405 | 576 | 995 | 1181 | 1624 |
| | 0,03 | 552 | 721 | 1024 | 1769 | 2101 | 2887 |
| | 0,02 | 1243 | 1623 | 2304 | 3980 | 4727 | 6497 |
| | 0,01 | 4973 | 6493 | 9219 | 15923 | 18911 | 25987 |
| 0,5 | 0,05 | 207 | 270 | 384 | 663 | 787 | 1082 |
| | 0,04 | 323 | 422 | 600 | 1036 | 1231 | 1691 |
| | 0,03 | 575 | 751 | 1067 | 1843 | 2188 | 3007 |
| | 0,02 | 1295 | 1691 | 2400 | 4146 | 4924 | 6767 |
| | 0,01 | 5180 | 6764 | 9603 | 16587 | 19699 | 27069 |

Աղյուսակ 6.2. Բավարար մեծ թվերի աղյուսակ

Դիտումների քանակի որոշումը ըստ տվյալ P հավանականության մեծության և տվյալ $\hat{\sigma}_{\text{թույլ}}$ թույլատրելի սխալի

| P | $\hat{\sigma}_{\text{թույլ}}$ | | | | | | | | | |
|-------|-------------------------------|------|------|------|------|------|------|------|------|-------|
| | 0,10 | 0,09 | 0,08 | 0,07 | 0,06 | 0,05 | 0,04 | 0,03 | 0,02 | 0,01 |
| 0,75 | 33 | 40 | 51 | 67 | 91 | 132 | 206 | 367 | 827 | 3308 |
| 0,80 | 41 | 50 | 64 | 83 | 114 | 164 | 256 | 456 | 1026 | 4105 |
| 0,85 | 51 | 63 | 80 | 105 | 143 | 207 | 323 | 575 | 1295 | 5180 |
| 0,90 | 67 | 83 | 105 | 138 | 187 | 270 | 422 | 751 | 1690 | 6763 |
| 0,91 | 71 | 88 | 112 | 146 | 199 | 287 | 449 | 798 | 1796 | 7185 |
| 0,92 | 76 | 94 | 119 | 156 | 212 | 306 | 478 | 851 | 1915 | 7662 |
| 0,93 | 82 | 101 | 128 | 167 | 227 | 328 | 512 | 911 | 2051 | 8207 |
| 0,94 | 88 | 109 | 138 | 180 | 245 | 353 | 552 | 982 | 2210 | 8843 |
| 0,95 | 96 | 118 | 150 | 195 | 266 | 384 | 600 | 1067 | 2400 | 9603 |
| 0,96 | 105 | 130 | 164 | 215 | 292 | 421 | 659 | 1171 | 2636 | 10544 |
| 0,965 | 111 | 137 | 173 | 226 | 308 | 444 | 694 | 1234 | 2778 | 11112 |
| 0,970 | 117 | 145 | 183 | 240 | 327 | 470 | 735 | 1308 | 2943 | 11773 |
| 0,975 | 125 | 155 | 196 | 256 | 348 | 502 | 784 | 1395 | 3139 | 12559 |
| 0,980 | 135 | 167 | 211 | 276 | 375 | 541 | 845 | 1503 | 3382 | 13529 |
| 0,985 | 147 | 182 | 231 | 301 | 410 | 591 | 924 | 1643 | 3697 | 14791 |
| 0,990 | 165 | 204 | 259 | 338 | 460 | 663 | 1036 | 1843 | 4146 | 16587 |
| 0,991 | 170 | 210 | 266 | 348 | 473 | 682 | 1066 | 1895 | 4264 | 17057 |
| 0,992 | 175 | 217 | 274 | 358 | 488 | 703 | 1098 | 1953 | 4395 | 17583 |
| 0,993 | 181 | 224 | 284 | 371 | 505 | 727 | 1136 | 2020 | 4545 | 18182 |
| 0,994 | 188 | 233 | 294 | 385 | 524 | 755 | 1179 | 2097 | 4718 | 18875 |
| 0,995 | 196 | 243 | 307 | 402 | 547 | 787 | 1231 | 2188 | 4924 | 19698 |
| 0,996 | 207 | 255 | 323 | 422 | 575 | 828 | 1294 | 2301 | 5177 | 20709 |
| 0,997 | 220 | 271 | 344 | 449 | 611 | 880 | 1376 | 2446 | 5504 | 22018 |
| 0,998 | 238 | 294 | 373 | 487 | 663 | 954 | 1492 | 2652 | 5968 | 23873 |
| 0,999 | 270 | 334 | 422 | 552 | 751 | 1082 | 1691 | 3007 | 6767 | 27069 |

Աղյուսակ 6.3. Բավարար մեծ քվերի աղյուսակ

Քիվանականության մեծության որոշումը ըստ դիտումների տվյալ n քվի և $\Delta_{թույլ}$ տվյալ թույլատրելի սխալի

| n | $\Delta_{թույլ}$ | | | | | | | | | |
|-------|------------------|------|------|------|------|------|------|------|------|------|
| | 0,10 | 0,09 | 0,08 | 0,07 | 0,06 | 0,05 | 0,04 | 0,03 | 0,02 | 0,01 |
| 50 | 843 | 797 | 742 | 678 | 604 | 520 | 428 | 329 | 223 | 112 |
| 60 | 879 | 837 | 785 | 712 | 647 | 561 | 464 | 358 | 243 | 123 |
| 70 | 906 | 868 | 819 | 758 | 685 | 597 | 497 | 384 | 262 | 133 |
| 80 | 926 | 893 | 848 | 790 | 717 | 629 | 526 | 408 | 279 | 142 |
| 90 | 942 | 912 | 871 | 816 | 745 | 657 | 552 | 421 | 296 | 150 |
| 100 | 954 | 928 | 890 | 838 | 770 | 683 | 576 | 452 | 310 | 159 |
| 120 | 972 | 951 | 920 | 875 | 811 | 727 | 619 | 489 | 339 | 173 |
| 140 | 982 | 967 | 942 | 902 | 844 | 763 | 656 | 522 | 366 | 187 |
| 160 | 989 | 977 | 957 | 923 | 871 | 794 | 688 | 552 | 387 | 200 |
| 180 | 993 | 984 | 968 | 940 | 893 | 820 | 717 | 579 | 408 | 211 |
| 200 | 995 | 989 | 976 | 952 | 910 | 843 | 742 | 604 | 428 | 223 |
| 250 | 998 | 996 | 989 | 973 | 942 | 886 | 794 | 657 | 473 | 248 |
| 300 | 999 | 998 | 994 | 985 | 962 | 917 | 834 | 701 | 511 | 271 |
| 350 | | 999 | 997 | 991 | 975 | 939 | 865 | 738 | 546 | 292 |
| 400 | | | 999 | 995 | 984 | 954 | 890 | 770 | 576 | 311 |
| 500 | | | | 998 | 993 | 975 | 926 | 820 | 629 | 345 |
| 600 | | | | 999 | 997 | 986 | 950 | 858 | 673 | 376 |
| 700 | | | | | 998 | 992 | 966 | 887 | 710 | 403 |
| 800 | | | | | 999 | 995 | 976 | 910 | 742 | 428 |
| 900 | | | | | | 997 | 984 | 928 | 770 | 451 |
| 1000 | | | | | | 998 | 989 | 942 | 794 | 473 |
| 1500 | | | | | | | 998 | 980 | 879 | 561 |
| 2000 | | | | | | | | 993 | 926 | 629 |
| 5000 | | | | | | | | | 995 | 843 |
| 10000 | | | | | | | | | | 954 |

Աղյուսակ 6.4. Բավարար մեծ քվերի աղյուսակ

$\Delta_{\text{քույլ}}$ քույլատրելի սխալի որոշումը ըստ դիտումների տվյալ n քվի և P հավանականության տվյալ մեծության ($\Delta_{\text{քույլ}}$ արժեքները բազմապատկված են 100-ով)

| n | P | | | | | | | | | |
|-------|------|------|------|------|------|------|------|------|-------|-------|
| | 0,80 | 0,85 | 0,90 | 0,95 | 0,96 | 0,97 | 0,98 | 0,99 | 0,995 | 0,999 |
| 50 | 9,1 | 10,2 | 11,6 | 13,9 | 14,5 | 15,3 | 16,4 | 18,2 | 19,8 | 23,3 |
| 60 | 8,3 | 9,3 | 10,6 | 12,7 | 13,3 | 14,0 | 15,0 | 16,6 | 18,1 | 21,2 |
| 70 | 7,7 | 8,6 | 9,8 | 11,7 | 12,3 | 13,0 | 13,9 | 15,4 | 16,8 | 19,7 |
| 80 | 7,2 | 8,0 | 9,2 | 11,0 | 11,5 | 12,1 | 13,0 | 14,4 | 15,7 | 18,4 |
| 90 | 6,8 | 7,6 | 8,7 | 10,3 | 10,8 | 11,4 | 12,3 | 13,6 | 14,8 | 17,3 |
| 100 | 6,4 | 7,2 | 8,2 | 9,8 | 10,3 | 10,9 | 11,6 | 12,9 | 14,0 | 16,5 |
| 120 | 5,8 | 6,6 | 7,5 | 8,9 | 9,4 | 9,9 | 10,6 | 11,8 | 12,8 | 15,0 |
| 140 | 5,4 | 6,1 | 7,0 | 8,3 | 8,7 | 9,2 | 9,8 | 10,9 | 11,9 | 13,9 |
| 160 | 5,1 | 5,7 | 6,5 | 7,7 | 8,1 | 8,6 | 9,2 | 10,2 | 11,1 | 13,0 |
| 180 | 4,8 | 5,4 | 6,1 | 7,3 | 7,7 | 8,1 | 8,7 | 9,6 | 10,5 | 12,3 |
| 200 | 4,5 | 5,1 | 5,8 | 6,9 | 7,3 | 7,7 | 8,2 | 9,1 | 9,9 | 11,6 |
| 250 | 4,1 | 4,6 | 5,2 | 6,2 | 6,5 | 6,9 | 7,4 | 8,1 | 8,9 | 10,4 |
| 300 | 3,7 | 4,2 | 4,7 | 5,7 | 5,9 | 6,3 | 6,7 | 7,4 | 8,1 | 9,5 |
| 350 | 3,4 | 3,8 | 4,4 | 5,2 | 5,5 | 5,8 | 6,2 | 6,9 | 7,5 | 8,8 |
| 400 | 3,2 | 3,6 | 4,1 | 4,9 | 5,1 | 5,4 | 5,8 | 6,4 | 7,0 | 8,2 |
| 500 | 2,9 | 3,2 | 3,7 | 4,4 | 4,6 | 4,9 | 5,2 | 5,8 | 6,3 | 7,4 |
| 600 | 2,6 | 2,9 | 3,4 | 4,0 | 4,2 | 4,4 | 4,7 | 5,3 | 5,7 | 6,7 |
| 700 | 2,4 | 2,7 | 3,1 | 3,7 | 3,9 | 4,1 | 4,4 | 4,9 | 5,3 | 6,2 |
| 800 | 2,3 | 2,5 | 2,9 | 3,5 | 3,6 | 3,8 | 4,1 | 4,6 | 5,0 | 5,8 |
| 900 | 2,1 | 2,4 | 2,7 | 3,3 | 3,4 | 3,6 | 3,9 | 4,3 | 4,7 | 5,5 |
| 1000 | 2,0 | 2,3 | 2,6 | 3,1 | 3,2 | 3,4 | 3,7 | 4,1 | 4,4 | 5,2 |
| 1500 | 1,7 | 1,9 | 2,1 | 2,5 | 2,7 | 2,8 | 3,0 | 3,3 | 3,6 | 4,2 |
| 2000 | 1,4 | 1,6 | 1,8 | 2,2 | 2,3 | 2,4 | 2,6 | 2,9 | 3,1 | 3,7 |
| 5000 | 0,9 | 1,0 | 1,2 | 1,4 | 1,5 | 1,5 | 1,6 | 1,8 | 2,0 | 2,3 |
| 10000 | 0,6 | 0,7 | 0,8 | 1,0 | 1,0 | 1,1 | 1,2 | 1,3 | 1,4 | 1,6 |

Թույլատրելի սխալը սովորաբար տրվում է 0,1-ի և 0,005-ի սահմաններում: Իսկ հուսալիությունն ընդունելի է համարվում $p = 0,95$ հավանականության դեպքում: Այն կարող է ավելի բարձր լինել, օրինակ 0,99, 0,995, 0,999, երբ հուսալիության պահանջը ավելի մեծ է:

Նշենք նաև, որ ինչպես միջին թվաբանականի համար քըն-նարկեցինք, այնպես էլ կարելի է դիտարկել ճշտության աստիճանի (կամ թույլատրելի սխալի) խնդիրը միջին քառակուսային շեղման, կոռելյացիայի գործակցի համար և այլն:

Չատկանիշի որևէ մասի համար, երբ ցանկանում ենք որոշել ընտրանքի ծավալը, օգտագործվում է $n = \frac{t^2 pq}{m^2}$ բանաձևը, որտեղ $pq = \sigma^2$ ՝ այլընտրանքային («այո»-«ոչ», «կա»-«չկա») հատկանիշների համար:

Ընտրանքի ծավալը մեծանում է հատկանիշի դիսպերսիայի և հետևության հուսալիության մեծացմամբ, որն արտահայտվում է p հավանականությամբ ($p = 0,954$ -ի դեպքում $t = 2$ և $p = 0,997$ $t = 3$):

Բոլոր բերված բանաձևերը կիրառելի են պատահական կրկնվող ընտրանքի համար: Պատահական չկրկնվող ընտրանքի համար բանաձևերը ունեն հետևյալ տեսքը.

$$n = \frac{Nt^2\sigma^2}{Nm^2 + t^2\sigma^2} \quad (6.13)$$

$$n = \frac{Nt^2pq}{Nm^2 + t^2pq} \quad (6.14)$$

(6.13) բանաձևով կարելի է հաշվել ընտրական համախմբի ծավալն այն դեպքում, երբ ցանկանում ենք որոշել հատկանիշի միջին արժեքը գլխավոր համախմբում: (6.14)-ի օգնությամբ որոշում ենք հատկանիշի մասը գլխավոր համախմբում:

Եթե համենատենք այս երկու շարք բանաձևերը.

$$n = \frac{t^2 \sigma^2}{m^2} \quad \text{և} \quad n = \frac{Nt^2 \sigma^2}{Nm^2 + t^2 \sigma^2},$$

$$n = \frac{t^2 pq}{m^2} \quad \text{և} \quad n = \frac{Nt^2 pq}{Nm^2 + t^2 pq},$$

տեսնում ենք, որ չկրկնվող ընտրանքի բանաձևերում հայտարարը ավելի մեծ է, քան կրկնվողում: Դա նշանակում է, որ չկրկնվող ընտրանքի անհրաժեշտ ծավալը միշտ փոքր է կրկնվող ընտրանքի անհրաժեշտ ծավալից (միևնույն p -ի, m -ի և σ^2 դեպքում): Այսպիսով, եթե մենք իրագործում ենք չկրկնվող ընտրություն, բայց հաշվարկները կատարում ենք կրկնվողի բանաձևերով, դրանով ապահովում ենք տվյալների հուսալիության որոշ պաշար:

Այն դեպքում, երբ p և q հայտնի չեն (ի դեպ $p = q - 1$), վերցնում են նրանց ամենամեծ արժեքը. $p = 0,5$ և $q = 0,5$: Այս դեպքում բանաձևում դրվում է ամենամեծ արժեքը՝ $pq = 0,25$: Դրանով ևս ապահովվում է հուսալիության որոշ պաշար:

6.4. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

Մենք քննարկեցինք բաժնի սկզբում շարադրված այն 4 պահանջներից մեկը, որոնց բավարարումն ապահովում է ընտրանքի ներկայացուցչությունը: Այն է՝ բավարար քանակությամբ դիտումների ապահովումը:

Այժմ դիտարկենք միավորները ճիշտ ընտրելու պայմանները:

Տարբերում են ընտրանքի հետևյալ հիմնական տիպերը. **ըստ բնույթի պատահական** (կրկնվող և չկրկնվող), **տիպային** (տեղայնացված), **մեխանիկական և սերիական**:

Ըստ բնույթի պատահականը այն ընտրանքն է, ուր միավորները պատահականորեն ընտրում են այնպես, որ յուրաքանչ-յուր միավոր ընտրվելու գրեթե հավասար հնարավորություն ու-

նենա: Ըստ որում ենթադրվում է, որ համախումբը համասեռ է:

Պատահական ընտրանքի դեպքում համախմբի բոլոր միավորները համարակալում են և վիճակագրության սկզբունքով (պատահաբար) վերցնում են այնքան համարակալված քարտ, որքան որ կազմում է ընտրանքի ծավալը: *Կրկնվող ընտրանքի* դեպքում վերցված քարտը վերադարձվում է ընդհանուրի մեջ: Դրանով ապահովվում է յուրաքանչյուր միավորի ընտրվելու հավասար հնարավորությունը: *Չկրկնվողի դեպքում* վերցված քարտը այլևս ետ չի վերադարձվում: Դրանով մնացած քարտերի ընտրելու հնարավորությունը փոքր-ինչ մեծանում է:

Ընտրելու պատահականությունն ապահովելու մեկ ուրիշ եղանակ է *պատահական թվերի աղյուսակը* (տես՝ աղյուսակ 6.5):

Այս աղյուսակը կազմված է 90.000-ից մինչև 100.000 թվերի լոգարիթմների (որոնք 20 նիշանոց են) 16-ից 19 նիշերի հիման վրա: Կարող են աղյուսակներ կազմվել ուրիշ հիմունքներով:

Ըստ այս եղանակի՝ կազմվում է գլխավոր համախմբի համարակալված ցուցակը (1-ից մինչև N), որի հետ պատահական թվերի աղյուսակը որևէ կապ չունի: Այնուհետև ընտրանքի n միավորները (օրինակ՝ ենթադրենք 5.000 հոգուց ընտրելու ենք 400-ը) ընտրվում են այդ աղյուսակից՝ ցանկացած համարից սկսած: Ըստ որի, եթե աղյուսակի թիվն ավելի մեծ է, քան 400-ը, վերցվում է այդ թվերի տարբերությունը (օրինակ՝ 551–400=151): Աղյուսակից թվերը կարելի է վերցնել ցանկացած հերթականությամբ:

Չկրկնվող ընտրանքների միջին քառակուսային սխալներն ավելի փոքր են, քան նույն ծավալի կրկնվող ընտրանքի սխալները: Կրկնվող ընտրանքի վիճակագրական սխալների բանաձևերից օգտվելը մեծացնում է չկրկնվող ընտրանքով ստացված արդյունքների հուսալիությունը: Սակայն, եթե n-ը և N-ը մեծությամբ մոտ են, այդ դեպքում կրկնվող և չկրկնվող ընտրանքների սխալների տարբերությունները զգալի են: Սովորաբար $n \ll N$, այդ պատճառով կրկնվող ընտրանքի սխալների բանաձևերի օգտագործումը նպատակահարմար չէ:

Աղյուսակ 6.5. Պատահական բվերի աղյուսակ

| (1) | (2) | (3) | (4) | (5) | (6) | (7) | (8) | (9) | (10) | (11) | (12) | (13) | (14) | (15) | (16) | (17) | (18) | (19) | (20) |
|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| 1534 | 7106 | 2836 | 7873 | 5574 | 7545 | 7590 | 5574 | 1202 | 7712 | 5489 | 5583 | 3156 | 0835 | 1988 | 3912 | 0938 | 7460 | 0869 | 4420 |
| 6128 | 8993 | 4102 | 2551 | 0330 | 2358 | 6427 | 7067 | 9325 | 2454 | 3522 | 0935 | 7877 | 5665 | 7020 | 9255 | 7379 | 7124 | 7878 | 5544 |
| 6047 | 8566 | 8644 | 9343 | 9287 | 6751 | 3500 | 8754 | 2913 | 1258 | 7555 | 7579 | 2550 | 2487 | 9477 | 0864 | 2349 | 1012 | 8250 | 2633 |
| 0806 | 5201 | 5705 | 7355 | 1448 | 9562 | 7514 | 9205 | 0402 | 2427 | 5759 | 3554 | 5080 | 9074 | 7001 | 6249 | 3224 | 6368 | 9102 | 2672 |
| 9915 | 8274 | 4525 | 5695 | 5752 | 9630 | 7172 | 6988 | 0227 | 4264 | 6303 | 6895 | 3371 | 3196 | 7231 | 2918 | 7380 | 0438 | 7547 | 2644 |
| 2882 | 7158 | 4341 | 3463 | 1178 | 5786 | 1173 | 0670 | 0820 | 5067 | 7351 | 5634 | 5323 | 2623 | 7803 | 8374 | 2191 | 0464 | 0696 | 9529 |
| 9213 | 1223 | 4388 | 9760 | 6691 | 6861 | 8214 | 8813 | 0611 | 3131 | 7068 | 7803 | 8832 | 5119 | 6350 | 0120 | 5026 | 3684 | 5657 | 0304 |
| 8410 | 9836 | 3899 | 3683 | 1253 | 1683 | 6988 | 9978 | 8026 | 6751 | 3613 | 1428 | 1796 | 8447 | 0503 | 5654 | 3254 | 7336 | 9536 | 1944 |
| 9974 | 2362 | 2103 | 4326 | 3825 | 9070 | 6187 | 2721 | 1489 | 4216 | 5143 | 4534 | 2105 | 0368 | 7890 | 2473 | 4240 | 8652 | 9435 | 1422 |
| 3402 | 8162 | 8226 | 0782 | 3364 | 7871 | 4500 | 5598 | 9421 | 3816 | 9815 | 5144 | 7649 | 8638 | 3167 | 8070 | 5345 | 4865 | 2456 | 5708 |
| 8188 | 6596 | 1492 | 2139 | 8823 | 6878 | 0613 | 7161 | 0241 | 3834 | 5780 | 1277 | 6316 | 1013 | 2867 | 9938 | 3930 | 3203 | 5696 | 1769 |
| 3825 | 7020 | 1124 | 7483 | 9155 | 4919 | 3209 | 5959 | 2364 | 2555 | 1187 | 0951 | 5991 | 5245 | 5700 | 5564 | 7352 | 0891 | 4249 | 6568 |
| 9801 | 8788 | 6338 | 5899 | 3309 | 0807 | 0968 | 0539 | 4205 | 8257 | 4184 | 2179 | 4554 | 9083 | 2254 | 2435 | 2965 | 5154 | 1209 | 7069 |
| 5603 | 1251 | 6352 | 6467 | 0231 | 3556 | 2569 | 9446 | 4174 | 9219 | 2916 | 2972 | 9885 | 0275 | 0144 | 8034 | 8122 | 3213 | 7666 | 0230 |
| 0714 | 3757 | 0378 | 8266 | 8864 | 1374 | 6687 | 1221 | 0678 | 3714 | 5524 | 1341 | 9860 | 6565 | 6981 | 9842 | 0171 | 2284 | 2707 | 3008 |
| 4617 | 5652 | 7627 | 0372 | 8151 | 3668 | 1991 | 4402 | 2124 | 0016 | 0146 | 5291 | 2354 | 5694 | 0377 | 5336 | 6460 | 9585 | 3415 | 2358 |
| 6789 | 6279 | 7306 | 1856 | 7028 | 9043 | 7161 | 7526 | 6913 | 6393 | 4920 | 2826 | 5238 | 5402 | 7937 | 1993 | 4332 | 2327 | 6875 | 5230 |
| 6705 | 4978 | 8621 | 1790 | 4433 | 6298 | 0854 | 9127 | 3445 | 1111 | 7978 | 1947 | 6380 | 3425 | 7267 | 7285 | 1130 | 7722 | 0164 | 8573 |
| 3840 | 1086 | 0774 | 9241 | 9297 | 4233 | 1739 | 7734 | 0119 | 2436 | 7453 | 0653 | 3645 | 7497 | 5969 | 8682 | 4191 | 2976 | 0361 | 9334 |
| 7662 | 3939 | 2965 | 3273 | 0551 | 1645 | 8477 | 1877 | 5327 | 8629 | 1473 | 6938 | 4899 | 5348 | 1641 | 3652 | 0852 | 5296 | 4538 | 4456 |
| 7639 | 2868 | 4391 | 2950 | 7122 | 7325 | 9727 | 0080 | 7464 | 7947 | 8162 | 8797 | 8000 | 4707 | 1880 | 9660 | 8446 | 1883 | 8768 | 0881 |
| 3237 | 7203 | 4246 | 7329 | 7936 | 0065 | 4146 | 0866 | 4916 | 8648 | 5645 | 4219 | 0807 | 3301 | 4279 | 4168 | 4305 | 9937 | 3120 | 5547 |
| 3917 | 6271 | 1721 | 5469 | 1914 | 8653 | 0387 | 2756 | 6073 | 8984 | 2042 | 1192 | 1175 | 8851 | 6432 | 4635 | 5757 | 6656 | 1660 | 5389 |
| 9138 | 9395 | 6005 | 6423 | 7977 | 1873 | 7103 | 4267 | 9316 | 7206 | 5470 | 7702 | 6958 | 9080 | 5925 | 8519 | 0127 | 9233 | 2452 | 7341 |
| 8358 | 5896 | 6286 | 9242 | 5040 | 8509 | 2941 | 3913 | 3028 | 1563 | 4045 | 1730 | 6005 | 1704 | 0345 | 3275 | 4738 | 4862 | 2556 | 8333 |
| 1030 | 5094 | 1745 | 2975 | 2018 | 7340 | 6547 | 0207 | 5587 | 0300 | 5880 | 1257 | 6163 | 4439 | 7276 | 6353 | 6912 | 0731 | 9033 | 5294 |

Աղյուսակ 6.5. (շարունակություն)

| (1) | (2) | (3) | (4) | (5) | (6) | (7) | (8) | (9) | (10) | (11) | (12) | (13) | (14) | (15) | (16) | (17) | (18) | (19) | (20) |
|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| 6606 | 6305 | 1564 | 6668 | 7822 | 7142 | 6564 | 1659 | 5369 | 1659 | 9083 | 4260 | 5277 | 4998 | 4298 | 5204 | 3965 | 4028 | 8936 | 5148 |
| 4533 | 8841 | 4922 | 9365 | 1361 | 6692 | 1633 | 6774 | 0747 | 3881 | 1762 | 8713 | 1189 | 1090 | 8909 | 7273 | 3513 | 1935 | 9321 | 4820 |
| 4258 | 2012 | 0992 | 0106 | 1542 | 4760 | 0392 | 4057 | 0092 | 5203 | 2023 | 2589 | 1740 | 0424 | 8924 | 0005 | 1969 | 1636 | 7237 | 1227 |
| 5224 | 5128 | 8949 | 7928 | 7267 | 0116 | 1476 | 2009 | 1772 | 3860 | 7965 | 3855 | 4765 | 0703 | 1678 | 0841 | 7543 | 0308 | 9732 | 1289 |
| 6872 | 7192 | 7962 | 1867 | 7437 | 1526 | 3516 | 9129 | 4153 | 8084 | 7960 | 0480 | 8098 | 9625 | 4819 | 7219 | 7241 | 5128 | 3853 | 1921 |
| 8638 | 8407 | 7198 | 0956 | 0950 | 7753 | 5144 | 3914 | 5596 | 6104 | 9292 | 0426 | 9573 | 4903 | 5916 | 6576 | 8368 | 3270 | 6641 | 0033 |
| 9958 | 7172 | 5822 | 4224 | 6701 | 7559 | 4985 | 4856 | 4461 | 6147 | 0867 | 1656 | 7016 | 4220 | 2533 | 6345 | 8227 | 1904 | 5138 | 2537 |
| 0265 | 3086 | 2996 | 0699 | 3584 | 9702 | 1665 | 0446 | 9107 | 6437 | 0505 | 2127 | 8255 | 5276 | 2233 | 3956 | 4118 | 8199 | 6380 | 6340 |
| 8887 | 5441 | 7878 | 9404 | 0487 | 2939 | 3805 | 9172 | 7887 | 5197 | 6295 | 9795 | 1112 | 5761 | 2575 | 6837 | 3336 | 9322 | 7403 | 8345 |
| 5552 | 3529 | 9627 | 9362 | 6298 | 6021 | 0024 | 9520 | 9154 | 0643 | 6323 | 2615 | 3410 | 3365 | 1117 | 2417 | 3176 | 2434 | 5240 | 5455 |
| 9383 | 6640 | 7394 | 9592 | 9903 | 7699 | 8939 | 9972 | 1257 | 0994 | 8672 | 8536 | 2966 | 5773 | 5412 | 8117 | 0930 | 4697 | 6919 | 4569 |
| 9903 | 4059 | 0332 | 9109 | 0182 | 6721 | 9163 | 9008 | 2542 | 4461 | 1422 | 5507 | 7596 | 0670 | 3013 | 1351 | 3886 | 3268 | 9469 | 2584 |
| 6530 | 5070 | 7589 | 6928 | 6014 | 1832 | 9307 | 5107 | 1354 | 9257 | 2653 | 1472 | 5113 | 5735 | 1469 | 9545 | 9331 | 5303 | 9914 | 6394 |
| 8679 | 8953 | 8310 | 2060 | 6277 | 1773 | 7979 | 6741 | 6033 | 3588 | 0438 | 4376 | 3328 | 8649 | 8327 | 0110 | 4549 | 7955 | 5275 | 2890 |
| 5765 | 4987 | 1639 | 3512 | 9843 | 5286 | 3786 | 2384 | 4919 | 5661 | 2851 | 2157 | 0047 | 7085 | 1129 | 1460 | 6821 | 8373 | 2572 | 8962 |
| 7198 | 2447 | 6716 | 0291 | 5585 | 1106 | 5330 | 0504 | 6346 | 3679 | 7962 | 2753 | 3077 | 8718 | 7418 | 8004 | 3425 | 3706 | 8822 | 1494 |
| 2385 | 0605 | 2678 | 1399 | 2371 | 7968 | 1212 | 9569 | 8650 | 5841 | 3837 | 4098 | 0220 | 1217 | 4732 | 0150 | 1637 | 1097 | 1040 | 7372 |
| 8732 | 8732 | 8660 | 5836 | 9065 | 4603 | 0029 | 8042 | 0159 | 0345 | 8542 | 4126 | 9274 | 2251 | 0607 | 4301 | 8730 | 7690 | 6235 | 3477 |
| 1642 | 6094 | 3795 | 2600 | 4532 | 9740 | 0376 | 4384 | 9203 | 5387 | 0139 | 0765 | 8039 | 9484 | 2577 | 7859 | 1976 | 0623 | 1418 | 6685 |
| 4514 | 1956 | 7212 | 0687 | 7632 | 2106 | 0846 | 7055 | 4106 | 9157 | 6687 | 1943 | 4307 | 0579 | 8171 | 8224 | 8641 | 7034 | 3595 | 3875 |
| 8744 | 5580 | 8038 | 9087 | 7222 | 0424 | 0028 | 4511 | 3191 | 9846 | 6242 | 5582 | 5872 | 3197 | 4919 | 2792 | 5991 | 4058 | 9769 | 1918 |
| 3729 | 6225 | 5397 | 6790 | 2157 | 3414 | 6509 | 5204 | 4779 | 5641 | 6859 | 9606 | 0522 | 4993 | 0345 | 8958 | 1289 | 8825 | 6941 | 7685 |
| 8858 | 3147 | 8110 | 2783 | 1290 | 9796 | 8873 | 7585 | 7185 | 4726 | 6590 | 1932 | 6043 | 3623 | 1973 | 4112 | 1795 | 8465 | 2110 | 8045 |
| 3522 | 5601 | 6197 | 6051 | 3470 | 8283 | 5702 | 0103 | 8726 | 5282 | 3482 | 0478 | 0221 | 6738 | 7323 | 5643 | 4767 | 0106 | 2272 | 9862 |

Գլխավոր համախմբի մեծ արժեքների դեպքում, երբ գործնականում անհնար է համարակալումը, օգտագործում են միավորների ընտրության ուրիշ եղանակներ:

Տիպային (տեղայնացված) ընտրանքի դեպքում գլխավոր համախումբը բաժանում են տիպային խմբերի՝ ըստ որևէ ցուցանիշի: Այնուհետև այդ խմբերից պատահական կամ մեխանիկական ընտրության ճանապարհով վերցնում են միավորները: Օրինակ՝ ԶՊՃԶ-ում ընտրությունը կարելի է իրականացնել ըստ դեպարտամենտների, գործարանում՝ ըստ արտադրամասերի և այլն: Տիպային ընտրանքի միջին քառակուսային սխալը միշտ փոքր է պատահական ընտրության միջին քառակուսային սխալից: Այսինքն՝ նույն ծավալների դեպքում տիպայինով ստացված տվյալներն ավելի ճիշտ են:

Մեխանիկական ընտրության դեպքում գլխավոր համախումբը բաժանում ենք մասերի և յուրաքանչյուր մասից ընտրում դիտման մեկ միավոր: Օրինակ, եթե ԶՊՃԶ-ի 5000 ուսանողներից ուզում ենք ընտրել 500 հոգու, ընդհանուր ցուցակից ընտրում ենք յուրաքանչյուր տասներորդին: Այստեղ ևս կրկնակի ընտրանքի սխալների բանաձևերի օգտագործումը մեծացնում է ճշգրտությունը:

Սերիական ընտրանքի դեպքում գլխավոր համախումբը որևէ ցուցանիշով բաժանվում է սերիաների: Այնուհետև, պատահականորեն ընտրում ենք որոշ սերիաներ և նրանցում հետազոտում բոլոր միավորները (օրինակ՝ տվյալ արտադրամասի բոլոր բանվորներին):

Տիպային ընտրանքն օգտագործում են այն դեպքում, երբ գլխավոր համախումբը համասեռ չէ, այլ կազմված է տիպային մասերից:

Մեխանիկական ընտրությունը ավելի հեշտ է: Այստեղ պատահականությունն ապահովելու ամենահարմար եղանակը միավորները այբբենական ցուցակով ընտրելն է: Սակայն, եթե մեզ հետաքրքրում են տարբեր դեպարտամենտների անհրաժեշտ

քանակությամբ ուսանողներ այբբենական ցուցակով ընտրելիս, կարող է մի դեպարտամենտից ավելի շատ ընդգրկվեն: Դրա համար տարանջատում ենք դեպարտամենտները, այնուհետև համամասնորեն ընտրում:

Պրակտիկայում հաճախ օգտագործում են բազմաստիճան ընտրությունը:

ՉԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 6-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- 1. Ընտրանքի սոցիոլոգիական իմաստը:*
- 2. Ներկայացուցչության պատահական և պարբերական սխալներ:*
- 3. Դիտման պատահական և պարբերական սխալներ:*
- 4. Նորմալ բաշխման նկարագիրը և բնութագծերը:*
- 5. Վիճակագրական սխալների չափումը:*
- 6. Ընտրանքի ծավալի հաշվման բանաձևը և նրա որոշման եղանակները:*
- 7. Ընտրության մեթոդները և տեխնիկան:*

ԳԼՈՒԽ 7

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նշվել է գլուխ 3-ում, վարկածները լինում են նկարագրական և բացատրական: Առաջին դեպքում իրագործվում են վերլուծության այնպիսի եղանակներ, ինչպիսիք են խմբավորումները, դասակարգումները, երբեմն՝ տիպայնացումը: Երկրորդ դեպքում փորձ է արվում հաստատել փոխազդեցության և պատճառականության կապեր:

Խմբավորում և տիպայնացում: Որևէ ցուցանիշով տվյալների դասակարգումը կամ կարգավորումը կոչվում է *պարզ խմբավորում*: Օրինակ, նկարագրված վարկածի համաձայն, ընտրանքի տվյալները կարելի է խմբավորել ըստ տարիքի, սեռի, կրթության, զբաղմունքի, արտահայտված տեսակետների և այլն (տե՛ս աղյուսակ 7.1):

Աղյուսակ 7.1. Ընտրական համախմբի բաշխումը ըստ տարիքի.

| Տարիքը | մինչև 18 տ. | 18 – 30 տ. | 31 – 50 տ. | 51 տ. և ավելի | Ընդամենը |
|------------|-------------|------------|------------|---------------|----------|
| ամբողջ թիվ | 20 | 30 | 15 | 35 | 100 |
| տոկոս | 20,0 | 30,0 | 15,0 | 35,0 | 100,0 |

Հետագա վերլուծությունը հանգում է խմբավորված այդ տվյալների ուսումնասիրությանը: Խմբի անդամների թիվը կոչվում է խմբի *հաճախություն* (կամ քանակություն), իսկ՝ տվյալ քանակի հարաբերությունը դիտարկումների ընդհանուր թվին կոչվում է *բաժնենաս* կամ *հարաբերական հաճախություն*: Ըստ տոկոսների հաճախությունների հաշվարկումը տվյալ խմբավորման պարզագույն վերլուծությունն է: Խմբավորված շարքը բնութագրվում է *մոդայով*, *մեդիանայով* և *միջին թվաբանականով*, ինչպես նաև *դիսպերսիայով* և *միջին քառակուսային շեղումով*:

Համառոտակի նկարագրենք նշված բնութագրիչները:

Միջին մեծություններ: Ցրման չափերը: Եթե ունենք x փոփոխականի մի շարք, որտեղ x -ը կարող է ընդունել արժեքներ. $x_1, x_2, x_3, \dots, x_n$, ապա այդ շարքի համար պարզ միջին թվաբանականը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\bar{x} = \frac{x_1 + x_2 + \dots + x_n}{n} = \frac{\sum_{i=1}^n x_i}{n}, \quad (7.1)$$

որտեղ n -ը դիտարկումների թիվն է:

Եթե x փոփոխականի արժեքների շարքը խմբավորման օգնությամբ կարգավորված է, ապա նրա միջին թվաբանականը, որը կոչվում է չափակշռված միջին թվաբանական, հավասար է.

$$\bar{x} = \frac{x_1 p_1 + x_2 p_2 + \dots + x_n p_n}{p_1 + p_2 + \dots + p_n} = \frac{\sum_{i=1}^n x_i p_i}{\sum_{i=1}^n p_i}, \quad (7.2)$$

որտեղ x_1, x_2, \dots, x_n - արժեքներն են (տարբերակները),

P_1, P_2, \dots, P_n - արժեքների (տարբերակների) կշիռները (հաճախությունները):

Օրինակ, ենթադրենք կազմել ենք հաճախությունների աղյուսակ ըստ ընտանիքի անդամների թվի (տե՛ս աղյուսակ 7.2).

Աղյուսակ 7.2. Ընտրական համախմբի բաշխումը՝ ըստ ընտանիքի անդամների թվի.

| | Ընտանիքի անդամների թիվը | | | | | | | |
|---|-------------------------|----|----|----|---|---|---|-----------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 և ավելի |
| P | 3 | 10 | 38 | 25 | 9 | 7 | 5 | 2 |

$$\bar{x} = \frac{1 \cdot 3 + 2 \cdot 10 + 3 \cdot 38 + 4 \cdot 25 + 5 \cdot 9 + 6 \cdot 7 + 7 \cdot 5 + 8 \cdot 2}{3 + 10 + 38 + 25 + 9 + 7 + 5 + 2} \approx 3,8$$

Միջին թվաբանականն ունի հետևյալ հատկությունները.

1. Միջին թվաբանականից բոլոր տարբերակների շեղումների հանրահաշվական գումարը հավասար է զրոյի.

$$\sum_{i=1}^n (x_i - \bar{x}) = 0: \quad (7.3)$$

2. Եթե շարքի բոլոր տարբերակներն ավելացնենք (նվազեցնենք) միևնույն անգամ, նոր շարքի միջին թվաբանականը կմեծանա (կփոքրանա) նույնքան անգամ.

$$\bar{x} = \frac{\sum_{i=1}^n \frac{x_i}{k} p_i}{\sum_{i=1}^n p_i} k: \quad (7.4)$$

3. Եթե շարքի բոլոր տարբերակներն ավելացնենք (նվազեցնենք) միևնույն թվով, ապա նոր շարքի միջին թվաբանականը կմեծանա (կփոքրանա) նույն թվով.

$$\bar{x} = \frac{\sum_{i=1}^n (x_i - A) p_i}{\sum_{i=1}^n p_i} + A: \quad (7.5)$$

4. Եթե տարբերակների բոլոր հաճախությունները մեծացնենք (փոքրացնենք) միևնույն անգամ, միջին թվաբանականը չի փոխվի.

$$\bar{x} = \frac{\sum_{i=1}^n x_i \frac{p_i}{k}}{\sum_{i=1}^n \frac{p_i}{k}}: \quad (7.6)$$

5. Ամբողջ համախմբի միջին թվաբանականը հավասար է խմբային միջինների միջին թվաբանականին.

$$\bar{x} = \frac{\bar{x}_1 p_1 + \bar{x}_2 p_2 + \dots + \bar{x}_n p_n}{p_1 + p_2 + \dots + p_n} = \frac{\sum_{i=1}^n \bar{x}_i p_i}{\sum_{i=1}^n p_i} : \quad (7.7)$$

Կարգադասված շարքի մեջտեղում գտնվող արժեքը կոչվում է *մեդիան*։ Օրինակ, 120, 125, 130, 135, 140 շարքի մեդիանն հավասար է 130: Ջուլյոթ թվով տարբերակների շարքի մեդիանն գտնելու համար մեջտեղի երկու տարբերակները գումարում են և բաժանում 2-ի: Օրինակ, 2, 4, 6, 8, 10, 12, 14, 16, 18, 20 շարքի մեդիանն կլինի.

$$M_e = (10+12) / 2 = 11:$$

Շարքում առավել մեծ հաճախություն ունեցող հայտանիշի արժեքը կոչվում է *մոդա* (M_o):

x_1, x_2, \dots, x_n շարքի միջին երկրաչափականը հավասար է.

$$G = \sqrt[n]{x_1 x_2 \dots x_n} = \sqrt[n]{\prod X} : \quad (7.8)$$

Այլ կերպ.

$$\lg G = \frac{\sum_{i=1}^n \lg x_i}{n} : \quad (7.9)$$

Շարքի միջին քառակուսայինը հավասար է .

$$S = \sqrt{\frac{\sum_{i=1}^n x_i^2}{n}} : \quad (7.10)$$

Միջին հարմոնիկը հավասար է.

$$H = \frac{n}{\sum_{i=1}^n \frac{1}{x_i}} \quad (7.11) \quad \text{կամ} \quad \frac{1}{H} = \frac{\sum_{i=1}^n \frac{1}{x_i}}{n} \quad (7.12):$$

Տարբեր տեսակի միջինների միջև գոյություն ունեն հետևյալ հարաբերությունները.

| | | | | | | | | | | |
|---|---|-----------------------|---|---------------------------|---|--|---|---------------------------|---|--|
| Հայտանիշի նվազագույն արժեք X_{\min} | < | Միջին հարմոնիկ H | < | Միջին երկրաչափական G | < | Միջին թվաբանական, մոդա, մեդիանա \bar{x}, M_0, M_e | < | Միջին քառակուսային S | < | Հայտանիշի առավելագույն արժեք X_{\max} |
|---|---|-----------------------|---|---------------------------|---|--|---|---------------------------|---|--|

Նորմալ բաշխման դեպքում M_0, M_e և \bar{x} -ը համընկնում են:

Որևէ միջինի ընտրությունը կապված է ելակետային մեծությունների բնույթի և այն խնդիրների հետ, որոնք դրված են հետազոտողի առջև:

Առավել հաճախ գործածվում է միջին թվաբանականը: Երբ փոփոխվող ցուցանիշի տատանումները շատ մեծ են, այդ դեպքում, որպես շարքի բնութագիր օգտագործվում է *մեդիանը*, քանի որ մեդիանը, ի տարբերություն \bar{x} -ի, պակաս զգայուն է ցուցանիշի եզրային արժեքների հանդեպ: Մեդիանը նպատակահարմար է օգտագործել հատկապես այն դեպքում, երբ փոփոխվող շարքի եզրային միջակայքերը անորոշ են, քանի որ կարևոր է այդ միջակայքերի հաճախությունը, այլ ոչ թե նրանց միջնամասային արժեքը, ինչպես դա տեղի ունի միջին թվաբանականը հաշվելու դեպքում:

Մոդան հատկապես հարմար է որակական ցուցանիշների ուսումնասիրման ժամանակ:

Մոդայի և մեդիանայի օգտագործումը, ի լրումն միջին թվաբանականի, հնարավորություն է ընձեռում ավելի խորը ընկալել սոցիալական գործընթացը: Օրինակ, եթե վերցնենք մի երկրի ընտանիքի տարեկան եկամուտը, միջին թվաբանականը չի կարող բավարար բնութագրական լինել, քանի որ, ենթադրենք, ընտանիքի 70 տոկոսը միջին եկամուտից ներքև է ընկած, և միայն 30 տոկոսը՝ վերև: Այդ պատճառով, միջին թվաբանականը պետք է փոխլրացվի մեդիանային եկամուտով, որը համախուժված բաժանում է երկու մասի: Մոդալ եկամուտը, իր հերթին տարբերվում է միջին եկամուտից, որը լրացուցիչ տեղեկություն է: Միջին քառա-

կուսայինը կիրառվում է միջին քառակուսային շեղման, ինչպես նաև ցուցանիշի փոփոխականության հաշվարկների մեջ:

Միջին երկրաչափականը կիրառվում է դինամիկ շարքերի միջին տեմպերի հաշվարկման դեպքում: Օրինակ, եթե հայտնի են ժամանակի սկզբի և վերջի տվյալները, սակայն ժամանակի յուրաքանչյուր միավորի (տարի, ամիս և այլն) համար անհայտ են, կարելի է հաշվել միջին երկրաչափականը, ընդունելով, որ բոլոր ժամանակահատվածների համար աճի տեմպերը նույնն են:

Միջին հարմոնիկը կիրառվում է այն դեպքում, երբ հետազոտվող հատկությունը ցուցանիշի արժեքներից հակադարձ համեմատական կախվածություն ունի: Օրինակ, եթե գնացքը ճանապարհի կեսն անցել է 20 կմ/ժամ, իսկ մյուս կեսը՝ 30 կմ/ժամ արագությամբ, ապա, միջին արագությունը հավասար է $(20+30)/2=25$ կմ/ժամ, իսկ միջին հարմոնիկը հավասար է 24 կմ/ժամ: Այսինքն, աճի տեմպը փոքր-ինչ ավելի պակաս է, քան միջին արագությունը:

Այսպիսով, միջին մեծությունները համախմբության կարևոր բնութագրերն են, սակայն, չեն բացահայտում ցուցանիշի տատանողականությունը, նրա ցրման ամպլիտուդը:

Ցրման պարզագույն չափը փոփոխական միջակայքն է (вариационный размах).

$$R = X_{\max} - X_{\min} : \quad (7.13)$$

Վիճակագրական նշակման մեջ սովորաբար օգտագործում են միջին քառակուսային շեղումները և դիսպերսիան:

Միջին քառակուսային շեղումը (σ).

$$\sigma = \sqrt{\frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n}}, \quad (7.14)$$

$$\sigma^2 = \frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{x})^2}{n} - \rho$$

կոչվում է *դիսպերսիա*:

Ղիսպերսիան ունի հետևյալ հատկությունները.

1. Եթե բոլոր տարբերակները (արժեքները) ավելացնենք (նվազեցնենք) միևնույն A թվով, ապա ղիսպերսիան և միջին քառակուսային շեղումը կմնան նույնը:
2. Եթե բոլոր արժեքները ավելացնենք (նվազեցնենք) միևնույն k անգամ, ապա ղիսպերսիան կավելանա k^2 անգամ, իսկ միջին քառակուսային շեղումը՝ k անգամ:
3. Եթե բոլոր արժեքները նույնն են, ապա σ և σ^2 հավասար են 0-ի:

Այլընտրանքային (+,-) ցուցանիշների համար՝

$$\sigma = \sqrt{\frac{P_1 P_2}{n}}, \quad (7.15)$$

որտեղ

P_1 –ը մի փոխբացառող ցուցանիշի հաճախությունն է,

P_2 –ը մյուս փոխբացառող ցուցանիշի հաճախությունը:

Օգտագործվում է նաև *միջին բացարձակ* (գծային, թվաբանական) շեղումը.

$$\bar{d} = \frac{\sum_{i=1}^n |x_i - \bar{x}|}{n}: \quad (7.16)$$

Փոփոխականության գործակիցը, որը սովորաբար արտահայտվում է տոկոսներով, կլինի.

$$V = \frac{\sigma}{\bar{x}} \times 100\%: \quad (7.17)$$

Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս, թե միջին հաշվով, յուրաքանչյուր արժեքը որքանով է շեղված միջին թվաբանականից: Վերջինիս հետ համախումբը այն ավելի լիարժեք է բնութագրում:

Երկու համախմբերի միջին քառակուսային շեղումները ղի-

տարկելիս հարմար է հաշվարկել փոփոխականության գործակիցը:

Տվյալների վերլուծության մեջ օգտագործվում է *խաչաձև խմբավորումը*, ինչը նշանակում է երկու ցուցանիշով տվյալների նախնական կարգավորում:

Դրա նպատակն է.

ա) հայտնաբերել որոշակի փոխկապվածություններ,

բ) իրագործել ցուցանիշների փոխհսկելիություն (օրինակ՝ հիմնական և ստուգողական հարցերի պատասխանները), ձևավորել բաղադրյալ նոր ցուցանիշ (ինդեքս)՝ համադրելով օբյեկտի երկու հատկությունը կամ վիճակը, որոշել մի երևույթի ազդեցության ուղղությունը մյուսի վրա (խաչաձև խմբավորման օրինակը տե՛ս աղյուսակում 7.3-ում):

Աղյուսակ 7.3. Անուսիմների տարիքի խաչաձև խմբավորում.

| Ամուսնու տարիքը (տարի) | Կնոջ տարիքը (տարի) | | | | | | | | Ընդամենը (մարդ) |
|------------------------|--------------------|-------|-------|-------|-------|-------|-------|----|-----------------|
| | 15-19 | 20-24 | 25-29 | 30-34 | 35-39 | 40-44 | 45-49 | 50 | |
| 15-19 | 42 | 10 | 3 | - | - | - | - | - | 55 |
| 20-24 | 158 | 504 | 51 | 10 | 1 | - | - | - | 724 |
| 25-29 | 52 | 271 | 184 | 22 | 7 | 2 | - | - | 538 |
| 30-34 | 5 | 52 | 87 | 69 | 13 | 5 | - | - | 231 |
| 35-39 | 1 | 12 | 27 | 29 | 21 | 2 | 3 | - | 95 |
| 40-44 | - | 1 | 9 | 18 | 17 | 8 | 2 | 1 | 56 |
| 45-49 | 1 | - | 3 | 6 | 16 | 16 | 7 | 1 | 50 |
| 50 | - | - | 1 | 4 | 11 | 15 | 21 | 43 | 95 |
| Ընդամենը | 259 | 850 | 365 | 158 | 86 | 48 | 33 | 45 | 1844 |

Փորձարարական տիպայնացում: Նկարագրական պլանով վերլուծության առավել ուժեղ հնարքը *փորձարարական տիպայնացումն* է: Դա մի մեթոդ է, որով նկարագրական վարկածների

համապատասխան մի քանի ուղղություններով միաժամանակ որոնվում են սոցիալական օբյեկտների (կամ երևույթների) հատկությունների կայուն զուգակցությունները:

Հայտնի ամերիկյան սոցիոլոգ Պ. Լազարսֆելդը, ձևակերպելով այս գաղափարը, ներմուծեց «հատկությունների տարածություն» հասկացությունը: Այսպես, դժվար չէ սոցիալական խմբի հատկությունները պատկերացնել եռաչափ տարածության մեջ (դեկարտյան կոորդինատային համակարգում): Ենթադրենք «A» հատկությունը տեղադրում ենք բարձրության, «B»-ն՝ լայնության, իսկ C-ն՝ երկարության մեջ: Տվյալ եռաչափ տարածության մեջ հարկ է որոշել, թե ինչպիսին է հատկությունների կարգավորվածությունը: Կարելի^o է արդյոք ասել, որ A հատկության թույլ դրսևորմանը համապատասխանում է B հատկության թույլ, և, C հատկության ուժեղ դրսևորում և այլն:

Եռաչափ տարածություն կազմող հատկությունների կարգավորվածության աստիճանը որոշելու համար, ռուս սոցիոլոգներ Ի. Տազանովը և Օ. Շկառատանը կիրառել են էնտրոպիայի վիճակագրական չափանիշը (H): $H=1$ դեպքում դիտվում է երեք հատկությունների լրիվ կարգավորվածություն, իսկ $H=0$ -ի դեպքում՝ լրիվ քառս:

Վերոհիշյալ հեղինակները բանվորների մեջ կայուն ենթախմբերի կազմումը որոշող ցուցանիշների հայտնաբերման նպատակով անցկացրել են զանգվածային հարցում: Հետազոտվել է 27 ցուցանիշ, որոնցից կառուցվել է 2925 հնարավոր եռաչափ զուգակցություն: Յուրաքանչյուրի համար հաշվարկվել է H էնտրոպիան: Հայտնաբերվել է, որ կապերի ամենամեծ կարգավորվածությունը ստացվում է երեք փոփոխականներից. զբաղմունք, որակավորում և կրթություն: Սրանք էլ այն հատկություններն են, որոնք հիմք են հանդիսանում բանվորների ներսում անհամասեռ խմբերի առաջացման համար:

Ավելի բարդ է բազմաչափ տարածության մեջ հատկությունների զուգակցման վերլուծությունը: Այն նկարագրվում է մաթեմատիկական սիմվոլների օգնությամբ. (այսպես կոչված կերպարների ճանաչման մաթեմատիկական ընթացակարգեր):

Տեսական տիպայնացումը սոցիալական երևույթների ցու-

Աղյուսակ 7.4. Մասնակցությունը նորարարության մեջ

| Աշխատանքի բովանդակությունը | Մասնակցություն նորարարությանը (մարդ) | | Ընդամենը |
|----------------------------|--------------------------------------|---------------|-----------------|
| | մասնակցում է | չի մասնակցում | |
| Բանվորներ | 250 | 455 | 705 |
| ԻՏԱ | 140 | 120 | 260 |
| Ծառայողներ | 10 | 25 | 35 |
| Ընդամենը | 400 | 600 | 1000 |

Վերլուծությունը կատարենք ըստ «հնարավոր պատճառից՝ հետևանք» տրամաբանության: Նորամուծությունների մշակման մեջ ավելի կամ պակաս ակտիվ մասնակցության նախադրյալ կարող է լինել աշխատողի կարգավիճակը, այն դեպքում, երբ արտադրության գործերում ներառվածությունը ինքնին չի կարող լինել այս կամ այն կարգավիճակի պատճառ, դա՝ առաջին գործոնի հնարավոր հետևանքն է: Նման մոտեցման դեպքում որպես 100 տոկոս պետք է վերցնել տվյալները ըստ տողի (տե՛ս աղյուսակ 7.5): Այստեղից հետևություն, ամենակատիվ նորարարները ինժեներատեխնիկական աշխատողներն են (ԻՏԱ), պակաս ակտիվ՝ ծառայողները: ԻՏԱ-ի աշխատանքի բովանդակությունը ավելի շատ է նպաստում նորարարությամբ զբաղվելուն, քան տվյալ գործարանի բանվորների կամ ծառայողների աշխատանքը:

Այժմ վերլուծենք ըստ՝ «հետևանքից՝ պատճառ» տրամաբանության. 100 տոկոսը ստացվում է սյան արժեքների գումարումից (տե՛ս աղյուսակ 7.6):

Աղյուսակ 7.5. Նորարարության մեջ մասնակցությունը որպես աշխատողների կարգավիճակի հետևանք

| Կարգավիճակը | Մասնակցություն նորարարությանը (մարդ) % | | Ընդամենը % |
|-------------|--|---------------|-------------------|
| | մասնակցում է | չի մասնակցում | |
| Բանվորներ | 35,0 | 65,0 | 100,0 |
| ԻՏԱ | 54,0 | 46,0 | 100,0 |
| Ծառայողներ | 29,0 | 71,0 | 100,0 |

**Աղյուսակ 7.6. Անձնակազմի ակտիվությունը կապված
աշխատողի կարգավիճակի հետ**

| Կարգավիճակը | Մասնակցություն նորարարությանը (մարդ)% | |
|-------------|---------------------------------------|---------------|
| | մասնակցում է | չի մասնակցում |
| Բանվորներ | 60,0 | 76,0 |
| ԻՏԱ | 35,0 | 20,0 |
| Ծառայողներ | 5,0 | 4,0 |
| Ընդամենը % | 100,0 | 100,0 |

Տրամաբանական տեսանկյունից այստեղ ստուգվում է նորանվտակությունների մշակման մեջ աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի ներդրման մասին վարկածը, այլ ոչ թե վարկածը նրանց հարաբերական ակտիվության մասին: 7.6 աղյուսակից երևում է, որ ամենամեծ ներդրումը ունեն բանվորները, քանի որ ձեռնարկության անձնակազմի մեջ նրանց քանակը գերիշխում է: Այս տվյալներով հնարավոր չէ դատել նորարարական ակտիվության մասին: Ներկայացուցչական ընտրանքներում հնարավոր է տոկոսավորումը կատարել աղյուսակի «անկյունագծով» (օր., աղ. 7.3-ում բոլոր 47 տարիքային զուգակցությունների համար) եթե ընտրանքը ներկայացուցչական չէ, տոկոսավորումը կարելի է կատարել յուրաքանչյուր ընտրաբաժնի (подвыборка) համար առանձին: Սովորաբար նման ընտրաբաժինները կազմում են ըստ այն չափանիշների, որոնք որոնվող կապերի հնարավոր պատճառներն են. սեռատարիքային, մասնագիտական-որակավորման, կրթական մակարդակի և այլն: Այստեղ, աղյուսակ 7.5-ի վերլուծության տրամաբանությամբ, ընտրաբաժինների անհամապատասխանությունը գլխավոր համախմբում որոշակի խմբերի իրական բաշխմանը՝ կատարված հետևությունը չի աղավաղի: Իսկ եթե աղյուսակ 7.6-ի տրամաբանությամբ է վերլուծվում, ապա հետևության հավաստիությունը ուղղակիորեն կախված կլինի ընտրանքի ներկայացուցչությունից:

Այն դեպքերում, երբ խաչաձև դասակարգման ներկայացուցչությունը սկզբունքորեն հնարավոր չէ որոշել (օրինակ՝ երբ համադրում ենք աշխատանքով և կենցաղով բավարարվածությունները, որոնց բաշխումը գլխավոր համախմբում նախապես հայտ-

նի չէ), տոկոսների հաշվումը երկու ուղղությամբ էլ (ըստ տողի և սյունակի) թույլատրելի է այն պայմանով, որ հաստատված առընչությունները մոտավոր են և պահանջում են լրացուցիչ ստուգում: Նման ստուգման համար օգտագործում են հսկիչ (միջնորդավորող) փոփոխականների համակարգ:

Բերենք հսկիչ (միջնորդավորող) գործոնի օգնությամբ երկու փոփոխականների փոխկապվածության վերլուծության օրինակներ [76, էջ 336-343]:

Ենթադրենք հարկավոր է որոշել թե կա՞ արդյոք կապ հեռուստատեսության ճանաչողական (նշանակենք այն որպես p գործոն) և զվարճալի (նշանակենք այն որպես P գործոն) ծրագրերի հանդեպ մարդկանց հետաքրքրությունների միջև:

Դրա համար որպես փոխկապվածության չափանիշ, օգտագործվում է Յուլի՝ երկու որակական փոփոխականների միջև զուգորդման գործակիցը: Այդ գործակցի հաշվման համար ամրագրվում է համադրվող A և B որակների առկայությունը (+) կամ բացակայությունը (-):

Կառուցենք երկչափ դասակարգման աղյուսակ (տե՛ս աղյուսակ 7.7):

Աղյուսակ 7.7. Երկչափ դասակարգում

| | | |
|-------|-------|-------|
| - | p^+ | p^- |
| n^+ | a | b |
| n^- | c | d |

Ձուգորդման Յուլի գործակիցը (Q) որոշվում է 7.18 բանաձևով.

$$Q = \frac{(ad - cb)}{(ad + cb)} \quad (7.18),$$

որտեղ a, b, c, d - ն նշանակում են n կամ p հայտանիշների առկայությունը կամ բացակայությունը: Ըստ որում $1 > Q > -1$: Եթե Q -ն տվյալ վստահելիության միջակայքում 0 -ից էապես մեծ է կամ փոքր, ուրեմն կապն առկա է:

Ենթադրենք ունենք հետևյալ բաշխումը.

| | | | |
|-------|-------|-------|------|
| - | p^+ | p^- | |
| n^+ | 410 | 130 | 540 |
| n^- | 130 | 410 | 540 |
| | 540 | 540 | 1080 |

$$Q_{\text{II}P} = \frac{(410 \cdot 410) - (130 \cdot 130)}{(410 \cdot 410) + (130 \cdot 130)} = 0,82 :$$

Ուրեմն P-ի և Ո-ի միջև բավական բարձր կապ կա: Սակայն տվյալ կապը կարող է *երևութական* լինել: Ներմուծենք հսկիչ փոփոխական՝ հեռուստադիտողների կրթական մակարդակը (O) և ստանանք երկչափանի երկու աղյուսակ՝ մեկը բարձր (O^+), մյուսը ցածր (O^-) կրթամակարդակով.

O^+

| | | | |
|-------|---------|---------|-----|
| | Π^+ | Π^- | |
| P^+ | 400 | 80 | 480 |
| P^- | 50 | 10 | 60 |
| | 450 | 90 | 540 |

O^-

| | | | |
|-------|---------|---------|-----|
| | Π^+ | Π^- | |
| P^+ | 10 | 50 | 60 |
| P^- | 80 | 400 | 480 |
| | 90 | 450 | 540 |

$$Q_{(\text{II}P-O^+)} = \frac{(400 \cdot 10) - (50 \cdot 80)}{(410 \cdot 10) + (50 \cdot 80)} = 0 \quad Q_{(\text{II}P-O^-)} = \frac{(10 \cdot 400) - (80 \cdot 50)}{(10 \cdot 410) + (80 \cdot 50)} = 0$$

Այսինքն՝ կրթական մակարդակով հավասարեցնելու դեպքում, Ո-ի և P-ի միջև կապ չի հայտնաբերված, չնայած, որ ելակետային տվյալներով այն առկա է: Մնում է ենթադրել, որ Ո-ն և P-ը կախված են կրթական մակարդակից՝ միմյանցից անկախ: Տվյալ ենթադրությունը ստուգելու համար տվյալները այնպես խմբավորենք, որ բացահայտվի ստուգիչ գործոնի (O-կրթություն) և ելակետայինների (Ո և P) միջև կապը:

| | | | |
|----------------|----------------|----------------|------|
| | Π ⁺ | Π ⁻ | |
| O ⁺ | 450 | 90 | 540 |
| O ⁻ | 90 | 450 | 540 |
| | 540 | 540 | 1080 |

| | | | |
|----------------|----------------|----------------|------|
| | P ⁺ | P ⁻ | |
| O ⁺ | 480 | 60 | 540 |
| O ⁻ | 60 | 480 | 540 |
| | 540 | 540 | 1080 |

$$Q_{(on)} = \frac{(450 \cdot 450) - (90 \cdot 90)}{(450 \cdot 450) + (90 \cdot 90)} = 0,90 \quad Q_{(or)} = \frac{(480 \cdot 480) - (60 \cdot 60)}{(480 \cdot 480) + (60 \cdot 60)} = 0,90$$


Ինչպես տեսնում ենք, կրթության հետ թե՛ ճանաչողական, և թե՛ զվարճալի ծրագրերի հանդեպ հետաքրքրությունների միջև կապը բարձր է: Այստեղ գործում է հետևյալ կանոնը. եթե ստուգիչ փոփոխականի ներմուծումը նվազեցնում է ելակետային երկու փոփոխականների միջև կապը, սակայն ստուգողականի և յուրաքանչյուր ելակետայինի միջև կապը բավական բարձր է, ապա ստուգիչ փոփոխականը հանդես է գալիս կամ մեկանաբանության կամ էլ բացատրողի դերում: *Մեկնաբանությունը* գործոնների մատուցման այն եղանակն է, որը փոփոխականը դիտարկում է որպես ինչ-որ գործընթացի միջնորդավորումներ: Ըստ որում՝ այդ գործընթացի պատճառներն անհայտ են: Բացատրությունը գործոնների այն շարքի մատուցումն է, որոնք դիտարկվում են որպես փոփոխականների պատճառներ:

Դիտարկենք այն օրինակը, որը թույլ է տալիս հայտնաբերել մեկանաբանող և բացատրող կապերը՝ օգտվելով թվային նույն տվյալներից:


Π_P - ով նշանակենք հեռուստադիտողների զբաղմունքը (Π_P^1 Π_P^2 զբաղմունքների երկու խմբերն են): H^+ և H^- որոշակի ծրագրերի հանդեպ հետաքրքրության առկայությունն ու բացակայությունն են: Π_{PH} աղյուսակի համար, նույն տվյալները օգտագործելով (տես՝ Յադով), Յուլի գործակիցը ստացվում է՝ $Q_{PHI} = 0,82$:

Ներմուծենք կրթությունը (O) որպես հսկիչ փոփոխական: Նախորդ օրինակի նման վերադասավորելով աղյուսակը և հաշվելով Q-երը՝ կտեսնենք, որ այդ կապը կորչում է: Այսինքն՝ նույն կրթական մակարդակի դեպքում զբաղմունքի և որևէ հաղորդա-

շարի հանդեպ հետաքրքրությունների միջև կապ չի հայտնաբերվում: Այլ կերպ՝ բարձրագույն կրթությամբ մարդիկ՝ ճարտարագետներ, բժիշկներ, ուսուցիչներ, գրեթե նույն կերպ են հետաքրքրվում տվյալ տիպի հաղորդումներով: Բանվորները, վաճառողները, ծառայողները, որոնք բարձրագույն կրթություն չունեն, նույնպես դրսևորում են նման հետաքրքրություն տվյալ դասի հեռուստածրագրերի հանդեպ: Սակայն առաջին օրինակի համեմատությամբ հետևություններն այս դեպքում այլ են: Առաջին օրինակում կրթությունը նախորդում է հաղորդումների հանդեպ հետաքրքրություններին, այդ պատճառով կապերը բացատրում է այսպես. զվարճալի և կրթական հաղորդումների հանդեպ հետաքրքրությունների միջև առկա է հարակից կապ քանզի, միմյանց հետ ուղղակի կապ չունենալով երկուսն էլ կապված են երրորդ գործոնի՝ կրթության հետ, որն էլ պատճառական փոփոխական է: Այդ կապն արտահայտվում է այսպես.



Երկրորդ դեպքում ստուգիչ փոփոխականը (կրթությունը) ոչ թե նախորդում է, այլ միաժամանակ գործում է հիմնական փոփոխականներից մեկի՝ զբաղմունքի հետ: Այս դեպքում կրթությունը միջնորդավորում է հիմնական գործոնների միջև կապը և այն ճշգրտում, մեկնաբանում է՝ խնդիրը ոչ այնքան զբաղմունքի, որքան կրթության մեջ է:



Երրորդ օրինակ: Յնարավոր է այնպիսի իրադրություն, երբ ելակետային երկու փոփոխականների միջև կապը, ստուգիչի ներմուծելուց հետո ո՛չ կորչում է, ո՛չ էլ փոքրանում, սակայն այդ կապը կորչում է մի որևէ ելակետայինի և ստուգիչի միջև: Օրինակ, դիտարկենք հեռուստադիտողների հետաքրքրությունը «Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ» (A) ծրագրի և «Կենդանիների աշխարհում» (B) ծրագրի հանդեպ: Ստուգիչ փոփոխականը կրթությունն է (O): Այս դեպքում ունենք աղյուսակների երեք տիպ. ելակետային, միջանկյալ և արդյունարար: Առաջնային կապը հետևյալն է.

| | | | |
|----------------|----------------|----------------|------|
| | B ⁺ | B ⁻ | |
| A ⁺ | 400 | 600 | 1000 |
| A ⁻ | 100 | 100 | 200 |
| | 500 | 700 | 1200 |

$$Q_{AB} = \frac{(400 \cdot 100) - (100 \cdot 600)}{(400 \cdot 100) + (100 \cdot 600)} = -0,20$$

| | | | |
|----------------|----------------|----------------|-----|
| O ⁺ | | | |
| | B ⁺ | B ⁻ | |
| A ⁺ | 200 | 300 | 500 |
| A ⁻ | 20 | 80 | 100 |
| | 220 | 380 | 600 |

| | | | |
|----------------|----------------|----------------|-----|
| O ⁻ | | | |
| | B ⁺ | B ⁻ | |
| A ⁺ | 200 | 300 | 500 |
| A ⁻ | 80 | 20 | 100 |
| | 280 | 320 | 600 |

$$Q_{(AB-O^+)} = \frac{(200 \cdot 80) - (20 \cdot 300)}{(200 \cdot 80) + (20 \cdot 300)} = 0,45 \quad Q_{(AB-O^-)} = \frac{(200 \cdot 20) - (80 \cdot 300)}{(200 \cdot 20) + (80 \cdot 300)} = -0,31$$

Այսինքն՝ կապն ուժեղանում է. ավելի բարձր կրթությամբ մարդիկ ավելի մեծ հետքըբրություն են դրսևորում «Ի՞նչը, որ-տե՞ղ, ե՞րբ» հաղորդաշարին, իսկ ցածր կրթություն ունեցողներն ավելի շատ հետաքրքրվում են «Կենդանիների աշխարհում» հաղորդաշարով:

Վերակառուցելով աղյուսակները՝ դիտարկենք կրթության կապը տվյալ հաղորդաշարերի հետ.

| | | | |
|----------------|----------------|----------------|------|
| | O ⁺ | O ⁻ | |
| A ⁺ | 500 | 500 | 1000 |
| A ⁻ | 100 | 100 | 200 |
| | 600 | 600 | 1200 |

| | | | |
|----------------|----------------|----------------|------|
| | B ⁺ | B ⁻ | |
| O ⁺ | 220 | 380 | 600 |
| O ⁻ | 280 | 320 | 600 |
| | 500 | 700 | 1200 |

$$Q_{(AO)} = \frac{(500 \cdot 100) - (100 \cdot 500)}{(500 \cdot 100) + (100 \cdot 500)} = 0 \quad Q_{(OB)} = \frac{(220 \cdot 320) - (280 \cdot 380)}{(220 \cdot 320) + (280 \cdot 380)} = -0,27$$

Պարզվում է, որ կրթության և «Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ» հաղորդաշարի միջև կապ գոյություն չունի. մարդիկ այդ հաղորդումները նայում են անկախ կրթությունից: Այստեղ ուրիշ գործոններ են գործում: Աննշան կապ կա կրթության և «Կենդանիների աշխարհում» հաղորդաշարի միջև:

Վերլուծության տվյալ տիպը կոչվում է «սպեցիֆիկացիա» կամ ճշգրտում, որը տարբերվում է բացատրության կամ մեկնաբանման տրամաբանությամբ վերլուծությունից:

Երբ փոփոխականները ոչ թե երեքն են, այլ շատ և ոչ թե դիֆուստումիկ են (+,-), այլ բազմանդամ, վերլուծության տրամաբանությունը նույնն է, սակայն տարբեր է տեխնիկան: Յուրի գործակցի փոխարեն այստեղ գործածում են բազմագործոն ֆունկցիոնալ (կոռելյացիայի) և դետերմինացիայի կապերը (ռեգրեսիոն վերլուծություն):

Եթե հետազոտության մեջ առկա են կարգադասված սանդղակներ («շատ են սիրում» ... «բոլորովին չեն սիրում», «շատ է հետաքրքրում» ... «բոլորովին չի հետաքրքրում»), նման շարքերի միջև հաշվարկում են կարգերի կոռելյացիայի գործակիցները (Սփիրմենի և Կենդելի գործակիցներ):¹¹

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 7-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. *Վերլուծության եղանակները:*
2. *Խմբավորում և տիպայնացում:*
3. *Միջին մեծություններ. միջին թվաբանական, մոդա, մեդիանա:*
4. *Միջին թվաբանականի հատկությունները:*

¹¹ Стен, орինակ, ѝ адоі аеёа е оадоі еёа ноаоёноёе=аёёі е і адоаі оёё і адоае=і і е ні оёі еі ае=аёёі е еі оі оі аоёё. І ., І аоёа, 1968, էջ 165-173.

5. Միջին մեծությունների համեմատելիությունը:
6. Ցրման չափերը. փոփոխական միջակայք, միջին քառակուսային շեղում, դիսպերսիա:
7. Դիսպերսիայի հատկությունները:
8. Փոխազդեցության և պատճառականության կապերը:
9. Փորձարարական տիպայնացում:

ԳԼՈՒԽ 8

ՈՐԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ

Հասարակական առաջընթացը ողջ աշխարհում, մասնավորաբար սոցիոլոգիական ճանաչողության զարգացումները ստիպում են ոչ միայն քանակական վերլուծություններ կատարել, հաշվարկել սոցիալական երևույթներն ու գործընթացները, այլև խորամուխ լինել առանձին խմբերի ու անհատի առօրյա կենսակերպի մեջ: Այսինքն՝ անցում կատարել դեպի սոցիալական երևույթների միկրովերլուծություն:

Քանակական («կոշտ») վերլուծությունը անհատին ներկայացնում է որպես սոցիալական տիպի ներկայացուցիչ: Իսկ եթե կամենում ենք ըմբռնել մարդու սոցիալական աշխարհը, ապա պետք է հասկանանք, թե նա ի՞նչ իմաստ է դնում այս կամ այն դատողության կամ գործողության մեջ: Դրանից բացի, հարկ է սոցիոլոգիական տերմիններով մեկնաբանել մարդու այն արարքների իմաստը, որը ինքն էլ կարող է համարժեքորեն չգիտակցել: Այն, ինչը կատարում է *որակական սոցիոլոգիան*:

Ուրիշ խոսքով՝ որակական սոցիոլոգիան զբաղվում է իրական սոցիալական կյանքի սուբյեկտիվ կողմով: Եթե քանակական սոցիոլոգիան ուսումնասիրում է, օրինակ արտադրությունն ու կրթական համակարգը՝ որպես սոցիալական ինստիտուտներ, նրանց գործառույթներն ու հարաբերությունները տվյալ հասարակական համակարգում, ապա որակական սոցիոլոգիան պատասխանում է այն հարցերին, թե ի՞նչ է նշանակում տվյալ հասարակության մեջ լինել «ճարտարագետ» և «արտադրող» և ինչպիսի՞ն է իրականում նրանց հարաբերությունները: Որակական ճանաչողության համար անհրաժեշտ են գիտելիքներ, որոնք առավելապես հիմնված են ըմբռնման և մեկնության վրա:

Ի տարբերություն քանակականի, որակական սոցիոլոգիան (ասում են նաև մարդասիրական) շեշտը դնում է անհատական կամ խմբային կյանքի եզակիության, առանձնակի սոցիալական փորձի, հատուկ ապրումների և տառապանքների վրա: Ուրիշ

խոսքով որակական սոցիոլոգիայի հետազոտման օբյեկտը «*հատուկ*»-ն է, առանձնակի «կենսական աշխարհը»: Այս տեսանկյունից կարող ենք հետազոտել Ղարաբաղյան պատերազմում կռված անձանց, միայնակ մայրերին, երիտասարդ տարիքի գործազուրկներին և այլն:

Որակական մոտեցման ժամանակ կարծես առանձին սուբյեկտներին դիտարկում են «միկրոսկոպի» տակ, նրան խոշորացված դիտարկելով իր օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական փորձի միասնության մեջ:

Որակական վերլուծության դասական օրինակներից մեկը ամերիկյան սոցիոլոգներ Ու. Թոմասի և Ֆ. Ջնանեցկու՝ «Լեհական գյուղացին Եվրոպայում և Ամերիկայում» աշխատությունն է: Այստեղ հետազոտվում են սոցիալական փոփոխությունների դարաշրջանում հանրույթների կազմալուծման և ձևափոխումների գործընթացները: Հեղինակները Լեհաստանից Ամերիկա տեղափոխված բազմաքանակ լեհերին հետազոտեցին նրանց առօրյա կյանքի վերլուծության հիման վրա: Անձնական նամակների, խորքային հարցազրույցների, փաստաթղթերի, թերթային հոդվածների և արխիվային մյուսերի մանրակրկիտ ուսումնասիրման հիման վրա փորձեցին պատասխանել հարցերի. ի՞նչը լեհերին ստիպեց արտագաղթել Միացյալ Նահանգներ, ինչպե՞ս էր նման վճիռը ընդունվում, ի՞նչ ազդեցություն էր դա գործում արժեքային համակարգի վրա: Արդյունքում կատարվեցին գործնական հետազոտություններ և ձևակերպվեց գաղթականների հարմարվողական վարքի ավելի ընդհանրական հայեցակարգ:

Կարծում ենք ցանկացած ուշադիր ընթերցող գիտակցում է, որ XX դարի 90-ական թվականները, հատկապես նախկին Խորհրդային տարածքում (այդ թվում Հայաստանում) նույնպես աչքի ընկան արմատական սոցիալական փոփոխություններով, ինչը դեռ շարունակվում է, և որի խորքային իմաստն ըմբռնելու համար որակական սոցիոլոգիական հետազոտությունները հրատապ են:

8.1 ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Որակական հետազոտության առավել տարածված տեսակները հետևյալն են.

- **Առանձին հանրույթի հետազոտումը (Քեյս-սթադի - բառացիորեն՝ «դեպքի հետազոտում»):**

Հետազոտական այս դաշտի համար եզակի օբյեկտ կարող է լինել ներփակ հանրույթը, որն ուրիշ մեթոդներով վերլուծելու համար դժվար մատչելի է. հանցագործ խմբավորումներ, «բոմժ»-եր, աղքատներ, սոցիալական ընտրախավ, կրոնական աղանդներ, արտադրական աշխատախմբեր:

Մասնագետները երկար ժամանակ «ընկղմվում» են խմբերի իրական կյանքի մեջ՝ այնտեղից ստանալով համարժեք տեղեկություններ կապերի, խմբային նորմերի և արժեքների, դերային կառուցվածքի կամ ենթակարգված հարաբերությունների մասին:

Որպես կանոն, այստեղ հետազոտվում է մեկ դեպք: Տեղեկությունների աղբյուր են ներառված դիտումը, լուսանկարները, ֆոկլուս-հարցազրույցը, նաև տեսանյութերը:

Քեյս-սթադիում ուսումնասիրման առարկա կարող է լինել և առանձին անհատի սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները, մասնավորաբար անձնական ճգնաժամերը, արժեքային վերափոխումները: Արդյունքում հետևություններն ունեն առավելապես կիրառական բնույթ և ուղղված են բախումների լուծման և հանրույթի ավելի հաջող գործառնման համար անհրաժեշտ երաշխավորությունների մշակմանը:

- **Ազգագրական հետազոտություններ:** Նկարագրական բնույթի այս հետազոտությունները ներկայացնում են որոշակի հանրույթի մշակույթի (նորմաներ, արժեքներ, լեզու, առասպել) տեսանկյունից նրա առօրյա կյանքի համակողմանի վերլուծությունը (լոռեցիներ, դարաբաղցիներ, հայրենադարձներ, սասունցիներ և այլն): Այս դեպքում տեղեկությունների աղբյուր են հանդիսանում նամակները, անձնական փաստաթղթերը, լուսանկարները, ժողովրդական բանահյուսությունը, խմբային հարցազրույցը:

▪ **Պատմական հետազոտություններ:** Բանավոր պատմությունը, որը նկարագրում է որոշակի պատմական իրադարձությունների վերապրումի սուբյեկտիվ փորձը (Հայոց ցեղասպանության (1915թ.), ստալինյան բռնությունների, Կալիֆոռնիայի հայ գաղթաբանի մասին և այլն): Մեթոդական տեսանկյունից այստեղ թիվ մեկ խնդիրը հիշողության համարժեքությունն է կատարված իրադարձություններին: Տեղեկությունների աղբյուր են հանդիսանում հուշագրությունները, նամակները, հարցազրույցները, պատմական վկայությունները:

▪ **Ընտանիքի պատմություն:** Այս ուղղությունը հետազոտում է ընտանիքի և հասարակության փոխազդեցությունը սերունդների ընթացքում: Վերլուծվում են ընտանիքի անդամների սոցիալական և տարածքային շարժունությունը, սերնդեսերունդ ընտանիքի սոցիալական կարգավիճակի ժառանգությունը կամ փոփոխությունները, «մշակութային կապիտալի» փոխանցումը կամ արժեքների փոխակերպությունը: Այստեղ տեղեկությունների աղբյուր են ընտանեկան արխիվները, տարբեր սերունդների ներկայացուցիչների հետ խորքային հարցազրույցները, տոհմաբանական իրողությունները:

▪ **Մարդու կյանքի պատմություն:** Որակական սոցիոլոգիայի ամենատարածված ուղղություններից է: Ինֆորմացիայի ստացման մեթոդը կենսագրական հարցազրույցն է: Մարդը պատմում է իր և իր կյանքի մասին, որը յուրովի «թատերական ներկայացում է»:

▪ **Խմբային բանավեճ կամ «ֆոկուս-խմբի» մեթոդ:** Սա խմբերի կողմից հիմնահարցի, իրադարձության, երևույթների ըմբռնման տարբերությունները բացահայտելու եղանակ է: Մեթոդը լայնորեն կիրառվում է մարքեթինգային հետազոտություններում, գնողական պահանջարկի, գովազդի հակազդման, քաղաքական գործիչների հանդեպ վերաբերմունքի և այլն ուսումնասիրություններում:

Հետազոտողը կամ աշխատակիցը վարում են բանավեճը, ինչը գրանցվում է և հետագայում՝ վերլուծվում:

Քանի որ «որակական» հետազոտությունն ուղղված է մարդկանց առօրյա կյանքին, այն կարծես հիշեցնում է լրագրողի աշ-

խատանք: Սակայն միայն արհեստավարժ սոցիոլոգը կարող է այնքան պատրաստված լինել, որ կենդանի իրողությունը ձևակերպի տեսական տերմիններով: Այդ պատճառով հետազոտության ընթացքում նա պարտավոր է հետևել որոշակի տրամաբանության և պահպանել գիտական մոտեցման կանոնները:

▪ **Չետազոտողի գործողությունների տրամաբանությունը:** Քանակական հետազոտության մեջ սոցիոլոգը դաշտ է դուրս գալիս «զինված» հայեցակարգով, վարկածներով և չափիչ գործիքներով: Իսկ որակականի դեպքում նա «անզեն է», սակայն պատրաստված՝ նախկին սոցիալական փորձով, խնդիրների մասին նախնական գիտելիքներով:

Որակական մեթոդը նյութական քիչ ծախսեր է պահանջում, սակայն մտավոր ծախսերը ահռելի են: Սոցիոլոգը այստեղ պետք է դրսևորի մասնագիտական և համամշակութային գիտելիքների լայն պաշար և ինֆորմացիայի տարբեր աղբյուրների համադրման կարողություն: Վերացականը և կոնկրետը զուգակցելու ունակություն: զրուցավարի, սոցիալական հոգեբույժի և վերլուծաբանի գործառույթների զուգակցման հմտություն: օժտված լինի գիտական ինտուիցիայով և երևակայությամբ: օժտված լինի ողջախոհությամբ և արտածական տրամաբանությամբ: Թերևս իզուր չի ասված, լինել սոցիոլոգ «որակաբան»՝ արվեստ է: Այստեղ կարծես անձի մեջ խտացված է մի ողջ ստեղծագործական խումբ:

8.2 ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Տվյալ խնդիրը շարադրենք կենսագրական հարցազրույցի օրինակով:

Նախնական փուլում հետազոտողը փորձում է առավելագույնս տեղեկություններ քաղել ուսումնասիրվող դաշտի մասին, որոշել ի՞նչը գիտի կամ չգիտի, ինչպե՞ս է տեղի ունենում իրադարձությունների կամ երևույթների կապը: Պետք է նաև ողջախոհության մակարդակում տարանջատել վերլուծության տարածա-

ժամանակային շրջանակը: Ենթադրենք՝ ցանկանում ենք ուսումնասիրել ցեղասպանության ենթարկված հայ ընտանիքի ազդեցությունը Թուրքիայի հանդեպ վերաբերմունքի ձևավորման վրա: Տվյալ դեպքում ժամանակային միջակայքը թերևս պետք է վերցվի 1915-22թթ, երբ տեղի ունեցան հայ ազգաբնակչության հանդեպ հիմնական զանգվածային բռնությունները. սովը և աքսորը, խոշտանգումները, սպանությունները: Օբյեկտների ընտրությունը ենթադրում է այնպիսի անձանց որոնում, որոնք կամ վերապրել են եղեռնը, կամ էլ այն ընտանիքներից (գերդաստանից) են, որոնք էապես տուժել են դրանից (հարազատների ֆիզիկական ոչնչացում, աքսոր, արտագաղթ): Նման անձանց պետք է որոնել ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Զրուցելու ամենահարմար տեղը, թերևս, Եղեռնի հուշարձանի տարածքն է՝ Ծիծեռնակաբերդում (Երևան), հուշակոթողները կամ թանգարանները մյուս բնակավայրերում և երկրներում:

Այսօրինակ որոնումներից և զրույցներից հետո հետազոտողին ուրվագծվում են այն կոնկրետ ոլորտները, որոնք կապված են ուսումնասիրվող խնդրի հետ: Այսինքն՝ որտեղի՞ց և ի՞նչ տեղեկություններ ունեն եղեռնի մասին, ազգությամբ թուրք անձանց հետ հանդիպումների և հաղորդակցումից ստացած տպավորությունները, եղեռնը վերապրած հարազատներից ստացած տեղեկությունների ազդեցությունը իր ըմբռնումների վրա և այլն:

Նմանօրինակ տեղեկություններից հետո հնարավոր է նախնական ըմբռնումների վերանայում, ճշգրտում, կատարելագործում: Այն ավելի է հստակեցվում համապատասխան գիտական և հրապարակախոսական նյութերի հետ ժամոթանալուց հետո:

Հարցազրույցը սովորաբար վարում են մասնագետ-սոցիոլոգները, ի տարբերություն մյուս՝ ոչ որակական բնույթի հետազոտությունների, որտեղ վստահում են զրուցավարներին (ինտերվյուերներին): Վերջիններս սովորաբար խորությամբ չեն տիրապետում հիմնահարցին և որակական հետազոտություններում կարող են շատ «կարևոր մանրուքներ» չնկատել:

Բավական լուրջ խնդիր է նաև զրուցակիցների (ռեսպոնդենտների) ճիշտ ընտրությունը, ինչպես նաև զրուցելու տեղը: Փակ հանրույթներում կիրառվում է «ձնագնդի» մեթոդը. գտնում

ենք որևէ ներկայացուցչի, որը համաձայնվում է զրուցել, այնուհետև նա երաշխավորում է մեկ ուրիշին և այսպես շարունակ: Այստեղ կա նաև *հազեցման շեմի* հարցը, երբ զրուցակցից այլևս էական տեղեկություն չի հավաքվում:

Հատուկ դեպք է նշանավոր անձի հետ զրույցը: Այստեղ պետք է հատուկ պատրաստվել «դիլետանտ», անտեղյակ չերեվալու համար:

Որակական հետազոտության մեջ սոցիոլոգի դիրքն ունի երկու յուրահատկություն:

Առաջինը՝ այն է, որ սոցիոլոգը զբաղեցնում է *երկակի դիրք՝ «կարեկցող» մասնակցի և «կողմնակի» դիտորդի*:

Երկրորդը՝ «հավասար» վստահելի զուգընկերային հարաբերությունների հաստատումն է:

Եթե փորձենք առանց օրինակների (կարծում ենք ցանկացածը կարող է ինքը բերել այդ օրինակները) համառոտ ներկայացնել նշված յուրահատկությունները, կարելի է ասել, թե որակաբան սոցիոլոգը, առանց օբյեկտիվությունը կորցնելու պետք է ձգտի մարդկայնորեն այն աստիճան վերապրել ուսումնասիրվող սոցիալական կյանքը, որ նրա մասնակիցների կողմից հաճույքով ընկալվի որպես յուրային, «մեր մարդը»:

Հետազոտության նպատակից կախված՝ հարցազրույցների տեխնոլոգիան կարող է լինել տարբեր: Ըստ այդմ՝ տարբերակվում են *նարրատիվ* (narrative-պատմություն), *կիսաշաբլոնացված*, *կենսագրական*, *լեյտմոտիվային*, *ֆոկուսացված* հարցազրույցները: Սովորաբար զրույցը տևում է 1,5-2 ժամ: Հայտնաբերվել է, որ դրանից հետո մարդն սկսում է կրկնվել: Եթե ինչ-որ բան կիսատ է մնացել, պետք է խնդրել, որ այն լրացվի մեկ ուրիշ հանդիպման կամ հեռախոսազրույցի ընթացքում:

Ինքնուրույն և կարևոր խնդիր է որակական հետազոտության դաշտային ինֆորմացիայի պահպանումը: Ելնելով հարցազրույցների քանակից՝ այն կարող է ամրագրվել ժապավենի վրա, կոդավորվել քոմպյուտերի մեջ ըստ թեմատիկ բլոկների: Տեքստերի երկարատև օգտագործման և վերլուծության համար առավել արդյունավետ է ինֆորմացիայի գրանցումը համակարգչում:

Տվյալների իմաստավորումը աշխատանքի առավել քրտնաջան և հետաքրքիր մասն է, որն էապես ավելի շատ ժամանակ է խլում, քան նյութի հավաքման գործընթացը: Մեկնաբանողը պետք է միանտորեն չհավատա ամրագրված ցանկացած մտքին կամ դատողությանը, այլ ելնելով հիմնահարցի լուծման պահանջներից, քննադատաբար դրանք վերլուծի և կատարի ճշգրիտ հետևություններ:

Որակական հետազոտության տվյալների հուսալիության մեծացման համար դրանք հնարավորինս համեմատում են իրական փաստերի, ինֆորմացիայի ուրիշ աղբյուրների հետ, բացահայտում զրուցակցի դատողությունների հակասականությունը: Վստահություն պետք է ներշնչի նաև զրուցակցի և զրուցավարի ձևավորված հարաբերությունը՝ ելնելով նրանց անձնային յուրահատկություններից: Հետազոտողի օբյեկտիվությունը տվյալների մեկնաբանման մեջ ստուգելու համար օգտագործում են **տրիանգուլյացիայի** մեթոդը, որը ներկայացնում է երեք մասնագետի կողմից որևէ կտորի, դեպքի խաչաձև մեկնություն:

Վերլուծության առաջին փուլում փաստորեն առկա տեքստը բաժանվում է այնպիսի միավորների (սեկվենցիաներ), որոնք կառուցված են ըստ թեմաների, այնուհետև նայվում է, թե դրանք որքանով են միմյանց հետ առնչվում:

Վերլուծականորեն նկարագրել, նշանակում է թվարկել վերլուծության օբյեկտի (մարդու, իրադարձության, խմբի) մեզ հետաքրքրող բոլոր բնութագրերը: Որակական հետազոտության մեջ նման նկարագրությունը կոչվում է **հազեցած, խիտ նկարագրություն**: Այս նկարագրության մեջ, բացի իրադարձության ամրագրումից, տարանջատում են նրա համատեքստը, սուբյեկտիվ նշանակությունը մասնակիցների համար և այն, թե ինչպես է տեղի ունեցել գործընթացը: Կարևոր է, որ նկարագրությունը լինի հնարավորինս որոշակիացված և համակողմանի: Այն իրադարձության համառոտ նկարագրությունն է մասնակիցների տերմիններով:

8.3 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ «ԽԻՏ» ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հետագա վերլուծությունը նպատակ ունի համադրել և ընդհանրացնել նկարագրված տվյալներն այնպես, որ դրանք կազմեն որոշակի հայեցակարգ, «մինի-տեսություն»:

Դրա համար նախ կատարում են տվյալների *առաջնային դասակարգում*:

Դասակարգումը կամ անվանակոչումը (նոմինացիա) տեքստային ինֆորմացիայի բովանդակության միավորումն է մեկ ընդհանուր կատեգորիայի՝ *մեկ դասի* մեջ: Այն անհրաժեշտ է տարբեր այնպիսի տեղեկությունների (վկայությունների) համադրման համար, որոնք ստացվել են մեկ զրուցակցից մեկ «դեպքի» շրջանակներում կամ էլ այդ «դեպքը» իր նմանների հետ համեմատելու համար: Օրինակ, ծնողների կամ ազգակիցների վերաբերյալ դատողությունները կարող են միավորվել «վերաբերմունք ընտանիքի հանդեպ» դասի մեջ:

Այնուհետև կարելի է կիրառել անվանակոչումների ընդհանրացման մեթոդը, որի օգնությամբ մասնակի տվյալները միավորվում են նմանօրինակ որոշակի համախմբի մեջ, որը կարելի է արտահայտել սոցիոլոգիական տերմինների համակարգով:

Տվյալների տեսական իմաստավորումը նուրբ և աշխատատար վերլուծական աշխատանք է: Այն պահանջում է բավարար սոցիոլոգիական կուլտուրա և ինտուիցիա:

Դասակարգումը ընկած է կապերի բացահայտման հիմքում: Դրանից հետո կարող ենք հայտնաբերել տվյալների օրինաչափությունները, տատանումները և շեղումները, նույն հանրույթի շրջանակներում ընդհանուր իմաստներն ու վարքի նմուշները:

Կատեգորիալ վերլուծությունը այնուհետև ենթադրում է ներքուստ նույնական ու միմյանց հետ չկապված կատեգորիաների միավորումը «նմուշի» մեջ, որը կոչվում է *դասակարգում (կլասիֆիկացիա)*: Տվյալ գործընթացում տեղի է ունենում նաև վերլուծական արտածում (ինդուկցիա):

Վերջին փուլում իրագործում ենք մինի-տեսության ստեղծման գործընթացը, որի համար մասնագետները անհրաժեշտ են համարում.

- հիմնահարցի վերաբերյալ ինֆորմացիայի մատչելի բոլոր աղբյուրների ուսումնասիրում,

- համեմատական մեթոդի օգտագործում: Այստեղ կարևոր է «հակառակից՝ համեմատումը», այսինքն այնպիսի փաստերի որոնումը, որոնք հակասում են արդեն հայտնի օրինաչափություններին,

- տվյալ ոլորտում գոյություն ունեցող մինի-տեսությունների իմացություն,

- տվյալների ողջ համախմբի վերլուծություն,

- ավելի լայն շրջանի տվյալների հիման վրա կառուցված տեսությունների օգտագործում, որը կարող է ճշգրտել կամ ժխտել մեր տեսությունը,

- ամփոփիչ հաշվետվության մեջ նկարագրվում է գիտական վերացարկումների հանգեցրած բոլոր փուլերի հաջորդականությունը:

8.4 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

Որակական սոցիոլոգիայում օգտագործվում է նյութի մատուցման չորս տեսակ:

1. *Ինֆորմացիայի բառացի վերարտադրություն*, որպես որոշակի մշակույթի եզակի «նմուշ»:

2. *Խմբագրված տեքստեր*. կրճատված և շարված ձեռագիր:

3. *Մեկնաբանված առաջնային տեքստեր*: Սա տվյալների մատուցման ամենատարածված ձևն է:

4. *Հեղինակային տեքստ*: Առաջնային տեքստերն այս դեպքում ընդամենը օժանդակ միջոց են հետազոտողի փաստարկների համար:

Վերջում նշենք, որ հետազոտության բովանդակությունը կարող է ներկայացվել չորս հիմնական «մոդելների» մեջ.

1. արդեն հայտնի սոցիալական ֆենոմենի անսովոր կամ նախկինում անհայտ պահերի նկարագրում,

2. սոցիալական ֆենոմենի ամբողջական ըմբռնման համար նրա որևէ կողմի վերաարժևորում, որը զարգացնում է օբյեկտի մասին պատկերացումները,

3. տվյալ փաստի համակարգմամբ և բաղադրամասերի ամբողջացմամբ սոցիալական ֆենոմենի բացահայտում և ներկայացում,

4. չտիպայնացված որևէ սոցիալական երևույթի տիպայնացում և տիպերի կառուցվածքի ներկայացում:

Վերջում շարադրենք սոցիոլոգի պրոֆեսիոնալ կողմից, որը ընդունել է Ռուսաստանի սոցիոլոգների միությունը և, որը Հայաստանի ներկա զարգացումներում սոցիոլոգիայի հարաճուն դերի տեսանկյունից շատ կարևոր է:

ՀԱՐՑԵՐ ԳԼՈՒԽ 8-Ի ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. *Առանձին հանրության հետազոտումը (Քեյս-սթադի):*
2. *Ազգագրական հետազոտություններ:*
3. *Պատմական հետազոտություններ:*
4. *Ընտանիքի պատմություն:*
5. *Մարդու կյանքի պատմություն:*
6. *Խմբային բանավեճ կամ «ֆոկլուս-խմբի» մեթոդ:*
7. *Հետազոտողի գործողությունների տրամաբանությունը:*
8. *Հետազոտության իրականացումը դաշտային պայմաններում:*
9. *Որակական հետազոտության մեջ սոցիոլոգի դիրքի յուրահատկությունները:*
10. *Տվյալների խմբավորումը որակական հետազոտության մեջ:*
11. *Որակական հետազոտության տվյալների ընդհանրացումը:*
12. *Որակական հետազոտության տվյալների հրապարակման պահանջները:*

ՍՈՑԻՈԼՈԳԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ (վերջաբանի փոխարեն)

Հետազոտական գործունեություն

1) Սոցիոլոգը դրսևորում է արհեստավարժություն, գիտական ազնվություն և բարեկրթություն սոցիոլոգիական հետազոտության բոլոր փուլերում:

2) Ղեկավարվելով ճշմարտության նվաճման իդեալով՝ սոցիոլոգը հատուկ ուշադրություն է դարձնում սոցիոլոգիական ինֆորմացիային, դրա վերլուծության հիման վրա կատարած հետևությունների առավելագույն հավաստիությանը և հուսալիության ձգտումներին:

3) Որպես հասարակության մասին գիտությունների ներկայացուցիչ, սոցիալական խնդիրները և գործընթացները վերլուծելիս սոցիոլոգը թույլ չի տալիս, որ սեփական անձնային շահերը կամ այլ կողմնակի ազդեցություններ խոչընդոտեն գիտական ճշմարտության հաստատմանը:

4) Սոցիոլոգը անձնական պատասխանատվություն է կրում ուրիշների ծրագրերի և մեթոդիկաների հիման վրա իր կողմից ստացած արդյունքների, ինչպես նաև սեփական աշխատանքում ուրիշի գաղափարների և արդյունքների օգտագործման համար:

5) Գրագողությունը և ցանկացած ձևով ուրիշի գաղափարների յուրացումը անթույլատրելի և անհամատեղելի են մասնագիտական գործունեության հետ:

6) Սոցիոլոգը իր պարտքն է համարում հենվելու ոչ միայն իր գիտության մեջ նախորդների գաղափարների և արդյունքների, այլև՝ հարակից գիտությունների տվյալների վրա:

7) Սոցիոլոգը հետազոտական իր գործունեությունը պարտավոր է այնպես կառուցել, որպեսզի դուրս չգա առկա ռեսուրսների ծավալից, հետազոտման մեթոդների ու տեխնիկայի ճանաչողական հնարավորությունների սահմանափակումների շրջանակից:

8) Պատվիրատուների հետ հարաբերություններում սոցիոլոգն ապահովում է որևէ ձևով իր վրա վերցրած պայմանագրային հարաբերությունների պայմանները:

9) Հետազոտության համար պայմանների ստեղծման, իր մասնագիտական արժանապատվության և պատվի պաշտպանության հարցերում սոցիոլոգը իրավունք ունի հենվելու Սոցիոլոգիական ընկերության աջակցության և օգնության վրա:

Գիտական բանավեճեր

1. Սոցիոլոգը սեփական հայացքներն ու գաղափարները պաշտպանում է՝ չնայելով իրավիճակին ու հեղինակություններին: Սեփական տեսակետի պաշտպանությունը, գիտական ազնվության և սկզբունքայնության դրսևորումը նրանից պահանջում են բարոյական ամրություն և քաղաքացիական խիզախություն, հասարակական երևույթների մասին հանրահայտ հայացքների, գիտական հեղինակությունների հետ վեճի մեջ մտնելու ունակություն: Նման դիրքորոշման ընդունման նախադրյալները անձնական աշխարհայացքի ամրությունն է, հստակ բարոյական դիրքի առկայությունը:

2. Սոցիոլոգի վերաբերմունքը ուրիշ գաղափարների և անձանց՝ այդ գաղափարների հեղինակների և կողմնակիցների հանդեպ առանձնանում է հարգանքով և հանդուրժողականությամբ: Գիտական քննադատությունը և բանավեճը՝ որպես գիտության զարգացման բնական ձևեր, անհամատեղելի են գաղափարական պիտակավորումների, առավել ևս հաշվեհարդարի ցանկացած փորձի հետ:

3. Սոցիոլոգի ամենօրյա գործունեությունը, գործընկերների հետ շփումներն ու կապերը բնութագրում են հանուն ճշմարտության պայքարում փոխադարձ աջակցությունը, զգացմունքների բարձր կուլտուրան, վայելչակերպությունը, մարդամոտությունը, գիտնական-հասարակագետի արժանապատվությունը չարատավորող պահելաձևը:

Գիտական հրապարակումներ

1) Չնայած օբյեկտիվ պահանջարկ կա նոր գիտելիքները հրապարակել հնարավորինս արագ, սոցիոլոգը ձեռնապահ կմնա հապշտապ այն հրապարակումներից, որոնց մեջ հետևություններն ու երաշխավորությունները բավարար ստուգված և հիմնավորված չեն:

2) Հատկապես այն սոցիոլոգիական հրապարակումները, որոնք հենվում են փորձարարական բազայի վրա, բացի ընդհանուր գիտական պահանջներին համապատասխանելուց պետք է պարունակեն տեղեկություններ, որոնք թույլ կտան մասնագիտորեն գնահատել հետազոտական խնդիրների առաջադրման կոռեկտությունը և ստացած տվյալների հավաստիության աստիճանը:

Սոցիոլոգը հոգում է այն մասին, որ իր արդյունքներից ուղղակիորեն կամ միջնորդավորված օգտվող ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի նյութերը նույնպես բավարարեն այդ պահանջներին:

3) Սեփական գործընկերների և նախորդների աշխատանքը հարգելը, հրապարակվող աշխատանքի հետ նրանց կապի ու մասնակցության բաժնեմասի հիշատակումը, ցանկացած օգնության համար, որը համահեղինակության իրավունք չի տալիս՝ երախտավորությունը, սոցիոլոգի գիտական հաղորդակցման անխախտելի նորմերն են:

Հարցվողներ (ռեսպոնդենտներ) և հետազոտողներ

1. Ռեսպոնդենտների հետ հարաբերություններում սոցիոլոգը խստորեն կպահպանի գաղտնիության ապահովումը, նրանց հայտնած տեղեկությունները չի հրապարակի: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հրապարակումը նախատեսված է ծրագրով, ինչին ռեսպոնդենտները ժամանակին տեղյակ են պահվել:

2. Սոցիոլոգիական գործունեության համար օրենք է՝ թույլ չտալ այնպիսի մեթոդների, տեխնիկայի, ընթացակարգերի օգտագործում, որոնք վնասում են հետազոտվողների շահերին, կաչում են նրանց անձնական արժանապատվությանը:

Եթե սոցիոլոգը անդամակցում է մասնագիտական ընկերակցությանը (ասոցիացիային), տվյալ կողմերը դառնում է նրա համար պարտադիր վարքի նորմ: Հակառակ դեպքում՝ նախատեսված են բարոյական և այլ բնույթի պատիժներ:

Եթե նույնիսկ տվյալ անձը ընկերակցության անդամ չէ, սակայն մասնագիտորեն զբաղվում է սոցիոլոգիական ուսումնասիրություններով, տվյալ կողմերի գրեթե բոլոր կետերին հետևելը նրա բարոյական պարտքն է: Այդ պահանջների կատարումը մեծապես օժանդակում է տվյալ սոցիոլոգի և «ֆիրմայի» հասարակական ինքնահաստատմանը, ինչը ազատ տնտեսաքաղաքական հարաբերություններում նաև լուրջ ֆինանսական ներհոսքի նախապայման է: Այստեղ պատվիրատուները առաջին հերթին հենվում են տվյալ «ֆիրմայի» բարոյական «իմիջի» վրա, որը ձեռք է բերվում տարիների ընթացքում և դժբախտաբար (թե բարեբախտաբար) կարող է կորչել ... ակնթարթորեն:

17. **Äpðeäæi Ý.** Í ðaçäâæáí èè í áúáñðàáí í í áí òðóáà: Í áðí á ní òèí èí àèè. Í .: Í áóèà, 1991.
18. **Çáí ðí àñèèè Á.Á.** Èñòí ðèý ní òèí èí àèè: èèàññè-àñèèè ýòàí: Ó-áá. äèý áóçí á. – Áèàðáðèí áóðà, 2001. – 360 ñ.
19. **Èáñáèúí áí È.** Óèè-í úé í í ðí ñ á ní òèí èí àè-áñèí ì èññèááí ááí èè: Í áðí á. í í ñ. – Ñàì áðà: Óí í á ní òèàèúí úó èññèáá., 2001. – 80 ñ.
20. **Èí ðí èáá Þ.Á.** Áúáí ðí -í úé ì áðí á á ní òèí èí àèè. Ó-ááí í á í í ní áèá. Í ., Í í ñè. Ýéí í .-ñòàð. èí -ò, 1975.
21. **Èðaa-áí èí Á.È.** Ní òèí èí àèý: Ó-áá. äèý áóçí á. – Í .: Áèàá. í ðí àèò; Áèàðáðèí áóðà: Ááèí ààý èí èáá, 2003. – 384 ñ.
22. **Ì àñèí í èñ Äæ.** Ní òèí èí àèý. – 9-á èçä. – Ní á.: Í èòáð, 2004. – 752 ñ.
23. **Ì áðáí áðèèí -ñòàðèñðè-áñèèá ì áðí áú áí áèèçà ááí í úó á ní òèí èí àè-áñèèò èññèááí ááí èýð / Í òá. ðáá. Ó.Á. Ðýáóøèèí. Í .: ÈÑÈ ÁÍ ÑÑÑÐ, 1980.**
24. **Ì áðáí áðè-áñèèá ì áðí áú áí áèèçà è èí ðáðí ðáðàðèý ní òèí èí àè-áñèèò ááí í úó. Í òá. ðáá. Á.Á. Áí áðááí èí á, Þ.Í. Óí èñòí áá. Í .: Í áóèà, 1989.**
25. **Ì áí áðá Á.** Í ní í áú ní òèí èí àèè: Ó-áá. í í ní áèá äèý áóçí á. – Í .: Èçäàðáèúñèèè Áí ì NOTA BENE, 1999. – 344 ñ.
26. **Ì áðí áèèá è ðáðí èèá ní òèí èí àè-áñèèò èññèááí ááí èè á ñóáðá ýéí í ì èèè è òèí áí ní á:** Ó-áá. äèý áóçí á / Í òá. ðáá. Á.Á. Nèèèáñòá. Óèí. áèáá. í ðè Í ðááèðáèúñòáá ÐÓ. Èáó. ní òèí è. – Í ., 1999. x. 1. Ó-áá.-ì áðí á. – 157 ñ.; x. 2. Ðááí -áý òáððááü. – 147 ñ.
27. **Ì áðí áèèá è ðáðí èèá ní òèí èí àè-áñèí é í áðááí ðèè í áðáè-í í é ní òèí èí àè-áñèí é èí òí ðí àèèè. – Í ., Í áóèà, 1968. – 327 ñ.**
28. **Ì áðí áí èí àè-áñèèá è ì áðí àè-áñèèá í ðí áèáí ú èí í ðáí ð-áí áèèçà. Áúí. 1, 2. Í òá. ðáá. Á.Á. Çáðááí ì ùñèí á. Í .-È.: ÈÑÈ ÁÍ ÑÑÑÐ, 1973.**
29. **Ì áðí áú náí ðá èí òí ðí àèèè á ní òèí èí àè-áñèèò èññèááí ááí èýð. Í òá. ðáá. Á.Á. Áí áðááí èí á, Í . Í . ì àñèí áá. Í .: Í áóèà, 1990.**
30. **Ì í ðáí í Äæ.** Ní òèí ì áððèý. (í áð. ñ áí áè.) Í .: Èçä-áí èí í ñòð. èèò., 1958.
31. **Ì þèèáð Á., Øóññèáð È.** Nòàðèñðè-áñèèá ì áðí áú á ní òèí èí àèè // Èí òí ðí àèèí í úé áþèèáðáí ú ÈÑÈ ÁÍ ÑÑÑÐ è ÑÑÁ. 1968. N10. x.1.

32. **Í tÿü Y.** Í anñi auá t i ði nu: Áááááí eá á í áðí àeéó àáí t ñeí t èè. Í .: 1978.
33. **Í ðá Í.** Áðáóú è eó t ðeí áí áí eá. Í .: 1965.
34. **Í nít au t ðeéááí t é nít ðeí eí àeè:** Ó=áá. àey aóçí á: Á 2ò. / Í t á ðáá. Ó.Y. Øáðááè, Í .É. Áí ðøeí áá. – Í .: Academia, 1995. Ó. 1. – 200 ñ.; Ó. 2. – 192 ñ.
35. **Í nít au t ðeéááí t é nít ðeí eí àeè:** Ó=áá. àey aóçí á / Í t á ðáá. Ó.Y. Øáðááè, Í .É. Áí ðøeí áá. – Í .: Éí ðáðí ðàèñ, 1996. – 179 ñ.
36. **Í áeéáí t é Í .Á.** Nít ðeí eí àey: Èçáðáí í úá ðááí òú 1991-2003áá. – Í .: Èçááðáèüñeí -òí ðáí àáy eí ðí t ðàeöy "Áàøeí á è É^í", 2004. – 584 ñ.
37. **Í áí t áyí N.Ñ.** Í áðáí àðè=áñeéá í áðí áú á nít ðeáeúí t é t ñeóí eí àeè. Í .: Í áóeá, 1983.
38. **Í t áí nÿí Á.A.** Áðí yí ñeí á t áuáñòáí á òðáí ñóí ðí àøèè, - Áð.: Éónáááò, 2003. – 460 ñ.
39. **Í t áí nÿí Á.A.** Í áðí á eí ðáðáúþ è áí ñòí ááðí t ñòú nít ðeí eí àe=áñeí é eí óí ðí àøèè. Áðáááí: Èçá-áí ÁÍ Áðí .ÑÑÐ, 1985.
40. **Í ðeáðeéóí t t ðeéááí t é nít ðeí eí àeè / Í t á ðáá.** Á.Á. Éí yçááá, Í .É. Áðyøeí áá, Á.ß. Í á=áááá. – Í .: Èçá-áí Í ÁÓ, 1996.
41. **Í ðeáðeéóí t t nít ðeáeúí t é ñòáðeñðeéá / Í t á ðáá.** È.È. Áeéñáááí é. – Í .: Óeí áí nú è ñòáðeñðeéá, 2002. – 368 ñ.
42. **Í ðeééááí áy nít ðeí eí àey:** Ó=áá. t t ñ. / Í t á ðáá. Þ.Í . Éí eáñí eéí áá. – ðí ñòí á í/Á: Óáí eéñ, 2001.
43. **Í ðeí áí áí eá óáeðí ðí t áí è eéáññeóðeáøeí t t áí áí áeèçá àey òeí t eí àeçáðeè nít ðeáeúí úó yáeáí eé.** Ná. Í áó=í. òðóáí á. Ðáá.: Ó.É. Çàñeááñeáy, Á.Á. Í èðeéí. Í t áí ñeáeðñe: ÈYéÍ Í Í Ñeá. t òá. ÁÍ NÑÑÐ, 1976.
44. **Ðááí +áy eí eáá nít ðeí eí áá.** Í òá. ðáá. Á.Á. Í ñeí t á. Í .: Í áóeá, 1983.
45. **Ðááóáeí Á.A., Ðááóáeí É.A.** Nít ðeí eí àey: Éóðñ eáèøeé. – 2-á eçá., t áðáðáá. è áí t . – Í .: Óáí òð, 1997. – 157 ñ.
46. **Ðááóáeí Á.A., Ðááóáeí É.A.** Nít ðeí eí àey: Éóðñ eáèøeé. – 3-á eçá., t áðáðáá. è áí t . – Í .: Óáí òð, 2001. – 224 ñ.
47. **Ðí ñòáááááá Í .É.** Áááááí eá á eñí t eüçí ááí eá ñeñòáí ú àey ñòáðeñðe=áñeí áí áí áeèçá nít ðeí eí àe=áñeéó àáí í úó: Í áðí á. t t ñ. – Í .: Éí -ò nít ðeí eí àeè ÁÍ NÑÑÐ, 1990. – 44ñ.

48. **Ðuaeerà Ð.Å., Åeriteoð Á.Å.** Ní oëæüí ué yëñí àðèí áí ò. Í í áí neæeðñe: Í àóèà, Nèá. í òä., 1969.
49. **Naaar áí eí Á.È.** Ní oëí eí æe-åñeäy eí òí ðí àøey. È.: Í àóèà, Èáí eí áð. í òä. 1979.
50. **Níí aaðü í ðeëæááí í é nñ oëí eí æe.** – Í í.: Èçä.-áí "Óí eááðñeòàðñé á", 1984. – 317 ñ.
51. **Ní æeçáð Í.** Ní oëí eí æey. (í áð. ñ. áí æe.) Í.: "Óáí eëñ-Í ðáññ", 1994.
52. **Ní oëæüí äy ñòàðeñòeëà:** Ó-áá. äey áocí á / Í í á ðáá. È.È. Åeëñáááí é. – 3-á eñä., í áðáðáá. è áí í. – Í.: Õeí áí nñ è ñòàðeñòeëà, 2002. – 480 ñ.
53. **Ní oëí eí æey á áí í ðí naò è í ðááòàó:** Ó-áá. í í ñ. / Í í á ðáá. Á.Á. xóeáí áá. – Ðí ñòí á í/Á: Óáí eëñ, 2000. – 256 ñ.
54. **Ní oëí eí æey:** Èí í nñ æeò eáeøeé / Ní ñò. È.Á. Øeðeí á. – Í.: Í ÐÉÍ Ð, 2001. – 96 ñ.
55. **Ní oëí eí æey:** Éoðñ eáeøeé. – Ðí ñòí á í/Á: Óáí eëñ, 1999. – 512 ñ.
56. **Ní oëí eí æey:** í áúeè éoðñ. – 2-á eçä. – Í.: Í ðí í áðáé; Ððáéò, 2000.
57. **Ní oëí eí æey:** Ó-áá. äey áocí á / Í òä. ðáá. Í.Á. Í áææáí í é. – 2-á eçä., í áðáðáá. è áí í. – Í.: Í áðeáòeí á, 2002. – 1036 ñ.
58. **Ní oëí eí æey:** Ó-áá. äey áocí á / Í í á ðáá. Ð.Á. Áí eéí áá. – Í.: Ááðááí eëe, 2000. – 512 ñ.
59. **Ní oëí eí æey:** Ó-áá. äey áocí á / Í í á ðáá. Á.Í. Èaáðeí áí eí. – Í.: ÐÍ ÈÒÈ, 1998. – 349 ñ.
60. **Ní oëí eí æey:** Ó-áá. äey þðeá. áocí á / Í í á í áú. ðáá. Á.Í. Næüí eéí áá. – Ní á.: Óí í á "Óí eááðñeòàð"; Ní áÓ Í ÁÁ Ðí nñeè; Èáí ü, 2000. – 416 ñ.
61. **Ní oëí eí æey:** Ó-áá. í í nñ áeá äey ñòáááí òí á áocí á / Í í á ðáá. Á.Í. Åeñóeí áá. – 2-á eçä., eñí ðáá. – Í í.: ÕáòðàNèñòáí ñ, 2000. – 544ñ.
62. **Ðaaí eéí Á.Í.** Ní oëí eí æe-åñeäy eí òí ðí àøey: ðí eü, í áòí áú í í eó-áí ey è í áðááí òeà: Ó-áá. í í ñ. – Í.: Í æeñ-Í ðáññ, 2001. – 2001 ñ.
63. **Ðaaaaí nýí Ý.Á.** Ní oëí eí æey: Ó-áá. í í ñ. – Í.: Çí áí eá, 1998. – 272 ñ.
64. **Ðaaaaí nýí Ý.Á.** Ní oëí eí æey: Ó-áá. í í ñ. – 2-á eçä., eñí ð. è áí í. – Í.: Çí áí eá, 1999. – 272 ñ.
65. **Ðaaaaí nýí Ý.Á.** Ní oëí eí æey: Ó-áá. í í ñ. – 3-á eçä., eñí ð. è áí í. – Í.: Çí áí eá, 2001. – 272 ñ.
66. **Ðaðóí ö Ñ.Á.** Ýòí í nñ oëí eí æey: Ó-áá. í í ñ. – Í., 1999.

67. **Øi uáí eí Æ.Ð.** Ní òeí eí æey: í áúeé éoðñ. – Í ., 1998.
68. **Øi uáí eí Æ.Ð.** Ní òeí eí æey: Í áúeé éoðñ. Ó=áá. í í ñ. æey áoçí á. – 2-á eçä., áí í. è í áðáðáá. – Í .: Þðæò, 1998. – 510 ñ.; 1999 – 510 ñ.
69. **Øøí eí a Ñ.Ñ.** Ní òeí eí æey: í áúeé éoðñ. – 3-á eçä., áí í. – Í .: Áaðáaðeéè, 2002. – 344 ñ.
70. **Øað=ááá Á.Á.** Í ní í áú ní òeí eí æeè: Ó=áá. æey áoçí á. – Í .: Eí áí ñ, 2001. – 302 ñ.
71. **Øááðeí áá È.Á.** Ýí í èðè=áñeáy ní òeí eí æey: Í áðí á. í í ñ. – Øí eüýòðè: Í áæáóí áð. àeää. áeçí. è ááí é. ááèà, 1998.
72. **×øðeí á Í.Í.** Í ðí æeðøí ááí eá áúáí ðí =í í áí ní òeí eí æe=áñeí áí eññeááí ááí ey. Èeáá: Í áoéí áá áoí eá, 1986.
73. **Øæáí eí Á.Í.** Ní òeí eí æey: Ó=áá. æey áoçí á. – Í .: Í ðí æeò, 2003. – 224 ñ.
74. **Ýí øeéí í áæey í ñeðí eí æe=áñeèð ðáñøí á. Èe=í í ñøú, í í ðeaaøey, í í ððááí í ñøú / Ðáá. Á.Èaðæeí. Í .: "Í áó=í ày eí eáá",.1997.**
75. **Þáí á Á.Á.** Ní òeí eí æe=áñeí á eññeááí ááí eá: í áðí áí eí æey, í ðí áðáí í à, í áòí áú. - 2-á eçä., í áðáðááí ð. è áí í. - Í .: Í áoéà, 1987. – 248 ñ.
76. **Þáí á Á.Á.** Ní ðaðàðáæy ní òeí eí æe=áñeí áí eññeááí ááí ey. Í í eñáí eá, í áúýní áí eá, í í í eí áí eá ní òeæuí í é ðáæuí í ñø. – Í .: "Áí áðí ñááò", "Eí eáí úe áí í "Óí eááðñeòáò", 1998. – 596 ñ.
77. **Þáí á Á.Á.** Ní ðaðàðáæy ní òeí eí æe=áñeí áí eññeááí ááí ey: í í eñáí eá, í áúýní áí eá, í í í eí áí eá ní òeæuí í é ðáæuí í ñø: Ó=áá. æey áoçí á. – Í .: Áí áðí ñááò, 2000. – 596 ñ.